Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

h

Lmy
1053

Изъ Вѣны Армяно-
Католическій Архи-
епископъ Григорій
Іарджанъ оставилъ
Императору Николаю
Лазареву; отъ
Его Пр. на имя
Лазаревскій
Институтъ.

№ 31.

На оборотѣ сего написано.

2013

№ 35

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՎԱՐՈՒՅ

L ш ч
1053

206 ա գ.
3-60
N 80
244
N 244
1010
40786

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՎԱՐՈՒՑ

ԿԱՄ

մեծի հովուապետի

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԽՐԱՏՔ ՈԳԷՇԱՀՔ

ԱՌ

ՀՈՎԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԻՐՈՅ ԵՒ ԱՌ ԱՅԼ

ՔԱՀԱՆԱՅՍ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Հ. ՍՐԱՊԻՈՆ ԷՄԻՆԵԱՆ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԻՆ

Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1852

ԱԶԳԱՅԻՆ
1053-2013
Հ.Ֆ. 1048

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՎԱՐՈՒՑ

ԳԼՈՒԽ Ա.

Վասն քահանայական վիճակի։

Ա. ՕՐՆՅ է մարդ, որդեակ, եւ յինչ ինչ արարաւ։ Արդարեւ վասն այնորիկ՝ զի Աստուծոյ երկնչիցի, զպատուիրանս նորա պահիցէ, նմա երկիր պաղանիցէ, նմա միայն ծառայեսցէ։

Դու զինչ ես, որդեակ, առիմէ՞ կարգեցար կացեր քահանայ։ Յայն ասիս իսկ միայն՝ զի յայնպիսի բարձրագոյն իրս վերակացու մարդկան լինիցիս եւ ուսուցես նոցա երկնչել յինէն, երկիր պաղանել եւ պաշտել։ Ո՞ մեծ պատիւ. ո՞ բարձրական պաշտօն։

Ես յերկինս, որդեակ, մարդիկ յերկրի, եւ դու միջնորդ ընդ իմ եւ ընդ նոսա, զի յանուն իմ ուղղեսցես եւ հովուեսցես զնոսա, եւ քեզ իբրեւ ինձ հնազանդ լինիցին։ Ես Աստուած արարիչ, մարդիկ արարածք իմ, եւ դու կարգեալ ի վերայ նոցա, զի ասցես նոցա հաստուցանել ինձ զոր ինձն պարտիցին։

Եւ Հայր լուսոյ, մարդիկ ի խաւարի՝, եւ դու աշտանակ ի միջի, զի քեզ ծաղեսցի նոցա լոյս ճշմարիտ:

Եւ երկնաւոր պարգեւաց պարգեւատու, նոքա կարօտք եւ չքաւորք, եւ դու մատակարար՝ զի քեզ միում միում իւրաքանչիւր տացին շնորհք:

Եւ Տէր ամենեցին սուրբ, նոքա մեղաւորք, եւ դու միջնորդ՝ զի քեզ հաշտեսցին ընդ իս:

Եւ Հայր Որդւոյն Միածնի յաւիտենից յաւիտեանս, մարդիկ որդեգիրք ի ժամանակի, դու Հայր յերկրի, զի քեզ գրեսցին յերկինս որդեգիր:

Եւ արժանի առնելոյ պատիւ զոհիւք եւ պատարագօք, մարդիկ չունին զզոհն պատարագի, դու միջնորդ որ ունիս ի պատրաստի զզոհն սուրբ, զմարմին Որդւոյ իմոյ, զի իմոցն իրաւանց եւ պարտուց մարդկան առնիցես հատուցումն:

Եւ հուր վառիչ, մարդիկ յերկրի վառելի, եւ դու միջնորդ յոյր ձեռն վառեսցին:

Եւ պետ բժշկաց, մարդիկ հիւանդք, եւ դու միջնորդ պաշտօնեայ՝ որ առեալ ունիս յինէն զդարմանս բժշկութեան՝ զի իւրաքանչիւր բաշխեսցես:

Եւ հօտապետ յերկինս, մարդիկ հօտ յերկրի, դու հովիւ ի վերայ հօտին, զի քեզ օգտեսցի եւ բազմասցի:

Բ. Զի՞նչ, սրդեակ, չեք ընդ երկնիւք բարձրութիւն եւ իշխանութիւն՝ որ քում բարձրութեան եւ իշխանութեան կարիցէ հաւասարել։ Յաստուածոյ ուրեմն ես, յորդւոյն Բարձրելոյ։

Մարդկեղէն է պատիւ արքայի, այլ քահանայի՝ աստուածեղէն։ Վայելչութիւն եւ կարողութիւն լքեալ թողուն զԹագաւորն յորժամ մեռանիցի. քահանայ յորժամ անկանիցի ի կենաց՝ քահանայութիւն նորա կայ եւ մնայ յաւիտեան։

Իշխէ արքայ ի վերայ մարդկան, քահանայ՝ ինքնին իսկ Աստուծոյ։ Յաղթէ թշնամեաց արքայ հզօր, յաղթէ աշխարհի քահանայ ճշմարիտ։

Կարող է արքայ զմարմին ի բանտ արկանել կամ թէ այլ ինն ազգ պատժել, քահանայ զնոյն իսկ զհոգի կարող է կապել։

Կարող է արքայ արձակել զկալանաւորս ի մարմնոյն կապանաց, քահանայ կարող է եւ ի դիւին իսկ բռնաւորութենէ եւ ի մեղայն հաղթից զհոգիսն ազատել։

Զկարէ ինչ վճարել արքայ՝ բայց յերկրի, քահանայ կարող է եւ յերկինս իսկ։ Զգանձս աշխարհի ստացեալ է արքայ, քահանայ զգանձս երկնից ունի։

Առաքէ արքայ նուէրս առ թագաւ-

որս, պատարագս մատուցանէ քահանայ առ Աստուած։ Ոսկի նուիրէ թագաւորն, քահանայ զԱստուած մատուցանէ։

Ցերկինս մտանէ բարբառ նորա, անտի շնորհս իջուցանէ, անդ զԱստուած հաշտեցուցանէ եւ խոնարհեցուցանէ, անդ առնէ դատաւորութիւն ի վերայ մարդկան։

Կանխէ մանաւանդ վճիռ նորա քան զվճիռ դատաստանին Աստուծոյ. զոր թողուցու կամ զոր ունիցի յերկրի, թողեալ կամ կալեալ լիցի յերկինս։

Ո՛րդեակ, ծանիր զպատիւ քո. եւ մի՛ յորժամ աստուածեղէն բնութեանն հաղորդ իցես, վատթար ընտանութեամբ յառաջին անարդութիւն դառնայցես։

Գ. Տէր, ո՞վ եմ ես, զի յիշիցես զիս եւ այնչափ ինչ ինձ շնորհիցես։

Արդ աւասիկ ես որ հող եմ եւ մոխիր, եղէ այր Աստուծոյ, պաշտօնեայ քո, ըստ տնտեսութեան շնորհացն քոց։

Հայր սիրելի, ո՛րչափ ինչ սէր պարտիմ քեզ փոխանակ սիրոյն, որով այնպէս առաւել սիրեցեր զիս, այսպէս ընտրեցեր, եւ յայս կարգ հասուցեր։

Քանի՞ն պարտ եւ պատշաճ է ինձ զանձն խոնարհեցուցանել վասն այնչափ եւ այնպիսի պատուոյ՝ որով զիս զչքաւ-

որս յարուցեր ի հողոյ, զի առ աթոռոյ փառաց քոց կայցեմ, զքո տեղի ունիցիմ, փոխանակ քո դատիցիմ, արձակիցեմ եւ կապիցեմ։

Ես ապաժամանն, ես անսուրբ, ողէտ, թերակատար, կոյր, միշտ ի չարիս միտագոյն, ես պարտիցիմ հէքս եւ տառապեալ ունել զտեղի անչափ մեծվայելչութեան քո։

Ո՛վ Աստուած իմ, ինքնին իսկ որբութիւն, իմաստութիւն, բարութիւն, փառք եւ անչափութիւն։ Յայս չափ բարձրութեան ելեալ վերացեալ ի քէն՝ զի՞արդ չլինիցիմ կարի իմն ամօթապարտեալ եւ խռովեալ։

Զօրացո զիս, Տէր, քոյովքն շնորհօք, զի կարիցեմ կրել յանձին արժանապէս զայնպիսի մեծաբեռն ծանրութիւն։

Հաճեաց Աստուած իմ, այնպէս իմն կարգեալ յարդարել ի ներքուստ զմիտս իմ, այնպէս ուղղել զբարս իմ արտաքուստ, զի եղէց ամենասուրբ Որդւոյ քում ճշմարիտ նմանող, եւ ցուցից զնա ճշմարտութեամբ հաւատացելոց, որ առաքեացն զիս որպէս եւ դու առաքեցեր զնա։

Դ. Լիցիս նմա նմանող, որդեակ, եթէ՝ որպէս նայն կամեցաւ եւ ջանացաւ, եւ դու կամեցիս եւ ջանայցես գտանել եւ կեցուցանել զկորուսեալն։

Եկ, որդեակ, եկ, եւ երթ զհետ նորա, եկ եւ լեր յետ նորա որսորդ մարդկան։

Աւետարանեա աղքատաց, խլեց տուր լսել զբանն, արա զի կոյրք տեսցեն զլոյսն ճշմարիտ, համերց տուր խօսել զօրհնութիւն Աստուծոյ, զկաղս դնացս ընդ ճանապարհն պատուիրանաց, զմոլորեալս դարձո ի շաւիղս արդարութեան, արա զի տացին Աստուծոյ փառք եւ մարդկան փրկութիւն։

Որդի իմ հեղ զարիւն փոխանակ նոցա, դու զանձն քո ողջոյն վասն նոցա ծախեսջիր։

Ե. Ընդարձակեա, որդեակ, զսիրտ քո։ Զամենեսին կոչեա ի գիտութիւն ճշմարտութեան եւ փրկութեան. զամենեսին ճեպեա մտանել ի տուն իմ՝ զի լցցի։

Զչքաւորն եւ զմեծատուն, զգիտուն եւ զանտգէտ, զիմաստուն եւ զարդեա, զծառայ եւ զտէր, զարու եւ զեղ առանց ինչ ամենեւին խտրութեան՝ փոյթ արա առ իս ածել։

ԳԼՈՒԽ Բ.

Վասն ինչ «՛ընչ» իւրեւոր էին փոհանոյչց իւրոյ։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, ահաւասիկ քահանայ եղեր, ոչ եթէ զծանրութիւն քոյ բեռանցն թեթեւացուցեր, նա աւանիկ ի վերայ բեռին հասարակաց՝ յանձն առեր եւ բեռն այնպիսի՝ զոր եւ ի վերայ հրեշտակական ուսոց դնել ահագին է։ Անձկագոյն եւս կապանօք առաքինութեան պարաւանդեալ ես այժմ։

Արդ, շրջեաց առաջի իմ եւ լեր կատարեալ։ Սուրբ լեր, զի ես սուրբ եմ, որ սուրբ առնեմ զքեզ։ Լեր կատարեալ, որպէս Հայր քո յերկինս կատարեալ է։

Բ. Մ՛ոլորիս, ո՛րդեակ, մոլորիս, եթէ կարծիցես թէ ի նոցանէ միայն ակն ունիցիմ կատարելութեան, որ ուխտիւք կրօնից զամենայն թողին, զանձինս ինձ նուիրեցին, եւ ամենեւին իսկ զատեալ մեկնեցան յաշխարհէ։

Պարտ իսկ է նոցա արդարեւ կատարեալ լինել, այլ քանզի չեն յաշխարհի, եւ ոչ եւս շրջին ի մէջ գայթակղութեանց աշխարհի, դիւրաւ իմն մարթի նոցա անարատս զանձինս պահել, եւ այնպէս առանց ինչ այնչափ սաստիկ պատերազմաց եւ բուռն ճգանց կարող

են ինձ ծառայել սրբութեամբ եւ արդարութեամբ։

Այլ քեզ որ յառաջադէմն կամիս նկրտել՝ մեծի եւս փութոյ պէտք են։ Ցաշխարհի ես, ի մէջ վտանգաց շրջիս, թշնամիք կան քեզ յաջմէ եւ յահեկէ, եւ սակայն պարտ եւ պատշաճ է քեզ անցանել անվթար, կալ եւ մնալ արդար, մանաւանդ թէ եւ օր ըստ օրէ արդարագոյն եւս եւ սրբագոյն լինել։

Կրօնաւորաց՝ արժան է վառեալս լինել. այլ քեզ՝ որ քահանայդ ես՝ վառեալ լինել եւ լուսաւորել։

Պարտ է կրօնաւորաց զանօթ իւրեանց ի պատուի պահել, այլ քեզ, ա՛ղդ երկրի, հարկ է զերկիր՝ այս ինքն զմարդիկ զդուշացեալ պահել յապականութենէ։

Նոքա զանձանց իւրեանց պարտին խորհել, իսկ դու զանձնէ քումէ եւ զնաշանցն։ Օրինակ հօտին պարտ է քեզ լինել սրտիւ եւ մտօք։

Լուր արդ, ո՛րդեակ, ասացի քեզ եւ դարձեալ ասեմ. Լեր կատարեալ։

Գ. Տէր, գիտեմ ճշմարտիւ, զի եւ ատտեղք գլխովին չենտուրբ առաջի քո, թո՛ղ թէ մարդ երբ եւ որդն։

Իսկ արդ զի՞արդ բնաւ մարթ իցէ ինձ այնպէս կատարեալ լինել, որպէս վայել է պաշտօնէի քում որ հանապազ առ սեղանի քում կայցէ։

Ո՜հ. որչափ սուրբ բերան իմ, որչափ մաքուր մարմին իմ, որչափ կատարեալ պարտի լինել սիրտ իմ, յոր այնպէս յաճախ մտանէ ինքնին իսկ Աստուած, ինքնին մաքրութիւնն, ինքնին սրբութիւնն, ինքնին բարձրութիւնն։

Եւ զի՞արդ չդողայցեմ, Տէր, յորժամ յուշ ածիցեմ զի եւ Ահարոնի որ հնոյ օրինացն քահանայ էր՝ հարկ ի վերայ կայր սուրբ եւ կատարեալ լինել, եւ սակայն նա առ տապանակն եւեթ ուխտի եւ առ անօթս խորանի վկայութեան սահմանեալ էր, իսկ ես առ քեզ գլխովին, Աստուած իմ, եմ կարդեալ։

Նմա զհաց առաջաւորութեան միայն, այլ ինձ զհացն հրեշտակաց պարտ եւ պատշաճ է, ոչ միայն շօշափել՝ այլ եւ գործել իսկ։

Ահարոն ի դոյզն եւ ի չնչին արարած եւ ի ստուերս հանդերձելոց իրաց կարգեալ էր, եւ սակայն հարկ եղեւ իւրով ցեղիւն զատեալ եւ որոշեալ յայլոց ցեղից լինել։

Ապա որչափ եւս առաւել ինձ՝ որ ի բուն իսկ բարութիւնն՝ ոյր ստուեր եւեթ էր այն առաջինն, ի ճշմարտութիւնն որ կանխաւ ուրեմն առակեալ էր, ի բուն խորհուրդս Աստուածութեանն եմ նուիրեալ՝ պարտ իսկ է անզուգականութեամբ բարուց եւ սրբութեամբ ի

խառնիճաղանճ ամբոխէ անտի լինել զատեալ եւ անջատեալ։

Դ. Այդպէս է, ո՛րդեակ. ընտրեցի զքեզ յաշխարհէ, անջատեցի զքեզ յաշխարհէ, եղէ բաժին ժառանգութեան քո եւ բաժակի քո։ Յաշխարհի ես, այլ չէ արժան չէ օրէն քեզ լինել յաշխարհէ։

Ապա մի՛ ի գռեհիկ ինչ գործս եւ ի խորհուրդս միջամուխ լինիցիս, մի՛ ի ցանկութիւնս ինչ մտաբերիցես, մի՛ ինչ շաղեսցիս յարգելս խափանիչս։

Զիմոց ինչ իրաց միայն կալ հոգ յանձին, իմում պաշտաման ուշ դիջիր, յերկնաւորս դեգերեաց, քաղաքավարութիւն քո յերկինս իցէ։

Ե. Արդարեւ իսկ յերկրի ի մէջ մարդկան թողի զքեզ, այլ էր աղագաւ։ Միտ դիր, ո՛րդեակ, զի փրկեսցես զնոսա, զի զսէր իմ ի նոսա վառեսցես, զի իմովք շնորհօք ուղղանեսցես զնոսա, եւ ածցես զնոսա ընդ քեզ յերկնաւորս։

Յերկրի ես, այլ յերկնից ես, յերկինս պատշաճիս, մանաւանդ թէ երկինք իսկ պարտիս լինել ոգւոց, որպէս զի զոր օրինակ մարմինք ի ձեռն ազդեցութեան նիւթականն երկնից առնուն զօրութիւն եւ պտղաբեր լինին, այսպէս քեւ ոգիքն առցեն կեանս եւ կատարեալ լինիցին օր ըստ օրէ։

Արդ լիջիր դու նոցա երկին բարձրաբերձ՝ գերկնաւորսն խորհելով, երկին տարած եւ ընդարձակ՝ ի ձեռն սիրոյ, երկին լուսաւոր եւ պայծառ՝ ի ձեռն իմաստութեան եւ դիտութեան։

Երկին կանոնեալ ի շարժմունս՝ հնազանդութեամբ, պարզ եւ վճիտ՝ հաստատութեամբ, արդասաւոր՝ տեղեկութեամբ։

Երկին մեծապայծառ՝ բարի բարի օրինակօք, առատամիտ՝ ողորմածութեամբ, եւ մաքուր՝ սրբութեամբ։

Եւ յայնժամ՝ ես Աստուած երկնից՝ եղէց Աստուած քո, միշտ ընդ քեզ յինչ ինչ իրս եւ ձեռն արկանիցես. տնկեսցես, ոռոգանեսցես, եւ ես աճեցուցից։

ԳԼՈՒԽ Գ.

Թէ մարն եւ հնար է հաւանել կոպարբլոմենոն յայսմ ալեաբրհի։

Ա. Տ՝ԷՐ, լուայ զլուր քո եւ երկեայ, հայեցայ ի պատգամս քո եւ զարհուրեցայ։

Դու ասացեր ի ձեռն Որդւոյ քո՝ Լեր կատարեալ, որպէս եւ Հայրն քո յերկինս կատարեալ է։ Ո՞ բարձրութիւն։ Եւ զի՞արդ մարթի իցէ ինձ յայն հասանել։

Տուր ինձ, Տէր, թեւս իբրեւ գաղաւնոյ, զի թռեայց։ Այլ եթէ ինձ թողեալ լինիցիմ, խոնարհ եղեցի ի հողանձն իմ, եւ յերկիր կցեսցին մէջք իմ։

Զիարդ, Տէր, նուաճեցիս զայնչափ սխտոս կարեաց՝ որ հանապաղ մարտ եդեալ կռուին ընդդէմ հոգւոյ։ Զիարդ կամ որպէս յաղթեցիս այնչափ անչափ չարեաց՝ որ ամենայն ուստեք պատրաստեալ ընդ առաջ ելանեն ինձ։ Զիարդ պահեցիս եւ տաժեցիս զայնչափ առաքինութիւնս՝ որ հակառակ օրինաց անդամոց իմոց մարտնչին։

Արդ, հրամայեա ինձ զի ի մէջ ապականութեան՝ մաքուր իցեմ, ի մէջ պատուոց՝ խոնարհ, ի մէջ ընչից եւ մեծութեանց՝ աղքատ, ի մէջ մեղաց՝ սուրբ, ի մէջ թշնամեաց՝ անվկանդ։

Հրամայեա զի ի մէջ աշխարհի կեցցեմ եւ չիցեմ յաշխարհէ, զի յերկրի կեանս վարիցեմ եւ յերկնից իցեմ։

Տէր, լուայ զլուր քո եւ երկեայ, հայեցայ ի պատգամս քո եւ զարհուրեցայ։

Բ. Ո՛րդեակ, մի երկնչիր։ Ճշմարիտ է այն՝ թէ Աստուածութիւնն երկնից բոնաբարի եւ բռունք յափշտակեն զնա։

Մեծ մեծ է բեռնն քահանայի, այլ մեծ են եւ շնորհք այնր՝ որ զայն եդ ի վերայ։ Եւ ամենազօր ամենակալ՝ եդի ի քո վերայ զբեռնն, եւ ամենազօր՝ օգ-

նեցիս քեզ, զի դիւրագոյնս զայն բարձեալ բերիցես։

Միթէ կայցէ՞ ինչ ինձ դժուարին, եւ կամ նմա՞ն իցեմ այնմ՝ որ ասէն եւ ոչ առնէ։

Ի թշնամեաց երկնչիցիս։ Ես իսկ եմ տէր զօրութեանց։ Ի վտանգաց զանգիտիցես։ Ես զերծուցանեմ զքեզ յիսն յուսայցեն։

Աբրահամու պաշտպանեցի ի քաղդեացւոց աշխարհին, Յովսեփու՝ յԵգիպտոս, Ղոտայ՝ ի Սոդոմ, Յոբայ՝ ի մէջ անհաւատից, Դանիէլի՝ ի Բաբեղոն։

Զ Բուռամէոս, զՍաղեսեանն, զՎինկենտիոս եւ զայլս եւս անթիւ անհամար բազմութեամբ, որ այժմ ցնծան ի փառս իմում, ի մեղաւորաց միջի սուրբս արարի։

Տես, սրդեակ, կամեցայ, զի ամենեքին նոքա ի մէջ կամակոր եւ թեւր ազգին կատարեալք լինիցին, զի դու ուսցիս թէ չէ պարտ չէ արժան ումեք՝ յորպիսում կոչման եւ իցէ, վեհերել եւ լքանել։

Արդ աղէ, սրդեակ, արա որչափ ինչ ի քում կարի իցէ, ես լցից, ես ուղղեցից, ես կատարեցից։

Գ. Ահաւասիկ գամ, Տէր, զի զկամս քո արարից. կամիմ կատարեալ լինել։ Այս մեծի շնորհաց պէտք են առ այս։

Խոստանաս իսկ զայն արդարեւ քոց բարեկամաց, այլ ես անարժանս՝ որ բաղում անգամ բարկութեան քում եղէ արժանի, զի՞արդ կարիցեմ ակն ունել յապահովս այնմ շնորհի՝ զոր տաս քոց բարեկամաց։

Ես՝ որ այնպէս կորեայ ի վանդս մանուանս, զի՞արդ կարիցեմ ի մեծաց վանդաց զերծանել։

Ո՛հ. Տէր, թերեւս լաւագոյն եւս լինէր ինձ եւ անկասկածագոյն, եթէ ի գայթակղութեանցն աշխարհի որոց վայ կարդացեր՝ փախուցեալ, ի մենութիւն իջեալ՝ անդէն առնուի յանձն զվիճակ կրօնաւորական ծառայութեան, յորում ապահովագոյն եւս լինի մարդ սուրբ եւ կատարեալ։

Դ. Օ՜ի է, ո՛րդեակ։ Միթէ վասն այնորիկ դայ ճրագ զի ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ մահճաք։ Ո՞չ ապաքէն զի ի վերայ աշտանակի դնիցի։

Ո՛րդեակ, ոչ եթէ դու ընտրեցեր զիս, այլ ես ընտրեցի զքեզ եւ եդի զքեզ՝ զի երթիցես եւ բերցես պտուղ համբերութեամբ. խոստանամ քեզ շնորհս։

Անարժան զանձն կոչես. դիտեա, ո՛րդեակ, զի ոչ եթէ վասն արժանեաց ինչ տուեալ լինին շնորհքն իմ, ապա թէ ոչ՝ շնորհք չէին։

Սիրեա զիս. արածեա զոչխարս իմ։

Եթէ արածիցես՝ զսէր քո ցուցցես, եւ որոց սիրենն զիս՝ ամենայն ինչ գործակից լինի ի բարիս, նաեւ վասանդք իսկ գլխովին եւ թշնամիք անգամ։

Արածեա զոչխարս իմ։ Արածելովն՝ սիրեսցես, սիրելով՝ օգտեսցիս եւ լիցիս կատարեալ։

Արածեա զոչխարս իմ։ Արածելով՝ լիցիս նմանող Հովուին քաջի՝ Յիսուսի Որդւոյ իմում։

Նոքա են կատարեալք եւ յառաջագոյն հրաւիրեալք, զորս յառաջն ծանեայ թէ կերպարանակից լինելոց են պատկերի նորա։

ԳԼՈՒԽ Դ.

Վասն դիւորդոյն ի խոտորիլոնին հասանելոյ։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, կամիս կատարեալ լինել։ Բայց զբերան քո եւ լցիր զդասքաղցիր եւ ծարաւեայ արդարութեան, եւ յագեսցիս. փափաքեայ, եւ տայի քեզ հանճար. լեր այր ցանկալի, եւ եկեսցէ ի քեզ հոգի իմաստութեան։

Եթէ ջերմեռանդն ցանկասցիս կատարելութեան, այնու սաստիկ ցանկութեամբ իբրեւ ընդոստուցիչ իմն խթանաւ զարթուցեալ՝ յառաքինութենէ յառաքինութիւն գնասցես, մինչեւ

հասանիցես ի ծագ լերինն Սինի, ուր միաւորեալ ի ներքուստ ընդ Աստուծոյ քում վայելեսցես։

Արդ ցանկացիր ջերմաջերմ, դիր ի մտի հաստատութեամբ, եւ նորոգեա զայն ցանկութիւն եւ գյառաջադրութիւն օր ըստ օրէ եւ ժամ ի ժամէ. այնուհետեւ ի սակաւ ժամանակի վառեալ բորբոքեսցիս։

Բ. Եթէ կամիս կատարեալ լինել, ջանա յամենայն գործս քո ինձ միայնում հաճոյ լինել։ Ապա միշտ իսկ եւ հանապազ յառաջ քան զգործս քո կանխեսցէ սուրբ դիտաւորութիւն հաճոյից եւ սիրոյ իմոյ։

Եթէ ցանկ փոյթ յանձին ունիցիս գործել այնպէս զի ինձ հաճոյ լինիցիս, յայնժամ դիտացից թէ սիրիցես զիս յամենայն սրտէ, յամենայն անձնէ, յամենայն մտաց եւ յամենայն զօրութենէ։

Յայնժամ կեցցես, եւ կեցցես կատարելապէս։ Զի որ սիրէն՝ ընդ զօրէնս։

Զգոյշ լեր, ո՛րդեակ, տես զի մի արասցես զարդարութիւն քո առաջի մարդկան, զի երեւեսցիս եւ փառս ունիցիս. շահեսցիս ինչ արդարեւ առաջի նոցա, այլ ի կատարելութենէ հեռացեալ գտանիցիս։

Զգոյշ լեր, ո՛րդեակ, տես զի մի

անհոգութեամբ ինչ գնասցես ի ծառայութեան իմում։ Ոչ եթէ կատարեա՛լ, այլ անիծեա՛լ որ գործէ զգործ Աստուծոյ հեզգութեամբ։

Գ. Եթէ կամիս կատարեալ լինել, Ջանա, սրդեակ, զի զես հանապազ ամենայն ուրեք նշմարեսցես եւ զանձն քո առաջի աչաց իմոց կացեալ համարեսցիս։

Ցիշեա եւ ցանկ ի միտս քո յեղյեղեալջիր՝ թէ ես եմ Աստուած որ զամենայն տեսանեմ, եւ քննեմ զսիրտս եւ զերիկամունս։

Նմին իրի թէ խօսիցիս, թէ խորհեսցիս, թէ ցանկասցիս ինչ կամ կամեսցիս կամ գործեսցես, զայն ամենայն առաջի իմ խօսեալջիր, խորհեալջիր, դիջիր ի մտի եւ գործեալջիր։

Յայնժամ գնասցես առաջի իմ իբրեւ զԱբրահամ, զՆովք, զՆոյ, եւ իբրեւ զԵզեկիա ճշմարտութեամբ եւ կատարեալ սրտիւ։

Դ. Եթէ կամիս կատարեալ լինել, Ջանա, սրդեակ, զի այնպէս վարեսցիս ի գործս՝ որպէս թէ առժամայն իսկ մեռանելոց իցես, իբր այն թէ յետին գործ կենաց քոց իցէ։

Ո՛հ. թէ զայդ առնէիր, սրդեակ, զե՞արդ եռանդմամբ զպատարագն մատուցանէիր։ Որպիսի՞ ինչ արա

1010
40736
1053-2013

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ

լայնը զմեղս քո։ Քանի՞ մտադիւրու-
թեամբ յաղօթս կայիր։

Ո՛հ, ո՛րդեակ, ոչ եթէ մեծամեծս
ինչ կամ անհնարինս ի քէն պահանջեմ,
զի կատարեալ լինիցիս։

Քահանայ ես, պարտիս աղօթս առ-
նել, զխիղճ մտաց քոց քննել, մատա-
կարարել զխորհուրդս, կատարել զժա-
մուցն պաշտամունս, եւ պատարագ մա-
տուցանել։ Զայս ամենայն թէ գործես-
ցես կատարելապէս, լիցիս կատարեալ։

Ե· Եթէ կամիս կատարեալ լինել,
ստէպ զմտաւ ած, ո՛րդեակ, թէ առ
ինչ եկիր եւ թէ հիմ եղեր քահանայ։
Ո՞չ վասն այնորիկ՝ զի ինձ հաճոյ լինիցիս
եւ հաստատուն զքո փրկութիւն գոր-
ծեսցես։

Այսու խորհրդով զարթո զանձն քո,
ցանկ զուարթացեալ գործեա, միշտ
ձեռն ի գործ արկանիջիր, ի բաց թօ-
թափեա զծուլալից հեղգութիւն, յաղ-
թեա ախտից կարեաց քոց, զանկարգ
յօժարութիւնս կալ ի չափս։

Եթէ այսպէս հանապազ ի կատա-
րելութիւն նկրտեսցիս, այն իսկ համա-
րեսցի քեզ կատարելութիւն։

Ապա թէ անկցիս, ո՛րդեակ, կամ
թէ նուազագոյն ինչ քան որչափ ցան-
կայիրդ՝ օգտեսցիս, մի՛ յուսահատ լի-
նիցիս։

խոնարհեցո եւ եթէ զանձն եւ հեծեսջիր։ Կատարելութիւն համարեսցի քեզ եւ այն իսկ՝ զի ոչ գտանես զքեզ կատարեալ։

Զ. Եթէ կամիս կատարեալ լինել, էջ, ուրդեակ, ի խորս սրտի քո, եւ անդ առաջի իմ զծածուկս սրտի քո քննեսջիր միամտութեամբ։

Տես եւ խորհեաց բազում հաւատեաւ զխոչս եւ զխութս որ արդեն լինին քեզ՝ զի մի ընթացցիս եւ մի յարաջադէմ գնայցես, եւ զայն ամենայն ի բաց պարուրեա։

Տես թէ որ այն սկիզբն իցէ ախտից քոց եւ թերութեանց։ Քանզի ունին միշտ արմատ ինչ գլխաւոր։

Ահաւասիկ Գողիաթ, սատակեա զնա եւ յաղթեցեր, այս ինքն զամենայն հնարս հնարեսջիր՝ զի զգլխաւոր զայն յոռութիւն արմատաքի խլեսցես։

Է. Տես, ուրդեակ, զի արդ վաճառականքն օգտածարաւիք յաւելուածս ինչ առնեն օր ըստ օրէ յինչս իւրեանց։ Այսպէս եւ դու ի դանձան՝ զոր քեզ յերկինս գանձես՝ արա ինչ յաւելուած։

Տես թէ ուրպէս նկարիչք զպատկերսն զոր հանեն ի նկարու՝ հանապազօր կատարեալ եւս գործեն։ Նոյնպէս եւ դու զյոռութիւնսն ուղղեցես եւ զառաքինութիւնս աճեցուսցես։

Նոքա, որդեակ, զի զեղծանելի պտակն առնուցուն, իսկ դու զանեղծութեան։

Ը. Տէր, տուր զի որպէս հրամայեան օգտիցիմ, տուր զի առանց ինչ նենգութեան եւ առանց փաղաքշանաց զանձն քննեցից։

Տէր, տուր զի հանապազ չթուիցի ինձ հաճոյ զոր եմն, եւ հասանիցեմ յայն զոր չեմն տակաւին։ Տուր զի մի յեսս յեսս գնայցեմ, մի աղամղեալ խաւորիցիմ եւ մի կայցեմ ի ճանապարհի։ Վասն զի գիտեմ, զի թէ ասացից թէ շատ եւ բաւական է՝ կորեայ։

ԳԼՈՒԽ Ե.

Վասն սակաւութեան ընդ բերեալ։

Ա. Ո՛հ. որդեակ, որչափ սակաւք են ի քահանայից՝ որ գնան ընդ անձուկն ճանապարհ, քանի սակաւք որ մտանեն ընդ դուռն նեղ։ Բաւէ, որչափ բաղումք խաւորեցան ի շաւղաց իմոց։

Եկ եւ տես, արդարեւ արտաքոյ անձուկն ճանապարհի գտանին ամբարտաւանք՝ որ իւրեանց սնոտի գիտութեամբքն ուռուցեալ եւ տրտմեալ, դայլս դարձեալ արհամարհեն, եւ տիրել իմն ի մէջ ուխտի մանկանցն կամին։

Այժմ վերացեալ բարձրանան իբրեւ զմայրս Լիբանանու, այլ ապա ընդ արտաքսեալին ի դժոխս անկանիցին։

Այլ եւ ոչ ընդ դուռն նեղ մտանեն հպարտքն փառասէրք՝ որ զանձինս իւրեանց սիրիցեն եւ ոչ եթէ զիս կամ զՀոգիս. եւ երախտիս եւ պատիւս մուրանայցեն, եւ գոգցես իմն որսան եւ դիզեալ շեղջակուտեն. եւ սակաւ ինչ զանձանցն բաւականութիւն հոգացեալ՝ ոչ ինչ փոյթ յանձին ունին զպարտուցն եւ զպաշտամանց:

Ցիրաւի ուրեմն՝ զոր օրինակ յերկինս փառաց յախուռն ճեպեցին ելանել, ամօթապարտեալք իջցեն մինչեւ յանդունդս տանջանաց:

Արտաքոյ ճանապարհի են եւ նոքա որ մամոնայի եւ ոչ եթէ ինձ ծառայիցեն, եւ զզօշաքաղութեան զհետ պնդիցին ի մէջ վիճակաւորաց:

Արդարեւ ունին սոքա զարկղն ընդ Ցուդայի, եւ ընդ նմա՝ ընդ մատնչին ի կորուստ գնայցեն:

Բ. Ոչ մտանեն ընդ դուռն նեղ այնպիսիքն՝ որ զաշխարհական գործովք կարի իմն զբաղեալք՝ ոչ զաղօթիս կամ զուսմանէ եւ ոչ իսկ զանձանց եւ զայլոցն փրկութենէ հոգ ի մտի ունին, այլ ի կագս եւ ի կռիւս, յինչս ժամանակաւորս եւ ի շահավաճառս դեգերեալ թարթափին յառաւօտէ մինչեւ ցերեկոյ:

Արդարեւ զերկիր՝ զոր բոլորով սրտիւ

սիրեն՝ կորուսեալ ի մահուանն, զերկինս զոր չինդրեցին՝ ոչ ընկալցին։

Արտաքոյ ճանապարհի են եւ որ ի խօսս անուտիս եւ ի խաղս պարապեալք՝ զօրն ողջոյն կան դատարկ։

Արդարեւ իսկ յորժամ գայցէ Տէր այգւոյն, ոչ տացէ նոցա վարձս։

Ոչ մտանեն ընդ նեղ դուռն եւ այնոքիկ՝ որոց զսրբութիւն զդաստութեան ուխտեալ իցէ՝ եւ չսարսիցեն կամ խորհրդով, կամ բանիւ եւ կամ գործով մատնել զանձինս ի պղծութիւն։

Արդարեւ այնպիսիքն սեղանաղերծ անօրէնութեամբք եւ աղտեղութեամբք լցեալ՝ ոչ մոցեն յարքայութիւն իմ, ուր ոչ մի ինչ պիղծ ընկալեալ լինի։

Գ. Ձեզ ինչ ընդ այն երկմտել, ո՛ր-դեակ, եթէ արտաքոյ ճանապարհի իցեն եւ որ յաշխարհէ են, զաշխարհ սիրիցեն, զաշխարհէ խօսիցին, ընդ աշխարհի ունայնութիւնս պարծիցին, փափկութեամբք աշխարհի զմայլեալ իցեն, եւ աշխարհական ուրախութեամբք ցընծացեալ զբօսնուցուն։ Արդարեւ զի ընդ աշխարհի խնդացին, ոչ կարասցեն յետոյ ընդ Քրիստոսի թագաւորել։

Ոչ մտանեն ընդ դուռն նեղ եւ որ ցուրտքն են եւ հեղգք, որ ոչ երբեք գան ի միտս, եւ ի յանցանաց ի կարի ծանուցց եւեթ փախչիցին։

Արդարեւ, ոչ լինին ընկալեալ ի յաւ-
իտենական կոչումն՝ որ ի փսխել զբը-
գռիցեն զբերան իմ։

Ոչ լեցին ընդունելի եւ նոքա՝ որ զինչս
ժառանգութեան իմոյ ի մեծասպաս
փառաւորութիւնս, յընդունայնութիւնս
եւ ի փափկութիւնս վատնեալ իցեն,
եւ առ աղքատս իմ կծծի լիեալ իցեն
եւ ոչ ողորմածք։

Արդարեւ իսկ ասացից ցնոսա ի սրբա-
մտութեան իմում՝ թէ երթայք յինէն
անիծեալք ի հուրն յաւիտենական։

Արտաքոյ ճանապարհի են եւ այնոքիկ՝
որ յուղղութիւն ժողովրդեան իմոյ իցեն
կարդեալ, եւ օրինակ չարութեան տա-
ցեն խաշանց իմոց։

Կորիցեն արդարեւ իբրեւ զսպանիչս ոգ-
ւոց՝ յորոց ձեռն գայցէ դայթակղութիւն։

Ոչ մնանեն ընդ դուռն նեղ այնպի-
սիքն՝ որ ոչ զսրբոց կանանաց՝ այլ զեղ-
ծագործ սովորութեանց զհետ երթեալ,
չունին ինչ փափաք յանձին եւ ոչ դուն
դորձեն լինել քան զցոփան սրբազոյնք։

Արդարեւ ոչ պատակեսցին՝ բայց որ օ-
րինօքն մարտեան։

Դ. Այնպէս արտաքոյ ճանապարհի
են եւ որ ոչն լինին հնազանդ առաջնոր-
դաց եւ ոչ հոգան զհրամանաց նոցա, եւ
այնու Եկեղեցւոյ՝ որ ի ձեռն նոցա պա-
տուէր տայ՝ ոչ լսեն։

Արդարեւ իսկ զիս անարդեն սոքա, եւ վասն այնորիկ դատապարտեսցին ի Հօրէ իմմէ ի դատաստանի։

Ոչ մնանեն բնդ նեղ դուռն եւ որ ոչն ուսուցանեն զժողովուրդ իմ, ոչ յանդիմանեն զնոսա վասն մեղաց, զնոսա տովանութիւնս՝ եթէ ոչ դժկամակութեամբ սակայն հարեւանցի իմն եւ յանհոգս լսեն, զանարժանսն արձակեն, զեկեղեցական պաշտամունս առանց տուուածպաշտութեան կատարեն, եւ շտապաւ իմն կամ առանց պատրաստութեան զպատարագն մատուցանեն։

Արդարեւ անիծեալք են նոքա՝ որ կամ ոչ հանեն զգործ իմ ի դլուխ, եւ կամ անհոգութեամբ վճարեն։

Դարձեալ արտաքոյ ճանապարհի են որ թողուն զտաճարս իմ աղտեղութեամբք եւ ցնցոտեօք անպատուել, եւ չունին ինչ փոյթ զտանէ իմմէ։

Արդարեւ իսկ ոչ սիրեն զիս այնպիսիքն, նմին իրի եւ ոչ ունիցին մասն յարքայութեան՝զոր պատրաստեաց Հայրս սիրելեաց իւրոց։

Ո՜հ, որդեակ, որչափ քահանայք են անուամբ լոկով. քանի սակաւք՝ գործով։ Մեծ ոմն համարի քահանայ՝ եթէ ոչ օրինազանց ոք իցէ։

Բաւէ, որչափ են քահանայք արտաքին հանդերձիւք. քանի սակաւք՝ ներքին

կատարելութեամբ : Ո՛րչափ սակաւք ճրագունք լուցեալք եւ լուսատուք :

Ո՛րչափ գուն ուրեք ճշմարիտ անմեղութիւն : Քանի՛ անօր կատարեալ ապաշխարութիւն : Քանի՛ անօր սուրբ սէր : Զի՛արդ գուն ուրեք անկեղծաւորն խոնարհութիւն :

Ո՛րպէս գոյն անհանդիստ աշխատութիւն : Քանի՛ անօր անդադար աղօթք : Ո՛րչափ գոյնագիւտ ճշմարիտն սրբութիւն :

Գուն դիր, ո՛րդեակ, մտանել ընդ դուռն նեղ : Զանա զի գործով բարեօք հաստատուն զքո ընտրութիւն գործիցես :

Ե. Սակաւք են ընտրեալք : Բեւեռեսցի, ո՛րդեակ, երկեւղ ճշմարտութեանս այսորիկ ընդ մարմին քո :

Երկիր, զի մի՝ թէ սակաւք ի խաշանցն փրկելոց իցեն, սակաւագոյնք եւս իցեն ի քահանայից :

Երկիր, զի զանց արար քահանայն, զանց արար եւ ղեւտացին, ուր Սամարացին արժանի գովութեան եղեւ :

Երկիր, ո՛րդեակ, զի բազումք եղիցին յետինք՝ առաջինք, եւ առաջինք՝ յետինք :

Երկիր, զի բազումք ի հեռաստանէ եկեսցեն, եւ բազմեսցին ընդ Աբրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակովբու

յարքայութեան երկնից, եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին։

Ո՛Հ. թէ այն ճշմարտութիւն ընդ սիրտ քո անցեալ էր, ոչ ինչ ընդ այն երկմտեմ՝ թէ ոչ մեղանչէիր, այլ ահիւ եւ դողութեամբ զանձին փրկութիւն գործէիր։

ԳԼՈՒԽ Զ.

Վասն ժանրոմիեան մեղացն քահանայից։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ. ո՞ր այն մեղք են մեծ յոյժ առաջի իմ։ Այն իսկ են արդարեւ մեղք իմոց քահանայից։

Վասն այսորիկ կատարեմ ես զսրբութիւն բարկութեան իմոյ, հեղում զսրտմտութիւն բարկութեան իմոյ. վասն այսորիկ բորբոքեցուցանեմ հուր ի Սիոն։

Բ. Ո՛Հ. Տէր, խօսեցայց առ քեզ, թէպէտեւ հող եմ եւ մոխիր։

Գիտեմ, Տէր, զի ոչ գոյ ակնառութիւն առաջի քո. ոչ գոյ առաջի քո խուժ դուժ, ոչ եկ, ոչ Յոյն, ոչ Արաբացի, ոչ արու եւ ոչ էգ։

Գիտեմ զի ամենեքին մի են ի քրիստոս Յիսուս։ Ապա զի՞արդ առաւելագոյն զայրանայցես քահանային որ յանցանիցէ։ Եւ կամ ո՞րպէս սակաւս խնայես։

Գ. Ո՛ՐԴԵԱԿ, չէք, չէք իսկ առաջի իմ ակնառութիւն, եւ ոչ մեծատուն առաւել քան զաղքատն, եւ ոչ իշխան

քան զեշխանաւոր, եւ իմաստուն առաւել քան զոգէտ իցէ յաչս իմ։

Սակայն արդար եմ, եւ զկշիռ ծանրութեան անօրէնութեանն գիտեմ կշռել, դատել եւ պատուհասել։

Արդար է՝ զի առաւել ընդ քահանայն յորժամ յանցանիցէ՝ զպրանայցեմ, քանզի մեծ եւս է անօրէնութիւն նորա։

Դ. Լսուր, ո՛րդեակ, թէ որպիսի՞ ինչ եղեւն իցէ նորա։ Մեծ մեծ յանցանք են, թէ իշխիցէ ոք ի խառնաղանճ ամբոխէ՝ զմեծի ուրուք արքայի զհրամանս անարդել, եւ ժպրհեալ յառնել ընդդէմ նորա, եւ զէն ի ձեռս առեալ ապստամբել։

Այլ մեծ եւս ոճիրք են՝ եթէ ինքնին իսկ պաշտօնեայն թագաւորի, եթէ տնտեսն գլխովին գործոց նորա զնոյն ժամիցի գործել։

Ի միտ առ, ո՛րդեակ, զառակն. յորժամ քահանայն մեղանչիցէ, յորժամ զհրամանս իմ անարգիցէ, յորժամ չառնուցու յանձն հնազանդել, այնու իսկ յանդգնեալ ընդդէմ յարուցեալ ասէ՝ թէ Ոչ ծառայեցիցս։

Եւ որպիսի՞ ոք իցէ, ո՛րդեակ, քահանայն այն՝ որ այնպէս անկուշեալ, կապարճս դարձուցեալ յետս կայցէ յապրստամբութիւն։ Պաշտօնեայ իմ է, մատակարար խորհրդոց իմոց։ Ո՛ անօրէնութիւն մեծ յոյժ առաջի իմ։

Ե. Մեծ իմն եղեւն է, յորժամ որդի լաւի ուրուք հօր զնորա իշխանութիւնն նշկահեալ ի տար աշխարհ գնայցէ՝ զի ցոփ եւ բարեկեցիկ կեանս կեցցէ։

Ա՛յլ եւս իմն մեծ ապիրատութիւն է, եթէ ոք հարսն զիւր զօրինաւոր փեսայ առ ոսն հարեալ՝ յայր յայլ յարեսցի։

Ի միտ առ, ո՛րդեակ, զառակն։ Հոգի քահանայի անդէն ի ձեռնադրութեան զանձն ուխտիւք ինձ խօսեցաւ. այլ յորժամ մեղս գործիցէ՝ հոգի նորա յինէն ի բաց հեռանայ, զի աշխարհի կամ մարմնոյ կամ սատանայի՝ իմոց ոխերիմ թշնամեաց տացէ զանձն վտարանդի։

Ո՛ անհաւատարիմ, ո՛ անիրաւ հարսն, որ զմեղս, զսատանայ իսկ ինքնին գլխովին քան զաստուածեղէն փեսայ նախամեծար համարի։ Ո՛ անօրէնութիւն մեծ յոյժ առաջի իմ։

Զ. Մեծ մեղս գործեցին Հրեայքն, զի զիս ի մահ խնդրեցին եւ ձեռնամուխ եղեն յիս բռնութեամբ։

Բայց մեծ եւ կարի իսկ մեծ եղեն յանցանքն Յուդայի, զի առաքեալ իմ էր, սակայն նոցա հաւանեալ վաճառեաց զիս եւ մատնեաց։

Ոչ եթէ առակ ինչ է այս, ո՛րդեակ, այլ ինքնին իսկ ճշմարտութիւն՝ որով քեզն խօսիմ։

Զայն ճարտար գիտես թէ ո՛րչափ եւ

որպիսի ինչ անօրէնութիւն իցէ քրիստոնէից յորժամ մեղաք իւրեանց միւսանգամ ի խաչ հանեն զիս եւ առակ նշաւակի առնեն։

Ապա ի միտ առ թէ արչափ իցէ եղեռն անօրէնութեան քահանայի՝ յորժամ մեղաք ձեռնամուխ յիս լինիցի։ Ո՛ անօրէնութիւն մեծ յոյժ առաջի իմ։

Է. Արդարեւ ասեմ քեզ, բազում ինչ յայլոց մեղաւորաց եւ ամպարշտաց կրեմ, սակայն ոչ մեծ եւս տոյժ ինչ քան զայն զոր ի քահանայիցն յանցուցելոց կրեմ՝ կրեմ երբեք։

Ապա մի ինչ զարմանայցես եթէ սասակագոյն եւս ընդդէմ նոցա բորբոքեսցի սրտմտութիւն արդարութեան իմոյ, եթէ դոչիցէ ցասմամբ. թէ Եկեսցէ մահ ի վերայ նոցա, եւ իջցեն ի դժոխս կենդանեւոյն։

Թշնամեաց՝ թէ անիծանեն՝ հանդուրժեմ. ծանօթից՝ յորժամ ընդդէմ դառնան՝ չկարեմ հանդարտել։

Ը. Արդ սարսեսցեն եւ դողասցին քահանայքն ամպարիշտք, զի ճշդագոյնս եւ սաստկագոյնս քան զայլս դատեցայց ինոսա։

Ցերկրին սրբոց զանօրէնս գործեն. մի տեսցեն զփառս իմ, այլ հզօրագոյնս պահանջեսցին։

Ցիշեսցեն զԷնաբաղ եւ զԱբիուդ։ Պաշ-

տունեայք իմ էին. տեսի զնոսա զի եդին հուր օտար ի բուրուառս իւրեանց, եւ անդէն առաքեցի հուր յերկնից ի վերայ նոցա եւ ծախեաց զնոսա։

Յիշեսցեն զՈղա դեւտացի։ Տեսի զնա զի անպատշաճ իմն օրինակաւ ձգեաց զձեռն իւր ի տապանակ ուխտին իմոյ, եւ առժամայն հարի զնա, թէպէտ եւ Փղշտացւոցն՝ որ յանդգնագոյնս արկին ձեռս ի տապանակն՝ խնայեցի։

Յիշեսցեն զորդիսն Հեղեայ։ Տեսի զնոսա վրիպեալս եւ յանցուցեալս եւ սատակեցի։

Ո՜հ. որդեակ, յիշեա եւ դու եւ երկիր ի դատաստանաց իմոց, զարհուրեսջիր ի բարկութենէ իմմէ։ Արթուն լեր, փախիր ի մեղաց։

Թ. Ո՜ւմց, Տէր, բաց զսիրտ իմ, եւ հեղ ի սիրտ իմ զերկեւղ մեղաց եւ զատելութիւն անօրէնութեան առաւել քան զառաւել։ Բեւեռեա ընդ երկեւղ քո զմարմին իմ, զի մի մեղայց քեզ։

Սակայն տես, Տէր, զդիւրամէտ ոտնառութիւն իմ ի շարիս։ Եմ եմ քահանայ, այլ եւ մարդ եւս եմ անօրէնութեամբ յղացեալ։

Օգնեա ինձ, վարեա զիս, կալ զձեռանէ իմմէ զաջոյ, եւ ի խորհուրդս քո առաջնորդեա ինձ։

Տես, Տէր, զկատաղութիւն սատա-

նայի ասոխին իմոյ։ Ահաւասիկ հանապագ իբրեւ զառեւծ գոչէ, շրջի եւ խնդրէ թէ զմի կլանիցէ։ Փրկեա զիս ի թշնամւոյ յայնմանէ։

Տէր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի. եթէ ոչ դու պահես զիս՝ ընդունայն ուքնեցայց, ի զուր պահել զիս ջանացայց։

Ի քեզ յուսացայ. ընդ յարկաւ արա զիս, պաշտպանեա ինձ, եւ ոչ կորեայց ի տկարութեան իմում։

ԳԼՈՒԽ Է.

Վասն ջրհոսին որ ծագէն է վերին վերոյ փահանայիցս։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, լալով լայի, եւ արտասուք իմ ի վերայ ծնօտից իմոց, քանզի բարեկամն իմ՝ զոր ի վերայ ամենայն ընչից կացուցի, դարձաւ եւ եղեւ ինձ թշնամի։

Հայեաց, ուրդեակ, եւ տես, թէ իցէ՞ն երբեք ցաւք ըստ ցաւոցս լեալ։

Գնեցի ուշնարս ի Հորէ իմմէ փրկանօք արեան իմոյ։ Սէր յաւիտենական սիրեմ զնոսա, եւ յայն սակս իսկ ծառայի իմում յանձն արարի, զի յանուն եւ ի սէր իմ հովուեսցէ, պահեսցէ եւ փրկեսցէ զնոսա։

Ասայի ցնա, բարեկամ, քեզ յանձն

առնեմ զոչխարս իմ, հան յարօտ զնոսա, երթ առաջի նոցա, ծանիր զնոսա, դիր զանձն քո ի վերայ նոցա:

Ա՛յլ եւս ոչխարքք են իմ որ ոչ են յայսմ գաւթէ, եւ զայնս եւս քեզ յանձն առնեմ. բերեկամ, ածեա զայնս այսր, զի եղիցի մի հօտ եւ մի հովիւ:

Ասացի ցոչխարսն իմ, երթայք զհետ հովուին, ծաներուք զձայն նորա, զօտարի զհետ մի երթայք, այլ փախեարուք ի նմանէ:

Բ. Օ՛ի եղեւ, որդեակ. ծառայն այն՝ որում այնպէս սիրով զոչխարսն իմ յանձն արարի, եղեւ իբրեւ վարձկան, որում չէ փոյթ վասն ոչխարացն:

Եւ տես զգայլն զի գայր, եւ եթող զոչխարսն եւ փախեաւ, եւ եկն գայլն յափշտակեաց զոչխարս իմ եւ ցրուեաց:

Մանաւանդ թէ, որդեակ, ծառայն այն եղեւ գող չար եւ աւազակ, եւ սպան ինքն եւ կորոյս զոչխարս իմ՝ որոց վասն ես եկի զի զկեանս ունիցին եւ առաւել եւս ունիցին:

Գ. Լ՛ուր, որդեակ, լուր թէ զիարդ ծառայն այն չար դարձաւ եւ եղեւ ի հօտի իմում իբրեւ երէ վայրի եւ արածեցաւ ի նմա:

Պարտ էր նմա ածել զոչխարս իմ յարօտս հաւատոց ի խոտաձիգ եւ ի ճարակաշատ, ուսուցանել պարտ էր նմա

զնոսա, հրահանգել ի հաւատս եւ քա-
րոզել :

Սակայն նա անփոյթ արար. ուստի եւ
եկն սով ի վերայ : Ի սակաւ ժամանակի
տեսի զի վատեալ էր խաշն իմ եւ ոչ
ծանեայ զերեսս նորա :

Այլ առնել պարտ էր նմա ոչխարաց
իմոց եւ ուշ ունել կերպարանաց իւրա-
քանչիւր՝ հանապազորդ լսելով զնոս-
տովանութիւնս նոցա :

Սակայն ոչ արար, եւ ի սակաւ ինչ
ժամանակի աճեցին եւ բազմացան ախտքն
եւ վէրքն, եւ բազումք յոչխարաց իմոց
կորեան, քանզի ոչ գտաւ որ դարման
տանէր նոցա :

Սկել պարտ էր նմա ի վերայ ոչխարաց
իմոց զի մի օձատեալ ցրուեսցին, եւ
խնդրել զմոլորեալսն, եւ ոչ ինչ խնամ
կալաւ եւ անհոգ եղեւ եւ ցրուեալ
վարատեցան :

Ոչխարքն այնոքիկ հոգիքն են, որ-
դեակ, որ ի տգիտութեան, ի մեղս եւ
ի մոլորութիւնս լքեալ թողան ի չար
քահանայէ :

Ո՛ անհաւատարիմ հովիւ : Ո՛ ծառայ
չար : Ո՛ հովիւ տարապարտարօտ որ ընդ
վայր եհար զխաշն իմ :

Դ. Այն ամենայն, որդեակ, սկիզբն
է երկանց իմոց : Լուր եւ եւս եւ լայջիր
ընդ իս. քահանայ չար եկուլ զոչխարս

իմ եւ ապան զնոսա։ Մեղաւ ինքն եւ ընդ վայր եհար զհոգիս։

Քանզի տեսին զնա զի մեղանչէր եւ ասացին. սա հրեշտակ Տեառն է՝ որ գիտէ զբարի եւ զչար, ոչ եթէ աւելի ինչ քան զնա յԱստուծոյ պարտիմք երկրնչել, ոչ աւելի ինչ քան զնա պահել զպատուիրանս, ոչ աւելի ինչ փախչել ի մեղաց։

Իսկ արդ զի՞արդ. չիցէ՞ մեզ օրէն՝ որ ինչ նմա օրէն եւ պատշաճ իցէ. զի՞նչ՝ չգործիցե՞մք զնոյն զոր նայն գործէ. երթիցուք զհետ նորա, եւ ընդ ճանապարհս նորա յառաջադէմ գնասցուք։

Այսպէս նորա օրինակաւն զառաձան հոգիքն ի չարիս. այսպէս ի յոռութիւնս եւ յանօրէնութիւնս հաստատեցան։

Ե. Եւ զի՞նչ եւս, ո՛րդեակ. մրուր բաժակի անգթութեան նորա ոչ ապառեցաւ տակաւին։

Լուր, լուր, եւ յիմարեսցին երկինք վասն այսորիկ, եւ դրունք նորա կործանեսցին յոյժ։

Տեսանեն ոչխարքն իմ թէ բարք եւ վարք նորա չեն նման եւ հանգոյն վարդապետութեանն. մերթ երկմտեն, միթէ համարիցի՞, ասեն, եւ ինքն ճշմարիտ պհրամանն հաւատոյ՝ զոր ուսուցանէ, միթէ ինքն հաւատայցէ՞ նոցին, ճշմարի՞տ արդեւք իցեն։ Եւ մերթ ասեն

յանձինս իւրեանց, ինքն իսկ վարդապետն, հովիւն, առաքեալն ոչ հաւատայ, եւ ընդէ՞ր հաւատացիս. ի դժոխոց ոչ երկնչի, եւ վասն է՞ր երկեայց: Ասի անհաւատութիւն. ասի ամպարշտութիւն:

Այսպէս, ո՛րդեակ, այսպէս ի չար մարդարէէ ելանէ պղծութիւն ընդ ամենայն երկիր:

Ո՛ քահանայ, ոչ եթէ հովիւ՝ այլ մոլորեցուցիչ հօտին իմոյ: Ակն ընդ ական, ատամն ընդ ատամն հատուցէ անօրէնն այն. եղիցի անձն նորա փոխանակ անձանց նոցա:

Զ. Ո՛ վատթար քահանայք, ո՞րչափ եւ քանի՞ չարեաց էք պատճառք:

Զի՞նչ ինչ ոչ կրեցի յիշխանէն ձերմէ ի Յուդայէ, որ մատնեացն զիս Հրէից զի խաչեսցեն:

Զի՞նչ ոչ յԱրիոսէ՝ որ զհամօրէն եկեղեցի իմ աւերեաց եւ անշքացոյց:

Զի՞նչ ոչ ի Ղութերայ՝ որ զայնչափ մատն հօտին իմոյ ի մոլորութիւն ած եւ ի կորուստ:

Զի՞նչ ոչ եւ յայնչափ անչափ քահանայից՝ որ հերձուածոց եւ հերետութեանց պաշտպան կացին:

Ո՛ ժանտ եւ անօրէն քահանայք՝ յորոց ձեռն եկին այնչափ գայթակղութիւնք, յորոց ձեռն այնչափ ժողովուրդք

եւ այնչափ ազգք ի հաւատոց եւ ի միութենէ եկեղեցւոյ իմոյ մեկնեալ հեռացան, որք անիրաւութեամբ իմն զձեր յանցանս ի վերայ հարսին իմոյ սրբոյ եւ զդաստի արկանէք։

Վասն ձեր, վասն ձերոց անօրէնութեանց խոցի աշխարհ սրով, վասն ձեր կորնչի հարուածովք, վասն ձեր զօրականք ուղղահաւատք յաղթեալ ի պարտութիւն մատնին։

Վայ ձեզ, ծնունդք իժից։ Ընկղմեսցեն զձեզ, յառաջ քան զայլ անօրէնս, անդունդք խորոցն դժոխոց. կափուսցէ կատաղութեամբ զբերան իւր ի վերայ ձեր ջրհոր տանջանաց։

ԳԼՈՒԽ Ը.

Վասն բարեաց որ ծագին ի սրբոյն Լուսաւորչէ։

Ա. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ազգի, երանի ժողովրդեան, որում տացէ Տէր հովիւ ըստ սրտի իւրում։

Ընդ նորա հովութեամբն եղիցին ամենայն դժուարինք ի դիւրին եւ առապարքն ի դաշտս, եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ։

Դաշտք լցին պարարտութեամբ, պարարտասցին գեղեցկութիւնք անապատի, բլուրք ցնծութիւն զգեցցին։

Բ. Նրանի աշխարհի որ երկոտասան առաքեալս ընկալաւ յամենագութն Տեառնէ։

Տես, որդեակ, թէ որչափ ինչ իցէ սրբոյ քահանայի զօրութիւն, ազդեցութիւն եւ ոյժ։ Տես, էին արք երկոտասանք, եւ ընդ ամենայն երկիր եկ բարբառ նոցա եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Ինքեանք դաւինք էին, եւ աշխարհի՝ որ լի էր գայլուք՝ յաղթեցին. թէպէտ եւ ձկնորսք էին, սակայն զաշխարհ որ մթապատ խաւարաւն ծածկեալ էր՝ լուսաւորեցին վարդապետութեամբ։

Զգոյր նոցա գաւազան եւ ոչ զէնք էին նոցա, եւ սակայն զդրօշեալս եւ զմեհեանս տապալեցին. անտոհմք եւ անարգք էին, այլ եւ յաշխարհէ իսկ մեծապատիւ մեծարեցան։

Բայց սակայն սուրբք էին, անարատք էին, լցեալք զդասութեամբ, հանապազորդեալք յաղօթս, դեղերեալք ի գործս պաշտաման, նմանողք Քրիստոսի, եւ նորա հոգւոյն եւ նախանձու լցեալք։

Ո՛ երանելի երկիր՝ որոյ այնպիսի երկոտասան առաքեալք էին. վայ երկրիս այսմիկ՝ որ այսօր իսկ ի բիւրուց բիւրուց քահանայից սպասաւորեալ՝ կորնչի։

Գ. Նրանի քաղաքին Մեդիոլանացւոց, որ մինչ ի վատթարութիւնս եւ ի

ազիտութեան ծրդեալ կայր, ընկալաւ իւր հոմիւ զԿարողոս։

Կարողոսի փոյթ էր զկղերէն. եւ բազում քահանայք ի յոռութեանցն մերոյ ի ծագ սրբութեան իբրեւ ի մահուանէ ի կեանս փոխեցան։

Հոգացաւ նա եւ զժողովրդենէ. եւ ժողովուրդն որ յառաջ ի խաւարի եւ ի սուերս մահու նստէր, ի ճանապարհի ճշմարտութեան եւ առաքինութեան շրջեցաւ։

Նա եւ քաղաքն իսկ գլխովին գոգցեաւ ամենեւին փոփոխեցաւ եւ նորոգեցաւ։ Մանաւանդ թէ եւ յայլոց եւս կողմանց աշխարհի քակեալ Կարողոսի զաստանայի թագաւորութիւնն, զտէրութիւն Քրիստոսի ափեալ տարածանէր ազանչելապէս։

Ա՛պա ուրեմն եւ ինքն ի կենաց վճարեր, սակայն համբաւ իւրոյ սրբութեանն ընդ զընաւ տիեզերս, եւ գրեթէ եւ այսօր իսկ ածէ ի սրբութիւն ի նախանձ նմանութեան յօժարեցուցեալ։

Ա՛յսպիսի զօրութիւն է սրբոյ քահանայի, որպէս զի ոչ ոք կայ որ թաքիցէ ի տապոյ նորա։

Դ. Լրանի Քաբաղիսացւոցն՝ որ զԱղէս ընկալան։ Զորչափ՞ոյս յեռս կացոյց նա ի հերետութեանց. զորչափ՞ոյս ած նա ի ճանապարհ ստուածպաշտու-

թեան. քանիք են՝ զոր իւրով մեղմական զդօնութեամբն արար յերկինս մտանել։

Երանի՛ աղդացն Հրնդկաց՝ որ զքաւեր կալան իւրեանց առաքեալ։ Քանի՛ թագաւորութիւնս, ո՛րչափ թագաւորս, ո՛րչափ ժողովուրդս ած ի հաւատս Քրիստոսի, չէ բաւական լեզու պատմել մի ըստ միոջէ։

Երանի՛ աշխարհին Գաղղիացւոց՝ որ ընկալաւ զՎինկենտիոս։ Ո՛րչափ աղքատք ի ձեռն նորա աւետարանեցան. ո՛րչափ ամպարիշտք եկին յուղղութիւն, քանի՛ կոյրք լուսաւորեցան. քանի՛օն հիւանդք հաւատով՝ ողջացան. քանի՛ մանկունք ուսան. ո՛րչափ քահանայք սուրբք եղեն։

Ե. Ա՛հաւասիկ, ո՛րդեակ, ո՛րչափ ինչ կարող է ճշմարիտ եւ սուրբ քահանայ, որ աղօթիւ, բանին եւ օրինակի միտ եդեալ իցէ։

Սոքա տուան քեզ օրինակ, եւ առաւել պարտին յորդորել զքեզ ի յառաջադիմութիւն, քան որչափ հրապուրեն զքեզ բազմութիւնք քահանայիցն թուլացելոց՝ ի մեղկանալ։

Արդ՝ տես թէ զի՞արդ լցին զպաշտօն ապաստաւորութեանն՝ զոր եւ դու իսկ յանձին բարձեալ բերես, եւ դուն գործեա զի ըստ նմին օրինակի եւ դու զպաշտօն քո լնուցուս։

Տես թէ որպէս իւրեանց սրբական դնացիւքն զամենեցուն աչս յանձինս կորզեցին. տես թէ զնոչ օրինակ զանն Աստուծոյ քարոզեցին, տես թէ զնարդ կամ որչափ յաղօթս կացին:

Տես թէ որպիսիք ոքք եղեն նոքա կերպարանօք, դնացիւք եւ բանիւք. որչափ ծանումնք եւ պարկեշտք ի բարս. որչափ հեզք եւ խոնարհք յընտանութիւնս. քանի մեռուցեալք եւ ողորմածք. զնարդ սակաւս զժամանակաւորաց հոգային. որպէս եռացեալք եւ փոյթք ի հոգեւորս:

Տես թէ որչափ էր նոցա ատելութիւն ընդդէմ յոռութեանց, եւ քանիսն նախանձ եւ եռանդն առաքինութեան:

Տես եւ արա բան նմին օրինակի: Արա եւ ուստ ընդ նոսա, յայնժամ եւ ընդ նոսա լեցիս մեծ յարքայութեան երկնից:

Գ Լ Ո Ւ Խ Թ.

Վասն մահուան:

Ա. Ո՞վ է մարդ որ կեցցէ եւ ոչ տեսցէ զմահ: Արդարեւ իսկ ոչ ոք, որդեակ. նա եւ փորձով իսկ ուսար՝ թէ չկամ ոք չկամ ուրեք որ հանապազ կեցցէ:

Արդ եւ դու եւս, դու թէպէտեւ քահանայ իցես, թէպէտ յաստուածոյ անուսի իցես եւ յորդւոցն Բարձրելոյ, սակայն իբրեւ զայլս ի մարդկանէ մեռանի-

ցիս, եւ յաւուր՝ յորում ոչ կարծիցես, եւ ի ժամու՝ յորում ոչ գիտիցես. Նա եւ այնմ եւս չես տեղեակ՝ թէ զի՞արդ եւ ո՞րգունակ մեռանելոց իցես։

Ո՛ղբեակ, մերձենայ առ քեզ երազ-ընթաց ընթացիւք նա՝ որ նստի ի վերայ գունատ ձիոյ՝ ոյր մահ անուն յորջորջի, եւ ի սակաւ ժամանակի գոցիս ի մէջ սպանելոց։

Թերեւս ոչ տեսանես զնա, ոչ ակն ունիս, համարիս թէ տակաւին հեռի կայցէ, եւ սակայն քայլիւ միով եւեթ բաժանեալ անջրպետեալ կաս դու ի նմանէ։

Ի մօտոյ իսկ առ ոտն կոխեսցէ զքեզ. եւ զի՞նչ օգուտ իցէ քեզ յայնժամ, եթէ զաշխարհս ամենայն շահեալ իցես, եւ զանձնէ քումէ չիցես ինչ հոգացեալ առ ի փրկել։

Բ. Ո՛հ. ո՞րպէս բացցին յայնժամ աչք քո, յորժամ լսիցես զհեծեալն զի ահագին բարբառովն գոչիցէ՝ թէ հասեալ է վախճան ի վերայ քո, հասեալ է վախճան ի վերայ քո։

Յայնժամ երկայնաձիգ աւուրք կենաց երեւեսցին քեզ իբրեւ զատուեր եւ բաղ անցեալ։

Յայնժամ մեծութիւնք եւ արարք, պատիւք եւ փառաւորութիւնք, փափկութիւնք եւ հեշտականութիւնք երեւեսցին քեզ ունայնք եւ ընդունայնք։

Յայնժամ լեցիս խոստովան թէ անմտութիւն իցէ յայնպիսի բարիս զլոյս իւր դնել, զոր յետ ժամու միոջ զայ մահ եւ յակամայ իսկ բառնայ։

Յայնժամ ի միտ առցես թէ խմաստութիւն իցէ յերկինս եւեթ դանձել քեզ դանձս։

Յայնժամ հեծեսցես եւ ողբասցիս վասն կորուսանելոյ քո զայնչափ անչափ շնորհս, եւ վասն ընդդէմ կալոյ քո այնչափ որբոց ապրեցութեանց։

Յայնժամ ցաւեսցէ քեզ վասն ոչ գործովք բարեաց հաստատուն զքո ընտրութիւնդ գործելոյ, եւ կամ վասն չցանկանալոյ քո ի ծագ մեծի կատարման։

Յայնժամ յարիցեն մեղք քո, եւ ելիցին առաջի աչաց քոց բանակ մի մեծ յոյժ, եւ անկցի ի վերայ քո ահ եւ երկեւղ։

Յայնժամ եւ ի վերայ արդարութեանց քոց խռովեսցիս եւ զարհուրեսցիս յոյժ, զի ոչ գիտես թէ սիրոյ իցես արժանի եթէ ատելութեան։

Յայնժամ ոչ միայն վասն քոց կենաց եւեթ տատամիցիս, այլ եւ վասն զի համարս տալոց ես թէ զնարդ խնամ կալար ոչխարացն՝ որոց հոգ քեզ յանձն էր։

Յայնժամ բաղում գործք քո երեւ-

եսցին .քեզ վնասակաբ, որ երբեմն վասն անիսրհրդութեան .քո ուղիղք եւ լաւք .քեզ երեւէին։

Ի բաղումս ի գործոց .քոց նշմարեսցես զյանկութիւն մարմնոյ, զյանկութիւն աչաց եւ զամբարտաւանութիւն ասսի կենացս եւ կամ թէ լոկ մարդկեղէն իմն յօժարութիւն. ի սակաւս գտցես կատարելութիւն։

Գ. Յայնժամ տեսցես, սրդեակ, զշուայտութեանցն անկարգութիւն, զընդունայնութիւն հանդերձիցն, զպեղծութիւն կահուց եւ կազմածոց, զդատարկութիւն աւուրցն,

Զթերութիւնս աղօթից, զենայութիւն յաղօրմութիւնս, զանհնարին հոգ ընչից, զյանցանս ընտանութեանց,

Զտենչանս մնոտի ցանկութեանց, զչարակնութիւնս եւ զատելութիւն հակառակութեանց, զլռութիւնս եւ զմեղկութիւնս ի բարեպաշտիչս կրթութիւնս, զանստուգանութեանց պակասութիւնս, զանհոգութիւնս ի մտաւոցանելն պատարագս։

Գայցեն ի միտս .քո այնչափ անչափ ոչխարք տգէտք՝ զորս ոչ ուսուցեր, այնչափ մոլորեալք՝ զորս ոչ խնդրեցեր, այնչափ մեղաւորք՝ զորս ոչ կշտամբեցեր, այնչափ երկչոտք եւ վատասիրտք՝ զորս ոչ .քաջալերեցեր։

Այնչափ անկեալք՝ զորս ոչ կանգ-նեցեր, այնչափ հիւանդք՝ զորս ոչ դար-մանեցեր, այնչափ բարի բարի գործք ի խաչինս՝ զորովք զանց արարեր, եւ այն-չափ գործք յոռիք՝ որոց թոյլ եատուր։

Զի՞նչ ասիցես յայնժամ, հէքդ եւ տառապեալ. այսօր իսկ ասա, ո՛րդեակ, եւ լեցիս անկասկած։

Դ. Ասա. Ո՛վ մահ, բարի է դատա-ստան քո։ Զոր յայնժամ յանձին զգայի՝ այժմ իսկ կամիմ զգալ. զոր ինչ յայն-ժամ գործէի, ա՛րդ կամիմ գործել. հրաման տաց վասն տան իմոյ՝ մինչ կեն-դանի իցեմ, զուցէ ոչ կարիցեմ ի մե-ռանելն իմում։

Յամենայն իսկ ազդէ չարեաց պահե-ցից յայսմհետէ զանձն իմ, եւ ոչ ինչ գործեցից՝ որ կարիցէ յայնմ ահագին ժամու տագնապել զիս։

Մինչ դեռ ժամանակ կայցէ՝ գործե-ցից զբարին, սերմանեցից, հնձեցից, ժողովեցից, զի յորժամ գայցէ Տէր խնդրել զհամար տնտեսութեան իմոյ, ծառայ հաւատարիմ երեւեցայց խնդու-թեամբ եւ առեալ բերից զորայս իմ։

Ե. Սակայն, մի լեցիս, ո՛րդեակ, նման մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնանիցին ի հայելւոջ, զի հայե-ցեալ տեսանէ զինքն եւ զանց առնէ եւ անդէն մոռանայ թէ որպիսի՞ ոք էր։

Այսինքն՝ մի լեցի քեզ բաւական՝ մի անգամ կամ երկիցս զկեցուցիչ զայս մոռածութիւն մահուան որոճել ի միտս, եւ դնել ուխտ սրբական կեանս այնուհետեւ ընծայեցուցանելոյ, եւ ապա անդէն նոյնհետայն մուռանալ։

Ցանկ զմահ յեղյեղեալքիր ի միտս եւ միշտ նորոգեալքիր զկամս կանխելոյ քան զմահ, ոչ եթէ ի հանդերձելումն, այլ այժմէն իսկ եւ գործովք։

Երանի, արդարեւ իսկ երանի՝ որ զժամ մահուան իւրոյ հանապազ առաջի աչաց ունիցի։

Զայս ճարտար գիտէին սուրբքն իմ, եւ վասն այնորիկ զամենայն հնարս հնարէին ածել ի միտս զմահուն յիշատակ, ոմն զոսկերս մեռելոց առաջի աչաց նկատէր, մեւս ոմն ի գերեզմանս հայէր, եւ այլ ոմն անկեալ դնէր ի դագաղս։

Զ. Իսկ քեզ որ քահանայդ ես՝ չպարտի նշան ինչ նորօրինակ՝ առ ի յաճախագոյնս զմահուն յիշատակ ի միտս քո ածելոյ։

Զի հազիւ ուրեմն անջրպետ ինչ ժամանակի կայ քեզ յաւուրն, յորում՝ ոչ տացի քեզ առանձինն յիշատակ յուշարար մահուան։

Քանզի երբեմն կոչիս երթալ պատարագաւորել զօրհասականն ի մահ, երբեմն օգնել այնմ որ յոգիս պարդել ապա-

ոտան իցէ, մերթ ի թաղել զմեռեալս, մերթ առ ի զկտակ գնացելոյն ընդ դրով արկանել եւ երբեմն ի կատարել զպաշտօն վասն ննջեցելոց։

Յորժամ զանգակ հնչեցուցանիցի՝ դյուղարկաւորութենէ ազգ առնէ. յորժամ յեկեղեցի մտանիցես՝ զդերեզմանս եւ զշերիմս կոխես. եթէ զդիրս արբոց ժամուցն պաշտաման բանայցես՝ աղօթք վասն ննջեցելոց քեզ ընդ առաջ ելանեն. եթէ պատարագ մատուցանիցես՝ պարտիս առնել յիշատակ ննջեցելոց։

Մինչդամայն իսկ ասացից՝ ամենայն ուրեք մահ քեզ յանդիման լինի, քանզի այսպէս ուրեմն կարգեալ սահմանեցի. եւ վասն էր արգելք։

Զի որովհետեւ վասն բարձրութեան աստիճանի պաշտաման՝ քո՝ առաւել քան զայլս ի վանդի կաս, եւ նմին իրի իսկ հարկ է զի յաճախագոյնս խորհիցիս զվախճան կատարածի քո, յայն սակս կամեցայ զի ստէպ գոցին քեզ խթանք ի նուիրական պաշտամանն, որ զկեցուցիչ խոկումն մահուան եւ զյիշատակ ի միտս քո ածիցեն։

Է. Ապա մի փակեսցես զաչս մտաց քոց եւ կամ ի բաց դարձուցանիցես, յորժամ մահուն պատկեր յանդիման քեզ լինիցի, որ թէպէտ եւ տխուր իսկ է՝ այլ կարի կարեւոր։

Մի խստացուցես զականջս որտի քո ի չլսել զձայն նորա, այլ մանաւանդ թէ ունկն դիր ձայնի նորա, ընկալ եւ թաքո ի ծոցի քում զբանս նորա, զի ընդ երկեւղ իմ բեւեռեալ կացցէ մարմին քո։

Ո՞չ ապաքէն, ՝որդեակ, անմիտք եւ անհանճարք իցեն քահանայքն այնոքիկ՝ որ հանապազ ի մէջ մեռելոց շրջիցին, սակայն եւ խորհին իսկ ոչ զմահուանէ, եւ առ ընդելութեան՝ ոչ ինչ ամենեւին նորա յաճախադոյն ապառնալեացն զգան։

Ամենայն ուրեք մահ ընթացակից է նոցա, եւ սակայն այնպէս իմն կեանս կեան՝ որպէս թէ չիցեն երբեք մեռանելոց, զկորստականս աշխարհիս շահեալ ստանան, իբր այն թէ բնաւ չիցեն իսկ կորնչելոց, եւ թէպէտ եւ անկեալ գնիցին հիւանդացեալք եւ մերձ ի մահ իցեն, սակայն եղբօրն որ ասիցէ՝ թէ Հրամանն տուր վասն տան քո զի մեռանիս, ոչ հաւատան։

Ո՜հ. որպիսի՛ կեանք նոցա, ՝որդեակ, եւ որպիսի՛ մահ. կեանք արդարեւ բատ մարմնոյ, եւ մահ՝ զրեթէ միշտ իսկ՝ առ ի չգոյէ յառաջագոյնն պատրաստութեան՝ յանկարծական։

Քա՛ւ ի քէն, ՝որդեակ, քա՛ւ այնպիսի մոռացութիւն քոյոյ վախճանի եւ այնր ողորմ պտուղ։ Հանապազ պարտ է քեզ

մեռանել մոռք իբրեւ զՊաւղոս՝ եւ յայնժամ ցնծասցես ընդ նմա՝ յորժամ ապրեսցիս ի մարմնոյ սատի մահու։

ԳԼՈՒԽ Ժ.

Վասն Քրիստոս դոպոսոպանի։

Ա. Յետ մեռանելոյ, որդեակ, ննջեսցես ի հողս երկրի, այլ զարթիցես, յարիցես եւ եկեսցես ի ձորն Յոսափաթու, յորժամ անդ նստայցդ դատել զամենայն ազգս շուրջանակի։

Անդ տեսցես զիս ի քում մարմնի, եւ ես քննեցիցդ զսիրտ քո եւ զերիկամունս։

Լուսաւորեցիցդ զծածուկս խաւարի քո, յայտնեցիցդ զխորհուրդս սրտի քո, կշռեսցիս ի կշիռս, եւ հատուցիցդ քեզ ըստ գործոց քոց։

Բ. Յայնժամ եղիցի, որդեակ, վախճան ամենայն իրաց, հատուցումն ամենայն արդարութեան եւ համօրէն յանցանաց վրէժխնդրութիւն։

Ի մի՞ առ զոր ասեմն, եւ խնամութեամբ անձին հոգ տարջիր, զի յայնմ աւուր բարկութեան՝ անկասկած իցես եւ երանելի։

Գ. Ասացի քեզ բազում անգամ, որդեակ, արհամարհեա զերկրաւորս, քանզի անցանէ աշխարհ եւ ցանկութիւն նորա։

Մի սիրեր զաշխարհս եւ մի որ ինչ յաշխարհի է, զի անցանէ վայելչութիւն աշխարհիս այսորիկ։

Կամիս, ո՛ղղեակ, պահել զոյս պատուիրան՝ զոր քեզ բաղում անգամ ասացի. կամիս յաղթել վատթարութեան բնութեան քո՝ որ ուժգին ձգեալ ածէ զքեզ ի մարմնաւորս։

Կալ ստէպ յուշն զայն յետին ժամ, յորում արարածք եւ տիեզերքը համօրէն քակեալ եւ լուծեալ ի ջերմութենէ կործանեսցին։

Դ. Բազում անգամ այսպէս իսկ նկարեա ի ներքս ի սրտի քում՝ թէ նշանս ահագինս յարեգակն եւ ի լուսին եւ յաստեղս նշմարիցես, եւ շարժմունս մեծամեծս յերկրի՝ յորում բնակեալդ ես, եւ բարբառ ահեղ իբրեւ ծովս եւ խռովութեան եւ թէ զյետին փողն լսիցես։

Արդարեւ իսկ յայնժամ հին մարդն քո գոսասցի ի կարծեաց դատաստանի՝ որ եկեսցէ ի վերայ քո, եւ մի իշխեսցէ այնպէս սաստիկ ցանկալ հակառակ հոգւոյ։

Արդարեւ ոչ ասիցես թէ լաւ է մեզ յայսմ աշխարհի լինել, արասցուք մեզ աստ օթեւանս քաղցր եւ հեշտական, յորժամ միտ դիցես թէ չէ աշխարհս այս քաղաք կայուն։

Արդարեւ ոչ իբրեւ ճշմարիտ բարու-
թիւնս հանարիցիս զամենայն թագա-
ւորութիւնս աշխարհի եւ զնոցին փա-
ռաւորութիւնս, յորժամ ածիցես զմտաւ
թէ այն ամենայն ի կորուստ գնայցեն։

Արդարեւ ոչ յաղթեսցիս ի փառասի-
րութենէ, յորժամ զայնմ օրէ խորհես-
ցիս՝ յորում ամենայն ոք խոնարհեսցի։

Արդարեւ ոչ ցանկասցիս գանձել ի
վերայ երկրի, յորժամ միտ դիցես եթէ
ամենայն ինչք եւ մեծութիւնք ի միում
վայրկեան ժամանակի եւ ի քթթել
իսկ ական ապականեալ չեք լինիցին։

Արդարեւ ոչ շնորհեսցես ինչ մարմնոյ,
յորժամ զմտաւ ածիցես՝ եթէ անհնա-
րին թշնամի լինիցի յաւուր դատաս-
տանի մարմինն՝ զոր գիրդ եւ քնքուշ
սնուցեր։

Հայեաց ի վախճան, սրդեակ, եւ զա-
մենայն երկրաւորս համարեսցիս իբրեւ
զկղկղանս, եւ զայնմանէ իմն եւ եթէ փոյթ
յանձին ունիցիս զի զերկինս շահեսցիս։

Հայեաց ի վախճան, եւ ասիցես՝ Ցի-
բաւի, Տէր, ծանեայ, զի ամենայն ինչ
ընդունայնութիւն է, այլ այն չէ սնայ-
նութիւն՝ յորժամ սիրեսցէ ոք զքեզ
եւ քեզ ծառայեսցէ եւ զանձն եւ զայլս
սուրբ գործեսցէ։

Երանի այնմ միայն՝ զոր դատեսցես
յայնմ ժամու արարեալ այնպէս։

Ե. Ակարեոջիր բազում անգամ ի միտս քո, որդեակ, թէ տեսանիցես առ-ընթեր քահանայս յարուցեալս ի շիր-մանց, զոմանս յուրախութեան, ի փառս, յանօսրութեան, ի լուսաւորութեան, յարադութեան, յանապականութեան, քանզի սուրբք են, եւ զոմանս զաղիրս, արհամարհս, ոգաւորս, մոլեգնեալս եւ զատամունս կրճատիցեն, զի չարք էին։

Երկիր եւ դողա ի յետնոց աստի, եւ յառաջնոց անտի յօժարեսցիս դիմել յառաքինութիւն, եւ յայնպիսի տես-լենէ դրդեալ եւ գրգռեալ, ասա ի-մաստութեամբ ցանձն քո՝ Ո՛վ անձն իմ, տես թէ որչափ բարի լինիցի քա-հանայի յորժամ զլուծն տարեալ իցէ։

Տես թէ քանի լաւ իցէ երիցու՝ յոր-ժամ արատցէ եւ ուսուցցէ։

Տես թէ որպիսի ինչ փառք մնան նոցա՝ որոց կեանք եւ վարք յիմարու-թիւն համարեալ է առաջի ամենաշնորհաց։

Տես թէ զի՞արդ համարեսցին ընդ որդիսն Աստուծոյ, եւ ընդ սուրբս է վի-ճակ դոցա։

Ո՛ երանելի երիցունք, կրկին պատուով պատկեալք։ Ընթացցուք, անձն իմ, զհետ նոցա՝ որպէս եղջերու յաղբերս ջուրց։

Ընթացցուք զհետ նոցա համբերու-թեամբ ինեղութիւնս, ի վիշտս, ի չար-չարանս, ի գանս, ի բանտս, ի խռովու-

թիւնս, յաշխատութիւնս, ի հակմունս, ի պահս, ի սրբութեան, ի գիտութեան, յերկայնմտութեան, ի քաղցրութեան, ի Հոգի սուրբ, ի սէր առանց կեղծաւորութեան։

Ընթացուք փառօք եւ անարգութեամբ, գովութեամբ եւ պարսաւանօք։

Ո՛վ անձն իմ, զբանն ճշմարտութեան զոր կալան՝ կալցուք եւ մեք, զզէնս արդարութեան՝ որով մարտեան ընդ աջմէ եւ ընդ ահեկէ՝ ստացուք եւ մեք, մարտիցուք, ընթացցուք, ընթացցուք անձն իմ։

Ապա թէ ոչ կամիցի տակաւին անձն քո, եթէ չառնուցու յանձն աշխատել զսուրբ աշխատութիւն, դու հաստատուն կաց եւ ասա՝ Տես, անձն, ուր տարեալ հասուցանէ հեղգութիւն եւ կամակորութիւն անօրէն քահանայի։

Տես թէ քանի՞ ահագին եւ սոսկալի իցէ յետ մեղանչական կենաց յառնել, եւ ապա յետ այնորիկ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ անկանել։

Տես թէ զի՞արդ անօրէնութիւն քահանային ի նման են, որպէս զամպարիշտութիւնս իւր եւ զայլոց ամպարշտութիւնս յանձին բարձեալ բերէ։

Որ յայսմ աշխարհի խոյ ի գլուխ հօտին էր, ի յարութեան նոխազ է ի գլուխ դատապարտելոց։

Ո՛վ անձն իմ, խոտորեսցուք ի չարաց ասասի, խուզեսցուք զպատուիրանս Աստուծոյ մերոյ եւ արասցուք զկամս նորա յանձինս մտադիւրս եւ ի սիրտս կամակարս։

Զգուշասցուք յորոգայթից սատանայի, ի ցանկութեանց վնասակարաց, զոք ընկղմեն զմեզ ընդ ասոա ի կորուստ։

Զ. Ակարեալքիր դարձեալ բազում անգամ ի միտս քո, որդեակ, եթէ արդէն իսկ տեսանիցես զնշան իմ երեւեալ յերկինս, զեաչ իմ փայլատակեալ ի վերուստ, եւ ասա՝ Ահա կշռեն յորում յայնժամ կշռեցայց. երանի ինձ եթէ ի կշռոցի անդ գտայց ընդ Քրիստոսի բեւեռեալ։

Երանի ինձ եթէ զեաչն զհետ Յիսուսի տարեալ իցեմ. լիցի ինձ նա յայնժամ բարեկամ եւ խնայեսցէ։

Երանի ինձ եթէ ի ձեռն խաչի լեալ իցեմ նմանող պատկերի Որդւոյն Աստուծոյ։ Յայնժամ մատեայց արդարեւ առ Քրիստոս դատաւորն մեծաւ աշխարհաբնակ համարձակութեամբ։

Բայց վա՛յ ինձ եթէ մեղք խնամք զՅիսուս վերատին ի խաչ հանեալ իցեմ։

Վա՛յ ինձ եթէ զարիւնն՝ որ վասն իմ հեղաւ ի խաչին՝ խառնակ համարիցիմ։

Վա՛յ ինձ եթէ կեանս վարելով բան մարմնոյ՝ թշնամի խաչին եղէց։

Ո՛վ անձն իմ, ուրասցուք զմեզ, բարձցուք զկաչ մեր եւ երթիցուք զհետ Յիսուսի, շարշարեսցուք այժմ ընդ նմա եւ ի յարութեան հաղորդ փառացն լինիցիմք։

Է։ Նկարեսջիր ստէպ ի միտս քո, որդեակ, եթէ տեսանիցես զիս զՈրդի մարդոյ եկեալ ամպովք երկնից եւ զօրութեամբ եւ փառօք բազմօք։

Եւ համարեսջիր եթէ կայցեն քահանայք առաջի իմ, ոմանք ընդ աջմէ նրստեալք յաթոռս եւ դատիցին զաշխարհս ժողովրդեան իմոյ, իսկ կէսք յահեկէ՝ ընդ սատանայի եւ ընդ հրեշտակաց նորա։

Հայեաց տես զգիրս բացեալս առ ի դատել զմեռեալս ըստ այնմ՝ որ գրեալ կայցէ ի նոսին։

Լուր թէ որպէս չկայցէ ինչ ի ծածուկ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի որ ոչ ծանիցի։

Լուր զդատաւորի առ սուրբ երիցունս զքաղցր բանս. Ո՛ օրհնեալք Հօր իմոյ, բարեկամք իմ, որ արարէք զամենայն զոր պատուիրեցի ձեզ։

Ծառայք հաւատարիմք, որ զծանրութիւն աւուրն բարձէք եւ զտօթ, որ զիս որ յանդամն եւ ի փոքրկունս իմ քաղցեալս էի եւ ծարաւեալ եւ հիւանդ եւ մերկ եւ բանտարդել՝ այնչափ անչափ աշխատութեամբք, քրտամբք, բանիւք,

օրինակօք, աղօթիւք եւ խորհրդովք կերակրեցէք, արբուցէք, բժշկեցէք, զգեցուցէք եւ ազատեցէք։

Եկայք, որդիք սիրեցեալք, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն իսկզբանէ աշխարհի։

Ո՞չ արդեւք ասիցես ասա, ուրդեակ, թէ բարեաւ մնա երկիրդ, բարեաւ մնացէք եւ ամենայն ինչք աշխարհի, քաւ լեցի ինձ եթէ յայսմ հետէ զաշխարհական իրօք զբաղեցիմ։ Ասուածոյ միայնում զենուորեցայց ճշմարիտ ասուածպաշտութեամբ եւ հաւատարիմ սպասաւորութեամբ։

Աղէ տես անձն իմ, զի թէպէտ եւ աշխատութիւնն զարհուրեցուցանիցէ ինչ, սակայն քանի առաւել հրաւիրեալ յորդորէ վարձուցն հատուցումն։

Ը. Բայց եւ զայն եւս լուր, ուրդեակ, թէ զինչ ինչ յայնժամ առ քահանայս կամակորս ասացի։

Ո՛ անիծեալ որդիք կորստեան, որ զանուն կենդանւոյ ունէիք՝ եւ սակայն մեռեալ էիք։ Ամաչեցէք արդ եւ յամօթ լերուք։

Լուարուք՝ յեռուստ ձեր արկեալ զերեսօք ձերովք. գիտասցէ ժողովուրդն թէ ուրչափ ողորմեցայ ձեզ, գիտասցէ ամենայն տուն իմ թէ ուրպէս լի էիք նենգութեամբ եւ խաբէութեամբ։

Ծանիցէ զսեղանագերծ տաճարա-
կապուտ անօրէնութիւնս ձեր, գիտաս-
ցէ զի իմ է վրէժխնդրութիւն եւ ես
հատուցից։

Երթայք քան զամենայն ժանտս
ժանտագոյնք եւ քան զամենայն անի-
ծեալս անիծեալք, երթայք, մեկնե-
ցարուք յինէն ի հուրն յաւիտենական։

Ո՛Հ. որդեակ, արդարեւ առ բազումս
ի քահանայից ձգեսցի այն ահագին
վճիռ. միթէ եւ դու ի նոցանէ՞ իցես։

Երկիր, որդեակ, երկիր, քանզի ար-
դարն հաղիւ կեցցէ յայնմ աւուր։

Երկիր, եւ եթէ խիթիցէ ինչ զքեզ
յիմիք սիրտ քո, վաղվաղակի եւ ա-
ռանց ամենայն յապաղութեան, մինչ
դեռ լոյսդ ի քեզ է՝ կանխեա առաջի
իմ խոստովանութեամբ, ապաշխարու-
թեամբ եւ ամենայն գործովք բարեօք։

Գ Լ Ո Ւ Խ ԺԱ.

Վասն գժոխոց։

Ա. Զ՝ՈՒ գիտես, որդեակ, եթէ մե-
ղաւորք երթիցեն ի հուրն յաւիտենա-
կան, զի անդ այրեսցին նոքա ի ոգման
մինչեւ յաւիտեան ընդ սատանայի եւ
հրեշտակաց նորա։

Գիտես դու զայս եւ հաւատաս իսկ
եւ քարոզես աշխարաց իմոց ըստ իմում
հրամանի զահաւոր զայն ճշմարտութիւն։

Բայց եւ զայն եւս գիտես դու, ո՛ր-դեակ, զի ոչ եթէ վասն զանօրէն ոչ-խարս եւեթ պատժելոյ կարգեալ իցէ այն տանջանաց տեղի, այլ եւ վասն քա-հանայից կամակորաց, այլ եւ վասն չա-բաց հովուաց մնաւանդ շինեցաւ։

Քանզի վասն արուսեակի եւ վասն նորին ընկերացն արարաւ եւ սահմանեցաւ, զի անդ հզօրք հզօրագոյնս տանջեսցին։

Ո՛ արուսեակդ նորածին, որ առ բար-ձրութեան պաշտաման քո յերկնից ես երկնաւոր. երկիր՝ դուցէ ընդ առաջնոյն արուսեկի անկեալ կործանեսցիս, եւ յետոյ ուրեմն ընկեսցիս ընդ նմա ի լեռ բորբոքեալ։

Դու որ մեծատունդ ես դանձուք եր-կնից, երկիր՝ դուցէ ի չար անդր արկեալ զնոսա ի կիր՝ մեռցիս, եւ ընդ մեծատան ի դժոխս թաղեսցիս։

Դու՝ որում մեծագին եւ պատուական քանքարք քահանայութեան իմոյ եղեն յանձն, երկիր՝ դուցէ ընդ անպիտան ծա-ռային ընկեսցիս ի խաւարն արտաքին՝ ուր եղիցի լալ եւ կրճել ատամանց։

Բ. Ո՞ւր է, ո՛ր դեակ, ո՞ւր է Յուդաս. ո՞ւր եւ քահանայքն այնոքիկ՝ որ նմին նմանող եղեն, եւ իբրեւ զնա մեռան ի մեղս իւրեանց։

Ո՞ւր։ թաղեցան ի դժոխս, եւ այն-չափ խորագոյնս անկեալ ընկղմեալ կան

անդ, որչափ բարձրագոյն պարտ եւ պատշաճ էր լինել նոցա յերկինս։

Այնչափ մեծաւ ամօթով լցին անդէն, որչափ յերկրի մեծապատիւ մեծարեցան։

Այնչափ եւս առաւել անարգեցին անդ, ծաղր լիցին եւ մանրեալ խորտակեցին ի սատանայէ, որչափ առաւել յերկրի ատտ յայսմիկ պատուեալ եղեն ի հրեշտակաց եւ ի մարդկանէ։

Այնչափ աւելի արբցեն անդ նոքա զլեղի վիշապաց եւ զթոյնս իժից, որչափ եւս առաւել ընկալան ի սեղանի յարենէ իմմէ անարժանութեամբ։

Այնչափ դժնդակագոյնս ի հնոյ օձէն խայթեցին եւ պատառեցին անդէն, որչափ պարտ իսկ էր նոցա յերկրի ատտ ի ձեռն սրբոյ սպասու պաշտաման լինել նմա թշնամի եւ վնասակար։

Այնչափ աղքատագոյնք եւ մերկագոյնք լինիցին անդ, որչափ առաւել ատտ առանց ինչ վատատակելոյ զկարեւորսն եւ զաւելորդս ընկալան յոչխարաց իմոց։

Այնչափ առաւելագոյն այրեսցին անդ, որչափ եւս վասն որբութեան վիճակի իւրեանց ի սովորական հոգոց եւ զբաղանաց ազատեալք՝ հանդստագոյն եւ բարեկեցիկ կեանս կեցին յաշխարհի։

Այնչափ եւս ատատիկ խթանօք բորբոքելովք լակեսցին եւ տագնապեսցին

անդ նոքա, որչափ բազում ոչխարս վասն իւրեանց ծուլութեանն եւ հեղգութեան զանց արարեալ կորուսին։

Այնչափ աւելագոյն քաղցու եւ ծարաւով տանջեցին, որչափ առաւել ի բարութիւնս անցուցին զաւուրս իւրեանց։

Այնչափ եւս ժանդահոտ ձիւթով եւ ծծրմբով ծածկեցին անդ, որչափ ի բարձր, ի հոգեւոր եւ ի սրբական վիճակի իւրեանց պաշտամանն կեանս վարեցին ըստ մարմնոյ։

Այնչափ առաւել ոռնայցեն անդ եւ գուժեսցեն իբրեւ զշունս մոլեգնեալս, որչափ լռեցին ասա ի գահոյսն Աւետարանի։

Այնչափ ահագինս աշխատ լիցին անդ լսելիք նոցա աղմկոք եւ աղաղակոք, որչափ նուազագոյնն կամեցան յաստենի անդ ունկն ապաշխարողացն մատուցանել։

Այնչափ ճիւաղս եւ գազանս անհեդեդս եւ սոսկալիս տեսցեն անդ, որչափ սակաւս արկին զաչս իւրեանց ի վերայ հօտին իմոյ, որչափ սակաւս թէ ընդ երեսս ոչխարացն հայեցան։

Այնչափ յորդագոյնք եւ առատագոյնք իցեն անդ արտասուք նոցա, որչափ դուն ուրեք եւ անօսր յարտասուս դարձի զմեղաւորսն Ջանացան յորդորել։

Այնչափ առաւել թողեալ եւ լքեալ լեցին անդ նոքա, որչափ նուազագոյն յերկրի ասա զոչխարն լքեալս եւ տխրեալս մխիթարեցին։

Այնչափ սասակագոյն անդ տանջանք եւ քերանք նոցա, որչափ սակաւ վշտակից եւ օգնական վշտաց խաշանցն եղեն։

Այնչափ առաւելագոյն կեղեքեսցին եւ պատառեսցին մարմինք նոցա, որչափ բազմաց ոգւոց՝ իւրեանց չար օրինակաքն եղեն ապանիչք։

Այնչափ սակաւ լեցին անդ լսելի հեծութիւնք նոցա, որչափ սակաւս կամեցան յերկրի ասա զկարեւոր աղօթսն առնել, եւ որչափ ցրտագոյնս եւ անհոգութեամբ զգործ իմ կատարեցին։

Միանգամայն իսկ ասել՝ այնչափ խիստս զգաւազանս արդարութեան իմոյ ընկալցին անդ, որչափ նուազագոյն զպատուիրանս իմ՝ զոր քարոզեցին ժողովրդեան, պահեցին, եւ որչափ եւս առաւել քան զայլս Հոգւոյն սրբոյ հակառակ կացին։

Գ. Այդպէս է, որդեակ. մարդիկ իմ էին, բարեկամք իմ, պաշտօնեայք իմ, պարարտացեալք եւ ստուարացեալք ի բարերարութեանց իմոց, եւ անկուշեցին զիս եւ մատնեցին զիս, եւ զՀոգին իմ թշնամանեցին եւ զանէն իմ առ ոտն հարին։

Առաւել քան յայլոց անօրինաց խընդրեմ վրէժս ի նոցանէ, եւ առաւել եւս խնդրեցից. մրուր բաժակի սրբոմնութեան իմոյ ի վերայ նոցա ոչ սպառեսցի։

Ամենայն զբօսանք եւ ուրախ բարկութեան իմոյ անցանեն ի վերայ նոցա եւ անցցեն եւ մնասցեն ի յաւիտեան։

Դ. Ո՛հ որդեակ, երկիր յինէն որ կաբող եմ զոգի եւ զմարմին կորուսանել յայսմ գեհենի։

Ահաւասիկ առաջի քո կեանք եւ մահ, երկինք եւ դժոխք։ Ընտրեա։

Ո՛որդեակ, միթէ կարիցե՞ս բնակել ընդ հրոյ՝ որ ծախեալ սպառէ, դու՝ որ եւ լկանաց անգամ թրթրոյ, եւ կայծական հրոյ եւ ասղանն խայթուածոյ չկարես ժուժալ։

Եւ սակայն բնակեսցես, եթէ ի բարութիւնս կամեսցիս զաւուրս քո անցուցանել։ Զի այն իսկ է ընդարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ։

Բնակեսցես եթէ չկամիցիս բուռն լինել բնութեան, քանզի բուռնք եւ եթ զաղբայութիւն երկնից յափշտակեն եւ ի դժոխոց զերծեալ սպրեսցին։

Բնակեսցես եթէ կայցես եւ մնայցես դատարկ, վասն զի առանց վաստակոց չիք վարձուց հատուցումն, այլ խաւար արտաքին։

Բնակեսցես եթէ ոչ սուրբ լինիցիս,

զի սուրբք միայն երթիցեն ի կեանսն յաւիտենականս եւ ի յաւիտենական հրոյն զգուշացեալ պահեսցին։

Ե. Ո՛րդեակ, զգոյշ լեր անձին քում, միտ դիր անձին քում. իմ իմիք արժանի իցես։ Ի ժամու՝ յորում ոչ գիտիցես՝ եկիցս ես Որդի մարդոյ։

Եթէ վաղիւ իսկ գայցեմ, եթէ վաղիւ մեռանել քեզ հասանիցէ՝ յո՞ երթիցես։ Ցացէ պատասխանի սիրտ քո։

Եթէ այսօր արժանի դժոխոց իցես, վաղիւ երկնից զի՞արդ կարիցես լինել արժանի։

Ո՛րդեակ, վաղուի օրն չէ ստոյգ, եւ ուստի՞ իսկ գիտես թէ ծնանիցի քեզ վաղիւն։

Գ Լ Ո Ւ Խ ԺԲ.

Վասն հեթանոսին փոհանային ի դժոխս։

Ա. Լ ՈՒՐ, ո՛րդեակ, զքահանայ զեղբայր քո զկորուսեալ, այլ չասեմ թէ ողորմեաց նմա, զի չէ մարթ եւ չէ իսկ հնար այնուհետեւ թէ կարիցէ ինչ օգնել նմա գթութիւն քո, քանզի չիք ի դժոխս փրկութիւն։

Լուր. Ցանկիմ ի տապ հրոյ։ Զի՞ է, ո՛րդեակ, հիմ ոչ ասիցէ թէ ի տապոյ հրոյ. արդարեւ վասն այնորիկ՝ զի բաց ի հրոյն տապոյ, եւ այլ եւս տանջանս ցաւոց կրէր նա անդէն ի տապ հրոյն։

Եւ ճշմարտիւ իսկ խոնարհեցո զունկն քո եւ լուր զնա։ Վայ անմտութեան իմում. անօրէնութեան եւ կորստեան շաւղաք լցայ։

Վայ ինձ եղուկ եմ ես. զնացի ընդ անկոխ անապատ, եւ զճանապարհս Տեառն՝ զոր այլոց ցուցի՝ ոչ չոգայ։

Վայ ինձ. զի՞նչ շահ եղեւ ինձ հպարտութիւնն, եւ զի՞նչ մեծութիւն ամբարտաւանութեանն եղեւ ինձ նպաստաւոր։

Անմիտ եմ. անցին իբրեւ զստուեր խաբեպատիր բարութիւնքն՝ զորս սիրեցի։

Վայ ինձ հէք եւ տառապեալ. ոչ երբեք տեսից այսուհետեւ զերեսս պատուական Հօր իմոյ, որ յերկինսն է։ Այս է հանդիստ իմ, եւ ոչ երբեք հասից ի նա։ Ծարաւիմ՝ եւ ոչ երբեք արբից, քաղցնում՝ եւ ոչ կերայց երբեք։

Ոչ այլ ինչ կայ մնայ ինձ յաւիտեան՝ բայց սուգ եւ աղաղակ եւ ցաւ։

Վայ ինձ. վայ ինձ. կորուստ իմ՝ գործ ձեռաց իմոց է, պտուղ է անօրէնութեանց իմոց։

Ո՛վ անձն իմ. ո՞նախանձ արար զքեզ չհնազանդել պատուիրանացն Աստուծոյ իմոյ՝ զոր այլոց ուսուցանէի, եւ ոչ հնազանդել շնորհաց՝ որ դրդէր զիս առանց դադարելոյ։

Զայլոց մեղս թողի բաղում անգամ, եւ մեղք իմ պահեալ են յաւիտեան։

Բազում անգամ ընկալայ զդառն Աստուծոյ զմարդասէր, բազում անգամ եւ այլոց մատակարարեցի, եւ յաւիտեան թշնամի ինձ արարի զնա։

Զննջեցելոց հոգիս բազում անգամ ի ձեռն նուիրական զոհից եւ պատարագաց հանի արտաքս ի հրոյ քաւութեան, եւ զիս ի ձեռն նոցին իսկ պատարագաց թաղեցի ի հուրն յաւիտենական։

Ի ձեռն պատժոցն դատապարտելոց՝ զայնչափ անչափ ժողովուրդ Աստուծոյ բատ իմում պաշտաման զարհուրեցուցի, եւ զիս անփութութեամբ եւ անօրէն գործովք իմովք ի տանջանս յայնոսիկ մատնեցի։

Ո՜հ. թէ գիտացեալ էի. թէ իմացեալ էի. թէ կանխաւ գյեռինան տեսեալ էի։ Վա՛յ ինձ. վա՛յ ինձ։

Արդար ես, Տէր, եւ ուղիղ դատաստան քո. չկայ ինչ զոր պարտ էր քեզ առնել վասն փրկութեան իմոյ՝ եւ ոչ արարեր։ Կորուստ իմ, գործ ձեռաց իմոց։

Բ. Մի՛ դիր, ո՛րդեակ, եւ լուր տակաւին։ Հայր Աբրահամ՝ ողորմեաց ինձ, եւ առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, եւ զովացուցէ զլեզու իմ։

Դուք Առաքեալքդ, դուք քահանայք սուրբք, զորոց զտեղի յաջորդեալ կալայ, առաքեցէք զոչխարս իմ՝ որ ի ձեռն սպասու պաշտաման իմոյ հասին ի ժողովս ձեր, զի օգնեսցեն ինձ։

Զի՞նչ տացի յայնժամ պատասխանի, ո՛րդեակ։ Լո՛ւր։ Ցիշեա զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսն քում, եւ ոչքա զկաչս եւ զչարչարանս։ Արդար եւ իրաւ է զի ոչքա այժմ մխիթարեսցին, եւ դու պապակեսցիս եւ չարչարեսցիս։ Վի՜հ անմատոյց է ընդ մեզ եւ ընդ քեզ։

Ո՛ կսկիծ. ո՛ յաճախութիւն ցաւոց. չէք այլ բնաւ յոյս օգնութեան, ոչ մխիթարութեան ինչ ակնկալութիւն, ոչ տեղի ապաշխարութեան եւ ոչ տեսիլ փրկութեան, այլ մեծաբեռն ծանրութիւն հիքագոյն մշանջենաւորութեան եկեալ հասեալ կայ ի վերայ։

Ո՛ որդն դժնդակ. ահաւասիկ զորս փրկեցի, եւ յաւիտեանս եղիցին երանելիք. յանցանօք իմովք կորեայ եւ տանջեցայց յաւիտեան։

Գ. Մի՛ա դիր, ո՛րդեակ, եւ լո՛ւր յետ ամենայնի։ Հայր Աբրահամ, դո՛ւք փառաւորեալ բնակիչքդ երկնից սուրբ քահանայք, աղաչեմ զձեզ արձակեցէք գոնեայ զմի ոք ի նոցանէ առ եղբարս իմ առ քահանայս որ տակաւին կեն-

գանի են յերկրի, որպէս զի տայցեն նոցա վկայութիւն, զի մի եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։ Զի թէ ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա՝ ապաշխարիցեն։

Զինչ առնի պատասխանի։ Լուր։ Եթէ Մովսեսի եւ մարգարէիցն ոչ լսեն, եւ ոչ թէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւանեսցին։

Ո՛րդեակ, լուար աւասիկ խորհուրդ սոսկալի։ Այսպիսի է կամակորութիւն անօրէն քահանայի, որպէս զի ոչ՝ թէ եւ ի մեռելոց իսկ ոք յարիցէ՝ գայ ի զղջումն եւ յապաշխարութիւն։

Եւ յարդեանց իսկ իրացն յայտ է, ո՛րդեակ. ո՞չ քահանայապետքն եւ դպիրք տեսին զՂազար զյինէն յարուցեալ ի մեռելոց։ Այ՛ն իսկ եւ կարի քաջ։

Եւ սակայն քանզի ոչ բանից իմոց հաւատային եւ ոչ գործոց իմոց, նմին իրի եւ ոչ ի տեսանել անդ զմեռեալն զայն յարուցեալ՝ հաւատացին յիս, այլ ընդ հակառակն՝ եւս իմն առաւելագոյն թշնամիք ինձ եղեն։

Գիտէ եւ ճանաչէ իսկ զհաւատս քահանայ կամակոր, եւ ընդդէմ դառնայ հաւատոց որ ապառնայ. լցեալ է շնորհօք, եւ շնորհաց՝ որ յինքն հրաւիրէ՝ չառնու յանձն հնազանդել։

Կուրանայ, խստանայ, եւ ի կուրութեան իւրում եւ ի խստութեան մեռանի. եւ ապա ուրեմն երթայ ի տեղին տանջանաց։

Երկիր այսուհետեւ, որդեակ, դարձեալ ասեմ երկիր, զի մի բնաւ երբեք նմին նմանող լինիցիս։

Ա.յսօր իսկ թէ զձայն Ցեառն լսիցես, մի խստացուցաներ զսիրտ քո, այլ տես թէ իցե՞ն անօրէնութիւնք ի ճանապարհս քո, եւ եթէ իցեն՝ անդէն առ ժամայն ի բաց արա։

Արի եւ մնա յանձնային ճանապարհ՝ որ տանի ի յաւիտենական բարութիւնս։

Գ Լ Ո Ւ Խ ԺԳ.

Վասն փառաց երկնաւորաց։

Ա. Որդեակ, եղի յերկինս, եւ յաւիտեան ընդ աջմէ Հօր իմոյ նստիս։

Ե՛լ եւ դու, որդեակ, առ քեզ թեւս իբրեւ զաղաւնւոյ եւ թռանիջիր։

Ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են։ Օթեւան մի սահմանեալ է եւ վասն քո. կանխեալ յառաջեցի քան զքեզ, զի պատրաստեցից քեզ զայն տեղն։

Ա.յս է հանգիստ քո յաւիտեանս յաւիտենից. ընտրեա զայն զի բնակեսցիս յեռոյ անդէն ի նմին եւ հանգիցես ընդ իս ի միասին։

Ե՛կ, սիրեցեալդ իմ, ի պարտէզ իմ՝ ե՛կ, ես եղէց վարձք քո մեծ յոյժ։

Բ. Ա՛հ. որդեակ, եթէ լուսաւորեալ էին աչք սրտի քո, եթէ գիտէիր թէ զինչ իցէ յոյս կոչման իմոյ, եւ զինչ մեծութիւնք փառաց ժառանգութեան իմոյ ի սուրբս։

Եթէ ծանուցեալ էր քո զերկինս՝ յոր կոչեմն զքեզ, յոր ճեպեմ զքեզ մտանել, դու իսկ արդարեւ կանխէիր քան զիս, եւ յօրէ աստի յայսմանէ մինչեւ ցվերջին շունչ կենաց քոց աղաղակէիր, եւ առանց ամենեւին դադարելոյ եւ սաստիկ ցանկութեամբ ձայն բարձեալ գոչէիր.

Հայր բարի, եկեսցէ ինձ արքայութիւն քո. Տէր, տուր ինձ զքուր նորա՝ զի մի այլ եւս ծարաւեցիցս։

Տէր, բաց ինձ զդրունս արքայութեան քո. քանզի ցանկայ եւ փափաքէ յոյժ անձն իմ ի գաւիթս քո։

Գ. Գիտես, որդեակ, թէ քանի՞ քաղցր իցէ մարդոյ՝ որ երկայնաժամանակեան աշխատութեամբք վաստակեալ իցէ՝ հանգչել։

Գիտես, եթէ որչափ հեշտական իցէ հիւանդի՝ ի դառնադառն եւ ի կսկծական ցաւոց ազատանալ։

Սակայն որչափ եւ ցանկալի եւ հեշտական քեզ հանգիստն այն թուիցի,

այլ եւ ոչ իսկ պատկեր այնր հանգրստեան է՝ զոր են իմոց զօրականաց պատրաստեցի։

Կարճ է հանգիստ աշխարհիս այսորիկ, եւ հաղիւ հաղիւ թէ զզօրութիւնս տկարացեալս բաւական իցէ վասն նորոգ ինչ աշխատութեանց կազդուրեցուցանել։

Այլ իմ հանգիստ՝ յաւիտենական է, եւ չէ իսկ հնար թէ շարժմամբք ինչ ամբոխեալ վրդովեսցի։

Թերի է հանգիստ այսր աշխարհի, եւ չառնէ զոք ազատ ի մարդկեղէն աղետից։

Իսկ հանգիստ իմ ամենեւին իսկ կատարեալ է, եւ ի բնաւ իսկ ցաւոց, ի սղոյ, յաղաղակէ եւ յանձկութենէ ազատ եւ ի վերս զսուրբս իմ յարդարէ։

Հանգիստ աշխարհիս այսորիկ թեթեւ իմն ափոփանք են պանդխտութեան մարդոյն։

Այլ իմ հանգիստ՝ մշտնջենաւոր պարգեւութիւն է հոգւոյն՝ որ ցնծայ, եւ ուրախութիւն ընդ անձն իմ՝ որ ամենեւին երանեալս եմ։

Ո՛հ. երդեակ, յորժամ ժամն այն երջանիկ հասանիցէ՝ յորում մտցես դու յայն սուրբ հանգիստ, յամենայն կարօտութենէ, յերկիւղէ եւ ի պատժոց պատուհասից ճշմարտիւ եւ կատարելապէս ազատ լինիցիս։

Ոչ իցէ քեզ այլ եւս պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան եւ ընդ աշխարհակալս խաւարի, ոչ այնուհետեւ բազում նեղութեամբք պարտ իցէ յառաջադէմ լինել։

Ոչ երկիցես այնուհետեւ ի մեղաց, ի նեղութեանց, յանձկութեանց, ի սովոյ, ի հալածանաց եւ ի որոյ։

Ոչ ունիցիս յայնժամ զհոգս եկեղեցեաց, ոչ գոչիցես յայնմ հետէ թէ ո՞ հիւանդանայ եւ ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթագղի, եւ ոչ ես տապանամ։ Քանզի մեկնեալս եւ հեռացեալս տեսանիցես յայնժամ զառաջինսն։

Ո՞չ ապաքէն, ո՛ղբեակ, արժանի քոց վաստակոց իցէ հանդիսան այն։ Ապա բարձ՝ յուսով այնր հանդստեան, զլուծ իմ ի վերայ քո, եւ քաղցր եւ թեթեւ քեզ երեւեսցի։

Դ. Գիտե՞ս, ո՛ղբեակ, թէ զի՞նչ իցէ ի սաստիկ ցանկութիւնս լեռով յաղել։

Արդարեւ իսկ ոչ, ո՛ղբեակ. զի այն յաղութիւն յերկրի ոչ ուրեք գտանի, վասն զի յետ առաջնոց ցանկութեանց շինչանելոյ՝ ցանդ նորոգ ցանկութեամբ տանջի սիրտ մարդոյ։

Այլ զայն գոնեայ գիտես, ո՛ղբեակ, թէ որպիսի՞ ինչ իցէ՝ յորժամ քաղցեալ ոք իցէ՝ եւ կերիցէ ցյաղ, կամ ծարաւի՝ եւ ջուր ըմպիցէ, եւ կամ առն

արծաթասիրի՝ մեծանալ, եւ հպարտի՝ ի բարձ ելանել, եւ առն փափկասիրի՝ զբօսնուլ եւ ուրախ լինել։ Այս ամենայն առաջի մարդկան անմտաց անուանեալ կոչի հեշտականութիւն։

Եւ սակայն եթէ գոտանիցի ոք՝ որ ամենեւին իսկ յամենայն իրս զորս եւ ցանկանայցէ՝ լիագոյնս վայելիցէ, ո՞չ ապաքէն երջանկութիւն նորա՝ զատուեր որբոյն երջանկութեան առաջի քո նկարիցէ։

Ոչ, ո՛րդեակ, արդարեւ իսկ ոչ. զի ակն ոչ եսես, եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ զոր պատրաստեցի ես սիրելեաց իմոց։

Անդ անձն որ ծարաւի իցէ՝ արբեսցի ի պարարտութենէ տան իմոյ, անդ զուխս փափկութեան իմոյ ըմպիցէ։

Անդ ուտէ ի քաղցր փայտէն կենաց, անդ լսէ զձայն քնարահարաց՝ զի հարկանիցեն զքնարս իւրեանց եւ երգիցեն երգս նորս առաջի աթոռոյն Աստուծոյ։

Անդ փայլեն արդարքն իբրեւ զարեգակն, անդ ուրախ լինին իբրեւ զյաղթօղս որ աւար հարեալ իցեն՝ յորժամ բաժանիցենն զկապուտ եւ զկողոպուտ։

Անդ ոչ իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ դէմ յանդիման ցուցիցս նոցա զիս՝ որ եմն ամենայն բարութիւն։

Ո՛հ. ո՛րդեակ, եթէ ծանուցեալ էր

քո զայն ամենայն՝ որ այժմ ծածկեալ են յաչաց քոց, այլ յայտնի լիցին քեզ՝ յորժամ լուսով իմով տեսցես լոյս, թէ գիտացեալ քո...։

Եւ բազում ինչ ունէի ասել քեզ, այլ ոչ կարես հանդարտել այժմիկ, քանզի տակաւին չլինիս հաստ։

Բաւական լիցի քեզ արդ, որդեակ, զոր հաւատասն, շատ իցէ քեզ գիտել՝ թէ կեանք յաւիտենականք կան պահին քեզ, եւ թէ ի կեանսն յաւիտենականս առնի մարդ ճշմարտիւ երանելի, եւ թէ քահանայք՝ որ վարս արքականս ընծայեցուցին յայսմ աշխարհի, առաւել քան զայլսն ամենեսին մեծապայծառ պատկաւ պսակիցին։

Ե. Ուրախ լեր, որդեակ, ուրախ լեր, զի հաճեցայ տալ քեզ զարքայութիւնն զայն։

Ուրախ լեր, եթէ աղքատ հոգւով իցես. երանելի ես, զի քո է արքայութիւն իմ։

Ուրախ լեր, թէ հեզ իցես. երանելի ես, զի ժառանգեսցես զերկիր երկնից։

Ուրախ լեր, թէ սգայցես զմեղս քո եւ զմեղս եղբարցն. երանելի ես, զի յաւիտեան մխիթարեսցիս։

Ուրախ լեր, եթէ փութով քով քաղցեալ եւ ծարաւի իցես արդարութեան. երանելի ես, զի յագեսցիս։

Ուրախ լեր, եթէ զկորհուրդ ողորմածութեան իմոյ՝ բազում խնամով առ ապաշխարողս մատակարարիցես. երանելի ես՝ քանզի եւ դու եւս ողորմութիւն գտցես:

Ուրախ լեր, թէ սուրբ արտիւք զիս ընդունիս, եւ ուղիղ արտիւք զփառս իմ միայն խնդրիցես. երանելի ես՝ զի զիս տեսցես:

Ուրախ լեր, եթէ զխաղաղութիւն սիրոյ ի մէջ ոչխարաց իմոց հաստատել ջանայցես. երանելի ես՝ զի ընդ որդւոց իմոց յերկինս ցնծասցես:

Ուրախ լեր, թէ հալածանս վասն հաւատոց եւ վասն նախանձու կրիցես. երանելի ես՝ զի քո է արքայութիւն իմ:

Ուրախ լեր, եթէ նախատիցեն զքեզ մարդիկ, եւ ասիցեն զամենայն բան չար զքէն սուտ՝ վասն իմ. երանելի ես, ցընծա, ուրդեակ, զի վարձք քո բազում են յերկինս:

Ագնիւ, ծառայ բարի, դարձո զմեղաւորս, վաստակեա հաւատարմութեամբ յայդւոջ իմում, յայնժամ եւ ես Տէր այգւոյն եւ հովուապետս եկիցս ընդ առաջ քո եւ եղիցս ի գլուխ քո զանթառամ փառացն պսակ:

Զ. Ո՛Հ. ուրդեակ, ածջիր ստէպ զմբաստաւ զայն ժամ հեշտական, յորում դրունք երկնից բացցին քեզ:

Այնմ ակն կալջիր, նմին տուր ողջոյն, նմին փափաքեաց, գոչեա առ ցանկութեան թէ վայ է ինձ՝ զի ընդերկար եղեւ պանդխտութիւն իմ։

Խոնարհեցո զսիրտ քո առնել զարդարութիւնս իմ, վասն այնր պատուական հատուցման։

Արդարեւ իսկ առաւել եւս ուրախ լեցիս եւ ցնծասցես դու յորժամ գայցես եւ պատկեսցիս, որչափ ուրախ լինէր նա՝ որ ի խաւարչտին բանտէ կապանաց արտաքս ելանէր՝ զի ի բարձ թագաւորութեան հասանիցէ։

Գ. ԼՈՒԽ ԺԴ.

Վասն ՔԷրմԷանդն ասպասաժպետրութեան ար-
Տեր Ցիսոս Քրիստոս։

Ա. Դ. ՈՒ՝ ոմ ես, որդեակ։ Ապաքէն պաշտօնեայ Օծելոյ իմոյ եւ մատակարար խորհրդոց նորա։

Ո՛Հ. որպիսի սիրով պարտիս դու սիրել զնա, որ զայնչափ սէր ցոյց քեզ։

Քանի հոգաբարձութեամբ պարտ է քեզ ուշ ունել բանից եւ պատուիրանաց Աքբայի քո, զի կատարեսցես զայնս եւ տեսցես զի եւ ամենեքին կատարեսցեն։

Որչափ ճգամբք արժան է քեզ աշխատ լինել, զի յամենայնի նմա հաճոյ լինիցիս։

Բ. Ո՛մարդ Օծելոյ իմոյ, ի բաց թօ-թափեսջիր զամենայն, եւ զՅիսուս միայն ի հոգւոջ, ի սրտի եւ ի գործս կրեսջիր հանապազ, եւ ցանզ առ քեզ պահեսջիր։

Միտս եառ քեզ, ո՛րդեակ, զի յամենայն բանս եւ ի գործս վարեսցէ զքեզ։ Եւ մի՞նչ ինչ բնաւ պարտիցի միտքն ուղղել զբանս եւ զգործս քո՝ այլ ի պաշտօն Յիսուսի եւ ի ապաստանութիւն նորա։

Եւ ո՞ այն ոք իցէ՝ որ բաւական իցէ ի սմին զմիտս քո լուսաւորել, բայց նա՝ որ ինքնին իսկ իմաստութիւն իմ է, լոյս ճշմարիտ, Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։

Ո՛րդեակ, զնա՛ հարց, նմա լուիջիր, այս ինքն՝ զնորին սուրբ վարդապետութիւն քննեսջիր ցանկ եւ հանապազ, զի ճրագ ոտից քոց լիցի բան նորա եւ լոյս շաւղաց քոց։

Զի յորժամ յանուն նորա աւետարանիցես, ոչ եթէ զքո՝ այլ զնորա զԱւետարան քարոզես, քանզի ոչ դու իցես որ խօսիսդ՝ այլ նա որ բերանով քով բարբառիցի։

Ո՛Հ. եթէ ի ձեռն ընթերցուածոց եւ մուածութեանց բանից նորա ի սիրտ քո ածել զնա կարիցես եւ ճշմարտիւ ճանաչել զՅիսուս Քրիստոս, շատ իսկ ու-

սեալ լեցիս յայնժամ եւ վասն ամենայնի քո եւ վասն այլոց։

Եւ արդարեւ իսկ վարդապետութիւն նորա անցանէ զանցանէ քան զամենայն վարդապետութեամբք սրբոց։ Այս այն գիտութիւն է՝ որում շրթունք քահանային զգուշացին։

Գ. Ո՛ղեակ, եառ քեզ սիրա՝ զի սիրիցես, եւ զո՞ ոք պարտիցիս սիրել յամենայն սրտէ, բայց զնա՝ որ այնչափ ինչ արար քեզ՝ յորժամ յիւր ապաստարութիւն ընկալաւ զքեզ։

Եւ յո՞ ոք յարել սերտագոյնս, այլ յՈրդին Աստուծոյ յորթն ճշմարիտ՝ զոր եդ ուռ։

Եւ զի՞արդ բերցես պտուղ՝ եթէ ոչ ի ձեռն սիրոյ կայցես մնայցես յորթն։

Եւ կամ ո՞րպէս կարիցես կենդանի լինել, եթէ ոչ սիրեացես զնա՝ ընդ որում մարմին մի ես եւ անդամ յանդամոց նորա։

Ո՛ երանելի անդամ։ Սիրեաջիր զգլուխ քո, եւ մի ընտաւ այլով իւիք հոգւով՝ այլ նորա հոգւովն պահեացես զկենդանութիւնն։

Սիրեաջիր զգլուխ քո, եւ մի առցես երբեք յանձն մեկնել ի նմանէ ոչ հալածանօք, ոչ սրով, ոչ սովով, ոչ զօրութեամբ ինչ իւիք եւ ոչ չարչարանօք։

Սիրեսջիր զգլուխ քո, եւ զոր օրինակ անդամն բնաձին իմն յօժարութեամբ յամենայնի հաւատարիմ ծառայութիւն հարկանէ մարմնոյն, այնպէս եւ դու՝ Յիսուսի յամենայնի ամենայն յօժարութեամբ ծառայեսցես, զամենայն ինչ ի փառս նորա առնելով։

Սիրեսջիր զգլուխ քո, եւ որպէս անդամն տայ զանձն վտարանդի եւ առնույանձն զի վասն մարմնոյն առողջութեան ի բաց կորեսցի, նոյնպէս եւ դու ցանկ կազմ եւ պատրաստ լինիջիր վասն Յիսուսի զոհ լինել։

Կեաց, անդամդ, ի կենաց գլխոյ քոյ, շնչեա հոգւով նորա, ուրախ լեր ուրախութեամբ նորա եւ ցաւեսցէ քեզ ցաւովք նորա։

Կեաց սիրով ի Յիսուս եւ Յիսուս ի քեզ։ Ո՛հ. սրչափ ինչ օգտեսցիս նովաւ։ Ո՛րպէս սրբեսցիս նովաւ։ Զիարդ ի ձեռն նորա եւ զայլս սրբեսցես։ Ո՛րպէս զսպաս պաշտաման քո պատուեսցես։

Դ. Կամիս հաճոյ լինել ինձ, սրդեակ, եւ լինել ինձ սիրելի. արա բան օրինակին՝ որ ցուցաւ քեզ ի լերին։

Յամենայն ի գործս քո նմանող լեր Որդւոյ իմում սիրելւոյ՝ ընդ որ հաճեցայ։ Զնոսա հրաւիրեցի յառաջագոյն՝ զորս յառաջն ծանեայ թէ կերպարանակից լինելոց են պատկերի նորա։

Արդ հանապազ առաջի աչաց քոց լեցի կեանք նորա, զի ձգեցիս կապանաք սիրոյ նորա եւ զհետ հոտոյ իւղոց նորա ընթացցիս։

Տես զսէրն զոր սիրեաց զիս։ Գիտաց նա զի ընդ զոհս եւ ընդ պատարագս մարդկան ոչ հաճիմ, եւ էջ յերկիր՝ զի անձամբ իւրով՝ փոխանակ անիրաւութեանցն զորս ի մարդկանէ ընկալայ, արասցէ ինձ հատուցումն։

Տես զնորա զառ մարդիկ սէրն. զմեզս նոցա կրեաց ի վերայ փայտի։ Տես զխոնարհութիւն նորա. ունայնացոյց զանձն՝ զկերպարանս ծառայի առեալ։

Տես զհնազանդութիւնն. եղեւ հնազանդ մահու չափ, զհաճոյսն իմ արար հանապազ։ Տես զողորմածութիւնն. շրջեցաւ բարիս առնելով եւ բժշկելով զամենեսեսեան։

Տես զապաշխարութիւնն. պահեաց զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր։ Տես զպարկեշտութիւնն. այնչափ էր պարկեշտութիւն նորա՝ մինչեւ զարմանային առաքեալքն՝ զի ընդ կնոջն Սամարացւոյ խօսէր։

Տես զմարդասիրութիւնն. եկաց ի վերայ գերեզմանին Ղազարու, եւ զայրին Նայինայ մխիթարեաց։ Տես զաղքատութիւնն. ոչ ունէր ուր դիցէ զգլուխ իւր։

Տես զեռանդն եւ զփոյթն. զի՞արդ փութամ մինչեւ կատարեսցի գործն՝ զոր ակսայ վասն փառացն Հօր եւ վասն փրկութեան մարդկան։ Տես զաստուածպաշտութիւնն. հանէր զդիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ։

Տես զտեսչութիւնն Հայրենի. զի մի նօթիս արձակիցէ ի տունս իւրեանց՝ բազմացոյց զհացսն եւ զձկունս յանապատի։

Տես թէ ո՞րչափ սիրելի եւ քաղցր էր. զի ամենեքին ցանկային զնա տեսանել։ Ամբոխ բազում զհետ նորա գնացեալ զմիմեանս կոխէին։ Զակ.քէոս վասն բազմախուռն գումարութեան ժողովրդոյն՝ ելի վերայ ծառոյ՝ զի տեսանիցէ զնա։

Տես զհեզութիւնն. զշնացեալ կինն արձակէ, զՅուդա զմատնիչն համբուրէ, վասն թշնամեաց աղօթս առնէ։ Տես զսրտին զուղղութիւն. ոչ խնդրեմ զփառս իմ, այլ զՀօրն որ առաքեացն զիս։

Տես զմեծասքանչ առատութիւնն. առէք եւ կերայք զմարմին իմ. արբէք զարիւն իմ։ Տես զհամբերութիւնն ի վիշտս. Հա՛յր՝ եղեցին կամք քո. իբրեւ որոջ առաջի կորբչի անմռունչ եկաց։

Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. դա է քահանայապետ մեծ, օրինակ եւ կանոն քահանայից։ Երթ, ո՞ր-

դեակ, զՀետ զայնը կանոնի, եւ խաղաղութիւն իմ ի ցեղ ի վերայ քո։

Լիջիր նմանող եւ նախանձաւոր Օծելոյ իմոյ՝ եւ հաճեցայց ընդ քեզ։ Զայն ճանապարհ կալջիր հանապազ, զայն ճշմարտութիւն ցանգ նկատեսջիր, զայն կեանս կեցջիր միշտ եւ առանց դադարելոյ։

Ե. Ա՛հ. Յիսուս, Հովիւ բարի՝ որ յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար, տո՛ւր զի ցանկ ի պատուիրանս քո խորհեցայց, եւ լի եղէց վարդապետութեամբ քով սրբով։

Տո՛ւր զի միշտ զերախտիսն քո յուշի կալեալ, առաւել քան զառաւել վառեալ բորբոքեցայց սիրով քով։ Տո՛ւր զի յաճախագոյնս զքո կատարելութիւնս ածեալ զմտաւ՝ նմանագոյն եւ կերպարանակից եղէց քեզ օր ըստ օրէ։

Ո՛վ անձն իմ. ամենայն ուրեք զՅիսուս օրհնեսջիր, ամենայն ուրեք զՅիսուս սիրեսջիր, ամենայն ուրեք զՅիսուս պաշտեսջիր, մատո՛ զքեզ ամենայն ուրեք Յիսուսի, ցանգ Յիսուսի փափաքեսջիր, մինչեւ փչեսցես զհոգի քո ի Յիսուս, եւ ընդ Յիսուսի թագաւորեսցես ի յաւիտեան. Եղիցի եղիցի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն ինչ պարտ է հանապազ ղաղթաղթանս
Տեառն Հերոյ Յիսուսի Քրիստոսի յելնել։

Ա. Եղ, որդեակ, առաջնորդ հաւատոց եւ կատարիչ՝ զամօթ առ ոտն հարեալ՝ տարայ խաչի, զի դու յիս հայեսցիս, եւ ի փայտէ անտի կենաց յոր կախեցայ՝ զՀոգին սրբարար յանձն քո ձգեսցես հանապազ։

Արդարեւ ասեմ քեզ. եթէ ուշի ուշով եւ ջերմ եռանդմամբ ի չարչարանս իմ խորհել հոգ ի մտի ունիցիս, անդ զամենայն՝ որ ինչ օգտակար եւ կարեւոր քեզ իցեն՝ գտցես առատապէս։

Ապա բաց ինձ զսիրտ քո, եւ թոյլ տուր ինձ որ խաչեալս եմ՝ մտանել ի նա, եւ ի խուն ինչ ժամանակի լիցիս ուսեալ սքանչելի օրինակաւ։

Բեւեռեալիր զաչս սրտի քո ի խաչն իմ, եւ ի սակաւ ժամու ձգեսցիս ի նմանէ։

Բ. Ո՛ւսարուն, վարդապետ ազնուագոյն, խօսեաց զի լուիցէ ծառայ քո։

Ե՛կ առ իս առ աղքատս, եւ վառեա զսիրտ նորա, լուսաւորեա զաչս նորա, եւ արա զի տեսցէ։

Գ. Ա՛հա դամ, որդեակ, խոնարհեցո զունկն քո, լուր այրդ բարեբարոյ, սիրեցի զքեզ եւ մատնեցի զանձն իմ վասն քո։

Ո՛հ. եթէ առնուիր ի միտ զբանս

զայս, վաղվաղակի իսկ առնէիր զտառա-
խանի՝ թէ Տէր, դու գիտես զի սիրեմ
զքեզ։

Ապա ի միտ առ, ՝որդեակ, սիրեցի
զքեզ եւ մատնեցի զանձն իմ վասն քո,
զԱրարիչս՝ վասն արարածոյդ, զՀայրս՝
վասն անուսակ որդւոյդ, զԱստուածս
վասն դոյզն մարդոյդ,

Զթշնամանեալս՝ վասն թշնամանչիդ,
զերախտաւորս՝ վասն ապախտաւորիդ,
զիս որ ամենեւին երանեալս եմ՝ վասն
քո հիքի եւ տառապելոյ։

Դ. Տէր, զի՞ արարեր ընդ իս. գիտեմ
զի Հայր քո հանապազ լսէ քեզ։ Եթէ
ասէիր բանիւ, արդարեւ իսկ առժա-
մայն բժշկէր զՀոգի իմ եւ թողոյր զան-
օրէնութիւն մեղաց իմոց։

Ապա վասն էր այնչափ ճգամբք եւ
աշխատութեամբք խնդրեցեր զիս, այն-
պիսի մահուամբ փրկեցեր զիս։

Ե. Ո՛՝որդեակ, այնու փառաւորեցայ,
եւ այնու փառաւորեցաւ Հայր իմ յիս։

Տես եւ ծանիր թէ զի՞նչ է լայնու-
թիւն եւ երկայնութիւն եւ բարձրու-
թիւն եւ խորութիւն առաւելութեան
սիրոյն իմոյ առ քեզ։

Կարող իսկ էի բանիւ, կարող էի լե-
զուաւ զքեզ ազատել, եւ ասկայն կա-
մեցայ գործով, կամեցայ յայտնագոյն
կամաք փրկել զքեզ։

Կամեցայ զանձն իմ դնել վասն քո, զի դու գիտացես թէ չէք եւ չէք իսկ բնաւ սէր մեծ՝ քան զիմ սէր առ քեզ։

Կամեցայ ուռոգանել զքեզ արեամբ իմով ի խաչին, զի դու յիմմէ բարերարութենէ դրդեալ եւ դրգռեալ՝ զամօթի հարցիս՝ զի զայնպիսի Փրկիչ ոչ սիրես։

Կամեցայ՝ առաջի քո կալ խոց եւ վիրալից վասն անօրէնութեանց քոց, զի դու իմացիս՝ եթէ քանի՞ եւ ո՞րչափ ցաւս ինձ պատրաստիցեն մեղք քո ի ծածուկս որտի։

Կամեցայ զվէրս յանցանաց քոց ի մարմնի իմում կրել, զի դու ի գութ եկեալ դադարեսցիս այնուհետեւ մեղս ի վերայ մեղաց, վէրս ի վերայ վիրաց յաւելուլ։

Միանգամայն իսկ ասել, կամեցայ, ո՛ քահանայ, այսպէս վասն քո չարչարել, զի քեզ թողից օրինակ՝ զի զհետ երթայցես հետոց իմոց։

Զ. Օ՜նոսա, ո՛րդեակ, յառաջագոյն հրաւիրեաց Հայր իմ, զորս յառաջն ծանեաւ՝ թէ կերպարանակից լինելոց են պատկերի Որդւոյն իւրոյ։

Արդ նայեա՛ց յերեսս իմ, զի զայն ապա յանձին քում ցուցանիցես, եւ այնպէս ի փրկութիւն հասանիցես։

Տե՛ս զիս ի յետին պահու անդ մահուան ընդ երկար յաղօթս կացեալ, եւ

ուսիր ստէպ եւ առանց ձանձրանալոյ աղօթս առնել։

Տէս զի զդառն բաժակ ի ձեռաց Հօրն ընդունիմ, եւ ուսիր աշխատութեանց, հակառակութեանց եւ ամենայն խստա-գոյն իրաց սրբոյ Պաշտամանն համբերութեամբ եւ հպատակութեամբ տանել։

Տէս զիս զի ի խոր տրտմութեան լքեալ թողայ Ռաքելոց որ ի քուն լիեալ ննջէին, եւ ուսիր ի վիշտս եւ ի տառապանս, թէպէտ եւ առանց մխի-թարութեան իցես, հաստատութեամբ գնացս ցուցանել։

Տէս զիս զի ի Յուդայէ մատնեցայ, եւ ուսիր համբերել սուտ եղբարց։

Տէս զիս զի գիրկս արկեալ փարեցայ զՅուդայիւ, եւ ուսիր մի զլանալ թըշ-նամեաց զհամբոյր խաղաղութեան։

Տէս զիս զի կապեալ ածիմ Յերու-սաղէմ, եւ ուսիր կապանաց եւ թշնա-մանաց վասն իմ հանդուրժել։

Տէս զիս զի ոչ ընդդէմ դառնայի այնոցիկ՝ որ կապէին զիս անիրաւու-թեամբ եւ տանէին բերէին. այլ թողի իբրեւ զգառն անմեղ որ ոչ բանայ զբե-րան, եւ ուսիր ի կաղոյ եւ ի կուրոյ անձնապահ լինել։

Է. Եղիր ընդ իս, ո՛րդեակ, Յերուսա-ղէմ, եկ զկնի իմ, եւ անդ եւս ուսուցից զքեզ։

Ահաւասիկ քահանայապետք Աննա եւ Կայիափա ի մահ խնդրեն զիս. երկիր դու, ո՛րդեակ, զի մի՝ քանզի քահանայ ես, մեղուցեալ՝ առաւել եւս քան զայլս զայրացուցես զիս, եւ առաւել քան զայլս զփառս իմ աղարտեսցես:

Աւասիկ հաստատութեամբ կամ առաջի հալածչաց իմոց. ապա մի երկրնչիր յայնցանէ՝ որ զմարմին սպանանեն, եւ զհոգի ոչ կարեն սպանանել:

Ահաւասիկ ի ծառայէ քահանայապետին սպասակ յերեսս առեալ՝ համբերի, տուր դու համբերութեամբ զծնօտս քո այնմ՝ որ հարկանիցէ զքեզ, եւ միա դիր հաւատեաւ, մի՛ գուցէ՝ որ արբանեկեն զքեզ, իցեն որդիքն անիրաւութեան՝ որ իւրեանց դայթակղանօքն զիս սպանին:

Ահաւասիկ ի մէջ սուտ վկայից որ ամբաստանեն զիս՝ լուռ եւեթ կամ. եւ դու, ո՛րդեակ, մի՝ յորժամ զրկիցեն զքեզ, թշնամանիցեն, ծաղր առնիցեն եւ շար խօսիցին՝ զայրասցիս:

Ահաւասիկ այնչափ շարչարանս կրեմ եւ ի քուն ոչ լինիմ, այլ զդիշերն ողջոյն տքնեալ կամ ի մէջ այնոցիկ՝ որ այպանեն զիս եւ զան հարկանեն. դու դոնեայ, ո՛րդեակ, յորժամ հանդիսատ մարմնոյ քում տալ հասանիցէ՝ ի չափու կալ զանձն քո:

Ահաւասիկ Պետրոս, որ երբեմն մեծ-

անձն եւ հաստատագոյն քան զամենեսին, ի սրահի քահանայապետացն երիցս զիս ուրանայ. դու, որդեակ, որչափ եւ մեծ իցես, որչափ եւ յամրի եւ ի հաստատութեան զանձն համարիցիս թէ իցես, նոյնչափ եւս առաւել երկիր, զի մի եւ դու յորժամ դէպ ինչ ուրեք տայցէ՝ անկեալ կործանեսցիս։

Ահաւասիկ ընդ Պետրոս որ ապաշխարեացն՝ առանց ամենեւին յապաղութեան հայիմ զթութեամբ. եւ դու, որդեակ, առ այնոսիկ՝ որ մոլորեցանն եւ ապա դառնան այսրէն՝ լիջիր քաղցր եւ մարդասէր։

Ահաւասիկ երկչոտն Պիղատոս՝ զիս զանպարտն չիշխէ ազատել, այլ զահի զերկիւղն հարեալ՝ մատնէ. դու, որդեակ, մի լինիր դատաւոր, եթէ չիցես ձեռնհաս առաքինութեամբն զանիրաւութիւնս խորտակել։

Մի առնուցուս ակն հղօրի, եւ զդոյշ լեր զի մի՝ առ ահի կամ յանցաւորն նեղողամտութեամբ յատենի՝ մատնեսցես շանց զիս որ ամենեւին սուրբ եմ։

Ահաւասիկ հանդերձ սպիտակ ազուցեալ՝ իբրեւ յիմար ի Հերովդէ ի բաց արձակեցայ. եւ դու, որդեակ, մի զանդիտեսցես՝ եթէ առ յիմարս ունիցին զքեզ վասն իմ եւ այնպէս հռչակ հարկանիցեն։

Ահաւասիկ ի վայր քան զԲարաբբաս

եղայ. եւ դու, որդեակ, սիրեսջիր չլինել ծանօթ եւ առ ոչ ինչ համարել, առ յանձն ամենեցուն ոտից կոխան լինել։

Ահաւասիկ անհնարինս վասն քո խոշտանգեցայ խարազանօք. դու, որդեակ, մեռո զանդամս քո որ են ի վերայ երկրի, զի կենդանի կայցէ ոգին, սուգ առ եւ ապաշաւեա վասն մեղաւորաց։

Ահաւասիկ փշովք պսակեցայ անդթութեամբ եւ թշնամանօք, ահա այր մի՝ որ ոչ գոյ տեսիլ եւ ոչ փառք. դու գոնէ, որդեակ, մի ընդունայն փառօք եւ վայելչութեամբ զտեսիլ քո զարդարեսցես։

Ահաւասիկ ես հաղիւ ուրեմն թէ շընչել կարող եմ վասն վերայ եւ խոցից, եւ զիւաչ չմերժեմ վասն քո բառնալ եւ կրել. դու գոնեայ, որդեակ, զլուծ իմ՝ որ քաղցր եւ թեթեւ է, բարձ սիրով ի քո վերայ։

Ը. Եկ դեռեւս, որդեակ, եւ ել ընդ իս ի Գողգոթա. միտ դիր դարձեալ եւ ուսիր։

Զինչ ցքեզ ասիցէ ճանապարհն քրիստամբ եւ արեամբ իմով ոռոգեալ, բայց զայն իսկ՝ թէ պարտ եւ պատշաճ է քեզ՝ վասն զհոգիսն խնդրելոյ եւ շահելոյ՝ մտադիր ընդ ճանապարհս եւ ընդ ցանգս ընթանալ արշաւել քրիստնալիոյ աշխատութեամբ։

Զի՞նչ՝ կանայքն որ արտասուեն, բայց՝ զի պարտիս խորհել դեղերել ի շարշարանս իմ եւ վշտակից ցաւոց իմոց լինել, եւ զքո մեղս՝ որ պատճառք այնց ցաւոց եղեն՝ առաւել քան զամենայն լալ եւ սգալ։

Զի՞նչ՝ մերկումն իմոց հանդերձից, բայց՝ զի պարտիս կրել համբերութեամբ զաղքատութիւն։

Զի՞նչ՝ տարածելն իմ եւ բեւեռել ի խաչի, եթէ ոչ զի զմարմին քո կարեօք եւ ցանկութեամբ հանդերձ պարտիս ի խաչ հանել։

Զի՞նչ՝ բարձրանալ խաչին իմոյ, այլ թէ բազում նեղութեամբք պարտ իցէ քեզ յարքայութիւն երկնից բարձրանալ։

Զի՞նչ՝ ըմպել իմ քացախ եւ լեղի, բայց՝ զի ժուժկալութեամբ կեցցես եւ մի ցանկացիս ի սեղանս բազմախորտիկս յղփացեալ յօրանալ։

Զի՞նչ՝ աւազակն փրկեալ որ ընդաջմէ իմմէ կայր, բայց՝ զի չէ պարտ քեզ բնաւ ամենեւին հատանել զյոյս յողորմութենէ իմմէ։

Զի՞նչ՝ մեղաւորն կորուսեալ որ կայր առընթեր բարերարութեան իմոյ, այլ՝ զի չէ պատշաճ ի զթութենէ իմմէ յանդգնագոյն լինել։

Զի՞նչ՝ աղօթքն իմ վասն խաչահանուացս իմոց, եթէ ոչ զի եւ վասն ժան-

տաժուտ մեղաւորաց պարտ եւ պատշաճ իցէ պաղատել, եւ մտադեւր ներել կա-
րեւոր եւ սաստիկ թշնամեաց։

Զի՞նչ՝ առնելն իմ յանձն զմայր իմ, բայց՝ զի պարտիցիս մեծաւ երկիւղածու-
թեամբ մեծարել զնա եւ պաշտել վըս-
տահութեամբ։

Զի՞նչ՝ վասն քո մահն իմ, եթէ ոչ՝ զի եւ դու պարտիս վասն եղբարց զանձն
քո դնել։

Զի՞նչ՝ արեգակն, եւ լուսին եւ քա-
րինք եւ երկիր որ սուգ առին ի վերայ
մահուան իմոյ, բայց՝ զի եւ քան զվէմ
խստագոյն իցես՝ եթէ ոչ եւ դու ընդ
մահն իմ յուզեալ խլրտեսցիս։

Զի՞նչ՝ թշնամիքն իմ որ զկուրծսն
բախեն, բայց՝ զի աղբեւր յորդառատ
զղջման եւ շնորհաց իցէ խաչն իմ։

Զի՞նչ՝ կողն իմ որ բացաւ տիգաւ
զինուորին, բայց՝ զի պարտ իցէ քեզ
մտանել յայն ի ձեռն սիրոյ եւ անդէն
կենալ։

Զի՞նչ՝ Նիկոդեմոս որ եբարձ զիս ի
խաչէ, պատեաց խնկովք եւ եդ ի նոր
գերեզմանի, բայց՝ թէ մեծաւ մտքրու-
թեամբ արտի պարտ եւ արժան է քեզ
զկորհուրդս իմ ընդունել եւ մատա-
կարարել, զփառաւորութենէ տան եւ
սեղանոյ իմոյ բազում հոդաբարձու-
թեամբ փոյթ յանձին ունել։

Թ. Յայդ խորհեաց, ուրդեակ, եւ ի դոյն կանխեսջիր, եւ լեցի քեզ խաչն իմ փրկութիւն, կեանք, պատսպարան ի թշնամեաց եւ վերին քաղցրութեանց հեղու�եւ յորդութիւն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Վասն սիրոն Էրանդման Բարիպաշտութեան ապ-Էրանելի Կոյսն Մարիամ:

Ա. Այս իմաստութիւն յաւիտենական՝ որ ի բարձունս եմ բնակեալ, իբրեւ ինչի յերկիր՝ կամեցայ ի ձեռն Մարեմայ յաշխարհս մտանել: Ի նորա ձեռն զմարդկան փրկութիւն գործեցի, եւ ի ձեռն նորա, ուրդեակ, կարգեալ սահմանեցի տալ քեզ իմաստութիւն եւ սրբութիւն:

Որդի իմ ես. ես եղէց քեզ Հայր, Մարիամ՝ մայր: Տկար եւ անզօր ես. ես եմ Տէր որ զօրացուցանեմ. Մարիամ՝ խօսելի քո, զի յինէն օգնականութիւնս վասն քո խնդրեսցէ:

Մեղաւոր ես դու. ես զթած եմ եւ ողորմած. Մարիամ՝ մեղաւորաց ապաստան, յոյր ձեռն մարթ է քեզ հայցել եւ գտանել ողորմութիւն:

Յերկինս նկրտիս. Աստուած երկնից եմ, եւ նա դշխոյ երկնից, զի կարասցէ նա քեզ մուտս յարքայութեան իմում ընդունել:

Քահանայ ես, սուրբ պարտիս լինել.

ես համբրէն առաքինութեանց եւ սրբութեան վերին տուիչ, Մարիամ բաշխիչ եւ մատակարար։

Արդ՝ կամիս, որդեակ, շնորհաց հաստանել եւ փառաց։ Կարդա առ Մարիամ, զՄարիամ պաշտեա. ի ձեռն նորա աղօթիւց քոց լուայց. ցուցիս նմա թէ եմ որդի, եւ նա քեզ ցուցցէ թէ մայր է։

Բ. Դուռն երկնից է մայր իմ։ Ի ձեռն նորա տուքք եւ պարգեւք իմ իջանեն յերկիր, եւ ի ձեռն նորա սուրբք յերկրէ առ իս ելանեն։

Թուեա, որդեակ, եթէ կարիցես, թէ որչափ մեղաւորս ի ձեռն նորա դարձուցի, քանիք այնոքիկ են որ դարձեալն էին եւ ես ածի ի կատարելութիւն եւ սրբեցի, որչափսյք ի նորա ձեռն զպարգեւ զգաստութեան ընկալան, քանիք զյաղթութիւն ի վերայ ախտիցն կարեաց, քանիք զերկնաւոր փառացն զպսակ։

Տես զԱւգոստինոս, զՅովհան Դամասկացի, զԳերմանոս, զԱնսելմոս, զԲոնաւենտուրա, զԲեռնարդոս, զԴոմինիկոս, զՎինկենտիոս Փերրերեան, զքսաւեր եւ զայլ եւս բազում քահանայս զծառայս Մարեմայ՝ որ այնպէս հոյակապք եւ նշանաւորք սրբութեամբ եղեն։

Ո՞չ ապաքէն ի ձեռն Մարեմայ սրբե-

ցի զնոսա։ Մինթէ բնդ սիլ դուռն մտին նոքա յարքայութիւն իմ՝ եթէ ոչ ի ձեռն Մարեմայ։

Թուեա թէ կարիցես եթէ օրչափ մեռեալս յարոյց պաշտպանութիւն նոքա, օրչափ հիւանդս բժշկեաց, զորչափ-փոյս թափեաց նա ի վատնդաց. զքանիս ի ծովս, զքանիս ի հաւր, զքանիս ի պատերազմի, զքանիս ի սովս, զքանիս ի սրածութեան։

Թուեա, օրչափ թագաւորութիւնս կանգնեաց հաստատեաց, օրչափ տերութիւնս պահեաց, քանիսն զորսոց որ կարդացին առ նա՝ եւ յաղթութիւն, քանի հերետութեանց զրաւ արար։

Այսչափ իշխանութիւն եւտու ես Տէրս Մօր իմում, այսպէս զՄայրս իմ կամեցայ պատուել։

Գ. Լաւ դու, որդեակ, պարտիս պաշտել յանկեղծաւոր սրտէ զՄայրս իմ, ոչ եթէ պաշտպանութեան ինչ տենչանօք, այլ եւ զորովովք ճշմարիտն սիրոյ։

Մայր քո է, ապա պարտ է քեզ զնա պատուել։ Մայր իմ է, տաճար իմ, սրբութիւն իմ, ապա պարտիս շուք եղեալ մեծարել զնա։

Լի շնորհօք է, ապա պարտ եւ պատշաճ է զի դու զովեսցես եւ օրհնեսցես զնա։ Ողորմած է, ապա վատահ պարտիս ի նա լինել։ Թագուհի սրբոց է եւ Տի-

կին քո, ապա պարտ է քեզ ծառայութիւն հարկանել նմա։

Հաճոյ է Հօր՝ որ սիրէ զդուստր, հաճոյ է որդւոյ՝ որ սիրէ զՄայր, հաճոյ է փեսային՝ որ սիրէ զՀարսն։ Ապա պաշտեսջիր զՄարիամ, եւ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ հաճոյ լինիցիս։

Դ. Ո՛Հ. ո՛րդեակ։ Մարիամ Մայր իմ է, արդարեւ իսկ գեղեցիկ իմ, մերձաւոր իմ։

Եւ կամեցայ, եւ պատուիրեցի զի երանեսցեն զնա ամենայն ազգք, եւ զնա երկիւղածութեամբ պաշտեսցեն, վասն զի ես որ Հզօրս եմ՝ արարի նմա մեծամեծս, ես կամեցայ, ես հրամայեցի, եւ ըստ ամենայնի որպէս պատուիրեցի՝ այնպէս եւ կատարեցաւ։

Ոչ երբեք պակասեցին օրհնութիւն եւ պաշտօն նորա յԵկեղեցւոջ իմում։ Տես դու զաւուրս ուրախանս վասն նորա՝ զի արդ յաճախագոյնք են եւ մեծաւ շքով, զերդս օրհնութեանց ի պատիւ նորա՝ թէ ո՛րչափ բազումք իցեն։

Զնա ամենայն ուրեք բարձրացուցանեն քարոզք, զնա մեծարեն ընդ բնաւ ժողովուրդք, նմա պաշտօնատարք են ամենեքին՝ որ ուղիղ են սրտիւք։ Այսպէս կամեցայ, այսպէս պատուիրեցի։

Քահանայ ես, զկամս իմ կատարեա, զպատիւ Մարեմայ Մօր իմոյ ամենայն

ուրեք յառաջադէմ արա, զնա ընդ հա-
նուր բարձրացս, զնա օրհնեա, զնորա
պաշտօն՝ որչափ եւ ձեռնհաս իցես,
յանձն արա ամենեցուն։

Երանի այնմ քահանայի է՝ որ ծա-
ռայ Մարեմայ իցէ եւ ծառայս նմին ժո-
ղովիցէ։ Երանի ժողովրդեան որ զնա
պաշտիցէ։ Նոքա ընկալցին օրհնութիւն
ի Տեառնէ, ի յօղոյ երկնից եւ ի պա-
րարտութենէ երկրի, շնորհս աստէն
յայսմ աշխարհի եւ փառս ի հանդեր-
ձելումն։ Մի կորիցէ ծառայ Մարիամու։

Ե։ Ո՛ Կոյսդ երիցս երանելի։ Ընկալ
զես իբրեւ ծառայ, որ վաղ իսկ առ խա-
չին ընկալար զես որպէս որդի։ Ցոյց թէ
Մայր իմ ես դու, արա զիս առ քեզ
բարեպաշտ։

Ո՛ Կոյսդ հզօր, որ զվիշապն ջախջա-
խեալ խորտակեցեր, մանրեա խորտա-
կեա զբիծս ախտից կարեաց իմոց,
խզեա զկապանս չարեաց իմոց։

Ո՛ Կոյսդ՝ յորոյ յակնարկէն երկնից
դանդաղն մատակարարին, ընկալ շնորհս՝
զորս գիտես թէ ինձ լաւ իցեն, ընկալ
հաւատս հաստատունս, յոյս ամուր,
սէր հրեղէն, պարգեւ աղօթից, ընկալ
վասն իմ զգաստութիւն, խոնարհու-
թիւն, աշխարհատեցութիւն եւ փոյթ
զգուշոց։

Ո՛վ Կոյս, օգնական քրիստոնէից

Յամենայն անձկութիւնս օգնեա ինձ, յամենայն վտանգէ փրկեա զիս եւ ի կեանս եւ ի մահուան։ Զայս Հանապազօր օրհնելով խնդրեցից ի քէն, եւ քեւ զթշնամիս իմ հարից եւ արհամարհեցից զյարուցեալսն ի վերայ իմ։

Զ. Ո՛վ Մարիամ. ծառայեսցեն քեզ ժողովուրդք, պատուեսցեն զքեզ ազգինք, երկիր պաղցեն քեզ ամենայն ազգք։

Տայցէ ինձ Տէր զի զպաշտօն ծառայութեան քո ընդ բնաւ տարածանել մարթացայց, եւ զթշնամիս քո վանեալ վկանդել. Եղեցի եղեցի։

Գ. Լ Ո Ի Խ ԺԷ.

Վասն խրատոյ հոգեւոր տա տարատաջոյնան։

Ա. ԼՍ առնեմ զպաշտօնեայս իմ ի հուր կիզելոյ, ասէ Հայր իմ։

Արդ կամիս, որդեակ, լինել պաշտօնեայ եւ քահանայ արժանաւոր։ Ջանա, զի ցանկ առ աստուծոյն վառեալ բորբոքեսցի սիրտ քո։ Ամենեւին իսկ հրեղէն լինիջիր։

Ի հնումն պարտ եւ պատշաճ էր զի հանապազ վառեալ կացցէ հուրն ի տապանակին. այսպէս յայնժամ լինէր՝ որ առակ օրինակի միայն էր։

Աստուծոյ ուսիր, որդեակ, զհուրն

սուրբ ի սրտի քում արծարծանել, քանզի ոչ եթէ առակական ինչ տապանակ իցէ սիրտ քո, այլ բուն իսկ եւ ճշմարիտ տապանակ Աստուծոյ քո։

Բ. Իջի ես, որդեակ, յերկնից, զի զփառս Հօր եւ զոգւոցն փրկութիւն հոգացայց, ոչ եթէ ի հարկէ ինչ տագնապելոյ՝ այլ ի սիրոյ դրդելոյ։ Էր ի սրտի իմում հուր վառեալ, եւ պակասեալ նուաղեցայ եւ ոչ կարացի հանդարտել։

Զայն հուր եկի արկանել յերկիր, եւ զի՞նչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր։ Զքեզ առաքեցի զի վառեալ բորբոքեսցես զայն, եւ զնարդ կարիցես բորբոքել, եթէ դու կարօտ յայնմանէ իցես, եթէ դու ինքնին ցուրտ իցես։

Բորբոքեսցիս այսուհետեւ, որդեակ, բորբոքեսցիս ի փառս Աստուծոյ, բորբոքեսցիս ի փրկութիւն ոգւոց։ Ի բաց յանձնէ թօթափեսջիր զցրտացելոյ սրտին զթմբրութիւն, բորբոքեսցիս տենչանօք, բորբոքեսցիս բանիւք, բորբոքեսցիս գործովք։

Գ. Որպէս եղջերու փափաքէ յաղբերս ջուրց, այսպէս եւ դու, որդեակ, ասատիկ իմն յօժարութեամբ մտաց յարբանեկութիւն Աստուծոյ եւ ի ապասս սրբոյ պաշտամանն պարտիս ցանկանալ, զի ուղղութեամբ զայն ամենայն վճարել մարթասցիս։

Բնաւ իսկ եւ ամենայն գիտաւորութիւն սրտի քո, սրդեակ, իցէ ի գործս յայսոսիկ սուրբս, համօրէն իրՁք եւ յանկութիւն սրտի քոյ՝ այն լեցի զի զայն ամենայն բարւոք կատարեսցես։

Այն իսկ միայն իցէ ուշ եւ մտադիրութիւն քո ամենեւին, զի մի ինչ զանց զայնոքիւք արասցես՝ որ ի փառս իմ կամ ի փրկութիւն ընկերին հայրցին։

Դ. Տէր, ի վեր իսկ քան զհրեշտակսն է պաշտօն իմ, քանզի ոչ այսպիսի ինչ սպասաւորութիւն յանձն արարեր հրեշտակաց։

Ապա տուր ինձ, զի հրեշտակական արագութեամբ, եռանդմամբ եւ լրջմտութեամբ ջան յանձին կալայց ընուլ զայն։

Տէր, աստուածեղէն իմն է պաշտօնն՝ որ ինձ հաւատացեալ է. ոչ եթէ ես ինչ գործեմ զայն, այլ դու ինեւ ծառայիս քոյ անարժանիս։

Արդ շնորհեա ինձ, զի եթէ այնպիսի պատուով արժանի համարեցար պատուել զիս, ամենայն փութով եւ հոգաբարձութեամբ՝ որչափ ի կարի իմում իցէ, ամենայն մեծարանօք սրչափ եւ ձեռնհաս իցեմ՝ յայնմ ի սուրբ ծառայութեան վարեցայց։

Ե. Աղաչեմ, Տէր, աղաչեմ եւ փաբեալ ասեմ, տուր ինձ զսակի բորբոքեալ

սրբոյ եւ անդան, զի փութով եւ եռանդմամբ ծառայել քեզ կարացիցս։

Ո՛ Յիսուս, ո՛ սիրտ վառեալ աստուածեղէն սիրով։ Ա՛րկ ի սիրտ իմ զկայծակունս այնր հրոյ՝ որ վառեալ բորբոքեալ է ի քեզ. արծարծեա յիս զհոգի բոցեղէն եւ հրեղէն, դրոշմեա ի ներքս ի սիրտ իմ զսէր քո, զի արժանապէս զգործ քո ի գլուխ հանեալ կատարեցից։

Ո՛վ սէր, որ հանապազ վառիս եւ ոչ երբեք շիջանիս։ Վառեա զիս։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Վասն ցրտութեան եւ ընտանութեան։

Ա. Վ Ա՛Ց քեզ, սրդեակ, եթէ թուլասցիս ի ծառայութեան իմում։ Վա՛յ քեզ։ Փսխեցիս զքեզ յայնժամ ի բերանոյ իմմէ։

Բ՝ա՛բէ. եթէ առնուիր ի միտ թէ որպիսի՞ ինչ չար իցէ չլինել հաճոյ սրտի իմում, նողկացուցանել զնա, եւ ապա ուրեմն իբրեւ պիղծ ինչ եւ նողկ եւ գարշելի արտաքս ընկենուլ ի նմանէ, արդարեւ իսկ ոչ յայլմէ ինչ իմեքէ երկրնչէիր առաւել՝ քան ի ցրտութենէ եւ ի մեղկութենէ եւ յանկանելոյ տակաւ անհոգութեամբ յառաջին եռանդմանէ։

Բ. Ո՛ անհանճարութեան այնոցիկ՝ որ այնպէս իբրեանց յանցանօքն ի զօրու-

թենէ շնորհայն պակասեալ գտանին եւ առ փոքր փոքր կործանեալք՝ հուսկ ուրեմն առելի եւ գարշելի ինձ լինին։

Ո՛ հէք.ք եւ թշուառականք։ Առ մեծատունս ունին զանձինս եւ թէ՝ ոչ կարօտ ինչ իւիք իցեն. եւ զայն չգիտեն թէ չուառք են, աղքատք, կոյրք եւ մերկք։

Գ. Եւ սակայն, որդեակ, որչափ բազումք գտանին այնպիսիք ի մէջ քահանայից իմոց. քանի յոլովք՝ որ զկարգ կատարելութեան յանձն առեալ են, եւ ոչ զայլմէ իմեքէ նուազագոյն հոգ յանձին ունին՝ որչափ զկատարելութեանն հրահանգաց։

Որովայնի շնորհեն, սովորութեանց աշխարհի զանձինս պատշաճեն, ի կոչունս ցանկանան եւ արձակերասանակ դհետ պնդին, ջանան կուտել մթերել ինչս, եւ ընդ կանայս նստեալ սիրեն ծիծաղել։

Ի խօսս մնոտիս, նա եւ ի բանս բամբասանաց ընդվայր լինին ժամավաճառ. յընդունայնութիւնս հարեալ հատեալ երեւին ներքուստ եւ արտաքուստ, եւ եթէ խուն ինչ ժամանակ յընթերցուածս եւ ի խոկմունս սրբոց իրաց ծախիցեն՝ հազիւ հազիւ։

Աշխարհամոլք են, շնչաւորք, երկրաւորք, ապերասանք, ամբարտաւան

իմն եւ ընդունայն գիտութեամբ այ-
տուցեալք եւ տորմեալք, սիրողք ճա-
խութեան, եւ սակայն ոչ երկնչին ինչ
յանձանց իւրեանց, չմտանեն ի ներքս
ի սիրտս իւրեանց՝ զի զանձանց զեղկու-
թիւն եւ զչքաւորութիւն ծանուցեալ
ի միտ առցեն։

Դ. Այն իսկ շատ է նոցա եթէ
զկանոնական աղօթիւք ժամուց զանց
ոչ առնիցեն, եթէ յորժամ աղաչիցին՝
զխորհուրդն մատակարարիցեն, եթէ
մատուցանիցեն պատարագս ի ժամա-
նակի՝ յորժամ հարկ ի վերայ կայցէ,
եթէ չտայցեն ինչ հրապարակաւ գայ-
թագղութիւն, եթէ ոչ աղխաղխեալ
եւ ծանրացեալ մահացու մեղօք զմտայն
խիղճս նշմարիցեն։

Զպարտիսքն, ասեն, ի մեծ եւս եւ
յառաւելագոյն կատարելութիւն հա-
սանել։ Զփոյթ բարձրագոյնն աստուած-
պաշտութեան անուանեալ կոչեն կեղ-
ծաւորութիւն, եւ կամ աղաղակեն թէ
ի կուսանս հաւատաւորս այն անկ իցէ։
Զայլոցն զուղիղ խիղճս մտաց՝ երկչոտս
եւ կասկածոտս յորջորջեն։

Այսպէս ի յոռութիւնս սովորականս
զամենայն աւուրս կենաց իւրեանց ան-
ցուցանեն, մաքրութեան սրտի չունին
ուշ. մեղկութեամբ եւ վարկպարագի,
առանց ինչ ներքին յօժարութեան,

առանց փութոյ զաստուածեղէն պաշտամունսն կատարեն։

Ա՛ վիճակ լի վտանգաւոր. եւ այնչափ իսկ առաւելագոյն վտանգաւոր՝ որչափ չգնի ինչ միտ վտանգաց նորին։

Ե. Ա՛ռդեակ, եթէ զայս օրինակ կեանս կեաս, սարսեալ եւ դողալոյ։ Կշռեցար ի կշռոցդի՝ եւ գտար զի սակաւ ունէիր։ Երկիր ի բարկութենէ Ամենակալին. անիծեալ որ առնէ զգործ նորա անփութութեամբ։

Արդ ճեպեա եւ փութա առանց յապաղութեան արծարծանել զշնորհսն՝ զոր ընկալար ի ձեռնադրութենէ։

Գոչեա առ աղբերն սիրոյ առ Յիսուս, որում գործ է ողորմել։ Գոչեա եւ ասա՝ Աղորեցայ իբրեւ զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, Տէր։

Զայն բարձեալ ասա՝ Կեցո զիս, Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ։ Ապրեցո զիս ի կաւոյ՝ զի մի ընկղմեսցեն զիս անդունդք խորոց, եւ ջրհոր մի՛ կափուսցէ զբերան իւր ի վերայ իմ։

Աստուած, որ մեռուցանես եւ կեցուցանես, ողորմեա ինձ եւ կանգնեա զիս։ Որսաա ի վերայ իմ զդատաստանս քո. շարժեա ահիւ զամենայն ոսկերս իմ, զի գոնեայ ի ձայն բարբառոյ ահեղ փողոյ քո՝ ի ծանրարթուն քնոյ զարթեայց։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վասն սէրն է սուրբ դիպուածոցն։

Ա. ՈՐԴԵԱԿ, առատ էր ակն իմ, եւ յայն սակս իսկ ամենայն մարմին իմ լուսաւոր։

Ոչ եթէ զփառս իմ խնդրեցի ես, այլ զփառս Հօր։ Վասն նորա զամենայն զգործս իմ արարի, նմին իրի եւ նա Հաճեցաւ ընդ իս։ Օրինակ եառ քեզ, ո՛րդեակ, զի որպէս ես արարի՝ եւ դու առնիջիր։

Զգոյշ լեր մի արասցես զարդարութիւն քո առաջի մարդկան՝ զի երեւեսցիս ի նոցանէ, եւ կամ վասն այլոյ ինչ իրիք երկրաւոր վախճանի՝ զի շահս ինչ կամ դեւր անտի դառանիցես։

Անձին ծառայեսցես յայնժամ, ոչ Հօր՝ որում եւեթ պարտիս ծառայել. ոչ ունիցիս վարձս յերկինս։ Զանձն քո խնդրեսցես, եւ գտցես զանձն քո, այլ առ քո եղեւանէ։ Գող լիցիս եւ զփառս Հօրն անձին քում գրաւեսցես բատ օրինակի նմանութեան արուսեակին։

Ո՛րդեակ, միթէ վայել իցէ արժանն իցէ գրչի պարծել ի նկարս նկարչին, եւ կամ եղեգան՝ ի գիրս դպրի։

Եւ զի՞նչ ես դու, ո՛ մարդ անտի, այլ գործի անարդ, զոր Հայր իմ բատ իւրոց կամաց եւ Հաճոյից արկանէ ի կիր։

Բ. Սկեսջիր անձին քում, որդեակ, յամենայնի դիր ի մտի քում վախճան սուրբ, եւ մի տացես թոյլ քոց մտաց՝ որ դիւրաւ իսկ գթէ եւ անկանի՝ քայքայել եւ խոտորել ի սրբոյ դիտաւորութենէ այնր վախճանի։

Ոչ ննջէ դեւն։ Իշխան է նա ընդունայնութեան ճարտար եւ խորամանդ, հանապազ յածեալ շրջի եւ խնդրէ՝ զի մեղմով սպրդեալ ի ներքս մտանիցէ, եւ ի գործս իսկ սուրբս միջամուխս լինիցի։

Զգոյշ լեր, որդեակ, չէք հուր առանց ծխոյ։ Վասն այնորիկ եթէ երբեք առ սէր նախանձու փառացն Աստուծոյ եւ փրկութեան ընկերին առնել ինչ ի մտի դնիցես, ուշ կալ՝ զի մի յայլ իմն ընդունայն ցանկութիւն գովութեան շրջիցէ զմիտս քո ատանայ։

Ո՛ ցեց կերիչ. ո՛ ուտիճ կրծող։ Ո՛րչափ գործս բարիս ապականէ հանապազօր ունայարծութիւն։

Գ. Տես, որդեակ, զդարանս նենգութեան թշնամւոյն. քանի՛ որոգայթս թագուցեալ ծածկէ քեզ ի ճանապարհի՝ յորում շրջիսդ։

Ընդէն զառաջինն ի սկիզբն գործոյն՝ զդիտաւորութիւնն ջանայ ապականել, ի յառաջագոյնն լինել՝ ընդունայնապարծիմն անձնհաճութիւն հնարի ի ներքս մուծանել, եւ ի վախճանի՝ ձանձրոյթ

արկանէ։ Ապա արթուն լեր այսուհետեւ, դարձեալ ասեմ, արթուն լեր։

Դ. Բաբէ. ՈՐՇԱՓ տառապեալս պատրէ հանապազ եւ արկանէ ի թակարդս հրեշտակն այն խաւարի։

Քանի թշուառականս ածէ նա առ սուրբ կարգս եւ առ խորհուրդս առաքեալական, իբր ոչ եթէ զի զՀայն զերկնաւոր՝ այլ զերկրաւոր, ոչ եթէ զի շնորհս՝ այլ զի շահս ստացին,

Ոչ զի զԱստուծոյ պատիւ, այլ զպարծանս, ոչ զոգւոցն փրկութիւն, այլ զի զանձս եւ արծաթ կթիցեն,

Ոչ եթէ զի սուրբ սրտիւ եւ մաքնոյ հնձ ծառայեսցեն, այլ զի փափկասցին, մեծասցին, բարձրասցին եւ զեղխեսցին ի հայրենական ժառանգութենէ իմմէ եւ ի տրոց ողորմութեանց ժողովրդեան իմոյ։

ՈՐՇԱՓՈՒՆՔ են՝ որ վասն սորին իսկ այսորիկ ի սրբութիւնն մտանեն. քանիք վասն այնր յեկեղեցի յաճախեն, պատարագս մատուցանեն եւ երգեն սաղմոս։

Ո՛րդեակ, մի զՀեռս ոտից նոցա կոխեսցէ ոտն քո։ Զվերինն խորհեսջիր, եւ մի զայն որ յերկրի ատա է։ Մի զայլ ինչ՝ բայց զՀաճոյն Աստուծոյ եւ զընկերին փրկութիւն նկատեա եւ խնդրեսջիր, եւ ի ներքին աղաւաւութեան վայելեսցես։

Ո՛րդեակ, նախանձաւոր լեր փառաց երկնաւոր Հօրն՝ իբրեւ որդի քաջ եւ առաքինի։ Զշահ եւ զօգուտ նորա դիտեսջիր հանապազ, որպէս ծառայ հաւատարիմ։

Զայն բարձ եւ սաստ յամենայն մտաց՝ թէ Խոնարհեցո զսիրտ իմ, Աստուած, ի ծառայութիւն քո եւ մի՛ յագահութիւն։

Ե. Լեր հզօր ի պատերազմի եւ մարտիցիր արութեամբ ընդ հնոյ օձին։ Այդուց պատերազմեսջիր. առաւօտուց կանխեսջիր առ Աստուած, զամենայն խորհուրդս, զբանս եւ զգործս մատո ի փառս նորա, եւ յայտնապէս իսկ զամենայն վախճան կամակոր որ մեղմով իմն եւ գաղտ ապրդել ի ներքս մարթայցէ՝ ի բաց յանձնէ պարուրեսջիր։

Այն իսկ լեցի քեզ վահան ամրակուռ ընդդէմ դարանաց թշնամւոյն։

Եւ եթէ գայցէ նա, եւ ի ձեռն ընդունայնապարծ հպարտութեան յինքն կորզել զքո գործս հնարեսցի, տայցես պատասխանի՝ թէ անագան յոյժ եկիր, վաղ իսկ ամենայն ինչ ի փառս Աստուծոյ նուիրեցաւ, զքնաւ նա ժառանգեալ կալաւ, չմնաց ինչ քեզ բաժին։

Զ. Պատերազմեսջիր զօրն ողջոյն, եւ դարձեալ բազում անգամ, որչափ եւ ձեռնհաս իցես, Աստուծոյ մատո զգործս համօրէն։

Ասա ցնա. Տէր, կամիմ զայս առնել՝ զի քեզ հաճոյ եղէց եւ զփառս քո յաճախեցից, զի զհաճոյս քո կատարեցից, եւ յայն սակս իսկ կատարեալ իմն օրինակաւ որչափ եւ կարիցեմ՝ կամիմ զայն գործ վճարել։

Արթուն լեր եւ ոքնեսջիր. եւ եթէ տեսանիցես զնաւիտառութեան զօձն՝ զի նենգաւ մատուցեալ առ քեզ գայ, մատիր եւ դու եւ զգլուխ նորա ջախջախեա։ Մինչ դեռ փոքրիկ օձն իցէ՝ ապան զնա։

Գոչեա. Ոչ եթէ վասն քո, ոգի՛ շար, զայս գործ սկսայ, եւ ոչ քո վասն զայդ կատարեցից։ Ի մեծ փառս Աստուծոյ սկիզբն արարի, ի մեծ փառս Աստուծոյ հանից զայն ի գլուխ։ Ի բաց կաց յինէն, ժանտ մոլորեցուցիչ։

Է. Սկեսջիր դարձեալ եւ յետ գործոյն վճարելոյ, քննեա զանձն քո, եւ եթէ հարեալ յօձէ զքեզ դատանիցես, անդէն իսկ եւ իսկ զվէրս հպարտութեանն՝ ի ձեռն դեղոյ դարմանոյ խոնարհութեան բժշկեսջիր։ Արի՛ եւ զգեցիր զօրութիւն առաւելագոյն քան զառաջինն։

Զամենայն զգործս քո առաջի աչաց իմոց արա, որպէս թէ յանդիման քո տեսանիցես զիս։ Եւ եթէ տկար զանձն քո դատանիցես, վաղվաղակի ի թիկունս

օդնականութեան կոչեալներ զիս, ես եկից եւ զօրացուցից զքեզ։

Այսպէս, որդեակ, այսպէս մարտիչ, եւ ի սակաւ ժամանակի լեցի ակն քո առատ եւ ամենայն մարմինդ լուսաւոր։

ԳԼՈՒԽ Ի.

Վասն հրահանգաց հիմնական արատիւնութեանց։

Ա. Ոչ եթէ տերեւս, այլ պտուղս ի թզենւոջ խնդրեցի. եւ իբրեւ ոչ գտի՝ անիծի զթզենին եւ չորացաւ։

Յուսումն քո, որդեակ, եղեւ այն եւ դրեցաւ, զի գիտասցես թէ ոչ զկերպարանս առաքինութեանցն՝ այլ զուղղեղն եւ զարգասիս իրացն ի քէն պահանջեմ։

Մի թէ մարթ ինչ իցէ հաճոյ լինել ինձ որմ բռեալ, եթէ բրեցից զորմն եւ գտից ընդ նովաւ ոսկերս մեռելոց։

Ո՛հ, որդեակ, մի այնչափ սրբեսցես զարտաքինս բաժակի քո։ Մի՛ շատ լեցի քեզ երկայնել զքաղանցս հանդերձի քո։

Գիտեա, զի ես Հոգի եմ, եւ որոց երկիր պագանեն ինձ՝ պարտ եւ պատշաճ է հոգւով եւ ճշմարտութեամբ երկիր պագանել։ Քանզի մարդիկ զերեսս տեսանեն, իսկ ես ի սիրտ հայիմ։

Բ. Լուր, որդեակ, խոնարհ պարտ է քեզ լինել։ Այլ մի՛ լեցի քեզ բաւա-

կան զաչս ի խոնարհ ունել, հանդերձ դուզնաքեայ զանձամբ արկանել, զպարզ եւ զպարկեշտ կերպարանս յանձին բերել։ Եթէ այսոքիւք շրջեսցիս, եւ առնել արհամարհանաց չկամիցիս, ընդունայն է խոնարհութիւն .քո. հպարտութիւն է այդ։

Համբերող պարտիս լինել։ Այլ չէ բաւական լինել գառն յաբուս, այլ եւ յորժամ ի սպանդ վարիցին՝ գառն պարտ է լինել։ Եթէ նեղութիւնս չառնուս յանձն կրել՝ վայրապար է համբերութիւն .քո. անհամբերութիւն է այն։

Պարտիս լինել հնազանդ։ Այլ չէ .քեզ բաւական հեղոց վարդապետաց հնազանդել եւ խստաց զլանալ զհպատակութիւն, եւ կամ յիրս ինչ հաւանել եւ յայլ իրս ընդդէմ ոգորել։

Եթէ ի նեղի եւ յանձուկ սահմանի չառնուս յանձն կալ, ի զուր է հնազանդութիւն .քո. ապատամբութիւն է այդ եւ ոչ հնազանդութիւն։

Պարտիս սիրել զաղքատութիւն։ Սակայն չէ բաւական չափոմն ունել, այլ եւ չքաւորութիւն եւս հարկ է կրել։ Եթէ չկամիս ունել ինչ կարօտութիւն, ընդ վայր եւ ունայն է աղքատութիւն .քո. ցանկութիւն է այդ։

Պարտ եւ պատշաճ է .քեզ վասն .քոյ մեղաց ապաշխարել։ Այլ չիցէ .քեզ

բառական խոստովան լինել եւ զԹիկունս կրաց՝ցանել, Հարկ է եւ սրտիս մոռ-մնքել եւ զղջանալ Հոգւով, զվատԹա-բուԹիւնս ուղղել եւ զմարմին նեղել: Առանց ուղղելոյ ի զուր է սպասիարու-Թիւն քո, եւ առանց չարչարանաց եւ նեղուԹեան՝ ոչ ինչ մեռուցումն քո:

Ա՛պա ուրեմն պարտիս առաքինու-Թեամբք բարգաւաճել: Բայց մի՛ շատ համարիցիս զազգս ազգս առաքինու-Թեանցն ընտրել, այլ եւ զվատակոցն առաքինուԹեանց փոյԹ պարտ է յանձին ունել: Զի՞նչ ոչ ուրեք որ կարիցէ յաղԹող լինել առանց ճակատու պատերազմի, նոյնպէս եւ ոչ զառաքինուԹիւն մնար-Թի՛ ոչ մշակել՝ առանց բուռն լինելոյ:

Գ. Ցեռ զՄարիամ զՄայր իմ: Կայ իսկ ընդ աչմ՛ իմմ՛ ի Հանդերձս ոսկեՀուռն զարդարեալ եւ պաճուճեալ, այլ սա-կայն ամենայն փառք նորա ի ներքոյ էր:

Ցեռ զկարողս զծառայ իմ: Ոչ տե-բեւս եւ եւԹ, այլ եւ պտուղս սրբու-Թեան եբեր:

Զգաստ եւ ցածուն յորջորջէր, այլ եւ Հաստատեալ եղոյց ԹԷ է իսկ ցա-ծուն, զի աղջկանն որ մտրեցուցանէին կամէր գնա՝ ի զաղփաղփուն տիս երի-տասարդուԹեան՝ արուԹեամբ եւ քա-ջուԹեամբ յաղԹեաց:

Համբերող անուանէր, սակայն եւ Համ-

բոյր եւ հեղ զանձն եցոյց, քանզի քաղցրութեամբ ժուժկալեալ տարաւ այնմ՝ որ եհարն զնա։

Հաստատուն կոչէր, այլ եւ հաստատուն զանձն ընծայեցոյց, զի հակառակ սպառնալեաց եւ իշխանութեանց՝ եկեղեցական իրաւանցն պաշտպանէր։

Համարէր յամենեցունց թէ լի իցէ փութով եւ աստուածպաշտութեամբ, այլ եցոյց իսկ թէ փութով եւ աստուածպաշտութեամբ լի իցէ, զի մինչ դեռ ախտ ժանտ բնդ կողմանս այնոսիկ տոչորէր՝ նա զկեանս իւր դնէր, զի կարիցէ ախտաժետացն զնորհուրդս եւ զմիսիթարութիւնս մատակարարել։

Դ. Իսկ դու ո՞վ ես, սրբեակ։ Դու որ զանուն կենդանւոյ ունիս, ո՞չ ապաքէն հանապազ մեռեալ ես։ Ո՞չ թերեւս եւ թեթեւ իսկ շունչ զառաքինութիւն քո զընդունայն՝ դիւրաւ եւ առանց ամենայն աշխատութեան տապալեալ կործանէ։

Ո՞չ եւ ի դէպս իսկ փոքունս զթէ զգաստութիւն քո, եւ խոնարհութիւն քո ի դոյզն ինչ բանս կսկծելիս։ Ո՞չ ապաքէն անկանի համբերութիւն քո ի միշտս թեթեւս եւ համեստութիւն քո ի դոյզն դրուատիս։

Ո՞չ քայքայի ժուժկալութիւն քո ի կոչունս եւ սէր քո ի չքաւորութեան։

Ո՞չ կորընչի արհամարհութիւնդ ընչից՝ յորժամ դէպք ինչ շահու ընդառաջ ելանիցեն եւ անմեծարդութիւն քո՝ յորժամ այլք պատիւ տայցեն։

Ո՞չ զամօթի հարեալ կորանայ նախանձ եւ փոյթ քո՝ առաջի հզօրաց։ Ո՞չ շրթամբք պատուես զիս, եւ սիրտ քո հեռացեալ մեկուսի է յինէն։ Լեր արթուն եւ տես թէ իցէ՞ն գործք քո կատարեալ առաջի իմ։

Ե. Տէր, Հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում, հոգւով պետութեամբք քով հաստատեա զիս, զի հաստատուն առաքինութեամբ պնդեցիս զսիրտ իմ, եւ սրբութեամբ ճշմարտութեան՝ զշինուած փրկութեան իմոյ կանգնեցիս, մի գուցէ՝ յորժամ երեւեցայց առաջի քո դատաւորի՝ ասիցես ցիս.

Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն իմ, ոչ գիտեմ զքեզ, ոչ երբեք ծանեայ զքեզ, իբաց կաց յինէն, բաժին քո ընդ կեղծաւորս լիցի. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։

Գ Լ Ո Ւ Խ ԻԱ.

Վասն խոնարհութեան։

Ա. Այս թագաւոր թագաւորաց եւ Տէր Տերանց՝ հեզ եմ եւ խոնարհ սրտիւ։ Կամիս, որդեակ, կամիս գալ

զկնի իմ։ Կամիս լինել աշակերտ իմ։ Զայս ուսիր յինէն, ամին նմանեսջիր. լեր խոնարհ։

Ամէն ասեմ քեզ, եթէ ոչ դարձցիս եւ լինիցիս իբրեւ զմանուկ, ոչ մտանիցես յարքայութիւն իմ։

Զաշխարհս շինեցի, աքանչելիս գործեցի, բազում եւ ազգի ազգի նորանշան զարմանալիս արարի, սակայն չասեմ քեզ, օրդեակ, թէ արա եւ դու նոյնպէս։ Այլ զոտս աշակերտացն լուացի ես Տէրս եւ վարդապետս, եւ զայսմանէ ասեմ թէ օրինակ ետուս քեզ, զի եւ դու նոյնպէս արասցես։

Որպէս առաքեցայ զիս Հայր, եւ ես առաքեցի զքեզ։ Ապա զոր օրինակ ես ի Հօրէ առաքեալ՝ զխոնարհութիւն բանիւք եւ գործովք ուսուցի քեզ, զնոյն օրինակ եւ դու առաքեալ յինէն՝ զխոնարհութիւն պարտիս առնել եւ ուսուցանել, զի տեսցեն զքեզ ոչխարքն՝ որ քեզ յանձն են, եւ ունիցին ինչ ի քեզ՝ որում նմանող լինիցին, եւ յորժամ քեզ նմանեսցին՝ եւ ինձ եւս լինիցին նմանողք։

Բ. Ո՛րդեակ, նախամեծար քան զայլս ընտրեցար. զԳՅՇ լեր մի դուցէ զբարեբարութիւն օրհնութեանն զոր ընկալար՝ շքջեսցես շահել այնու պարծանս, զԳՅՇ լեր մի տիրեսցես վիճակացն։

Հպարտութիւն եւ ինձ եւ հրեշտակաց եւ մարդկան ատելի է, բայց սակայն այն իսկ է որ զմիտս այնոցիկ՝ զորս յաստիճան բարձր հան վերացոյց Հայր իմ՝ դիւրաւ իմն գրաւեալ ըմբռնէ, եթէ ոչ խնամովք եւ զգուշութեամբ սկիցեն։

Տես թէ ո՛րպէս արուսեկին՝ հրեշտակացն իշխանին յաղթեաց հպարտութիւն, եւ անդուստ յերկնից ի վերուստ ի խորս դժոխոց կործանեաց։

Տես թէ զի՞արդ զաշակերտս իմոյ խոնարհութեան փորձեաց հպարտութիւն՝ մինչ դեռ եւ ես իսկ ընդ նոսա էի։ Եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա, թէ ո՞վ ի նոցանէ համարիցի մեծ. նա եւ երկուք իսկ ի նոցանէ ցանկացան նստել յաջոյս թեան Հօր իմոյ՝ մին ընդ աջմէ իմմէ եւ միւսն ընդ ահեկէ։

Արդ՝ միթէ յապահովս կարծիցես զքեզ, ո՛րդեակ, ի հպարտութենէն փորձութենէ։ Ո՛հ. որչափ մեծ ոք իցես՝ խոնարհեցո զանձն քո յամենայնի։ Մի մեծամտեր՝ այլ երկիր։

Գ. Յիշեա, ո՛րդեակ, զի մարդ մնոտի ես, հող եւ մոխիր։ Եւ զի՞նչ իցէ քո՝ զորմէ պարծելն կարիցես։ Զի՞նչ ունիս յանձնէ քումմէ՝ բայց չարիս։ Եւ զի՞նչ ինչ բարի իցէ քո՝ եթէ ոչ յինէն։ Ապա ուստի՞ այն պարծելն քո։

Այլ իցէ եւ բարի ինչ իցէ քո եւ մեծասուն զանձն կարծիցես, տես միթէ օրէն իցէ վայել իցէ քեզ գլուխ ամբառնալ եւ զանձն բարձրացուցանել, յորժամ ես Աստուած ասուծոց հանապազօր ի քո ձեռս գոգ իմն մինչեւ յոչինչ անդր զանձն իմ խոնարհեցուցանեմ, եւ չգարշիմ ի ձեռս մեղաւորաց անարժանից շրջել։

Նոքա վերսին ի խաչ հանեն զիս անձանցն, եւ առնեն առակ նշաւակի, եւ ես լուռ եւ եւթ կամ։ Ի զէպ իցէ ընդ այնպիսւով խոնարհ գլխով՝ գտանել անդամ հպարտ։

Տուր, ՝ որդեակ, տուր հողոյ զբերան քո, մերձեսցի ի հող անձն քո առ ամօթոյ եւ պատկառանաց։

Դ. Ես ամբարտաւանիս հակառակ կամ, տամ շնորհս խոնարհաց։ Արդ կամիս, ՝ որդեակ, կամիս յառաջադէմ լինել եւ զայլս եւս ածել ի յառաջադիմութիւն. լեր խոնարհ։

Ես ի ձեռն տկարաց աշխարհիս՝ զհզօրս սովոր եմ յամօթ առնել։ Ես ի ձեռն ձկնորսաց աննշանաւորաց՝ զաշխարհ ստացայ ինձ ի ժառանգութիւն։

Դարձեալ միւսանգամ ասեմ, լեր խոնարհ, եւ զանձն ապրեցուցես եւ զայնոսիկ՝ որ քեզն լսիցեն։ Ապա թէ ոգի ինչ մեծամտութեան ի գործս քո

սպրդեալ մտանիցէ, ոչ վաստակս արժանեաց ունիցիս եւ ոչ պտուղս արասցես։

Մի այսուհետեւ յանձն քո դրաւիցես զփառս, այլ զամենայն Աստուծոյ մատուսջիր։

Հայեաց ընդ հրապարակախօսան որ կարի իմն յիւրեանց ճարտարաբանն խօսողութիւն եւ յիմաստութիւն պանծացեալ իցեն, եւ պատիր եւ սեթեւեւեթեալ բանիւք մարդկեղէն ճարտարութեան յօրանայցեն։

Զիցէն նոքա արդանդք անսրդիք եւ ստինք ցամաքեալք։ Զեռն յանձին հարեալ պարծին, այլ ի զուր եւ ընդ փայր։ Ես եմ, որ աճեցուցանեմ եւ զփառս իմ այլում ոչ տայց։

Մի այդպէս, սրդեակ, մի այդպէս, այլ յամենայնի համարեսջիր զանձն ծառայ անպիտան։

Եւ այսպէս ի նեղբս ի միտս քո հաւանեալ խօսեայց, խրատեա եւ վաստակեա իբրեւ զրաբուք զենուոր, եւ յայնժամ քեզ՝ որ յանուն իմ զուսկանդ արկանես՝ տայցի բաղմութիւն ձկանց յոյժ։

Մինչ դեռ նոքա՝ որ յանձանց իսկ կամեցան արալ ձուկն, եկեալ խոստման լիցին զիւրեանց ընդունայնութիւն եւ ասիցեն թէ զամենայն զիշերս աշխատեալ եղեաք՝ եւ ոչ ինչ կալաք։

Գ Լ Ո Ի Խ ԻԲ.

Վասն զանձն խոնարհութեանն։

Ա. Գ Ի Տ Ե Մ, Տէր, եւ խոստովան լինիմ, զի եթէ ամպարհաւաճել եւ պարծել կամիցիմ՝ դու կացցես ինձ հակառակ։

Եւ զայն եւս գիտեմ, զի թէ անարգեցիցս զիս եւ ի բնաւ իսկ պարծանաց մեկուսի կացցեմ, եւ յոչինչ անդր ի-ջանիցեմ, եւ դառնայցեմ ի հող՝ որպէս եւ եմն իսկ, լեցին ինձ յայնժամ սեպհական շնորհքն քո եւ լոյս քո մօտ արտի իմում։

Արդ տուր զի ծանեայց զէութիւն իմ, եւ անուան քում՝ ոչ եթէ ինձ տաց փառս։

Տուր զի առիցս ի միտ զթշուառութիւնս իմ, եւ զոչեցիցս հոգւով խոնարհութեան թէ Աստուած իմ՝ ամաչեմ եւ պատկառեմ ամբառնալ զերեսս իմ առ քեզ։

Տուր զի տեսիցս զկարօտութիւն իմ եւ ի մերկութեան իմում հառաչեցիցս եւ ասացիցս՝ Աստուած իմ, հայեաց ընդ իս՝ զի աղքատ եւ տնանկ եմ ես։

Բ. Տէր, ո՞վ է մարդ զի յիշես դու զնա։ Մարդ եմ եւ մարդ տառապեալ, կանանցածին, իբրեւ զկաւ ստեղծեալ եւ մածուցեալ իբրեւ զպանիր, կարճա-

կեաց եւ սակաւօրեայ եւ լցեալ բազում տառապանօք։

Մարդ եմ, եւ ունիմ ինձ զերը՝ հայր եւ մայր, եւ զորդն՝ քոյր։

Մարդ եմ, որ իբրեւ զխոտ՝ այսօր է եւ վաղիւ ի հնոց արկանի, որ իբրեւ զծաղիկ ծաղկեալ՝ թօթափի, իբրեւ զմրրիկ՝ որ առ սակաւ մի երեւեալ՝ ապականի։

Մարդ եմ տկարութեամբ զգածեալ, շուրջ պատեալ ոգիտութեամբ եւ խաւարաւ, ի չարիս միտագոյն, յամր եւ անբաւական առ բարին, իբրեւ զտերեւ հողմաշարժ առանց հաստատութեան, լի թերութեամբք, եւ այնպէս իմն նեղեալ սաէպ ցանկութեամբք, զի ցանկ մարտուցեալ եւ ընդ մեծաբեռն ծանրութեամբ հեծեալ՝ ստիպիցիմ բողոք բառնալ թէ Ընդէ՞ր, Տէր, ընդէ՞ր եդիր զիս քեզ ոսոխ եւ իցեմ ինձ բեռն։

Ահաւասիկ որպիսի՞ ոք եմ, Տէր, ահաւասիկ որպիսի՞ ինչ ժառանգութիւն իմ։ Ապա զի՞արդ չդարշիս բանալ ի վերայ իմ զաչս քո։

Գ. Բայց որ առաւելն նկուն առնէ զիս այժմ եւ խոնարհեցուցանէ առաջի քո, Տէր, այն իսկ է՝ զի Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Յանմեղութեան հաստատեալ էր քո զմարդն, եւ ես՝ մինչ չեւ ծնեալ՝ զանմեղութիւն կորուսի։

Այլ դու գթացեալ յիս, ոչ ծածկեցեր զերեսս քո յինէն, ձգեցեր զձեռն քո առ իս։ Ի քեզ անկայ ես յարգանդէ եւ ոչ մերժեցեր թէ իցես Աստուած իմ յորովայնէ մօր իմոյ։ Յայնժամ եղէ քեզ հաճոյ եւ սիրելի։

Բա՜ռնէ. Իցիւ կացեալ մնացեալ իմ յանմեղութեան անդ՝զոր ի ձեռն մկրտութեան ստացայ։ Այլ ո՜հ. հազիւ ուրեմն թէ գտայ բաւական խորհելոյ՝ եւ անարժանս խորհեցայ. հազիւ թէ ցանկանալ ձեռնհաս էի՝ եւ զարդելեալսն ցանկացայ, հազիւ հազ թէ կարէի գործել՝ եւ յանցանս գործեցի։

Նմին իրի անօրէնութիւնք իմ բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ։ Մեղայ, զի՞նչ արարից քեզ, ո՛ պահապանդ մարդկան։ Ո՞ւր թաքեայց յերեսաց սրտմտութեան քո։

Ամենայն համօրէն արարածք քո բազում հաւատեաւ օրինաց քոց հնազանդեցան։ Արեգակն ծագեաց, աստեղք փայլեցին, երկիր բխեաց եւ բուսոյց, ջուր հոսեաց, տունկք աճեցին, եղն ծանեաւ զստացիչ իւր որպէս եւ հրամայեցերդ իսկ. այլ ես զքեզ ոչ ծանեայ, խոտորեցայ ի պատուիրանաց

քոց, մեղայ քեզ եւ զչար առաջի քո արարի։

Դ. Ամաչելի արդարեւ եւ յամօթ եղէ, ընկեցի զիս առ ոտս քո, ո՛ Հայր ողորմութեանց, ներումն խնդրելով ի քէն եւ թողութիւն։

Իցեմ թերեւս ցօղեալ մշտկաւ քով եւ սուրբ եղեալ։ Սակայն եւ այնպէս չկարեմ ասել՝ թէ գիտեմ եւ հաստատուն իսկ եմ, քանզի ոչ գիտեմ եթէ սիրոյ իցեմ արժանի թէ ատելութեան։ Եւ զի՞արդ կարիցեմ բնաւ յայնպիսում անձկութեան եւ ի տարակուսի ամպարհաւաճել եւ պանծացեալ պարծել։

Ցէր, առաւել լուսաւ զիմ յանօրէնութենէ իմմէ եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Ե. Ի քեզ իսկ վստահ եմ, Աստուած իմ, որ լուար Քանանացւոյն, զմնաքսաւորն դարձուցեր, որ արձակեցեր զկինն մեղաւոր, ի Պետրոս զթութեամբ հայեցար եւ աւազակին խնայեցեր։

Ի քեզ յուսացայ, եւ յուսով քով խնդացեալ համարիմ թէ հասեալ իցեմ ողորմութեան քում, եւ ջնջեալ իցես իբրեւ զամպ զանօրէնութիւնս իմ։

Այլ թէպէտ եւ այսպէս իսկ լիեալ էր, սակայն զի՞նչ եւս պատճառք կային ինձ պարծելոյ։ Ո՞չ ապաքէն ի քէն է եւ ի քէն իսկ միայնոյ թողութիւն։ Ոչ

եթէ ես ինչ՝ այլ դու սրբեցեր զիս. եւ սրչափ եւ սրբեալ իցեմ, սակայն ոչ այն իսկ ճշմարիտ է հանապազ՝ թէ լիեալ էր իմ երբեմն անսուրբ եւ աղտեղի մեղաւոր։

Ո՞չ միշտ իսկ սոյդ իցէ՝ թէ այսրէն իսկ եւ իսկ յառաջին մեղս նա եւ ի վաստակաւորդոյն եւս զահավէժ դարաձոս անկանէի՝ եթէ ոչ քո իսկ շնորհք կարճեալ նահանջէին զիս։ Խոնարհութիւն իմ ի միջի իմում է, Տէր։

Տուր, Տէր, տուր զի ծանեայց զնկնութիւն իմ առաւել քան զառաւել, եւ ածեալ զմտաւ զամենայն ամս իմ ի դառնութիւն անձին իմոյ, եւ ի մեծէ տկարութենէ իմմէ երկուցեալ՝ կայից եւ մնացից հանապազ խոնարհեալ առաջի քո։

Զ. Բայց ահաւասիկ, Տէր, ահաւասիկ սատանայ խնդրէ զիս զի խարբալեսցէ։ Ածեալ դնէ առաջի աչաց իմոց զամենայն բարիս զոր գործեցի, եւ զբարիս՝ զոր ի քէն ընկալայ։

Հիմ, ասէ, խոնարհիցիս, վասն էր խառնիսն, զմէ՞ ամաչիցես։ Բարեդէ վերակացու լինիս ա՛ երէցդ. կրկին պատուոյ արժանի ես։ Յարդարութիւն ուսուցանես զբազումս, ծագեսցես եւ փայլեսցիս իբրեւ զաստեղս յաւիտեանս եւ եւս։

Առնես՝ զոր ինչ պատուիրեաց քեզ

Տէր, ապա բարեկամ նորա ես։ Զհաւատան պահեցեր, զգործն վաղ իսկ կատարեցեր. այսուհետեւ կայ մնայ քեզ արդարութեան պսակն։

Արդ աւասիկ, Տէր, հրեշտակն խաւարի՝ ի հրեշտակ լուսոյ կերպարանեցաւ ինձ։ Ցզովեա՛լ. ոչ լուայց նմա։

Գիտեմ, Տէր, զի եթէ առանց քոյոյ զթութեան քննեցայց, արժանի պատժոց գտցին գործք իմ՝ մինչ ես վարձուց հատուցմանց արժանի զայնս համարիցիմ։

Գիտեմ, զի ուր առաւելուն տուրքն, աճեն եւ տրոցն համարքք, եւ նմին իրի իսկ այնչափ եւս առաւել խոնարհիմ եւ կազմ եւ յօժար ի ծառայել պարտիմ լինել ի պարգեւացն, որչափ զի աւելագոյն հարկ ի վերայ կայ ինձ համարս տալոյ։

Ո՛հ. Իցիւ, Տէր, ոչ էր իմ այնչափ եւ այնպիսի պարգեւք քոյոցն շնորհաց չարաչար վարեալ եւ կամ բնաւ անգործ իսկ թողեալ զնոսին։ Երանի՛ թէ չէր իմ զանց արարեալ զքոյովք ազգի ազգի թելադրութեամբք։ Ոչ եթէ պարծանաց ինչ այլ խոնարհութեան պատճառք եւ բարուքք են պարգեւքն քո։

Արդ քա՛ւ լիցի ինձ պարծել զինէն, այլ ի տկարութիւնս իմ, զի բնակեսցէ յիս զօրութիւնն քո։

Տուր, Տէր, զի ցանկ եւ միշտ անարդեցիս զանձն իմ, եւ հանապազ սիրեցիս անծանօթ լինել եւ առ ոչինչ համարել։

Գ Լ Ո Ի Խ ԻԳ.

Վասն մարդասիրական գործոց Խրիստոսի։

Ա. Տէ՛ր, որ յարգանդէ Հօրն յաւիտենից յառաջ քան զարուսեակ ծնար, Տէր՝ որում երկնից երկինք ոչ կարեն բառական լինել, Տէր՝ որ այնչափ սուրբ ես, որպէս զի զբանչացեալ զարմանայ Եկեղեցի՝ զի չդարձեցար յարգանդէ Կուսին՝ որ ամենեւին իսկ անարատ էր, Տէր, զորոյ չեղեւ արժանի Յովհաննէս լուծանել զկօշկայս։

Դու ընարեցեր զիս մատակարար խորհրդոցն քոց, զի յամենայն աւուր ի սեղանի քում սպասաւորեցիս ձեռաք իմովք, զի հանապազօր առ իս եկեսցես եւ օթեւանս արասցես, զի առիս եւ կերայց զմարմին քո, եւ պլոց եւս բաշխեցիս։

Ո՛ անսրբութեան իմում. ո՛ իմում անարժանութեան։ Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, եւ կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։

Ի բաց գնա լինէն, Տէր, զի պլր մեղաւոր եմ ես։ Քանզի ոչ է քո միութանութիւն ընդ Բելիարայ, ոչ նմանութ-

թիւն է տաճարի քո՝ մեհենաց, ոչ է հաւատարութիւն լուսոյ քո ընդ խաւարի իմոյ։

Եւ զի՞արդ մարթ իցէ բնաւ բերանոյ իմոյ լինել բաւականն սուրբ, ձեռին իմոյ լինել մաքուր բաւական, եւ սրտի իմոյ լինել անարատ բաւական յայնպիսի աստուածեղէն արքանեկութիւն։

Բ. Ո՛րդեակ, ոչ է քեզ պարտ եւ պատշաճ ընդ իմ արժանաւորութիւն հայեցեալ՝ վաղվաղակի ի կոր կործանել եւ խռովել։

Եմ իսկ ես երիցս սուրբ, եւ դու կաս։ Այլ գիտեմ զհատուած քո, գիտեմ զի ոչ զհրեշտակ զոք՝ այլ զմարդ ունիմ ինձ ապաւոր։

Իբր ոչ եթէ արքութիւն ամենեւին կատարեալ պահանջեմ ինչ ես ի քէն, այլ փոյթ մեծ յոյժ այնմ հասանելոյ խնդրեմ ի քէն։ Արա որչափ ինչ ի քեզ է եւ արասջիր բազում հաւատեաւ, եւ եթէ պակասեացէ ինչ յետ այնորիկ՝ ասացից բանիւ եւ զամենայն լցեալ կատարեցից։

Գ. Ա՛յ քեզ, ո՛րդեակ, եթէ՝ որչափ ինչ՝ ի քում կարի իցէ ոչ արասցես, եթէ՝ բիծ ինչ եւ արատ յանձին ունիցիս եւ ի սպաս իմ մատչիցիս եւ հայ ինձ նուիրեսցես։ Զանուն իմ պղծիցես, զսեղան իմ անարգիցես, դա-

տասասանս անձին քում ուտիցես եւ ըմպիցես։

Արդարեւ իսկ ասեմ քեզ, փոյթ յանձին կալջիր մեծաւ հոգաբարձութեամբ վասն մաքրութեան մտացն խրոշմի։ Ջանա զի հանապազ անմեղ ձեռօք եւ սուրբ սրտիւ յօրհնութիւն եւ յողորմութիւն սրբութեանն սրբոց մերձեսցիս։

Անձն քո լիցի ի ձեռս քո յամենայն ժամ, զի մի վատթար ցանկութեամբք եւ խորհրդովք աղտեղեսցի, զի մի կամակոր բանիւք արատեսցի, եւ յոռի գործովք ապականեսցի։

Դատեսջիր զանձն քո՝ զի մի դատեսցիս, եւ եթէ աղտով ինչ իւիք նսեմացեալ եւ շլացեալ զոսկի ոգւոյ քո նշմարիցես, եթէ վասն իմոց շնորհաց ի բաց մեկնելոյ՝ այլագունեալ զայն տեսանիցես, ուրդեակ, մի մոցէ արեգակն ի վերայ մեղաց քոց. անց գնա փութանակի յաղբերն Սիլոամայ՝ զի արեամբ Գառինն լուացիս։

Երթ, ցոյց զքեզ քահանայի, եւ զնուէր արտասուաց եւ սրտի զղջացելոյ, զոր ոչ արհամարհեմ երբեք, մատո խոնարհութեամբ. այսպէս թէ անկցիս՝ ոչ խորտակեսցիս, զի ես եղիցի զձեռս իմ ի վերայ։

Դ. Կա՛լ, Տէր, կա՛լ զձեռանէ իմմէ

զաջդ, եւ ի խորհուրդս քո առաջնորդեա ինձ՝ զի մի անկանիցիմ։

Եւ ասացի ի բարեկենդանութեան իմում թէ ոչ սասանեցայց յաւիտեան, երդուայ եւ հաստատեցի, զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո։ Այլ սակայն եթէ դարձուցանիցես զերեսս քո յինէն՝ անդէն եղէց խռովեալ եւ մեղայց եւ ամենեւին իսկ անսուրբ եղէց։

Տես, Տէր, զտկարութիւն իմ, հայեաց յօգնել ինձ։ Կաց հանապազ ընդ աջմէ իմմէ, զի մի եղէց որպէս զանօթի կորուսեալ, այլ ցանկ անմեղութեամբ շուրջ եղէց զսեղանով քով։

Գ Լ Ո Ի Խ ԻԴ·

Վասն յանձնախոյժ խոստովանութեան։

Ա· ՈՒՐԴԵԱԿ, որ կրեա զանօթս իմ, որ ուտես զհայ իմ եւ բաշխես, սուրբ արա սակայ զանձն ի քոց մեղայ եւ առաւել եւս լուա յանօրէնութենէ քումէ զանձն քո։

Միաք եւ խորհուրդ սրտի քո ի խնամս չարի հաստատեալ են, եւ եթէ ոչ սակայ յաղբերէն հնարհայ եւ ողորմութեան ընթացցիս՝ չմարթի քեզ անսրբատ յիմում ճանապարհի լինել։

Չկարես առանց բծոյ պատարագ ինձ մատուցանել եւ զայլ եւս ապաս սրբոյ պաշտամանն կատարել։

Զայս եւ դու իսկ գիտես, սրդեակ, զոյն ուսուցանես դու քոց ոչխարաց, այս ինքն՝ թէ յաճախագոյն խոստովանութիւն եւս քան զեւս զանօրէնութիւն ջնջիցէ, ի մեղաց ի բաց դարձուցանիցէ, ի չարեաց պահիցէ, զօրացուցանիցէ ի բարին եւ զարթնութիւն արծարծիցէ,

Ի ճանապարհի իմում հաստատուն պահիցէ, ընդդէմ փորձութեանց հզօրագոյն գործիցէ, զխաղաղութիւն սուրբ ի միտն հեղուցու, զեռանդն աճեցուցանիցէ, եւ սրբագոյն եւ կատարելագոյն օր ըստ օրէ զմարդն յարդարիցէ:

Դու գիտես, դու իսկ ուսուցանես զայն՝ թէ որ զխոստովանութենէ անփոյթ առնիցէ՝ տակաւ ի խնարհ անկանի եւ նուազագոյն զիւր յանցանսն առնու ի միտ եւ մեղմով իմն ընդելնու ընդ մեղս.

Օր քան զօր տկարագոյն լինի ի պատերազմի՝ զոր մղիցէ ընդդէմ թշնամեացն ոգւոյ, դիւրագոյն անկանի յորոգայթս սատանայի, զժուարաւ յառնէ, եւ որչափ եւս զխոստովանութիւնն յապաղիցէ, առաւելագոյն եւս յամեցուցանել կամիցի:

Բ. Զոր ուսուցանեաց, սրդեակ, դու իսկ ինքնին նախ պահեա: Սակայ լիջիր խոստման, գիտացեալ զի եւս իմն կարեւոր հարկ ի վերայ կայ քեզ սրբով խոստովանութեամբն վարելոյ, վասն զի

զգուշագոյն եւ սրբագոյն պարտ եւ պատշաճ է քեզ քան զայլն լինել։

Քանզի սատանայ աւելագոյն թշնամի քեզ է, զի յամենայն ժամ կազմ եւ պատրաստ պարտիս գտանել՝ առ սրբութեամբ զսուրբն վճարելոյ։

Ապա եթէ առանց զանձն փորձելոյ, առանց կարեւորն սրբութեան մատչիցիս, յետ սակաւ միոյ ի քուն ոգւոյ եւ յանհնարին կուրութիւն մտաց կործանեսցիս։

Քանզի վասն սորին իսկ այսորիկ բազումք անզօրք են եւ տկարացեալք եւ յոլովք ննջեն, որպէս զի թէ յաճախագոյնս ի սրբում խոստովանութեան զանձինս քննէին, արդարեւ իսկ ի դատելն իմ զնոսա՝ չլինէին հարեալք այնպիսի կուրութեամբ։

Գ. Զոր իսկ, սրդեակ, բազում անգամ տեսեր զայնպիսիսն, որ անդէն զառաջինն ի սկզբան անդ իւրեանց կենացն քահանայութեան՝ սուրբք էին եւ յամենեցունց գրուատիս ընդունէին, եւ ապա ուրեմն դարձան եւ եղեն անօրէնք, մինչ եւ զատուեր անգամ եւ զնշմարանս իւրեանց առաջնոյ առաքինաւոր կենացն ոչ ունէին։

Ուստի այն, ասացեր թերեւս, սրդեակ, եւ ճշմարտ ուստեք։ Անտի իսկ՝ զի զխոստովանութենէ անփոյթ եղեն։

Ոսոխն սատանայ քանզի գիտէր թէ մեծ յոյժ են տոհմականք ատէպն խոստովանութեան, ամենեւին զամենայն հնարս հնարեցաւ ի սրբոյ սովորութենէ անտի յեռս զնոսա կասեցուցանել։

Եւ զի՞ իսկ պիտոյ, ասէ, յիւրաքանչիւր եւթնեակս եւ կամ գոնեայ ի հնգեռասան աւուր խոստովան զմեզն լինել։ ԶԱնանիա ձանձրացուցանէք եւ չարչարէք, եւ զանձինս ձեր տանջեալ ջնք վայրապար։

Տեսէք. բարւոք կեանս կեայք. յանցանք ձեր հանապազորդեայ՝ դոյզն իրք են։ Կացէք մնացէք դուք, մինչեւ մեծ իմն ինչ պատահիցէ՝ յայնժամ գնացէք եւ շատ իսկ է։

Եւ այնպէս զառաջինն խաբեաց զնոսա. եւ զի՞ իսկ բնաւ եղեւ այսի. բայց՝ զի կարի իմն ի սրբութիւն անդր իւրեանց յուսացեալ ապատան եղեն եւ վաղ իսկ ի շնորհաց անտի որ ի սրբոյ արձակմանէ ծնանիցին՝ վրիպեալ գրատան. յորմէ եւ դիւրաւ իսկ անկան։

Արդարեւ յետ առաջնոյ անկմանն՝ վաղվաղակի առանց յապաղութեան ցաւովք յարուցեալ կանգնեցան, եւ ճեպեալ ընթացան առ Անանիա եւ բժշկեցան։

Այլ յետ սակաւ ինչ ժամանակի այսրէն միւսանգամ փորձեցան եւ ան-

կան վերոտին։ Զինչ յայնժամ արար սատանայ։ Տաղտուկ իմն եւ գարշ զխոստովանութիւնն երեւեցոյց։

Անսացէք, ասէ, ունիք դեռեւս ժամանակ. չէ օրէն եւ չէ իսկ համարձակ ձեզ առանց կանխագոյն խոստովանութեան մատուցանել պատարագ։ Բայց չկայ իսկ ինչ հարկ ի վերայ վաղիւ պատարագ մատուցանելոյ։

Արդ յապաղեցին։ Յայնժամ ուրեմն արդելք խափանիչք եկին ի վերայ եւ ապա ի հարկէ իսկ եհաս պատարագել։

Գումարեցաւ կուտեցաւ ժողովուրդն, եւ վասն ժամանակին կարճութեան չկարացին այլ եւս զանձինս քահանայի ցուցանել։

Խոնարհեցուցեալ խոնարհեցուցին զանձինս, եւ զղջացան իսկ արդարեւ, այլ թերակատար օրինակաւ. եւ զղջումն թերակատար առանց խոստովանութեան զանօրէնութիւն չկարաց ջրել։

Ապա մնաց պահեցաւ անօրէնութիւնն։ Եւ սակայն մատուցին նոքա պատարագ, յորմէ յայտ է թէ սեղանակապուտ հաղորդութիւնն եղեւ, եւ այնու իմն զօրացեալ հաստատեցան ի չարիս։

Իսկ իբրեւ պատարագն կատարեցաւ, ոչ եւս այնուհետեւ զայնմանէ խորհեցան թէ առ Անանիա պարտ իցէ երթալ։

Յորժամ զերկրորդ պատարագն կա-
մեցան մատուցանել, կրեցին ինչ տա-
կաւին անձկութիւնս մտացն խղճի, այլ
յերրորդումն զգացին եւ ոչ ինչ։

Ապա յետ այնորիկ հաճեցան ընդ
դրծս չարութեան իւրեանց, եւ չվե-
հերեցին ինչ այնուհետեւ եւ չզանգի-
տեցին զզեղծ կեանս ընդ մեծի պաշ-
տամանն միաբանել։

Թերեւս յետ երկայնաձիգ ժամանա-
կաց՝ հին ինչ կանոն ի խոստովանու-
թիւն կոչեաց զնոսա։ Զինչ ինչ յայն-
ժամ գործեցին։

Թողին զԱնանիա զտուաջին, ասոյ մար-
գարէի ելին ի խնդիր, որ ասաց խա-
ղաղութիւն՝ մինչ ոչ գոյր խաղաղու-
թիւն, որ եդ զլեսադիրս գլեսոյ, եւ զտա-
ռապետալ քահանայն զայնոսիկ առանց
ինչ ուղղութեան եթող կեալ ի յան-
ցուածս իւրեանց։

Տես թէ զիարդ անկան, որպէս փրշ-
ըեալ խորտակեցան որ զանց զխոստո-
վանութեամբ արարին։

Դ. Տես, որդեակ, մի գուցէ նոյնպի-
սի ինչ եւ քեզ դիպիցի։ Յորժամ ե-
կեալ հասանիցէ ժամանակն խոստովա-
նութեան՝ զոր կանոն սրբականն կենաց
քեզ սահմանիցէ, մի յապաղիցես եւ
մի օր յօր առնիցես։

Մի ասիցես թէ սուրբ իսկ եմ, չեմ

ինչ այնու կարօտ։ Զի որ ասիցէ ոք՝ եթէ մեղս ինչ ես ոչ ունիմ, զանձն խաբէ, եւ ճշմարտութիւն ինմա ոչ գոյ։

Որպիսի ոք եւ իցես՝ չես ինչ քան զսուրբս իմ սրբագոյն եւ քան զամենեւին կատարեալն՝ կատարելագոյն։

Ա՛նց, ո՛րդեակ, ընդ դիրս վարուց կենաց նոցա, եւ տեսցես զի ստէպ եւ յաճախագոյնս իսկ սրբով խոստովանութեամբ վարէին նոքա։

Քանզի արդարոց եւ ատուգաց գործ է հանապազ երկնչել, եւ որչափ առաւելագոյնն արժանի սիրոյ իցեն՝ նոյնչափ եւս աւելի՝ զի մի պարտաւոր ատելութեան դատանիցին՝ զարհուրեալ դողան։

Եթէ արդարն հազիւ համարի թէ կեցցէ. դու ո՞ իցես՝ զի առանց ստէպն խոստովանութեան յամրի եւ յապահովի զանձն կարծիցես։

Ե. Այ՛ իսկ, ո՛րդեակ, եթէ հովիւ բարի իցես, հոգ ի մտի ունիցիս՝ զի մի ոչխարքն քո զանց զփրկարարն գործով խոստովանութեան առնիցեն, եւ եթէ յուլացեալ ծուլացին՝ խթիցես, կշտամբեսցես եւ ապառնասցիս։

Այլ եթէ դու իսկ ինքնին ի գլխովին անփոյթ առնիցես, ո՞ միտ դնիցէ, ո՞ պահիցէ, ո՞ կշտամբիցէ։ Ոչ ոք, ոչ ուրեք։

Եթէ ի թերութիւնս ինչ անկանի-
ցին ուշիարքն քո, դու բողոք բառնաս,
դու յանդիմանես. ապա թէ եւ դու
եւս գայթագղեցիս եւ գթիցես, ով որ
յայնժամ ուղղիցէ, այլ՝ քո իսկ Անանիա:

Եթէ ոչ այնմ քահանայի ցուցցես
զանձն քո, ոչ որ խրատ քեզ տայցէ
եւ կշտամբեալ յանդիմանեսցէ զքեզ:
Զի որ կարեւոր բարեկամքն են՝ դուն
ուրեք եւ անօսր իշխեն զայն առնել, եւ
յոռիքն՝ չկամին:

Տես թէ ուրշոյ եւ քանի վատնողք
մնա առ կուրծս կայցեն քեզ, եթէ
զխոստովանութեամբ զանց արարեալ
անցանիցես:

ԳԼՈՒԽ ԻԵ.

Վասն Դերբելի մեղաց:

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, մի անարգիցես զսա-
կաւս, առ ի փոքր փոքր կործանեսցիս:
Ի ծանուցց յանցանաց երկնչիս, այլ թե-
բեւս ի մանուցց չարեաց չզանգիտես:

Մոլորիս, ուրդեակ. սակաւ սակաւ
ինչ է հուրն, ապա թէ արհամարհիցի՝
եւ զանտառս անդամ հրդեհէ: Թեթեւ
թեթեւ իմն է հիւանդութիւնն, այլ
եթէ անփոյթ առնիցի, տակաւ աճէ եւ
վնաս հասուցանէ:

Մի՞թէ յանկարծակի՞ յակա՞ն թօթա-
փել կործանին շինուածքն: Ո՞չ ապա-

քէն, ուրդեակ, զառաջինն՝ փեռեկումն իմն ծերպից գործի, անտես առնի, ապրը-դեալ մնանէ ի ներքս ջուրն, խախտին շաղախքն եւ վէմք քակտեալ քայքայ-ին ի միմեանց, եւ որմք առ սակաւ սա-կաւ կործանին եւ ապա ուրեմն եւ տունն աւերեալ տապալի։

Տես թէ ուրչափ վտանգ ի վերայ կայ-ցէ՝ յորժամ զսակաւն ոք անարգիցէ։ Եթէ մատն այն որմոյն՝ որ անկաւ զառա-ջինն՝ անտես չէր լիեալ՝ այլ իսկ եւ իսկ վաղվաղակի նորոգէր, կայր մնայր տա-կաւին տունն։ Բայց քանզի զդոյզն վնա-սուք արհամարհեցին՝ չէ արդ տունն ի միջի։

Նմին իրի իսկ ասաց եւ ոմն ուրեմն ի ճարտարացն իմաստնոց, զարմանալի իմն է եւ համարձակիմ իսկ ասել թէ չէ երբեք յականջալուրս եկեալ. թուի իմն ինձ երբեմն՝ թէ ոչ այնչափ մեծաւ փու-թով եւ հոդաբարձութեամբ ի մեղաց մեծաց պարտ իցէ զգուշանալ, որպէս ի փոքունց եւ ի դուզնաքեայց։

Զի առ խորշել ի մեծաց մեղաց՝ բնու-թիւն իսկ ինքնին մեղացն դրդէ, այլ վասն փոքունցն՝ քանզի մանունք իսկ են՝ ծուլացեալ անխէթ կամք եւ անկաս-կած, եւ յորժամ պախարակիցեն՝ չկարէ չմարթի այնուհետեւ միտքն յարուցեալ քաջութեամբ ընդդէմ խիզախել նոցին։

Բ. Տես, որդեակ, որ զներքելեաքն հեղ-
գայլեալ զանց առնես, տես զՋուրն որ
մեզմով ընդ ծակս եւ ընդ ծերպս նա-
ւին ի ներքս մտանիցէ։ Դիւրին է անդէն
ի սկզբան մինչ ապրդելն ի նաւ անդր
սկսանիցի՝ արդելուլ զայն եւ արտաքս
թափել, ապ՝ եթէ անհոգ լինիցիս, ի
սակաւ ինչ ժամանակս զողջոյն իսկ զյա-
տակ նաւուն լնուցու։

Զինչ խոիր իցէ նաւակոծութեանն,
յորժամ միով յաղթ ալեաք սուզանիցի
նաւն, եւ կամ թէ տակաւ ջրոյն ի ներքս
մտեալ՝ լցցէ զնաւն, եւ յետոյ ուրեմն
իջեալ մխրճիցի։

Ապա փոխիր այսուհետեւ ի թեթեւ
յանցանաց, յաճախագոյնս մտիր ի
քննութիւն զի դիտեալ տեսանիցես ե-
թէ գործեա՞լ իցես ինչ յանցանս. ապէպ
երթ ի խոստովանութիւն զի զայնս ի
բաց ջնջեսցես, զուցէ բազմացեալ՝ ի մա-
հացու ինչ մեզս պատրաստիցեն զքեզ։

Այլ ասիցես թերեւս՝ ներելիք են,
չառնեն զիս Աստուծոյ թշնամի, չպար-
տիմ խորշել յայնցանէ վասանգաւ յաւի-
տենականն մահուան։

Այո՛ իսկ, որդեակ, եւ կարի քաջ. եւ
ես իսկ չպարտիմ քեզ շնորհս բազումս
օգտակարս եւ օճանս զօրեղս եւ ապդա-
կանս մատուցանել, եւ առանձինն խնա-
մով պահել զքեզ եւ պատապարել։

Արդ եթէ իմում բարեկամութեան այդպէս անփոյթ իցես, որպէս զի յատելութենէ իմմէ եւեթ զարհուրեալ դողայցես, երկիւր՝ դուցէ ի բաց հանիցս ի քէն զշնորհն բարձրագոյնս եւ զհզօր օգնականութիւնս։

Դիւրաւ անկեալ սայթաքեսցիս յայնժամ ի լպիրծ եւ ի զաղփաղփուն կեանս աշխարհիս այսորիկ, եւ ի մէջ վատթարագոյն թշնամեաց շրջեալ, եւ յառանձինն իմոյ պաշտպանութեանն վահանէ մերկ եւ թափուր դտեալ, դիւրագոյնս վէրս առցես։ Միթէ կարիցեմ յուսալ, եթէ ունիցիմ ինչ ես հոգ զքէն, յորժամ դու այդպէս նուազագոյն զինէն հոգայցես։

Գ. Տէր, քանիցս ասացի՝ խաղաղութիւն խաղաղութիւն եւ ոչ եղեւ խաղաղութիւն, թերեւս եւ այժմ իսկ ասեմ՝ եւ ոչ գոյ։ Ո՛րչափ մեզս նեղելիս գործեցի դիտութեամբ եւ լիով կամօք եւ գործեմ եւս տակաւին։

Արդ միթէ կարիցեմ ասել եթէ սիրեմ զքեզ։ Սիրիցէ՞ զք արդեւք զքեզ ջերմն սիրով՝ որ այդպէս յաճախագոյնս զքեզ տրտմեցուցանիցէ կամ թէ դէթ ոչ զանգիտիցէ տրտմեցուցանել զքեզ։

Տուր, Տէր, զի սիրեցից զքեզ ջերմագոյնս, յամենայն իսկ եւ ի բնաւ ազդէ չարեաց բաղում պնդութեամբ զդուշացեալ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Վասն ընդդեմ ոչ ապաշխարելոյ։

Ա. ՈՐԴԵԱԿ, որ կամիցի առողջ լինել՝ մորմոքեացի։ Բազում մեղք ներելիք առնին խոստովան եւ սակաւք սրբին, քանզի պակասէ իմն նոցա ճշմարիտ զղջմանն ցաւ եւ սաստիկ ուղղութեան յառաջադրութիւն։

Ի ցամաք սովորութենէ մատչին ի նոցին խոստովանութիւն. կամել կամին զանձինս ուղղել, այլ ոչ կամին ճշմարտութեամբ, զի չարկանեն ինչ ջան ի գործ առ ի զայնս արմատաքի ի սրտէ խլելոյ։

Եթէ փափաքիցիս ճշմարտիւ սուրբ լինել, ճշմարիտ ատելութիւն եւ չկամութիւն յանձին բերջիր։ Ա՛ռ դու կշիռ ի ձեռս՝ ոչ զմարդկան՝ որ սուտ է, այլ զկշիռ սրբութեան իմոյ, եւ ի նմին զքո յանցանս կշռեա։

Տեսցես դու յայնժամ թէ ո՞րչափ իցեն՝ թէպէտ եւ փոքր իսկ իցեն, տեսցես թէ եւ ինձ չէ հաճոյ, դառնացուցանէ զիս, նուազեցուցանէ իմն զիմ բարեկամութիւն, զՀոգի սուրբ տրտմեցուցանէ, կարճէ զեռանդն սիրոյն, զջերմութիւն եւ զդիւրութիւն բարեպաշտութեան ի բաց բառնայ, յամեցուցանէ զգնացս ի փրկութեանն ճանապար-

հի, եւ անզգայս գործէ, արդել եւ խա-
փան լինի զի մի շնորհս ընկալցիս։

Ո՛Հ. եթէ անցեալ էր այն ամենայն
ի սիրտ քո. զի՞արդ դառնապէս զմեղս
թեթեւս լայիր։ Եթէ տեսեալ էր քո
զսուրբս իմ թէ որպիսի ինչ արտասուս
վասն սոցին նման թերութեանց հե-
ղին, արդարեւ իսկ ոչ կարէիր ի լալոյ
եւ ի ցաւոց ժոյժ ունել։

Բ. Ասատասուն ինչ յառաջադրու-
թիւն դիր ի մտի ոչ թերակատար կա-
մաք՝ այլ յանկեղծաւոր կամաց։ Ա՛յնց
յանցանաց մանաւանդ ուշ կալեալ սկես-
ջիր, որ ընտանիքն եւ ընդելական քեզ
իցեն՝ զորս իբրեւ զջուր ըմպիցես, եւ
տաս թէ ոչ եւս արարիցս միւսանգամ։
Եթէ եկեսցէ երբեք թշնամին՝ արու-
թեամբ վարեցայց, մարտեայց եւ յաղ-
թեցիս։ Զայս թէ արասցես՝ լիցիս
սուրբ, եւ սրբեալ՝ ուղղեսցիս։

Վասն զի երկուք վահանօքս այսոքիւք,
այսինքն՝ երկիւղիւ մեղաց եւ հատատ-
տունն յառաջադրութեամբ ամրացեալ՝
արթուն կացցես։ Յորում ժամու եւ
եկեսցէ թշնամին՝ դիմակալ լիցիս նմա,
եւ մի թողցես զոնեայ դիտութեամբ
եւ լիով կամաք հատանել ական ի քում
տան։

Գ. Սակայն եւ այնպէս, որդեակ, մի
յուսայցես՝ եթէ բնաւին իսկ յամե-

նայն թերութենէ կամ յանցանաց կա-
ւիցես զգուշանալ։ Քանզի մեծ է քո
տկարութիւն, հանապազ ի խնամս շա-
ւին հաստատեալ է։

Այսօր լիցիս խոստովան զմեղս քո,
եւ վաղիւ թերեւս այսրէն ի նոյնս անկ-
ցիս։ Այժմ դիցես ի մտի խորշել, եւ
թերեւս յետ միոյ ժամու ի վերայ ան-
ցանելոյ՝ գործեսցես, որպէս թէ չէիր
իսկ բնաւ եղեալ ի մտի։

Զգոյշ լեր, ո՛րդեակ, զի մի վասն
այնպէս դիւրաւն անկանելոյ՝ զանց զխոս-
տովանութեամբ եւ զապաշխարութեամբ
մեղաց ներելեաց առնիցես։

Մի թէ զկտաւիս՝ այնու զի միւսանգամ
ի կիր արկեալ աղտեղեսցին՝ անփոյթ
առնիցես լուանալ։ Արդարեւ իսկ ոչ։

Այնպէս եւ դու, քանզի մարմին տկար
է քո, որչափ եւ որքեալ իցես, փոքր
մեւս եւս եւ ոչ լիցիս առանց մեղաց։
Այլ համբերութիւն յանձին բերջիր, մի
խռովեսցիս, հանդարտութեամբ եւ խո-
նարհութեամբ ի հիւանդութենէ այսի՝
յառողջութիւն, եւ ի մեղաց թէպէտ
եւ ի թեթեւ իսկ մեղաց անց երթ
յապաշխարութիւն։

Ընթա ստէպ եւ բազում անգամ ի
խոստովանութիւն։ Եթէ ուղղութեամբ
զքո մեղս լիցիս խոստովան, հաւա-
տարիմ եմ եւ արդար՝ զի թողից զայնս

քեզ, չասեմ թէ մինչեւ յեւթն անգամ, այլ մինչեւ յեւթանասնեկին եւթն։ Քանզի ոգորմութեան իմում չեք թիւ եւ համար, եւ դանձ բարութեան իմոյ անապառ է։

ԳԼՈՒԽ ԻԷ։

Վասն ոգեղ պարարտի մարդասցուն։

Ա։ Աշուրասիկ, որդեակ, ես ընդ քեզ եմ հանապազօր լինել զոհի փառս հօր, եւ մատչել վասն մարդկան փրկութեան։

Դու քահանայ իմ ես, դու զոհիչ իմ եւ առանձինն իմն յայն զոհ եւ նուէր ընտրեալ եւ կարգեալ։ Ապա փոյթ յանձին կալ այնպէս իմն սուրբ ի մեղաց զանձն պահել, որպէս զի հանապազօր բաւական իցես պատարագ մատուցանել։

Զհայր իմ պարտիս պատուել եւ զփառս նորա յառաջադէմ առնել։ Եւ զինչ պատուականագոյն եւ փառաւորագոյն կարիցես բնաւ նմա մատուցանել, քան զամենասուրբ նուէր սեղանոյ իմոյ։ Որովհետեւ անցանէ զանցանէ այն պարգեւ քան զամենայն լրութեամբ։

Արծաթի, ոսկի, ականք պատուականք, երկիր, երկինք, եւ աշխարհ համբրէն՝ առ համեմատութեամբ այնր առատածեղէն նուիրի՝ են իբրեւ սակաւ մի աւազ։

Ոչ եւս կամի Հայր իմ պատարագս հինս, ոչ որթս, ոչ գառինս, այլ մարմին հաստատեաց ինձ, ընդ այն հաճի նա, ընդ այն ախորժէ, զնոյն սիրէ, մնա-գեւր հայի նա յերեսս Օծելոյ իւրոյ։

Մատո, ուրդեակ, մատո հանապազօր զՈրդին՝ Հօր, զԱստուած՝ Աստուծոյ, զԼոյս՝ Լուսոյ։ Ո՜Հ. ուրշափ ուրախութեամբ, քանի փառօք զՀայր իմ ընուս՝ յորժամ մատուցանիցես, յորպիսի ուրախութենէ, յուրշափ փառաց վրիպեցուցանես զնա, եթէ պատարագել հեղգայցես։

Բ. Զոր օրինակ այր Աստուծոյ ես, այնպէս եւ միջնորդ ես մարդկան, զի զոհս եւ պատարագս վասն մեղաց նոցա մատուցես։ Ահաւասիկ ի ձեռս քո է ողջակէզն, որ քան զամենայն ողջակէզս սրբազոյն է եւ հզօրագոյն։

Զիք ինչ պարտիք՝ որ ոչ այնու հատուցանել մարթիցի, չիք ինչ շնորհ զոր չկարիցեմք այնու ընդունել, եւ ոչ հիւանդութիւն ինչ՝ որ ոչ յառողջութիւն դառնայցէ։

Բարի՜, յորպիսի օդնականութեանց եւ ի նպաստից զոչխարն՝ որ քեզ յանձնեալ իցեն, նա աւանիկ զբոմանդակ իսկ զհօտն Հօր՝ մերկ եւ թափուր թողուցուս, յորժամ զպատարագէ անփոյթ առնիցես։

Մատո, որդեակ, մատո ատէպ պատարագս, եւ իջցեն ի վերայ ոչխարացն քոց տուրք պատուականք, դարձք, ուղղութիւնք, թողութիւնք, զօրութիւնք, եւ պարգեւք աղնուագոյնք համօրէն առաքինութեանց։ Եթէ սիրիցես զոչխարսն, մի զանց արասցես տալ նոցա զայնչափ եւ զայնպիսի բարիս։

Նմանեա Յոբայ ծառայի իմոյ, եւ զոր օրինակ նա հանապազորդ վասն մեղաց որդւոցն զոհս մատուցանէր, նոյնպէս եւ դու վասն իմոյ ժողովրդեան՝ որ քեզն յանձն իցէ՝ մատո օր ըստ օրէ պատարագս ի քաւութիւն եւ ի շնորհացն ընդունելութիւն։

Գ. Սուրբ եւ կեցուցիչ է խորհուրդն աղօթս վասն ննջեցելոց առնելոյ՝ զի արձակեսցին ի մեղաց։ Եթէ աղօթիւք օճան ինչ գտանիցեն, որչափ եւս առաւել պատարագաւն՝ որ առանց իսկ չափոյ զամենայն աղօթիւք եւ զզոհիւք գլէ։ Եթէ ողորմութիւն՝ զհուրն շիջուցանիցէ՝ որով քաւիցին, որչափ եւս աւրիւնն իմ։

Տես, որդեակ, թէ քանիսն դիւրին իցէ քեզ զտանջանս նոցա ամոքել, մանաւանդ թէ եւ ազատել իսկ զնոսա ի տանջանացն, եւ հանել յերկինս որում ցանկանն, եւ զհրեշտակս՝ վասն նոցա յերկինս մտանելոյն ուրախ առնել, ա-

ռաւելուլ զդասս սրբոց եւ զԹիւ Համա-
բոց փառաբանչացն Աստուծոյ բաղմա-
ցուցանել։

Արդ տես Թէ ո՞րչափ խիստ սրտիւ
իցես, եԹէ չկամեցեալ պատարագել՝
յայնպիսի օգնականութեանց զննչե-
ցեալսն վրիպեցուցանիցես։

Ողորմեա նոցա, ո՞րդեակ, բազում
շարշարին, օգնեա նոցա ի ձեռն հանա-
պազորդ պատարագաց։ Արդարեւ իսկ
ոչ լեցին նոքա ապաշնորհք եւ ոչ մո-
ռացին զքեզ, յորժամ եկեսցեն յար-
քայութիւն իմ եւ տեսցեն զգործս բա-
րիս այնոցիկ՝ որ կեանս ի վերայ երկրի
վարիցեն։

Դ. Աայլ եւ դու, ո՞րդեակ, ո՞րչափ
շնորհօք կարօտ ես, զի զքո փրկութիւնն
գործեսցես։ Քանի՞ օգնականութեամբ,
զի ըստ պատշաճի եւ շահեկանութեամբ
զպաշտօն քո ընուցուս։

Ապա հանապազ մատիր ի սեղան բա-
գնի իմոյ. անդ գտցես զերկնաւորն ան-
դեղեայ, որով զգուշացեալ պահեսցիս
ի մեղայ, որով ախտք եւ կարիք քո
ցածուցեալ նուազեսցին։

Անդ առցես զդեղն աչայ ազդոյ յոյժ,
որով աչք մտայ քոյ լուսաւորեսցին,
եւ զդարման զօրեղ, որով զօրասցին ի
քեզ առաքինութիւնքն, որով հաստա-
տեալ եւ ամրացեալ ընդդէմ սատա-

նայի, իբրեւ զառեւծ մռնչող՝ ահագին եւ սոսկալի նմա լինիցիս։

Ընկալ զայն հանապազօր, քանզի հանապազ իսկ օգուտ է քեզ։ Մի նողկասցի սիրտ քո ի կերակրոյ այսի սրբոյ։ Եթէ փութանակի, քանզի ցանկանալով ցանկացայ զայս պասէք ուտել ընդ քեզ։

Ընկալ զիս ուրախութեամբ ի տուն քո, զի լեցի նմին փրկութիւն։ Զայս արա հանապազօր առ իմոյ յիշատակի։

Ե։ Այեաց, որդեակ, յօրինակս սրբոյ իմոյ, յորս փայլեալ շողան ճշմարիտն կրօնք, ոչ եւ աստուածպաշտութիւն։

Զիարդ Ամբրոսիոս, Կարողոս, Սաղէս, Քսաւեր, Վենկենտիոս եւ այլ եւս բազումք հանապազորդեցին մնասուցանել օր ըստ օրէ պատարագ։

Եւ որպէս ի ձեռն հանապազորդ զոհիցն այնոցիկ ընկալան կրուսելոյն զդարձ, որոց անկանէիսն՝ զդաւշութիւն զի մի անկցին, եւ անկելոյն եառուն յառնել վերատին եւ պատապարել, եւ այնոցիկ որ կանգնուն կային եւ արդարոց՝ զհանապազորդութիւն։

Քանի շնորհս եւ օգնութիւնս շահեցան նոքա հանապազ եւ անձանց իսկ իւրեանց, որովք զօրացեալք չոգան յառաքինութենէ յառաքինութիւն մինչեւ ի լեառն իմ սուրբ։

Զ. Սակայն, սրդեակ, յորժամ զնոցին սովորութեանց զհետ երթայցես, երթ եւ զաստուածպաշտութեան նոցա զկնի։ Մատո հանապազօր պատարագ, այլ մատո սրբութեամբ։

Նախանձ տան Հօր իմոյ եկեր զիս։ Սեղան իմ է սեղան Աստուծոյն զօրութեանց։ Ապա զգոյշ լեր մի անարգեսցես զայն, զգոյշ լեր մի գուցէ ի շահասիրութենէ մանաւանդ՝ եւ ոչ ի ճըշմարիտն աստուածպաշտութենէ ի սեղան իմ մերձեսցիս։

Անդ եմ ես եւ տեսանեմ, միտ դիր զի մի առանց ինչ պատրաստութեան մատչիցիս, եւ մի արագ արագ, մի շտապաւ, մի վարկպարագի սպասաւորեսցես։ Անիծեա՛լ որ անհոգութեամբ սպաս արկանէ ինձ Աստուծոյ վրէժխնդրի։

Լուա այսուհետեւ ի մէջ անմեղայ գձեռս քո, լեր ազատ յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ, զամօթի հաբեալ վասն քոյոյ անարժանութեան, քաղցեալ առ ցանկութեան, վառեալ եւ բորբոքեալ ի սէր, լի հաւատովք եւ վստահութեամբ շուրջ եղիջիր զսեղանով իմով։ Ա՛ռ եւ կեր, ա՛ռ եւ ա՛րբ, ի քեզ բնակեցայց եւ դու յիս։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Վասն անարժանութեամբ պատարագի մատաւորութեանն։

Ա. Որդեակ առ իս, որդեակ, եւ հանգուցիս զքեզ։ Այլ մինչ մատչիսն առ իս՝ պատրաստեա զանձն քո։

Ես եմ ահարկու Տէր, մեծ եւ ահեղ յոյժ, ատելի են ինձ եւ ամպարշտեան եւ ամպարշտութիւն նորա, զնա որ անարժանութեամբ մատչիցի՝ դատիմ եւ դատապարտ առնեմ զրոշմեալ ի վերայ նորա ի ձեռն Պարանոյ եւ Արեան իմոյ զանէծս բարկութեան իմոյ ամենազօրն զօրութեան։

Փորձեա այսուհետեւ, որդեակ, զանձն քո, եւ ապա ի հացէ իմմէ կերիցես եւ ի բաժակէն արբցես, զի մի դատաստանս անձին քում ուտիցես եւ բմպիցես։

Փորձեա զանձն քո, հարց զսիրտ քո, ի միտ առ զշաւիղս քո, եւ եթէ ճանապարհ անօրէնութեան իցէ ի քեզ, մի իշխեսցես ըստ սեամն սրբութեան անցանել պղծութեամբ, այլ յամօթ լեր առաջի իմ ի վերայ անարժանութեան քո, եւ թէպէտ եւ զղջացեալ եւս թուիցի քեզ թէ իցես, սակայն առանց կանխագոյն խոստովանութեան ի սեղան անդր մի մերձեսցիս։

Բ. Որդեակ, ես եմ թագաւոր քո հեզ, որ այնչափ երախտեաց եւ բարե-

բարութեամբ լցի զքեզ, եւ դու համբուրելով մատնես զիս։ Եմ Աստուած քո եմ, եւ դու սատանայի՝ որ զսիրտս քո բմբռնեալ ունի՝ մատնիցես զիս։

Եմ փրկիչ քո, եւ դու վերստին ի խաչ հանես զիս անձին քում։ Եմ սուրբ եմ ամենեւին, եւ դու յանուրբ գերեզմանի աղտեղութեան մտայն խղճի դնիցես զիս։

Ընկեր, վասն որոյ եկեալդ ես։ Լաւ էր քեզ եթէ բնաւ չէիր իսկ ծնեալ։

Գ. Վաւ լեցի յինէն, Տէր, այնչափ անօրէնութիւն։ Լաւ է թէ կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, մռայացի զիս ալ իմ, բարձ մանաւանդ զհոգի իմ յինէն, եւ ոչ թողցես զիս գործել այնպիսի ինչ ոճիրս անօրէնութեան։

Լաւ իսկ է սառաւել զի մեռայց ես անարդ արարածս, քան թէ զԱրարիչն իմ այնպէս արհամարհանաք առ ոսն կոխիցեմ։

Ո՛վ Տէր ալնուազոյն. Աստուած առաւուծոց, Տէր տերանց։ Ո՞ իցէ որ այսպէսն մատնիցէ զքեզ։

Դ. Լաւ ո՞ իցէ, սրդեակ. երանի թէ մի ոք միայն կամ երկու։ Այլ բաբէ, որչափիսիք են՝ որ ոչ մի անգամ, այլ հանապազօր այնպէս մատնեն զիս եւ ի խաչ հանեն։

Հանապազ մատչին ի սեղան իմ

ամբարտաւանք, ցանկասէրք, գեղք, ագահք եւ այլոց եւս յանցանաց պատ-ժապարտք։

Դոքա զկս, ո՛ղորմեակ, անմաքուր ձեռօք շօշափեն, առնուն անսուրբ բերանով եւ ընդունին ի պիղծ սիրտ իւրեանց, եւ զարիւն նորոյ ուխտին խառնեակ համարին եւ պղծիմ ի մէջ նոցա։

Կարող իսկ էի, ո՛ղորմեակ, փրկել զկս ի ձեռաց նոցա, փայլատակունս եւ նետս ի նոսա արձակել, ցրուել եւ կոտորել զնոսա, սակայն կորնչէին յայնժամ, եւ ոչ կամիմ զմահ ամպարշտին։ Իցէ թէ դառնային եւ կէին ուղղութեամբ...։

Ո՛վ ազգ թեւր։ Մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ։ Մինչեւ յե՞րբ մոլորիցիք սրբոտիւ։ Մինչեւ ցե՞րբ ոչ խնայիցէք յիս։ Զոր առնելոցն էք՝ արարէք վաղվաղակի։

Բայց սակայն դարձցի ողորմութիւն իմ յարդարութիւն ընդդէմ ձեր։ Երդուայ ի բարկութեան իմում, մի՛ մտջիք ի հանգիստ իմ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Վասն պատրաստութեան պատարագի։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, պատրաստեա ինձ վերնատուն, զի առ քեզ արարիւ զզատիկն, եւ ի տան քում պարտ է ինձ ագանել։

Թագաւորի եթէ երբեք երթալ ուրեք հասանիցէ՝ տեղի փառաւոր, նոյն-

պէս եւ բարեկամի որ գալոյն իցէ՝ աղ-
նուագոյն վայր պատրաստի։

Ես եմ, ո՛րդեակ, թագաւոր քո հեզ,
ես սիրեցեալն քո, որ արածիմ ի մէջ
շուշանաց, ես Աստուած քո՝ զոր եր-
կիւղք երկնից ոչ գտան արժանի ժա-
ռանգել։

Արդ որչափ զիս առ սէր քո խոնար-
հեցուցանեմ, յոչինչ անդր քո ինքանե-
լով, նոյնչափ զարթո զքեզ վառեալ
բորբոքել ի սէր։

Մի լեցի քեզ բաւական մաքրութիւն
տաճարի սրտի քո, այլ եւ զոսկի սիրոյ,
եւ զկնդրուկ սրբոյ բարեպաշտութեան ի
ձեռն ջերմեռանդն ամփոփման մտաց
յանձին քում ժողովեսջիր։

Յայնմ ճանաչի սէր ջերմ այնր՝ որ
իւրում սիրելւոյ առպնջական լինիցի, յոր-
ժամ ազնուագոյն եւ գեղեցիկ վայրնմին
պատրաստիցէ։

Բ. Ո՛հ. թէպէտ եւ չիցէք դուք
ցուրտ, այլ եւ ջերմ եւս չէք։ Ո՛ անիսր-
տիրք եւ մեղկացեալք, որ չունիք ինչ
հոգ զայրելութենէ իմմէ, որ ի տանէ եւ
յառանին գործոց՝ առանց ինչ պատ-
շաճ ժամանակի ի վերայ անցանելոյ, ան-
դէն վաղվաղակի ի պատարագ անդր
դառնայք. զի՞նչ ասացից ձեզ։

Ահաւասիկ սեղանք ձեր յառաւօտուց
կարգեալ պատրաստին վասն ձերոց կոչ-

նականաց, եւ խորտիկք զօրն ողջոյն հան-
դերձին, եւ ինձ որ առ ձեզ գամ՝ եւ
ոչ զշորիր ինչ մասն միոյ ժամու զվեր-
նատուն ձեր պատրաստէք։

Եւ սակայն որ ի կոչունս ձեր գան սե-
զանորդքն, Թերեւս եւ սիրեն իսկ ոչ
զձեզ եւ ոչ պատուեն, այլ ես սիրեմ
զձեզ ճշմարտութեամբ։

Նոքա գան առ ձեզ, զի ի ձերոց խոր-
տկաց կերիցեն, իսկ ես գամ առ ձեզ՝ զի
յիմմէ անտի ուտիցէք։

Նոքա եկեալ սպառեն զդոյս ձեր, իսկ
ես գամ, զի աճեցուցից զձեզ եւ յաւե-
լից ի մեծութիւնս ձեր։ Սակայն դուք
զնոսա պատուէք եւ զիս անգոսնեալ
անպատուէք։

Ուրդիք մարդկան. մինչեւ յե՞րբ էք
խատասիրաք։ Ընդէ՞ր սիրէք զնանրութիւն
եւ խոտէք զբարութիւն իմ։ Տաղտկայ
եւ դարշի անձն ձեր յինէն իբրեւ ի թե-
թեւ եւ ի դոյզնաքեայ կերակրոյ։

Ո՛վ անմիտք։ Ո՞ նախանձ արար զձեզ։
Ո՛ դաղջքդ՝ չկարեմ ձեզ հանդուրժել։
Արդ իսկ հանդերձեալ եմ փսխել զձեզ
ի բերանոյ իմմէ։

Գ. Արի, ո՛ուրեակ, արի վաղվաղա-
կի, զի մի ցրտացեալ մեղկացիս ընդ
նոսա, այլ ճեպեա ելիր ընդ առաջ իմ։

Ե՛կ, եւ զմտաւ ածեալ զմեծութիւն
իմ եւ զքո նկնութիւն, ապաղակ բար-

ձեալ դուշեա ընդ հարիւրապետին՝ թէ չեմ արժանի։

Եւ՛կ, եւ ընդ Զակքէի այրեալ եւ աղանձնեալ սիրով՝ ընկալ զիս խնդալից ի տուն քո, վստահ լիեալ հաստատութեամբ՝ թէ լիցի քեզ իմով այցելութեամբ փրկութիւն։

Եւ՛կ, եւ ընդ արդարոյն Աբելի կարդեալ յարդարեալքիր զնուէր քո գեղեցիկ դիտաւորութեամբ։

Թէ զայս այսպէս առնիցես՝ լիցի ողջակէզ քո պարարտ եւ տայէ փառս Հօր, պատիւ սրբոց, ուրախութիւն երկնից, օգուտ Եկեղեցւոյ, քեզ փրկութիւն, արդարոց շնորհս, մեղաւորաց դարձ, օգնականութիւնս կարօտելոց եւ հանդիստ ննջեցելոց։

ԳԼՈՒԽ Լ.

Վասն գոհութեան յեր պատարագի։

Ա. Ես Բանն յաւիտենական, մարմին եղեալ բնակեցի ի քեզ, որդեակ, ես հաց կենդանի՝ որ յերկնից իջի։ Ես լոյս ճշմարիտ, ես լի շնորհօք եւ ճշմարտութեամբ, լի իշխանութեամբ եւ զօրութեամբ, ես՝ որ ողորմութեանն չիք թիւ եւ համար, ես ընդ քեզ եմ, եւ վարձք իմ ընդ իս են։

Ես ընդ քեզ եմ, զի ապրեցուցից զքեզ, զի զերծուցից զքեզ ի ձեռաց

չարաց եւ փրկեցիս զքեզ ի ձեռաց ժանտից։

Ո՜հ. եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, եւ ո՞վ է որ հանդուցեալ է ի սրտի քում, ապաքէն լինէր սիրտ քո որպէս մամ հալեալ առաջի երեսաց իմոց, եւ ամենայն զօրութիւնք հոգւոյ քո զմայլէին զարմացմամբ, եւ աչք քո յարատասուս սիրոյ եւ շնորհակալութեան հարկանէին։

Զիք ինչ ընդ այն երկմտել՝ եթէ առ յոգութեան՝ ոչինչ զայսր աշխարհիս ցանկացեալ՝ հրաժեշտ ամենայնի տայիր։

Զիք ինչ ընդ այն տարակոյս՝ եթէ առանց ձայնի եւ գոգ իմն առանց ինչ զգայութեան վերացեալ եւ յափշտակեալ՝ ի սէր իմում լռեալ հանդչէիր։

Առանց իսկ երկմտութեան գիրկս արկեալ փարէիր բոլորով սրտիւ զքոյսն սիրելեաւ, եւ առ խնդութեան՝ ողջ բովանդակ առանց ինչ մասն ի բաց հանելոյ նմա զանձն մատուցանէիր։

Արդարեւ յայնպիսւոյ մարդասէր Հօրէ՝ ամենայն պարգեւաց առաքինութեանց վստահութեամբ ակն կալեալ սպասէիր։

Արդարեւ իսկ յայնպիսւոյ հզօր թագաւորէ զամենայն օգնականութիւնս շնորհաց ընդդէմ քոց թշնամեաց խնդրէիր։

Ապաբէն գՅիսուս՝ որ ի քեզ բնակէ եւ քո իսկ լրեալ է, իբրեւ զնուէր ինչ պատուականագոյն՝ մեծաւ եռանդմամբ Հօրն երկնաւորի ընծայեիր։

Զկայ ինչ երկմտութիւն՝ եթէ զընտրագունդս ոգւոյն սրբոց կոչէիր՝ զի փառս ընդ քեզ սիրելոց քում ի բարձունս առաքեսցեն։

Զիք ինչ տարակոյս՝ եթէ վասն սրբոյ կերպարանաց Մարմնոյ եւ Արեանն Քրիստոսի սպառելոյ՝ ցաւէր քեզ սաստիկ յոյժ, զի ի Նուիրական կերակրոյ անտի յայնմանէ եհաս քեզ վրիպել։

Բ. Զիք, որդեակ, ապդ այլ այնչափ մեծ, որոյ իցէ աստուած մնա ի նոսա, որպէս ես մերձ եմ առ քահանայն իմ։

Ապա զի՞արդ է զի բազումք ի նոցանէ իբր այն թէ զառաւելութիւն սիրոյ իմոյ խոստեալ, կամ թէ գտնէ ոչ որպէս վայել եւ արժան է՝ մեծարեալ, եւ ոչ սակաւ ինչ վայրկեան ժամանակի զիս՝ որ ի սիրտս նոցա մտեալ նստիմ՝ սրբովք օրհնութեամբք կամիցին պատուել։

Հազիւ ուրեմն մեկնին ի սեղանոյ իմմէ, եւ անդէն իսկ եւ իսկ յեկեղեցւոյ արտաքս եղանեն եւ դէմ եղեալ երթան յիրս աշխարհականս։ Մինչ դեռ տակաւին կերակուրքդ նոցա ի բերանի իւրեանց իցեն, եւ նոքա մոռանան զԱս-

տուած բարի որ կերակրեացն գնոսա։ Ո՛
ապաշնորհք։ Ո՛ որդիք լուսոյ, սակաւ
իմաստունք քան զորդիս խաւարի։

Որդիք աշխարհիս այսորիկ՝ յորժամ
թագաւոր ոք կամ ճոխ յայց նոցա ե-
լանիցէ՝ ունին գնա, զի մի փուքանակի
մեկնեսցի ի նոցանէ, ողջոյն տան նմա,
խնդակից լինին, մատուցանեն նուէրս,
պաղատին, խնդրեն, ուրախ լեալ՝ զի
մարթացան խօսել ընդ իշխանին բե-
ման ի բերան, եւ ցուցանել սէր եւ մե-
ծարանս եւ զպիտոյս կարեաց իւրեանց
բանալ նմա եւ ի վեր հանել, եւ նոքա
զի զմահկանացու զիշխանն պատուեսցեն
եւ զեղծանելի վարձս ընկալցին։

Որդիք լուսոյ, անմիտք եւ հեղգա-
սիրտք ի հաւատալ։ Ապք Նինուէացիք
յարիցեն ընդդէմ ձեր յաւուր յետ-
նում, զի մինչ շրջեցաւ ընդ նոսա Յով-
նան եւ քարոզեաց՝ զղջացան. եւ արդ
ուստիկ մեծ քան զՅովնան է աստ։

Դշխոյն Հարաւոյ յարիցէ եւ դատա-
պարտեսցէ զձեզ, զի եկն ի ծագաց եր-
կրի լսել զիմաստութիւնն Սաղոմոնի,
եւ ահա մեծ քան զՍաղոմոն է աստ։

Ապք Երուսաղեմացիք յարիցեն ընդ-
դէմ ձեր, զի զիս որ շրջեի ընդ նոսա,
կամեցան թագաւոր կացուցանել, եւ
արդ ես թագաւոր թագաւորաց, Աս-
տուած ձեր՝ ի ձերում միջի եմ, եւ դուք

մեկնեալ երթայք եւ թողուք զիս առանց պատուոյ միայն միայնակ։

Գ. Որդեակ, միթէ կամիցի՞ս եւ դու յինէն ի բաց երթալ։ Քաւ լիցի, որդեակ, քաւ լիցի։

Յորժամ զսեղանն թողուցուս, զարձառ իս, զի լսիցես զիս՝ որ զբանս կենացն յաւիտենականաց ունիմ, զի ճաշակեսցես եւ տեսցես՝ զի քաղցր եմ, զի ճմլեսցի սիրտ քո ի քեզ՝ մինչ խոսիցիմն առ քեզ։

Ամենեւին իսկ ամենայն եռանդմամբ երկիր պագ ինձ Տեառն Աստուծոյ քում որ եկեալ եմ ի սիրտ քո, եւ երդեա ընդ հրեշտակաց եւ ընդ հրեշտակապետաց օրհնութիւնս փառաց իմոց, եւ մի մեկնեսցիս յինէն, մինչեւ ի ձեռն քոց օրհնութեանց՝ զօրհնութիւն իմ արժանի լիցիս ընդունել։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Վասն հպատարտական աղօթից։

Ա. Ահա դորձ է քո, որդեակ, աղօթիս եւ պաշտաման եւ բանին հպատակ լինել։ Ես զգիշերն ողջոյն հանի յաղօթս, զի դու ուսցիս յաղօթս կալ եւ անդադար աղօթս առնել։

Մարդիկ, որ յօդոյ անտի ծծեն զկենդանութիւնն, ցանկ օդոյ ցանկանան, զի անտի ոգի կլանիցեն։ Դու որ քա-

հանայդ եւ՝ եւ յերկնից պարտիս կեալ, յերկինս փափաքեաց անհանգիստ եւ առանց դադարելոյ, զի զՀոգին երկնաւոր յանձն քո ձգեսցես։

Ո՛րդեակ, իբրեւ զի կարեւոր է, զի ես ուղղեցիս զամենայն զգնացս եւ զգործս քո ի պաշտաման՝ զոր յանձն առեր կատարել։ Զիարդ մեծ է պաշտօնն այն, որպէս սուրբ, քանի ճշնական։

Ապա կալ զաչս մտաց քոց հանապազ ամբարձեալս առ Հայր՝ որ բնակեալն է յերկինս, առ իս՝ որ ընդ աչմէ նորա նստիմ, զի անտի ստէպ օգնութիւն քեզ հասանիցէ, զի նորոգեսցես զզօրութիւնն, եւ առցես թեւս իբրեւ զարծւոյ, զի ընթացցիս եւ ոչ վատակեսցիս, զի շրջեսցիս եւ ոչ պարտասեսցիս, զի հաստատեսցին շաւիղք քո ի ճանապարհի իմում եւ մի դայթագղեսցին գնացք քո։

Բ. Այսպէս ի ձեռն աղօթից ձգեաց յանձն իւր սդի մեծ սրբութեան Յակովբոս՝ զոր Առաքեալն ընտրեալ էի։ Քանզի ծունդք նորա ի ստէպ աղօթիցն իբրեւ զուղտու կաշացեալ էին։

Այսպէս եւ Մարտինոս որ ոչ ի կեանս եւ ոչ ի մեռանել իւրում թուլացոյց երբէք զՀոգի իւր որ անյաղթն եղեւ յաղօթից։

Այսպէս Կարողոս՝ զոր թէպէտ եւ գործք մեծամեծք էին, սակայն եւ այն-

պէս ժամն երիս եւ չորս՝ մանաւանդ թէ զաւուրս ողջոյն, նա եւ զդիշերս անդամ՝ յորժամ աղաւ ամենեւին գտանէր՝ յաղօթս ծախէր։

Ո՛րդեակ, զնոյն եւ դու կարող ես՝ զոր ոչքա վճարեցին։ Ո՞հ. թէ ունէիր միտս, թէ ճաշակէիր՝ տեսանէիր եթէ ո՛րչափ քաղցր է Տէր այնոցիկ՝ որ աղօթս առնիցեն։

Գտանի այնոցիկ՝ որ խնդրեսցեն զնա, բանայ՝ որոց բախեսցեն, եւ որոց հայցեսցեն՝ տայ։ Ճաշակեա եւ տես։

Գ. Ո՛րդեակ, յարիցէ ընդ քեզ աղօթքն, դիշերի սկիցէ յանկողնի, ասասցէ ընդ քեզ սաղմոս ի պաշտաման, կանխեսցէ յառաջ քան զքեզ յեկեղեցի եւ եկեսցէ զկնի, ընդ քեզ նստցի յորժամ ուտիցես եւ ըմպիցես, եւ յետ սակաւիկ մի կերակուր առնլոյ՝ մատուսցէ զոհութիւն։

Դարձցի ընդ քեզ յաշխատութիւն աւուրն, լիցի ընդ քեզ ի սենեկի, սրբեսցէ զքեզ յերեկոյի յաղտեղութեանց՝ զոր ի տղմոյ աշխարհիս յանձն քո ձգեալ իցես, յորժամ ի քուն լինիցիս՝ կափուսցէ զաչս քո, եւ ցանկ հանապազ ընդ քեզ բնակեսցէ։

Դ. Տեսանես, ո՛րդեակ, զի ոչ զայն ինչ աղդ եւեթ աղօթից պատուիրեմ քեզ ասա՝ որ բերանով եւ մտօք միան-

զամայն ըստ կանոնականն օրինաց կա-
տարիցի, այլ եւ զայն եւս յայնր վե-
րայ, որ ի ծածուկ ի սրտին լինիցի։

Անդ, անդ դրօք փակելովք պարտիս
կալ յաղօթս առ Հայր քո։ Անդ մար-
թիս, սրդեակ, յամենայն ժամանակի
եւ ի տեղւոջ զմիտս քո ամբառնալ առ
իս, զքեզ եւ զքոյսն եւ զամենայն ինչ
ինձ մատուցանել, հայցել ինչ յինէն,
փարել զինեւ սիրով, խոնարհեցուցա-
նել զքեզ առաջի իմ, եւ երկիր ինձ
պագանել։

Այս լիցին քո աղօթք առ Աստուած
կենաց քոց, զոյն յամենայն ի գործս եւ
ի պաշտաման լիցի քո ընկեր եւ կցորդ
անբաժին։

Ե. Այս իսկ է, սրդեակ, այս է
ջուրն՝ որ եղիցի աղբեւր ջրոյ բղխեցե-
լոյ ի կեանսն յաւիտենականս։

Եթէ զայն ջուր կամիցիս ունել, էկ
ցուցից քեզ զաղբեւրն բուրաստանաց
եւ զակն ջրոյ կենդանւոյ՝ թէ ուստի
բխիցէ։

Աղբեւրն այն եւ ջրհորն՝ մտածու-
թիւն իմոց պատուիրանաց է, զոր վասն
պարտ եւ պատշաճ է քեզ ժամանակս
ինչ սահմանել օր ըստ օրէ։

Ապա փոյթ յանձին կալ այսուհե-
տեւ հանապազօր ընտրել քեզ առան-
ձինն ճշմարտութիւն ինչ կենարարն

վարդապետութեան, դնել առաջի ա-
չաց, խորհել ճշդիւ գտակաւ առաջի
իմ, յանձն քո շնչել գնասին, եւ ի մտա-
ծութենէ անտի՝ պայման ինչ կամ կարդ
դոցծելոյ անձին հաստատել:

Անդ գտցես զնուրն, եւ եթէ արբցես
զայն, ամենայն մարմին քո սքանչելա-
պէս իմն եւ քաղցրութեամբ ուռոդեա-
ցի, այս ինքն՝ համբրէն գործք քո սրբ-
բեալք եղիցին, վասն զի տացէ պատուղ
ի ժամանակի իւրում:

Զ. Մի այսուհետեւ, ուրդեակ, զանց
զմտաւորական աղօթիւք առնիցես, ա-
պա թէ ոչ՝ յետ ոչ բազում ժամանա-
կի դարձցիս եւ լեցիս աղ անհամ, եւ
ճրագ առանց բոցոյ եւ առանց լուսոյ:

Քանզի վասն այնորիկ ապականեցաւ
ապականութեամբ ամենայն երկիր, զի
ոչ գոյ մարդ որ խորհի ի սրտի:

ԳԼՈՒԽ ԼԲ.

Վասն այլ ի՞ այլ ապտոյ մտաւորական
աղօթիւց:

Ա. ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ զք զնւբ հնարս
ունի յԱստուծոյ, ումն այսպէս եւ ումն
այնպէս:

Ոչ ամենեքին, ուրդեակ, զնոյն օրի-
նակ կարող են ի մտաւորական աղօթս:
Են ումանք՝ որոց տուեալ է ի բարձրա-
գոյն կատար նկատութեանն հասանել,

այլ այն՝ ոչ ումեք ինչ սահմանեալ է, նոցա պահեալ է՝ զորս Հայրն իմ յայն ձգեալ իցէ։

Իսկ դու, որդեակ, եթէ ոչ առանձինն յայն կոչեալ եւ ձգեալ տեսանիցես զանձն քո, մի՛ զարթրադոյն ինչ իրաց խորհել կամիցիս, այլ կաց ի միամտաց ճանապարհի, եւ անարժան զանձն համարեսջիր ի բարթրադոյնսն ելանելոյ։

Եթէ սակաւս եւ եթէ ի մտածութեան անդ կարիցես խորհել, ճշդրտադոյնս արա զսակաւն զայն՝ եւ բաղում օգուտս ցիս։

Բ. Մի՛ զայն ասիցես, որդեակ, թէ չկարեմ, չդիտեմ կալ յաղօթս։ Եթէ չկարիցես զարթրադոյնս եւ զաստուածականս նկատել ընդ Յովհաննու, սակայն կարող ես գոնեայ ընդ Մաղդաղենացւոյն առ ոտս իմ անկանել, եւ զղջալոց սրտիւ եւ հոգւով խոնարհութեամբ խնդրել զմոգութիւն քոց մեղաց, որովք բաղում անգամ զիս ի ցաստումն ածեր։

Եթէ ընդ Պաւղոսի թռչել յերրորդ երկինս չմարթիցիս, այլ կարող ես ընդ նմա կալ առ խաչին իմում՝ ի խաչ հանելով զմարմին կարեօք եւ ցանկութեամբք հանդերձ։

Եթէ չունիս թեւս զարծուոյ որ յաստեղս ճախրիցէ, այլ բաւական ես ու-

նել գոնէ զԹեւս միամիտն աղաւնւոյ բունելոյ ի քարածերպս, մարԹիս գոնեայ խորհել զվէրս եւ զձաղանս իմոց չարչարանաց։

Վատահ լեր, ՝որդեակ, զի աւելագոյն սրբութիւն գտցես դու ի խորհել անդ զչարչարանս իմ, քան ամենայն համբերէն իմաստունք եւ փիլիսոփայք՝ որ զբարձրութիւնս երկնից նկատիցեն։

Գ. Թէպէտ եւ չկարիցես առնել աղօթս եւ մտածութիւնս առանց մտացն այլուր աղամողելոյ, սակայն արա եւ մատո ինձ։

Լիջիր այր հաճութեան, զպատրաստութիւն սրտի քոյ լուիցէ ունկն իմ։ Լեցին ինձ ընդունելի եւ լումայքն այնոքիկ՝ զորս ըստ քում կարի, ի գանձանակն իմ արկանիցես։

Գիտես, ՝որդեակ, եԹէ զի՞արդ օրհնեցի զայրին՝ որոյ երկուս լումայս եւեԹէր արկեալ. ապա մի կասեցես բնաւ՝ յորժամ միտք քո առանց ինչ քոց կամաց ցնորեալ այսր անդր ասատանդեսցին, այլ զոր միանգամ սկսարն՝ մատո յառաջ, դեգերեաց կամց առաջի իմ, եւ զժամ եւ զժամանակ աղօԹիցն մի՛ ընդ մէջ հատանիցես։

Հաճոյ են ինձ կրԹութիւնք քո՝ յորժամ դու այդպէս քոյովք տառապանօք ինձ ծառայեսցես։

Դ. Արդ մի յուսահատ լինիցիս, այլ անկեալ խոնարհութեամբ յերկիր, ծանիր զանձն առաւելագոյն մխիթարութեան անարժան:

Ասա վստահութեամբ եւ միամտութեամբ. Տէր, ստատիկ իսկ ցաւ է ինձ ընդ այն՝ որ ինչ իմովք յանցանօքն պատահեաց, զի թերեւս պատճառս իսկ մատցն քայքայմանց տուեալ իցեմ:

Բայց որչափ ինչ ի քոց կամաց եկեալ հասանիցէ ի վերայ, ճանաչեմ զարդար եւ զարժանաւոր պատիժ պատուհասի մեղաց իմոց, որ պատժիցէ զյանցանս իմ եւ զանփութութիւնս զանցեալսն եւ զայժմուս:

Յայն սակս իսկ եւ զխաչս զայս եւ զցամաքութիւն եւ զմտացն թափառանս եւ զթարթափանս սրտի իմոյ տառապելոյ՝ մտադիր եւ յօժարութեամբ ի ձեռաց քոց ընդունիմ:

Ե. Ահաւասիկ, սրդեակ, պայման քոյոյ չափոյն պատշաճ եւ յանկաւոր: Ա՛ռ զգիրս եւ կարդա, յայն իբրեւ ի ցուպ յեցեալ ոգի քո՝ դիւրագոյն եւս կայցէ յակաստանի, եւ եթէ մեկնեալ երթայցէ՝ վաղվաղակի այսրէն յեռս դարձցի:

Այս ինքն՝ պատկառ կաց այնմ բարեպաշտ ընթերցուածոյ, եւ յընթեռնուլն՝ յարեաց ի վճիռս իւրաքանչիւր, եւ յեռ

սակաւ ժամանակի լուսաւորեսցին միտք քո եւ գրդռեսցի յօժարութիւն, որոշմալով իմն եւ յեղյեղլով ի միտս զոր ինչ ընթեռնուսն, ոչ եթէ գիտելոյ ինչ կամ ուսանելոյ աղագաւ, այլ նախանձու եւ սիրով առաքինութեան։

Այսպէս ընթերցիր, այսպէս ճաշակեսջիր, այսպէս կերիջիր եւ սնանիցիս։

Բայց զոր ուտեսն՝ որոճեա յաւուրն, նորոգեսջիր զդառասառանս եւ կրկնեսջիր այսրէն զյաւաջադրութիւնս՝ զի հզօրագոյնք լինիցին, եւ զսիրտ քո սրբով քիմն ըղձիւք առաւել քան զառաւել վառեալ բորբոքեսջիր։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Վասն ժամանակի մտաւորութեան աղօթից։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, ընդ առաւօտս կանխեալ խօսեսջիր ընդ իս եւ ես եղէց քեզ օգնական։

Ո՛ քահանայ. կուտեա փայտս ընդ առաւօտս աւուր աւուր, զի այրեսցի եւ հանապազ վառեալ կայցէ հուրն ի վերոյ սեղանոյ իմոյ։

Աղօթք որ այգուցն լինիցին՝ զկաւաար ի բաց փարատեն, եւ զհոգի բանան առաւուածեղէն լուսոյն, զերախայրիս խորհրդոցն եւ գործոց աւուրն՝ նուիրեն ինձ Տեառն բարձրելոյ, որում նախ, եւ յաւաջ քան զամենայն եւ ի վեր իսկ

քան զամենայն ինչ պարտին ծառայել արարածք Համօրէն։

Ո՛ղեակ, եթէ գանձ քո իցեմ ես, ապա յիս իցէ ընդ առաւօտն սիրտ քո։

Բ. Լուր, ո՛ղեակ, լուր եւ զՀեթանոս իսկ։ Մինչ դեռ, ասէին, վարդադոյն յառաջարձակ լոյսն ընդ երկին ծաւալեցի, պարտ եւ պատշաճ է խօսակից ընդ դիան լինել, եւ նախ զառաջինն ընդ Արամազդայ։ Արդ միթէ իմաստուն նուազագոյն իցես դու քան զորդիան խաւարի, որդիդ լուսոյ։

Տես զի արդ արեգակն վաղ քաջ ընդ առաւօտն ծագեալ՝ պատմէ զփառս իմ։ Ո՞չ ապաքէն անամօթագոյն իցք իցեն՝ զի նորա եկեալ դատանիցէ զքեզ դատարկ յանկողնի, եւ յառաջ իսկ քան զքեզ կանխեալ հատանիցէ յիմ արբանեկութիւն։

Ո՛ղեակ, կանխեա նախ քան զարեգակն յօրհնութիւնս քո։ Յառաջ քան զծագել արեւու պարտ էր ժողովրդեան իմոյ ժողովել զմանանայ, զի ի ծագել ճառագայթից արեգականն՝ ջերեալ հալէր։ Նոյնպէս եւ աղօթք անագան՝ չունին ինչ գոյութիւն եւ ազդեցութիւն։

Կանխեսջիր այսուհետեւ քան զժամ յառնելոյ եւ դիջիր զոր ինչ ի մտին դնելոյ իցես։

Գ. Ազատագոյն եւս են առաւօտուց

թեւք աղաւնւոյ. դիւրագոյնս սլասցիս առ իս։

Ակն առաւօտին յատակագոյն է եւ քաջատես. զոր ակնն՝ աշխարհական ինչ տեսլեամբ մթացեալ ոչ նշմարիցէ, նա քաջ տեսանէ։

Ականն առաւօտին սուր եւս է. զոր ինչ ունկնն՝ երկրաւոր աղմկաւն ծանրացեալ՝ ոչ իմանայ, նա լսէ։

Սիրտ այգուն սրբագոյն է եւ կակղագոյն, զորոյ զճաշակ՝ սիրտ սկսեալն փոշւով աշխարհիս շաղախեալ՝ ոչ առնու, նա այնմ զգայ։

Ապա տուր զսիրտ քո առաւօտեալ առիս՝ որ զքեզն արարի, եւ յանդիմանն մեծ վայելչութեան իմոյ պաղատեաց առաւօտուց, եւ ես հոգւով հանճարոյ լցից զքեզ, եւ բիւրեցից ի վերս զանս իմաստութեան իմոյ, աղօթիւք խոստովան եղեցիս ինձ՝ եւ ես ուղղեցից զանարհուրդս քո։

Դ. Եւ զի յորդորագոյն եւ յօժարագոյն գոյիս առ իս այգուս, որդեակ, դիշերի իսկ պատրաստեա զանձն քո։ Զոր ինչ ընդ այգն խորհելոց իցես, մինչ չեւ ի քուն մտեալ՝ ընթերցիր յառաջագոյն, եւ յորժամ զարթիցես՝ անդէն յուշ լեցի քեզ, եւ դիւրագոյն եւս տացես ինձ զսիրտ քո եւ զանդրանիկս մտաց քոց ինձ նուիրեսցես։

Արի փութով, եւ որպէս փափաքէ եղջերու առ վշտին ծարաւոյ յաղբերս ջուրց, այնպէս փափաքեսցէ եւ անձն քո ի պաշտել զիս։ Հոգւով եռացելով անկցիս առաջի իմ, եւ ասացից ցքեզ՝ թէ Ահաւասիկ հասեալ կամ։

Յետոյ ուրեմն կացեալ յանդիման իմ՝ տեսցես եւ զեղուցուս, զարմացիս եւ ընդարձակեսցիս ի սրտի քում։

Երբեմն զամօթի հարեալ շառագունեսցիս վասն իմոյ սրբութեան եւ քոյոյ անօրէնութեան, եւ երբեմն խնարհեսցիս՝ առ գեղեցկութեան իմոյ եւ քո տգեղութեան։

Մերթ զանձն ունայնացուցանիցես վասն մեծութեան իմոյ եւ քոյոյ թշուառութեան, վասն իմոյ բարերարութեան եւ ապախտաւորութեան քո, եւ մերթ բարբառեսցիս արութեամբ՝ վասն քո առ իս վստահութեան։

Մերթ սուր առցես արագ արագ հակառակ թշնամեաց անձին քո, եւ երբեմն հանգիցես ի սէր իմում, եւ ուրախ լիցիս յիս օրհնութեամբ։

Ահաւասիկ, ո՛րդեակ, զի՞արդ մնա կամ այնոցիկ՝ որ ընդ առաւօտս կանխեալ խօսիցին ընդ իս։ Մատիր այսուհետեւ առ իս ընդ այդն ընդ առաւօտն՝ եւ առցես զլոյս։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Վասն այսպէս-ոմանց ամենասուրբ Հաղորդութեան:

Ա. ՈՐԴԵԱԿ, ես եմ Աստուած քո եւ ամենայն ինչ քո: Եւ՝ որ ունիմ ա-թոռ յերկինս, կամ մնամ առ քեզ ի տաճարի իմում յերկրի, զի երբ եւ կա-մեսցիս՝ դացես յիս կեանս եւ ընկալցիս փրկութիւն ի Տեառնէ քումէ: Ոչ նոյն-պէս արարի, որդեակ, ամենայն ազգաց:

Եթէ ի հեռաւորեւ ի բացական դա-ռաւս անհաւատից բնակեալ էիր դու, եւ պատմէր ոք քեզ՝ թէ կայ ուրեք Ժո-ղովուրդ՝ զի Աստուածն ճշմարիտ ընդ նոսա բնակէ, որպէս զի յամենայն իսկ ժամու մարթի իւրաքանչիւր անխափան եւ անարգել առ նա մերձենալ, եւ բե-ռան ի բերան խօսակից ընդ նմա լինել, արդարեւ իսկ աղաղակ բարձեալ դա-չէիր՝ Երանի՜ Ժողովրդեան՝ որոյ այսպէս Տէր Աստուած է նոցա:

Եւ յափշտակեալ մտացդ՝ ասէիր թէ երթայց եւ ես առ այն Ժողովուրդ եւ տեսից զտեսիլն զայն մեծ:

Որպէս սիրելի են յարկք Աստուծոյս այսորիկ. ցանկայ եւ փափաքէ անձն իմ ի դաւիթս նորա. յարեայց եւ երթայց առ նա:

Եւ՛, անձն իմ, յերկրէ քումէ, յազգէ քումէ, եկ եւ տեսցուք զբանն որ եղեւ,

եկ եւ մատուցուք նմա պատարագս ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս։

Բ. Ո՛րդեակ, ահաւասիկ կամ առ դրան քում։ Ոչ եթէ ընդ լերինս կայ քեզ առաջի թռուցեալ անցանել, ոչ գծով հատանել, ոչ զերկիր քո թողուլ եւ ոչ զաղդ քո լքանել, զի այնպիսում երանութեան հաղորդ եւ հաւասարորդ լինիցիս։

Ոչ դրունք ընդդէմ ելանեն, հանապազ եւ յամենայն ժամ կազմ եւ պատրաստ կայ ամենայն. աչք իմ ամբարձեալ են, ականջք իմ ուղղեալ եւ սիրտ իմ բացեալ։

Եկ, համարձակ է քեզ յինէն կուսէ, եկ, ցանկամ տեսանել զքեզ, զի ցընծամ եւ ուրախ լինիմ ես ի քեզ։

Եկ, համբերելով համբերեմ քեզ, զի նայեցայց առ քեզ եւ լուայց աղօթիս քոց։ Եկ առ Տէր քո, եւ տուր նմա զաղօթս քո։

Եկ առ աղբերն կենաց որ բխէ ի կեանս յաւիտենականս եւ տայի քեզ առանց ինչ գնոց գինի եւ կաթն։

Եկ առ նա՝ որ զհաց յանապատի բազմացուցանէ, եւ որպէս ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն քո։

Եկ եւ լցիս զքեզ բարութեամբք, եւ չափ շնորհաց բարուք եւ թաթաղուն եւ շարժուն եւ զեղուն տայ ի գոգս քո։

Գ. Ո՛ՐԴԵԱԿ, թէ մարդ լոկ էիր, ա-
սէիր ցքեզ՝ եթէ եկ եւ պադ երկիր.
քանզի գրեալ է թէ Տեառն Աստուծոյ
քում երկիր պադցես եւ զնա միայն
պաշտեսցես։

Ա՛յլ քահանայ ես, այր Տաճարի, այր
Սրբութեանց, այր Սեղանոյ, այր Ա-
ստուծոյ. քո է ընդ աստիճանս եւ ընդ
սեղանն լալ։

Քո է ի բարկութեան իմում կալ ի
միջի եւ հաշտեցուցանել. քո է վասն
ամենեցուն յանցանաց պաղատել։

Քո է երկնից բուռն լինել զի ցօղես-
ցեն ի վերուստ եւ ամպք տեղասցեն ի
վերայ ժողովրդեան զպատուական շնորհս
պարգեւաց իմոց. քո օրհնել զԱստուած
եւ փառաւոր առնել զՏէր։

Ո՛ որդեակ, ո՛ քահանայ, ո՛ պաշտօ-
նեայդ մեծի Արքայի, միայն թողու-
ցուս զնա։

Ո՛ բարեկամդ փրկչին քո, ունիցի՞ ինչ
դառնութիւն տնակցութիւն նորա կամ
ցաւս հաղորդութիւն կենաց նորա։

Ո՛ աշակերտ, փախչիցի՞ս յաղնուա-
գոյն վարդապետէ քումէ։

Դ. Ո՛վ Տէր, ո՛վ Աստուած, եթէ ար-
ժան իցէ ասել՝ ծախիչ անձին. վա՛յ ինձ,
եթէ այսչափ եւ այսպիսի կայծակամբք
կուտելովք՝ ցրտացեալ դատանիցիմ առ
քեզ եւ չառնուցում յանձն մերձենալ։

Բաբէ. ո՞ դ երբեք ուրեք լուտ այս-
պիսի ինչ։ Ինձ՝ որ չեմ իսկ արժանի ե-
թէ մտից ընդ յարկաւ քով, թողլ տաս
յաղքունիս քո մնանել, նա աւանիկ եւ
յորդորես իսկ եւ ստիպես։

Արարից, Տէր, զկամս քո։ Երթայց,
այլ արարից տեղւոյն՝ ուր եդեալ իցես,
Թագաւոր իմ եւ Աստուած իմ։

Տէր, զի՞արդ կամ ոչպէս մարթ եւ
հնար իցէ ինձ յայնպիսւոյ աստուած-
պաշտութենէ հրաժարել, յորժամ յի-
շեմն զի ամենեքին առհասարակ առ քեզ
ընթանային, մինչ դու յերկրի ատ ե-
րեւեալ ընդ մարդկան շրջէիր։

Յորժամ խորհիմն զի ամենեքին դայ-
ին առ քեզ ի գիւղից գիւղից Գալի-
լեայ, Հրէաստանի եւ Երուսաղեմի։

Յորժամ ընթեռնում զի այնպէս
ամբոխ բազում խռնեալ կայր զքեւ,
մինչեւ հարկ իսկ լինել զառաստաղ
յարկի տանն քակել, եւ ընդ այն զան-
դամալոյծն առաջի քո իջուցանել։

Այո իսկ, Տէր, յամենայն եւ ի բնաւ
երեկոյի եկից ընդ Մարեմայ Մագդաղե-
նացւոյ տեսանել զդերեզմանն, յորում
կենդանի մարդկութիւն քո աստուա-
ծեղէն եւ աստուածութիւն քո մարդ-
կեղէն՝ խնարհութեամբ եւ սիրով հան-
դուցեալ դադարէ։

Անդ անկեալ ի վերայ երեսաց իմոց

երկիր պաղից, պատմեցից ինձէն զանօ-
րէնութիւնս իմ, օրհնեցից զանուն քո
օրհնութեամբ եւ բարձր արարից զքեզ
գովութեամբ, խնդրեցից եւ ընկալայց,
բախեցից եւ բացցի ինձ։

Ի վայրի ասա դալարուոջ հովուեսցես
զիս, Աստուած իմ, եւ ինձ ինչ ոչ պա-
կասեսցէ։

Անդ զճանապարհս արդարութեան
քո ուսայց, անդ ուսայց ոչ երկնչել ի
չարէ, անդ ընդ ցպով եւ ընդ գաւազա-
նաւ քով մխիթարեցայց։

Անդ զօրացայց հակառակ ընդդէմ ա-
մենեցուն որ նեղենն զիս, անդ ողորմու-
թիւն քո շուրջ եղիցի զինեալ, զի զհետ
իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց
իմոց՝ մինչեւ բնակեալ իցեմ ի տան
քում յերկնաւոր ընդ երկայն աւուրս։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Վասն երեխոյեան փնտռելեան։

Ա. ԻՆՉԵՍ զանձն քո, ուրդեակ, զի
մի դատեսցիս։

Ընդ երեկոյս քննեա զվարս քո։ Ցանդ
իսկ եւ հանապազ պատրաստ պարտ է
քեզ լինել. զի յորում ժամու ոչ կար-
ծիցես, գամ ես որդի մարդոյ։

Թերեւս յայսմ գիշերի զոգիդ ի քէն
ի բաց պահանջեցից. տես, միթէ պա-
տրաստ իցէ համար անտեսութեան քո։

Եթէ կայցես կենդանի մինչեւ ի վաղիւ, ի սեղան իմ պարտիս մերձենալ. ասա, իցե՞ս արդեւք տուրբ եւ մաքուր ամենեւին։

Ապա կալ ի ձեռս քո զոգի քո։ Խորհեսջիր հաւատեաւ եթէ զիարդ կայցէ, զինչ ինչ խորհրդով, զինչ ցանկութեամբ եւ զինչ արդեամբք գործեալ իցէ. զինչ հակառակ իմ, զինչ ընդդէմ ընկերին եւ զինչ ինչ հակառակ անձին քո գլխովին։

Ո՞չ աշխարհական փոշւոյն աղտեղեալ պղծեցաւ։ Ի բաց թօթափեսջիր զայն փոշի ցաւովք եւ նորոգ յառաջադրութեամբ։

Եղո՛ւկ քեզ, եթէ եւ մահացու ինչ մեղաք, որ քաւ եւ մի իսկ լիցի, յանդուգնդս խորոց իջեալ իցէ ոգի քո։

Ո՛րդեակ, աշխարեսջիր եւ պիղծ համարեսջիր յայնժամ զմեզս, եւ դիր ի մտի արագ արագ խոստովան լինել եւ ուղղել զանձն, զի արեգակն մի՛ մտցէ ի վերայ յանցանաց քոց եւ մի՛ ես խնդրեցիս վրէժս ի մէջ խաւարի։

Ո՛հ. որչափ՞ք յանկարծահաս մահուամբ յափշտակեալ ելանեն ի կենաց։ Քանիք ողջք եւ առողջք մտին յանկողին, եւ ի նմին իսկ գիշերի իջին ի դժոխս, վասն զի առանց ինչ ասրջանաց ի մահացու մեղս ննջեցին։

Վայ քեզ, եթէ չերկնչիցիս ենջել յայնմ վիճակի՝ յորում մեռանել չիշխիցես։ Ո՛ դիտէ. միթէ քունն այն՝ զոր յայնպիսում մահաբեր վիճակի ենջիցես, ո՞չ իցէ եւ վասն քո սկիզբն յաւիտենական մահուան։

Բ. Այս զարգանայի իմաստութեամբ, հասակաւ եւ շնորհօք ի Հօրէ եւ ի մարդկանէ։

Եւ դու, ուրդեակ, պարտիս զարգանալ օր ըստ օրէ. եթէ ոչ աճեցիս՝ պակասեցիս, եւ զի՞արդ բնաւ մարթայցես զարգանալ, եթէ զպակասութիւնս քո ոչ նկատեցես, ոչ խոկացիս եւ ոչ ածիցես յուղղութիւն։

Դարձ այսուհետեւ ընդ երեկոյս ի սիրտ անդր քո եւ ի խոյզ արկեալ ճշդիւ գտակաւ զանձն քո քննեսջիր։

Զմտաւ ած, տես թէ ուստի գաս, յո՞ երթաս, զի՞արդ կամ ուրպէս կեաս, զինչ գործես եւ զինչ յանձն քո ընդունիս, ուրչափ ինչ հանապազօր զարգանաս կամ թէ նուազեալ գտանիս, որպիսի խորհրդովք առաւելագոյն տագնապիցիս, յորոյ կարեաց փառաման կրիցես, որովք փորձութեամբք սասակագոյնս ի դիւէն ընկիցիս։

Զոյն զայս սուրբք իմ, մինչ դեռ յերկրի ասա կէին, առնէին բազում անդամ, եւ յայն սակս իսկ այնպէս

յառաջադէմ յառաքինութիւնս նկրտէին։

Հանապազ զիւրեանց թերութիւնս ի քնին արկեալ եւ նկատեալ, օր բան օրէ ուղղէին զայնս եւ նուազեցուցանէին։

Որչափ եւ յաճախագոյնս անկանէին առ տկարութեան, նոյնչափ եւ արագ արագ վաղվաղակի պատապարեալ յառնէին, եւ եւս իմն արութեամբ ի մարտ պատերազմի զանձինս պատրաստէին եւ պնդագոյնս ժառէին յինքն զօրաւիգն օգնականութեան։

Այսպէս թէպէտ եւ արդարքք իսկ էին, այլ արդարագոյն եւս լինէին, եւ մինչ սուրբք էին՝ առաւելոյին տակաւ ի սրբութեան, ուստի եւ յորժամ թեթեւ իմն գթէին՝ խթան առաքինութեան լինէր այն նոցա մանաւանդ եւ ոչ խոչ կամ խութ կատարելութեան։

Ըստ նմին նմանութեան արասցիր եւ դու, ո՛րդեակ, յորժամ ամենայն ինչ գաղարեալ լուիցէ եւ յաղմկոյ գործոց ազատ եւ թափուր միոքն իցեն, աւել ածեալ մտքրեա զՀոգի քո։

Գ. Տէր, յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան, եգիր զսան իմ ի պաշարման, պահեցեր զամենայն զգործս իմ եւ յարմատս ոտից իմոց Հատեր։

Առաքեա զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, ծանեայց զիս՝ որպէս եւ դու

իսկ ճանաչես զիս, եւ ծանուցեալ զիս՝ հանապազօր կշտամբեցիր զիս եւ ուղղեցիր։

Մինչեւ լիեալ անբիծ ի ճանապարհի՝ որչափ եւ տկարութիւն իմ բաւել կարիցէ, եղէց կատարեալ, որպէս եւ Հայր իմ երկնաւոր կատարեալ է։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Վասն սոսման ի՝ ընթերցողաց։

Ա. Մուտ դիր, սրդեակ, ընթերցուածոց եւ վարդապետութեան։ Զոր օրինակ հաւ ի թռչել արարաւ եւ մարդ յաշխատել, այնպէս եւ դու որ քահանայդ ես՝ յուսումն եւ յաստուածպաշտութիւն։

Համարիցի՞ս արդեւք եթէ յամրի եւ յապահովս իցես, յորժամ յետ զկանոնական պաշտամունս կատարելոյ եւ զմտաւորական աղօթս ի դլուխ հանելոյ եւ զպատարագն մատուցանելոյ՝ զմընացեալ ժամանակն ի դատարկութիւն, ի թափառանս եւ յիրս մեռոիս եւ ընդունայնս ծախիցես։

Ոչ այդպէս, սրդեակ, ոչ այդպէս. շրթունք քո զգուշացին գիտութեան, եւ եթէ դու զգիտութիւն մերժեացես՝ մերժեցիր եւ ես զքեզ։

Ժամ եւ ժամանակ եառ քեզ, իբր ոչ եթէ զի կորուսցես, այլ զի հատուցես ինձ զայն տոկոսեաւք ի դատա-

սատանի։ Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանիցես զյետին նաքարակիսն։

Բ. Լուր արդ, որդեակ, եւ խոնարհեցո զունկն քո, եւ մուտս զժողովուրդ քո եւ զտուն հօր քո։

Ա՛ռ ընկալ զուսումն վարդապետութեան իբրեւ զայն որ վարէ եւ սերմանէ, մատիր առ նա եւ ժողովեա քեզ զպարտուղս նորա բարիս։

Զօրէնս ի քումմէ բերանոյ խնդրեսցէն, ապա զօրէնս իմ եւ զամենայն դիրս օգտակարս ի վարդապետութիւն յեղեալ ղեսջիր, եւ զբանս իմ ճաշակեսջիր։

Պարտ եւ արժան է քեզ զհակառակորդս ճշմարտութեան կշտամբեալ յանդիմանել, ապա ուսիր զկարթուղիկէ ճշմարտութիւնս եւ զպատասխանատուութիւնս։

Պարտիս պաշտաման բանին հպատակ լինել եւ միտ դնել մխիթարութեան, ապա հարց զաւագս, քննեա զլրոյցս երիցանց իմաստնոց եւ յառակս նոցա զբաղնուցուս։

Զմեղս պարտ է քեզ արձակել կամ կապել եւ զհոգեւորական խօթութիւնս բուժել, ապա խնդրեա իմաստութիւն յիմաստնոց եւ խորհուրդ ի խորհրդականաց՝ որոց զնորինս եւ զդաղանիս յայտնեցի։

Ուսիր զի իբրեւ յինէն եւ ոչ եթէ իբրեւ ի քէն զգուշացուսցես զոչխարս իմ։

Ուսիր զի իբրեւ գայլն գայցէ եւ ցրուել եւ յափշտակել զոչխարսն կամիցի, մի՛ լիցիս դու իբրեւ շուն համբացեալ՝ որ ոչ կարիցէ հաջել։

Ուսիր զի մի՝ մինչ առաջնորդն լինիս կուրին, եւ դու կոյր իցես եւ ընդ նմա ի խորխորատ անկանիցիս։

Ուսիր զի օրինաց Պատարագի եւ կարգաց Խորհրդոցն պաշտամանց քաջ տեղեակ լիցիս։

Ուսիր. եւ զի՞ իսկ կայ քո եւ առաքելաց։ Ոչ եթէ վասն այնորիկ ինչ առեր զսպասաւորութիւնդ զի մարդկան արբանեկեսցես՝ այլ սեղանոյն Քրիստոսի։

Տես այսուհետեւ զի զայն ժամանակս՝ յորս աղատ յեկեղեցւոյ լինիցիս՝ յընթերցուածս ծախեսցես։

Գ. Գիտութիւն որ ի ձեռն բարեպաշտն ընթերցուածոց եւ նուիրական ուսմամբ լինի ստացեալ՝ գանձ անսպառ է, եւ որ վարեցանն այնու՝ հաղորդք եւ կցորդք աստուածեղէն բարեկամութեանն եղեն։

Տես զՊաւղոս, հայեաց յԱմբրոսիոս, տես եւ զԹովմաս, զԲեդա եւ զայլս եւս բազումս, որպէս ուսման եւ ընթերցուածոյ պատկառ կային անհանդիստ։

Ո՛ քահանայ, եթէ առանց գրոց, առանց ուսման եւ ընթերցուածոյ կայցես եւ մնասցես՝ ես իսկ արդարեւ նման զինուորի՝ որ զէն չգուցէ, նման ձիոյ՝ որ առանց սանձի իցէ, նաւ առանց զեկի, դպիր առանց գրչի, թռչուն առանց թեւոց, կոյր առանց առաջնորդի։

Դ. Ինդրեա եւ վասն քո իսկ անձին, որդեակ, զգիտութիւն սրբոցն եւ զգիտութիւն փրկութեան, լեր ի խնդիր կատարելութեան՝ որ կարի կարեւորն է քեզ. զայս ամենայն գտցես դու ի հանապազորդ ընթերցուածս բարեպաշտութեան։

Անդ գտցէ ճարակ ոգի քո, անդ նորոգեաս խթանօք օր ըստ օրէ դրդեալ յորդորեսցի ի գործս ազգի ազգի բարութեանց։

Մի հարեւանցի իմն բազում ինչ ընթեռնուցուս, այլ սակաւս ուշ ի կուրծս։

Յորժամ ընթեռնուսն՝ զուղեղ ընթերցուածոյն ի սրտի քում մթերեալ պահեսջիր, զի այսրէն յեղյեղեալ ի միտս որոճեսցի, եւ որոճելովն՝ որ ինչ զաղիր իցէ քո՝ ուղղեալ յարդարեսցէ, եւ որ գեղեցիկ ինչ՝ առաւելագոյն եւս պճնեալ զարդարեսցէ։

Ե. Կամիս, որդեակ, կամիս բազում ինչ շահել։ Կամիս վառեալ բորբոքել ի սէր առաքինութեան։ Կամիցիս սաս-

տկագոյնս եւս յատուածպաշտութիւն նկրտել. ընթերցիր զվարս Հարցն քոց՝ զորբոց քահանայապետից եւ զքահանայից։

Հայեցեալ յօրինակս եւ յելս գնացից նոցա՝ նմանող լիցիս հաւատոցն։ Իբրեւ զի զօրաւոր են օրինակք, արդարեւ իսկ հզօրագոյն եւս քան զպատուիրանս են։

Զարմացիս եւ ասացես՝ եւ ոչ մարդիկ էին իբրեւ զիս, տկարք իբրեւ զիս, եւ միտագոյնք ի խնամս չարին իբրեւ զիս։ Այլ արդ աւասիկ զի՞արդ համարեցան ընդ որդիսն Աստուծոյ եւ ընդ սուրբս է վիճակ նոցա։ Զիցե՞մ եւ ես ձեռնհաս զոր ոչքայն գործեցին՝ վճարել։

Եկ անձն իմ եւ գնասցուք ընդ նոսա ի շաւիղս Ցեառն, զի ընդ նոսա ելցուք ի տուն Աստուծոյ Յակոբայ։

Այսպէս խոկալ զորբոցն վարս՝ զի՞գնատիս շնորհաց կցորդ արար, զկողմանս բանս ած ի սրբութիւն եւ զանթիւ զանհամար մարդիկ դարձոյց եւ տարաւ յերկինս։

Զ. Ընթերցիր, որդեակ, ընթեռնուլն՝ եթէ ոգէտ իցես՝ ուսուցէ զքեզ, եթէ դատարկ իցես՝ կշտամբեսցէ, եթէ թմբրեալ՝ սթափեցուսցէ, եթէ նքնչեալ՝ զարթուսցէ։

Եթէ մոլորեալ իցես՝ յուղղութիւն

ածիցէ, եթէ սայթաքեսցիս՝ կանգնեսցէ, եթէ ծիծաղեսցիս վայրապար՝ խուճապեցուսցէ երկիւղիւ, թէ ազայցես՝ միսիթար լինիցի, թէ խոնարհ իցես՝ գովեսցէ զքեզ, եթէ հպարտացեալ ամպարհաւաճեսցիս՝ դարմանեսցէ։

Տկար իցես՝ զօրացուսցէ զքեզ, յանձնապաստան՝ ի կոր կործանեսցէ, խռովեալ իցես՝ հանդարտեցուսցէ, տրխրեալ՝ զուարթ արասցէ, ժանտագործ՝ դատապարտեսցէ, աստուածապաշտ իցես՝ արդարացուսցէ։

Է. Խոնարհեցո զսիրտ իմ, Աստուած, ի վկայութիւնս քո եւ մի յաղտութիւն, դարձո զաչս իմ զի մի տեսից զնանրութիւն։

Արա զի սատակիկ զբանս քո սիրելով՝ քննեցից զայն բոլորով սրտիւ, զի եղիցին ճրագ ոտից եւ լոյս շաւղաց իմոց։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Վասն զոհութեան Գէրս ընթերանոյ։

Ա. ԿԱՄԻՆ, որդեակ, ուսանել զիմաստութիւն եւ զկրաւ։ Կամին ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ եւ ուղղել զիրաւունս։ Կամին ստանալ զխորագիտութիւն եւ զհանճար։

Կամին իմաստունդ իմաստնագոյն լինել։ Կամին հանճարեղդ զաւաշնորդու-

թիւն ստանալ եւ քան զծերս իմաստուն լինել։

Խոնարհեցո զսիրտ քո ճանաչել զԳիրս սուրբս, առաւել քան զդանձս քննեա զնա եւ իբրեւ զարծաթ ընտիր խնդրեա զնա։

Ի սակաւ ժամանակի մեծացիս եւ տեսցես զի լաւ է դիտութիւն Գրոց՝ քան զդանձս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ թէ պատուականագոյն է նա քան զամենայն պատուական, եւ ամենայն ինչ որ պատուական է՝ չարժէ զնա։

Ո՛ղեակ, անսա այսուհետեւ նորա իմաստութեան եւ նորա բանից մատո զունկն քո, եւ մի պակասեցին յաչաց քոց։

Ասա ցսուրբ Գիրս՝ թէ քոյր իմ ես դու։ Բարեկամ քո կարդա զնա։

Բ. Նա Հայր քո եւ դու իմ որդի։ Ո՛ղեակ, եթէ դու լաւ որդի իցես, եթէ իցեմ ես քեզ Հայր սիրելի, ապա քէն պարտ եւ պատշաճ է քեզ զիմ կցորդութիւն խնդրել եւ իմոց բանից ցանկանալ։

Ապա եկ ի մենութիւն Գրոց սրբոց։ անդ խօսեցայց, ո՛ղեակ, անդ ընդ մարդկան լինիմ խօսակից։

Ոչ այնպիսի ինչ ահագին կերպարանք՝ որով եղու Հրէից զպատուիրանս իմ ի լերինն Սինայի, այլ մեծաւ մեղ-

մական զգօնութեամբ, որպէս մանկուցն ի ձեռն Որդւոյ իմոյ զիրկս արկանէի։

Արդ ճեպեա փութա զու առ իս ի-բրեւ զմի ի փոքրկանցն յայնցանէ, եւ եթէ ոչ զերեսս իմ տեսանիցես, առ-կայն զոնեայ զկարասս իմ լուիցես։

Եւ Տէր քո եւ զու ծառայ իմ, ի Գիրս իմ կարդեալ եղի զպատուիրանս՝ զոր եառս քեզ։

Եւ պատուիրեցի քեզ զի խօսեսցիս նոքօք ի նստել ի տան եւ ի գնալ ի ճանապարհի եւ ի ննջել եւ ի յառնել։

Պահեա զպատուիրանն, ո՛րդեակ, ընթերցիր զոր ինչ գրեցանն, զի ի քո վարդապետութիւն գրեցան։

Դ. Եւ թագաւոր Համօրէն տիեզերաց, զու պաշտօնեայ իմ, յայն իսկ առանձինն կարդեալ զի զբանս պատգամաց՝ զոր ես եառ քեզ ի Գիրս սուրբս՝ ծանուցես մարդկան, զի ուսուցես նոցա պահել զպատուիրանս զոր պատուիրեցի, զի ըստ օրինաց իմոց դատեսցիս զնոսա։

Ապա բաժին քո է, ո՛րդեակ, զիտել զԳիրս իմ։ Դա բարի է բերանոյ քո, նա ոսկի եւ արծաթ վիճակի քո։

Ե. Ընթերցիր զայն, ո՛րդեակ, եւ ոչ մեղիցես, եւ յամենայն ճանապարհաց չարաց արգելցես զոտս քո, զի նա տացէ քեզ յիշել զվախճան քո։

Ընթերցիր զայն, եւ ընթացցիս ի ճանապարհս պատուիրանաց իմոց, զի լիցի նա քեզ ճրագ ոտից քոց եւ լոյս շաւղաց քոց։

Ընթերցիր զայն, եւ անձն քո լիցի ի ձեռս քո յամենայն ժամ, զի զօրէնս իմ ոչ մոռացցիս։

Ընթերցիր զայն եւ բարի եղիցի քեզ, զի վկայութիւնք իմ ցնծութիւն են սրտի։

Ընթերցիր զայն եւ խոնարհեցուսցէ զսիրտ քո՝ ընդ ամենայն աստուածպաշտութեամբ զպաշտօն քո վասն յաւիտենականն հատուցման, զոր քեզն խոստանայ։

Ընթերցիր զայն, եւ ի հրապարակախօսութիւնս քո լիցին բանք քո քաղցր քան զմեղր, ձայն քո իբրեւ զձայն իմ, զօրութեամբ եւ մեծվայելչութեամբ փշրեսցէ զմայրս ախտից չարեաց, շարժեսցէ զանապատս եւ զանձինս ամպարշտաց խռովեցուսցէ։

Իսկ զանձինս հաւատացելոց առաւել եւս հանդերձեալ պատրաստեսցէ եւ յառաւելագոյն կատարելութիւն ածիցէ։

Ընթերցիր զԳիրս սուրբս, եւ ի դատաստանս քո յիրաւանց իմոց ոչ խոտորեսցիս, զի զօրէնս իմ առաջի աչաց ունիցիս հանապազ։

Զ. Ապա եթէ յուսումն նուիրական Գրոց ոչ պարապեսցիս, որդեակ, որ-պէս հէր եւ աղքատ եւ կոյր մնասցես։

Հէր այնու՝ զի պարտ եւ պատշաճ է քեզ ի ձեռն սրբոյ պաշտամանն տալ պա-տերազմ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խա-ւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութեան որ ի ներքոյ երկնից, եւ սակայն զսպա-ռազինութիւնն Աստուծոյ ոչ ունիցիս առ ի դիմի հարկանել։

Ոչ ունիցիս զմէջս քո պնդեալ ճշմար-տութեամբ իմով, ոչ զղջահս արդարու-թեան, եւ ոչ զոտս ազուցեալս, եւ ոչ զվահանն հաւատոց՝ առ ի վնեաս մուխս չարին շիջուցանել, եւ ոչ զսաղաւարտն փրկութեան եւ ոչ իսկ զսուսեր հոգւոյն։

Լիցիս եւ աղքատ, վասն զի մինչ այ-լոց պարտ էր քեզ բրդել հաց, անդամ եւ վասն քո իսկ անձին ոչ ունիցիս զհացն կարեւոր։

Կացցես եւ կոյր, քանզի Գիրքն տուրքն լոյս են մարդկան, եւ առանց այնց Գրոց՝ ամենայն քահանայ ի խաւարի մնասցէ։

Եւ յորժամ քարոզեսցէ՝ զհողմն կո-ծիցէ, զլսելիս մարմնոյ ցունիցէ, պատ-մեսցէ առասպելս, իբրեւ յանեղեն իւր-մէ խօսեսցի եւ ոչ եթէ իբրեւ յինէն։

Եւ յորժամ կացեալ յատենի դատ արասցէ՝ առանց ինչ իրաւանց եւ ա-

ռանց արդարութեան դատեցի. կոյր կուրի առաջնորդեցէ եւ ընդ նմա ի խորխորատ անկանիցի։

Է. Գիտեմ, Տէր, զի եթէ ոչ օրէնք քո խօսք իմ իցեն, կորեայց ի խոնարհութեան իմում։

Գիտեմ, զի առանց հանապազորդ զայնս ընթեռնլոյ, շմարթի ինձ առաւուածապաշտ կամ իմաստուն եւ կամ թէ բաւականն ուսեալ լինել։

Քննեցիր այսուհետեւ զվկայութիւնս քո զքանչելիս, քննեցիր զնոսա հանապազօր, քննեցիր առանց դադարելոյ։

Զօր ամենայն մատեայց յայն իջաւան մտաց իմոց, զի կերայց ի նմա զբանս քո։

Զճշմարտութիւն խնդրեցիր անդ եւ ոչ զճարտարապետութիւն, զօգուտ եւ ոչ զնրբութիւն։

Ընթերցայց երկիւղածութեամբ, ընթերցայց խոնարհութեամբ, ընթերցայց միամտութեամբ, ընթերցայց հաւատարմութեամբ։

Իմաստուն արա զիս, Տէր, զի ի միտ առիս զբանս քո, երեւեցո զերեսս քո յիս եւ ուսո ինձ ինքնին զարդարութիւնս քո։

Քանզի գիտել գիտեմ զի գեղեցիկս ճառեն գիրք քո, այլ եթէ դու լուս կայցես՝ ոչ զմիտս լուսաւորեսցեն եւ ոչ զսիրտս վառեալ բորբոքեսցեն։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Վասն ասպուսաֆիլէն պաշտման։

Ա. ՕՐՀՆԵԱ քահանայ Տեառն զՏէր, օրհնեա ծառայ Տեառն զՏէր։ Կայ յաղօթս հոգւով, կայ յաղօթս եւ մտօք, ասղմնս ասա հոգւով, ասղմնս ասա եւ մտօք։

Տես մի դուցէ մինչ շրթամբք պատուեսցես զիս, սիրտ քո հեռացեալ մեկուսի իցէ յինէն, տես զի մի յերկարեալ զաղօթսդ՝ վասն այնորիկ աւելի դատաստան ընկալցիս։

Սուրբ, Սուրբ, Սուրբ եմ, ես Տէր Աստուած զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառաւք իմովք։

Ովսաննա ի բարձունս աղաղակեն առ իս Հրեշտակք, եւ դու, սրդեակ, ասասցես ինձ ովսաննա յերկրի։ Իբրեւ զի մեծ եւ սուրբ եւ ասստուածեղէն պաշտօն է քո։

Հատո զոր պարտիսն, մի եւ զփոքրիկ իսկ մասամբ այնր պարտեայ զանց արարեալ անցանիցես, հատո որպէս զիարդ պարտիսդ, ի դէպ ժամանակի, ըստ պաշտաճի, մտադիւր եւ եռանդմամբ կատարեսջիր զպարտիս քո սուրբ, զգոյշ լեր զի մի հարեւանցի եւ վարկպարագի արասցես։

Բ. Հոգի յօժար է, սրդեակ, բայց մարմին տկար։ Ապա մինչ չեւ յաղօթս

կացեալ էր՝ պատրաստեա զանձն քո, եւ մի լինիր իբրեւ զմարդ՝ որ փորձիցէ զՏէր։

Մտաց քոց՝ որ ընդ ազգի ազգի իրս թարթափել սովորեալ էր՝ դիջիր սանձ մտածութեամբ ինչ իւիք։

Զսիրտ քո յերկրաւորաց աստի առ երկնաւորսն, յարտաքնոցն առ ներքինս, առ իս իսկ ուղղեսջիր։

Հայեաց ընդ քնարահարսն՝ զի մինչ չեւ հարեալ էին, յառաջագոյն զլարս նուագարանացն յարդարեալ պատրաստեն, ապա թէ ոչ՝ խառնաձայն ինչ եւ շփոթ բարբառս արձակիցեն։

Ըստ նմին օրինակի եւ դու զմիտս քո կարգեալ յարդարեսջիր։ Ասա ցխորհուրդս քո ունտիս եւ օտարս, մնացէք ասա՝ մինչեւ յաղօթս կացից. յետ զգործսն Աստուծոյ կատարելոյ, եթէ կարօտ ինչ ձեւք լինիցիմ՝ այսրէն միւսանգամ առիս զձեզ։

Ասա ցիրգս քո. եկայք ցնծասցուք ի Տէր, եկայք աղաղակեսցուք առ Աստուածփրկիչ մեր, եկայք երկիրպագցուք։

Գ. Հայեաց յիս որ մօտ իսկ կամ, եւ առաջի աչաց իմոց՝ որ զխորս սրտի քննեն, զպաշտօն քո կատարեա, որպէս ծառայ առաջի աչաց Տեառն իւրոյ, եւ որպէս աղախին առաջի աչաց տիկնոջ իւրոյ։

Ցիշեա, զի Տէր խիստ եմ, անէծս կարդամ այնմ՝ որ գործէ զգործ իմ հեղգութեամբ։

Հայեաց տես որպիսի ինչ մեծարանաք գնայցեն պաշտօնեայքն ընդ իւրեանց թագաւորսն։

Եւ ես, որդեակ, թագաւոր եմ թագաւորաց, Տէր տերանց, եւ գու՝ յորժամ զաստուածեղէն պաշտօնն կատարես, ընդ իս՝ իբրեւ պաշտօնեայ իմ եւ միջնորդ մարդկան, զծանուցեալ քան զամենայն իրաց խօսիս, զհողութենէ մեղաց, զոգւոյն արդարութենէ, զշնորհաց, զփրկութենէ եւ զփառաց յաւիտենականաց։

Իսկ արդ իշխիցես գու յայնչափ եւ յայնպիսի սուրբ գործս՝ յայլ ինչ իրս զքո միտս զբաղուցանել, զայնպիսի մեծամեծ իրաց երգաւոր բանիւք, ծայրիւ շրթանց եւ զաչագ այսր անդր յանձելով ճառել, ուր հրեշտակքն օրհնեն, պետութիւնք երկիր պագանեն եւ սարսեն իշխանութիւնք։

Երկիր, որդեակ, յարդարութենէ իմմէ, զողա յերեսաց իմոց։ Օրհնան՝ անպատիժ զք չկարէ թշնամանել, տպա սառել եւս զԱստուած։

Դ. Գիտեմ իսկ զի զոր օրինակ տեսրեւ որ ի հողմոյ շարժիցի, այսպէս եւ միաք մարդոյ ի թեթեւ ինչ հնչոյ դիւ-

բաւ իմն քայքայի եւ այլայլի ի մոռ-
գրութենէ եւ յաճեալ թափառի, ե-
թէ ոչ այսրէն միւսանգամ ամփոփեսցի
զգուշութեամբ։

Վասն սորին իսկ այսորիկ, ուրդեակ,
պարտ եւ պատշաճ է քեզ արթուն կալ
յաղօթս եւ երբեք երբեք դրդեալ զար-
թուցանել զքեզ։

Միտ դիր այսուհետեւ, որչափ ինչ
ձեռնհաս իցես, մոռց եւ դիտաւորու-
թեան բանիցն, զի յորդորեսցիս զհամ
առնուլ եւ զճաշակ։

Զփառս Երրորդութեան ի կատարա-
ծի Սաղմոսացն ասա յամենայն զօրու-
թենէ մոռց, որով եւ ամփոփեսցին իմն
միտքն եւ նորոգեսցին եւ առաւել եւս
վառեալ բորբոքեսցին։

Յուշ լեցի քեզ զի զդործ Հրեշտա-
կաց վճարես, եւ այնպէս իսկ հասատա-
տեալ դիջիր ի մտի, եթէ ընդ նոսա
իսկ առաջի աթոռոյ իմոյ կայցես, եւ
ընդ նոսա երկիր պագ, օրհնեա, փա-
ռաւոր արա եւ սիրեաջիր։

Նկարեաջիր իմն ի միտս այնպէս՝ եթէ
ընդ իս յաղօթս կացցես ի պարտիզին
ձիթենեաց, եւ եթէ ի թմբրութիւն
ինչ հասանիցէ մոռց քոց անկանել,
լուր զիս՝ թէ ոչ կարացեր, ուրդեակ,
ժամ մի արթուն կալ ընդ իս, արթուն
կաց եւ աղօթս արա։

Ե. Տէր, որ եւ ոչ իսկ կարեմ ասել Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով, իսկ զի՞արդ մարթ իցէ ինձ առանց քոց շնորհաց կալ յաղօթս։

Արդ ուստ ինձ աղօթս առնել, դու իսկ ինքնին բաց զշրթունս իմ եւ բերան իմ երգեցէ զօրհնութիւն քո։

Առաքեա զՀոգի քո, զՀոգի աղօթից եւ խնդրուածոց, զի մի եղէց առաջի քո իբրեւ զպղինձ որ հնչէ եւ իբրեւ զծնծղայս որ զաւազանջեն։

Տէր, կամիս եւ հրամայես զի օրհնեսցէ զքեզ անձն իմ եւ ապրիցի քեզ մինչեւ եմ ես։ Տուր ինձ զոր հրամայես, եւ հրամայեա զոր կամիս։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Վասն հաստատեալոց պաշտամանց։

Ա. Երկի՛ր, սրդեակ, ի սրբութեանց իմոց, տեսցէ զքեզ յերկիւղի ժողովուրդ իմ, եւ երկիցէ եւ ինքն։

Իմ է սրբութիւնդ, սրդեակ, եւ ոչ եթէ քո։ Դու իսկ բազմիս անդէն դահերէց երեւելի տեղեամբ, այլ ես արդեամբք։

Դու ես անդ քահանայ եւ հովիւ ի վերայ ժողովրդեան, սակայն եւ այնպէս փոշի եւ կաւ ես յաչս իմ։

Ունել ունիս դու իրաւունս մատնելոյ Յեւ մատչելոյ, այլ չես արժանի այնպի-

սում պաշտաման, եւ թերեւս եւ քան զոչխարս եւս քո անարժանագոյն։

Ահագին է վայրդ այդ, ո՛րդեակ, տուն Աստուծոյ է, եւ դուռն երկնից։ Ապա երկիր դու ի մտանելդ քում եւ ակելք քո ահիւ սասանեսցին։

Բ. Տես որպիսի սէր շնորհեցի քեզ, զի քահանայ իմ անուանեսցիս եւ իցես։

Մեծ մեծ եւ բարձրական պատիւ քո, ո՛րդեակ, սակայն ոչ եթէ նա ինչ սրբեսցէ զքեզ, այլ քեզ արժան է զայն սրբել։

Պատուեա այսուհետեւ զպաշտօն քո, պահեա զպատուիրանս եւ զկարգս՝ զոր ես պատուիրեցի քեզ զի արասցես։ Յոլո՛վ մի կամ նշանախեց մի ոչ անցցէ, մինչեւ ամենայն եղիցի։

Մինչ պատարագ մատուցանիցես, յորժամ զաստուածեղէն պաշտամունսն կատարեսցես, յորժամ զխորհուրդս մատակարարեսցես՝ տեսցէ եւ գքանչասցի ժողովուրդն ընդ մեծարանս քո եւ ընդ պարկեշտութիւն ի պաշտաման իմում, եւ այնու իմն յաստուածպաշտութիւն յորդորեսցի։

Ոչ ինչ ի դիրս, ի շարժմունս, ի գնացս եւ ի ձայնս երեւեսցի, որ պարկեշտութեամբ, ծանրութեամբ, խոնարհութեամբ, վայելչութեամբ եւ երկիւղածութեամբ չիցէ լցեալ։

Ի յաւելուածոյ որբականն մնայ՝ ամենայն ինչ յարտաքին կերպարանս մարմնոյ ուղղեալ յարդարին։

Երանի՛ թէ զսրբութիւն Յովհաննու Մկրտչի ունէիր։ Իցէ՛ թէ տեսանէր ժողովուրդն զերեսս քո իբրեւ զերեսս հրեշտակի, որպէս կանխաւ իսկ յառաջագոյն եղեալ ի Ստեփանոս։ Զի արդ յայնժամ զխորհուրդս իմ մեծարէր եւ պաշտէր։

Գ. Ա՛յլ դո՛ւք, քահանա՛յք անկարդք, որ զսեղան իմ անարդէք եւ զսրբութիւն իմ, որ յանդուգն դիմք, աչայն թեթեւութեամբ, ամբարտաւան գնացիք, անփութութեամբ կարգացն պաշտամանց եւ երագ երագ զպատարագն մատուցանելով՝ զժողովուրդ իմ գայթակղեցուցանէք, մինչեւ յո՛րբ անպատուիցէք զիս։

Մինչեւ յո՛րբ զհաւատս եւ զպատուածպաշտութիւն ժողովրդեան իմոյ առ ոտն հարեալ կոխիցէք։ Մինչեւ յո՛րբ գոչեսցեն եւ աղաղակեսցեն ոչխարքն իմ ի սրտմտութեան իւրեանց՝ թէ ո՛ւր իցէ Աստուած նոցա։

Իսկ արդ միթէ մարթ ինչ իցէ հաւատալ, թէ ի վերայ սեղանոյ նոցա իջանիցէ նա. իցէ՞ հնար կարծել՝ թէ զնոսա որ զտաճար իւր ապականիցեն՝ ոչ ապականեսցէ։

Ընկճեա զանօրէնան զայնոսիկ պարշապան իմ Տէր։ Եկեսցեն ի վերայ նոցա անէծքն որ ի վերայ Նաբադայ եւ Աբիուդայ հասին։

Ելցէ հուր ի խորանէ քումէ վկայութեան եւ կերիցէ զնոսա, եւ մեռցին առաջի քո։ Մերժեն զհաւատս առ իւրեանց կենդանութեամբն, հատատեսցեն զհաւատս ի մեռանել իւրեանց։

ԳԼՈՒԽ Խ.

Վասն հոգեբարձութեան եկեղեցեաց եւ ուղղութեան։

Ա. ՆԱԽԱՆՁ տան Հօր իմոյ ուտէ զիս, զի սիրեմ զնա. եթէ եւ դու սիրես զիս, ուրդեակ, սիրեա զվայելչութիւն տան իմոյ։

Հայեաց թէ ուրպէս մարդիկ անճնասէրք՝ հոգ յանձին ունին վասն տանց իւրեանց, վասն սեղանոց, վասն սենեկաց, վասն մահճաց եւ վասն հանդերձից։

Հայեաց որպիսի ինչ շքեղութիւն եւ զարդ վայելչութեան ի տունս տունս իցեն, որպիսի ինչ մաքրութիւն եւ հանդերձանք ի սեղանս, որպիսի մեծատպատ փառաւորութիւն ի սենեակս, ի մահիճս եւ ի հանդերձս։

Հայեաց թէ զի՞արդ մարք խնամ տանին որդւոց իւրեանց՝ զի մաքուրք յամենայնի իցեն եւ փայլեալք։

Եւ դու, որդեակ, առնուցուս յանձն զի կացցէ մնասցէ տուն սիրելւոյ քո անմոքուր, խախուտ եւ խարխուլ, եղծ զեղծ իբրեւ այր աւազակաց:

Եւ դու ժուժացես զի սեղան իմ, առատատ փեսայի անձին քո, աթոռ Աբեսալի քո, բազին՝ յորում Հանապազօր Գառնն անմեղ փսան քո մատչի զոհ, իցէ աղտեղի եւ ցնցոտեաք դրուագեալ:

Եւ դու Հանդուրժեսցես լինել անոթոց Սրբութեանն ազատով, փոշով եւ ժանգով ծածկեալ:

Ամաչեսցեն եւ զամօթի Հարցին այնպիսիքն՝ որ զայսպիսեաց անփոյթ արարեալ թողուցուն:

Ո՛վ ազգ անՀաւատ. մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ. մինչեւ ցե՞րբ անասցեմ ձեզ:

Բ. Լաս եմ Աստուած, եւ չիք այլ զբաց յինէն: Ա՛ռ սեր իշի ես առ մարդիկ, զի շրջեսցայց եւ կենակից նոցա եղէց, զի բժշկեցից, օգնեցից նոցա եւ զամենայն զտուրս իմ առատապէս մատակարարեցից. այլ նոքա դարմեալ անարդեցին զիս, եղէ ես առաջի նոցա իբրեւ աղքատ եւ անտանկ:

Դատ արա, որդեակ, ընդ իս եւ ընդ նոսա: Զի՞նչ ինչ առնել էր ինձ նոցա՝ եւ ես ոչ արարի: Զի՞նչ իցէ զոր պար-

տիցիմ առնել՝ եւ ոչ առնիցեմ։ Այլ նոքա մոռանան զիս եւ ոչ ճանաչեն եւ անարգեն։

Նոքա մարդիկ հաւատարք իմ, առաջնորդք իմ եւ ծանօթք իմ, որ ընդ իս ի նոյն կերակուր քաղցրանան. նա աւանիկ՝ յիմարեցարուք երկինք վասն այսորիկ, եւ սոսկացէք յոյժ, եղէ ես առաջի նոցա երբեմն որդն եւ ոչ մարդ, նախատինք մարդկան եւ արհամարհանք ժողովրդոց։

Զհաց իմ ոչ հոգացան քահանայք իմ, եւ ապականեցան, եռաց ի նոսա որդն եւ եղէն նողկ, եւ ես սոսկալ մեկնեցայ։

Տես, ո՛րդեակ, եթէ իցէ՞ն երբեք նախատինք ըստ նախատանաց լիեալ. զայս ամենայն կրեցի ի տան սիրելեաց իմոց։

Գ. Ո՛րդեակ. լաւագոյնս եւ աղնուագոյնս ի քէն ակն ունիմ. լեցիս դու առ իս հաւատարիմ, երկիւղած եւ շնորհակալ առաւել քան զնոսա։

Ուշ դիր հաւատեաւ տան իմում, որբեա ի բաց պարդեա զաղտեղութիւնս նորա, փոյթ յանձին կալ նորոգել զաւերս նորա, զարդուց նորա՝ որչափ ինչ ի կարի քում իցէ՝ խնամ տարջիր։ Զսեղանս իմ հոգացիս, Ջանասցիս խնամել եւ տեսանել զկտաւոցն մաքրութիւն,

զվարագուրսայ եւ զզդեստուց զլրութիւն եւ զվայելչութիւն, եւ զարբոյ կահուց եւ զկազմածոյ զմեծապայծառ շքեղութիւն։

Միտ եդեալ նկատեսցես զանօթս Սրբութեան իմոյ, զտեսցես եւ սրբեսցես, ծածկեսցես վայելուչս եւ բազում խնամով թաքուսցես։ Սուէպ եւ յաճախագոյնս զհացս իմ նորոգեսցես, եւ զդուշացեալ պահեսցես վայելչութեամբ։

Վստահ եմ, ո՛րդեակ, զի վառեալ բորբոքեսցիս նախանձու տան իմոյ, եւ եթէ ոչ փառս եւ մեծութիւնս կարիցես ածել իմում տաճարի, այլ գոնէ տացես զմաքրութիւն եւ զպայծառութիւն։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Վասն փոխոյ Խ նախանձոյ տաճարոյ։

Ա. ԱՅՍ ՏԷՐ նախանձաւոր եմ ոգւոյ։ Ըստ պատկերի եւ ըստ նմանութեան իմում արարի զհոգիս. իջի յերկնից զի խնդրեցից զայնս եւ զկորուսեալսն կեցուցից։

Զհոգիս ուսուցի, լուսաւորեցի եւ սրբեցի, արեամբ իմով գնեցի զնոսա, խօսեցայ ինձ, եւ լուայի, զամենայն ինչ ի նոցին փրկութիւն կարդեալ յարդարեցի. նմին իրի իսկ եւ սասարիկ ցանկամ զի յետոյ ուրեմն զարքայութեանն վայելչութիւն եւ զիթագն գեղեցկութեան

ի ձեռանէ իմմէ ընկալցին։ Տես թէ որ-պէս եւ զնարդ սիրեմ զնոսա։

Ապա տուր ինձ, որդեակ, զհոգիս, եւ այլն ամենայն քեզ լիցի։ Օգնական իմ ես. լեր ընդ իս յամենայն գործս թե-նէ քումէ գործակից նոցին փրկու-թեան. ձգեա զնոսա առ իս։

Զայս թէ արասցես, զսիրտ իմ լցցես ցնծութեամբ, ուրախ արասցես զհրեշտակս իմ, կրկին պատուոյ արժա-նի լինիցիս. զանձն քո ապրեցուսցես, եւ ծագեսցես իբրեւ զաստեղս յաւի-տեանս եւ եւս։

Բ. Եթէ ոգիքն փրկեսցին՝ զուխտ փափկութեան իմոյ արբցեն յաւիտեան, ապա թէ կորնչիցին՝ բաժին նոցա լիցի յաւիտեանս ի լճին այրեցելոյ հրով եւ ծծմբով, ուր եղիցի լալ եւ կրճել ա-տամանց։

Իցիւ, որդեակ, գիտացեալ քո՝ թէ որպիսի՞ ինչ գործ իցէ լինել ինձ գոր-ծակից յոգւոցն փրկութիւն. արդարեւ իսկ քան զամենայն գործս աստուա-ծեղէնս՝ եւս իմն աստուածեղէն։

Ես զերկինս եւ զերկիր արարի, իսկ որ զհոգիսն փրկէ՝ զերկիր յերկինս շրջէ։

Ես վառեցի յերկինս զլուսաւորսն մե-ծամեծս, այլ որ զմնրորեալսն լուսաւորիցէ՝ լուսաւորս պայծառագոյնս լուսանիցէ։

Ես ստեղծի զմարդ, իսկ որ ապրեցու-

ցանէն գնա՝ արդար եւ սիրելի ինձ գնա յարդարէ։

Տես, որդեակ, եթէ որպէս սիրիցեմ զքեզ։ Մինչ իշխանութիւն զհոգիսն փրկելոյ տամ քեզ, տամ քեզ իշխանութիւն մեծամեծս գործելոյ։

Գ. Արդ յետ այնչափ եւ այնպիսի իշխանութեամբ զարդարեալ լինելոյ եւ այնպիսի պաշտամամբ երեւելի գտանելոյ, կայցե՞ս տակաւին շաղեալ եւ պատեալ յիրս աշխարհականս եւ ի նանդուութիւնս երկրաւորս։

Ի բաց թօթափեա, որդեակ, զայլ ամենայն հոգս. այն իսկ միայն լիցի քո գործ՝ արբանեկել ինձ ի շահել զհոգիս։

Ծառայ իմ ես, զոր ինչ եւ ունիսդ՝ ինձ ունիս, զոր ինչ եւ ձեռնհաս իցես, ինձ ես ձեռնհաս։

Երթ յիմ անուն, ուստ, աւետարանեա, դարձո, խնդրեա, ընկալ, բժշկեա, ած ի կատարելութիւն եւ փրկեա զհոգիս. յայս իսկ առաքեցար, զոյն գործեա, ծախեսջիր եւ առաւել ծախեսջիր զանձն վասն հոգւոց։

Գ. Սիրե՞ս զիս, որդեակ։ Ցոյց ինձ զսէր քո յարդեանցն գործոց։

Որ ողորմի անանկին՝ ինձ ողորմի, որ տայ ողքատին՝ ինձ տայ. որ միւսմ ի փոքրիկանցս իմոց առնէ երախտիս՝ ինձ առնէ։

Ապա որպիսի ինչ նուէր մատուցանիցես ինձ, եթէ զոգւոյն՝ որ յինէն գնեցան՝ զփրկութիւն հոգայցես։

Եւ արդարեւ իսկ կարի յոյժ առատաբազդն է ոգւոյն փրկութիւն, քան զՀամբել աղքատին կերակուր։

Ե. Տես թէ քանիսն դանձս արժանեաց դանձեսցես քեզ յերկինս, եթէ յոգւոյն փրկութիւն թեւակոխեսցես։

Որ տայ բաժակ մի Ջուր ցուրտ յանուն իմ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր, ապա որպիսի ինչ եղեցի վարձք քո՝ եթէ զՀոգիսն տայցես ինձ։

Որ գայթակղեցուցանէ զեղբայրն, նոքա յանցանացն պատժապարտ դատանի. Եւ դու եթէ ի փրկութիւն զմարդիկ հասուցանիցես՝ բաղորդ եւ բաժանորդ դարձին նոցա եւ սրբութեան եւ համ օրէն բարեացն դրծոց լինիցիս։

Զ. Վարողեսջիր դու այսուհետեւ զանն, հաս ի վերայ ժամու, յանդիմանեա, սատեա, միսիթարեա ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ, զի զՀոգիսն փրկեսցես, եւ ի վերայ ամենայն ընչից իմոց կացուցից զքեզ։

Բաբէ. եթէ զմի միայն Հոգի եւեթ բաւական էիր դու ապրեցուցանել, ո՞չ ապաքէն պարտ եւ պատշաճ էր քեզ վասն այնր զանձն քո մատնել, զոր օրի-

նակ մատնեցի ես զանձն իմ վասն քո։ Իսկ որչափ եւս առաւել՝ յորժամ զբաղումն կարիցես կեցուցանել, պարտիս սատիկ նախանձու բորբոքել առ ի զայնս փրկելոյ։

Ո՛ղեակ, մարթիցին ժուժալ հանդուրժել՝ զի քոյով իսկ դիտութեամբ կորիցէ եղբայրն, վասն որոյ եան մեռայ։

Ահաւասիկ սատանայ ոչ ննջէ, այլ իբրեւ զառեւծ փորձայ որոսայ, հանապազ շրջի զի գողասցի, սպանցէ, կորուսցէ եւ կլանիցէ, եւ դու ննջիցես եւ ձեռն զձերբ ածեալ լուռ եւեթ կայցես։

Ամէն, ամէն ասեմ քեզ, եթէ զոչխարացն իմոց զփրկութենէ չունիցիս ինչ հոգ յանձին, արիւն նոցա գոչեսցէ առ իս յերկրէ, եւ զարիւն նոցա ի ձեռաց քոց խնդրեցից։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Վասն հովուական պէտքին։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, ես եմ Հովիւն քաջ եւ ճանաչեմ զոչխարս իմ։ Եթէ կամիցիս գալ զկնի իմ, ծանիր հաւատեաւ զդէմս կերպարանաց հօտի քո։ Այնպէս արթուն լինիջիր, զի որ պահապանդ ես հօտին՝ դիտացես զինչ ինչ զցերեկ եւ զինչ զցայգ դիպիցի։

Եթէ ոչ սկեսցես՝ լիցիս առաջի իմ իբրեւ վարձկան փախստական՝ որում չէ

փոյթ վասն ոչխարացն, եւ գայլն եկեսցէ, յափշտակեսցէ եւ ցրուեսցէ զոչխարսն։

Եւ յորժամ ցրուեալ վարատեսցին, զոմ անտեղեակ լինիցիս եւ ոչ երթիցես ի խնդիր նոցա մինչեւ գտանիցես զնոսա, եւ այնպէս եղիցին կերակուր գազանաց անապատի։

Եւ ապա ուրեմն արիւն նոցա բողոքեսցէ առ իս յերկրէ եւ ասիցէ՝ վայ հովուին մերոյ որ զանձն իւր արածեաց եւ զմեզ ոչ արածեաց. գազան չար եկեր զմեզ՝ եւ ոչ հայեցար։

Հան, Տէր, զմրէժ արեան մերոյ, եղիցին աւուրք հովուին մերոյ նուազ, եւ զկարգ նորա առցէ այլ. տացէ համարս վասն ոգւոց մերոց։

Ջնջեսցի յերկրէ անուն նորա. մեղք նորա մի ջնջեսցին՝ փոխանակ զի ոչ յիշեաց սկել մեզ։

Բ. Ապա դու, որդեակ, արթուն լեր եւ սկեսջիր։ Այլ զնարդ պարտիցիս սկել։ Կալ քեզ օրինակ յաղնուագոյն մօրէ եւ ի հաւատարիմ հովուէ խաշանց։

Նա զմթիւ իւրոց որդւոցն գիտէ, եւ սա զիւրոց ոչխարաց։

Նա ի մէջ որդւոց իւրոց վաստակէ եւ հանդչի, զի միշտ իսկ եւ հանապազ զաչս իւր ի վերայ նոցա բացեալ ունիցի, կամ թէ առ թեթեւ ինչ նշանակ՝ ի նոսա հայեսցի։

Իսկ սա ի համար արկեալ թուէ մի բան միոջէ զոչխարան՝ որ ի փարախ անդր մտանիցեն, փակէ զդուշութեամբ, այլ առնէ ընդ այդն, եւ յորժամ արտաքս ելանիցեն՝ զհետ երթայ։

Նա զշարժմունս, զբանս, զգնացս, զկարիս, զառողջութիւն, զհիւանդութիւն, զվաստակս, զբարեպաշտութիւն, զչարութիւն, զնենգութիւնս, զհամեստութիւն, զլրբութիւն եւ զամենայն ինչ զորդւոցն մեծաւ հոգաբարձութեամբ նկատեալ դիտէ, զի յամենայնի խնամ կալցի, յանձանձեսցէ, խրատեսցէ, ուղղեսցէ, զօրացուսցէ եւ ածցէ ի կատարելութիւն։

Եւ սա զոչխարան որ ճարակինն եւ որ սչն ճարակիցին, զողջան եւ զախտաժէտս, զպարարսան եւ զվտիտս, զհաստատունսն եւ որ յօժարադոյն ի փախչել իցեն՝ բազում հաւատեաւ ուշ եդեալ նկատէ, զի յամենայնի որ ինչ անկ եւ ի դէպ իցէ՝ վճարել կարասցէ։

Գ. Արդարեւ, որդեակ, առաւել եւս պարտիս դու սիրել զոչխարս իմ, քան մայրն զորդիս եւ հովիւ զոչխարս իւր։

Քանզի վասն իմ պարտիս սիրել դու զնոսա եւ այնչափ եւս առաւել՝ որչափ զի վասն այնորիկ արարի ես քեզ զնոսա յանձն՝ զի յառաւելութիւն սիրոյ քո յուսայեալ վստահ եղէ։

Ապաքէն, ուրդեակ, եթէ համարէի ոչ՝ թէ սիրես դու զիս, շատէի քեզ եթէ արածեա զոչխարս իմ։

Ապա գոնեայ իբրեւ զայն մայր եւ զհովիւ սկեսջիր։ Կայ մնա դու հաստատուն ի մէջ ժողովրդեան քո, եւ հաղիւ ուրեմն՝ յորժամ հարկ ի վերայ հասանիցէ, մեկնեսջիր։

Ծանիր զմիւ համարոյ քոյոցն ոչխարաց այնպէս՝ որպէս զի եւ յականէ իսկ յանուանէ կոչել զնոսա մարթասցիս։

Այնպէս իմն դէտակն ի վեր ամբարձեալ եւ զականջս քո ի վերայ նոցա ուղղեալ կացցես, զի զինչ դէպք եւ տայցեն՝ անդէն նկատեալ նշմարեսցես, եւ անտի զբոյս բարուց իւրաքանչիւր ի միտ առցես։

Ճշդիւ գտակաւ այց արա հօտի քում, զի գիտասցես հանապազ՝ թէ զիարդ կայցէ անձն այսր կամ այնր անուան, զոր խրատ կամ դեղ դարմանոյ պարտ իցէ մատուցանել, գովութեան արդեւք եթէ պարսաւանաց կարօտ իցէ, խթանի թէ կշտամբութեան։

Դ. Օ՜այս թէ այսպէս առնիցես, տեսցես թէ ոյք ատուածապաշտքն իցեն, եւ զնոսա կատարեալս գործեսցես եւ յառաւելագոյն սրբութիւն ածիցես, եւ ոյք մեղաւորք եւ ամպարիշտք՝ եւ զնոսին յապաշխարութիւն կոչեսցես։

Տեսցես զզեխան եւ զշուայտաբարոյս, եւ զուն եղեալ Ջանայցես զդէպս ի բաց ի միջոյ բառնալ, զզաղփաղփուն երիտասարդութիւն ի պարուց եւ ի կաքաւուց յեռս կասեցուցանել, զընդունայնութիւն կարճել, զերթեւեկս վատնդաղործս կորեալ հատանել, զկոր երդս եւ զցուցս արդելուլ, եւ խելք իմն եւ հնարիւք երդս նուիրականս փոխանակ ընդ այնոցիկ ի ներքս մուծանել։

Տեսցես՝ ոչ թշնամիք միմեանց իցեն, եւ փոյթ արասցես զատելութիւնն շինջուցանել եւ ընդ իրեարս հաշտեցուցանել։

Զաղահան՝ յառատութիւն եւ յողորմածութիւն յորդորեսցես. զանիրաւան եւ զյափշտակողս, զվաշխս եւ զնենդութիւնս ի բաց Ջանասցիս հատանել։

Յամուսինան զժտեալս եւ պառակտեալս՝ զխաղաղութիւն սիրոյ իմոյ հնարեսցիս տնկել։

Զհայհոյիչսն կշտամբեսցես, զլրբախօսիցն եւ զբամբասասիրաց զբերանս կարկեսցես։

Զծնողս՝ որ ոչ զորդւոց իւրեանց հոգայցեն՝ յանդիմանեսցես. զորդիս անհնազանդս ծնողաց՝ ատատկակոծ արասցես։

Զաղէտսն թեւակոխեսցես ուսուցանել, եւ որ առ խորհուրդս եւ առ պաշտամունս ատատուածեղէնս դանդաղա-

գոյնք իցեն՝ եւ զնոսա ընդոստուցեալ յօժարեցուցանիցես։

Զարբշիռս եւ զցանկասէրս՝ ապառնալեօք սրամտութեան իմոյ երկեցուսցես։

Զվայրս հասարակաց՝ որ յոռութեանց եւ անօրէնութեանց պատճառք լինիցին, ի ձեռն քաղաքային իշխանութեան խափանեսցես եւ ի յօրինուածութիւն ածիցես։

Եթէ մատեանք ինչ հակառակ հաւատոց եւ ընդդէմ բարի վարուց ոփռեսցին, գնեսցին եւ ընթերցցին, եւ զայնս եւս դուն գործեսցես բառնալ ի միջոյ, բնաջինջ առնել եւ այրել։

Ցես թէ ո՛րպէս կարող իցես տքնութեամբ եւ արթնութեամբ համօրէն չարեաց դարման տանել, եւ բարիս մեծամեծս հոգալ, ընդ ամենայնի ամենայն լինել, որպէս եւ վայել իսկ է պաշտօնէին Աստուծոյ։

Ե. Ամլ առանց տքնութեան որչափ եւ բարեպաշտ եւ ուսեալ իցես, զի՞նչ օգտեսցիս, զի՞նչ շահս ի վաստակելոյ եւ յուսուցանելոյ շահեսցիս։

Լիցիս, ո՛րդեակ, իբրեւ զպղինձ որ հնչէ, իբրեւ զծնծղայս որ զաւղանջեն, հարցիս ընդ լսելիս՝ այլ ի նպատակ անդր ոչ հասցես։

Զկրօնից եւ զհրամանակարգ բանից ճառեսցես, մինչ զբարուց արժան իցէ

խօսել, եւ խօսեցին զբարուց՝ յորժամ զկրօնից պարտ էր բարբառել։

Դեղս ցուցցես եւ տացես ընդդէմ ախտից՝ որ չիցեն իսկ ի միջի, եւ ախտից որ ապրդեալ ի ներքս մտանիցեն՝ թոյլ տացես ճարակել եւ տոչորել։

Այլ իցես բժիշկ ուսեալ, այլ անմիտ՝ որ ոչ զհիւանդն քննեալ եւ նկատեալ՝ զատամնքս զողջ եւ զառողջ դարմանէ, ուր պարտ իսկ էր նմա՝ զկուրծն հիւանդ բժշկել։

Այսուհետեւ մեծաւ զգուշութեամբ սկեսջիր աղտարակի քում, զի մարթասցիս ի դէպ ժամու անկել՝ ուր ոչն գուցէ, ուռոգանել՝ ուր երաշան իցէ, եւ արկանել աղբ՝ ուր կայցէ անպաղութիւն։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Վասն զմանկանս ի հաւատս կրթելոյ։

Ա. ԲՐԴԵԱ, որդեակ, մանկանց զհայր, դոքա են ինձ առաւել քան զամենեսեան մեծարգիք եւ սիրելիք։ Ած զնոսա տու իս, զի այնպիսեացն է արքայութիւն երկնից։

Ի մանկանց որ բարւոք սնուցեալ եւ կրթեալ իցեն՝ կատմի ժողովուրդ հզօր եւ զգաստ. ի մանկանց որ քաջ խրատեալ իցեն եւ երկիւղած՝ յարդարի ընկերութիւն հաւատացելոց եւ ժողով արքոց։

Զոր օրինակ հունձք զսերմանց կա-
խին, այսպէս եւ մարդկան սրբութիւն՝
զառաջնմէ կրթութենէ։

Սերմանեա, որդեակ, զի հնձեսցես.
զսերմն ասառուածպաշտութեան եւ սրբ-
բոյ երկիւղի արկ ի սիրտս մանկտւոյ,
ուռոգեա զայն ցօղով յաճախագոյն խրա-
տուց եւ յորդորմանց. բողբոջեալ ծաղ-
կեսցէ եւ տացէ պտուղ ի ժամու իւրում։

Կակուղ են իբրեւ զմոմ սիրտք տղայ-
ոց, զկերպարանս՝ զոր եւ կամեսցիս՝ դիւ-
րաւ ընդունին։ Ապա դրոշմեա եւ տպա-
ւորեա ի նոսա զձեւ կերպարանաց սրբ-
բութեան՝ եւ մնասցէ հաստատուն։

Բ. Մի ամօթ համարիցիս, որդեակ,
լինել իբրեւ զմանուկ ի միջի նոցա եւ որ-
պէս դայեակ որ յանձանձիցէ զորդիս իւր,
քանզի եւ ոչ իսկ ես ամօթ համարեցայ
լինել մարդ ի մէջ մարդկան, զի զքեզ
փրկեցից։

Ոչ ամօթ ինչ համարեցաւ Պաւղոս
լինել ընդ տկարս իբրեւ զտկար, ընդ
ամենայնի ամենայն եղեւ, զի թերեւս
զամենեսին ապրեցուցցէ։

Եղիայի եւ Եղիշէի լեռներ նմանող։ Զի
զՀոգի մանկանն դարձուցանիցեն՝ ոչ ա-
մաչեցին ըստ փոքրկութեան մանկանն
զիւրեանց անդամն ամփոփել, եւ զբե-
բան իւրեանց ի վերայ բերանոյ մանկանն,
զձեռն ի վերայ ձեռացն եւ զոտս ի

վերայ ոտիցն եդեալ պատշաճեցուցանել. եւ այնպէս զանձինս ըստ մանկանն պատշաճելով՝ զՀոգի կենդանութեան հեղին ի նա։

Ըստ սմին նմանութեան եւ դու՝ թէպէտ եւ երեւելի եւ հոյակապ գիտութեամբ իցես, մի դարձեսցիս ըստ մանրկաւոյն եւ ըստ անուսմանցն բաւականութեան զանձն ինքնացանել, զի Հոգի հնարհայ հեղցես ի վերայ նոցա, եւ որոց չիցեն տակաւին բաւական հաստատուն կերակրոյ՝ կամին ջամբեսցես, զի աճեսցեն եւ զարգասցին ի փրկութիւն։

Գ. Ո՛ բարեգութ Յիսուս. ո՞ւր այսուհետեւ զամօթի հարցի խոնարհել առ փոքրիկունս, յորժամ դու՝ որ Աստուած իսկ ես, տարածեալ քաղցրութեամբ զազուկս քո եւ գիրկս արկեալ փարիցիս զմանկամբք։

Ցուր ինձ զոմն բարեպաշտոն, որ ոչ զեւրն ինչ՝ այլ զքոյսն խնդրեսցէ, որ ամենեւին իսկ սիրով, խոնարհութեամբ եւ աստուածպաշտութեամբ լցեալ իցէ, սա առցէ ի միտ թէ քանի լաւ, ՝ի՛ չափ հեշտական, ՝ի՛ պէս պիտանի եւ փառաւոր գործ իցէ ի սուրբ հրահանգս մանկաւոյ զանձն ծախել։

Դ. Ապաքէն տաղտկայ իմն եւ դարշելի, ՝ի՛ դեռակ, անձն ամբարտաւանիս ի պաշտամանէ այսի, քանզի կորուսե-

լոյն յիմարութիւն է, այլ սրբոց պաշտօնէից՝ զօրութիւն Աստուծոյ։

Զի զինչ մեծ կայցէ բնաւ՝ քանզհոգիսն լուսաւորել, սրբել, կատարեալ գործել եւ ապրեցուցանել։ Եւ երբ արդեաք առաւելագոյն լուսաւորիցին, սրբիցին, կատարեալ յարդարիցին եւ հաստատիցեն փրկութեան, բայց եթէ՝ մինչ դեռ մանուկ ուրեմն իցեն՝ ուսեալ կրթեսցին։

Բազում անգամ թերեւս, ո՛րդեակ, ի սրբոյ բեմբէ սրատացեր, այլ որչափ՞ս դարձուցեր։ Մեծապայծառ իմն գործ գործեցեր, քան յորժամ ընդ մանրկուոյն գործեալ էիր. այլ ո՞ր այն ատհմանքն իցեն։ Անկաւ սերմն յապառաժի, եւ ընդ բուսանելն չորացաւ առ ի չգոյէ հիւթոյ։

Սերմանեա, ո՛րդեակ, յերկիր բարի, ի սիրաս որ ատակաւին յանմեղութեան իցեն։ Լիցի արդարեւ միամտութիւն քո լապտեր անդոմանեալ ի խորհուրդս մեծատանց, այլ բուսցի, արասցէ պտուղ հարիւրապատիկ, եւ զոր վաբեան եւ սերմանեա խոնարհութեամբ՝ ցնծութեամբ հնձեսցես։

Ե. Ոչ այսուհետեւ զմանկունս եւ յաճախագոյնս իսկ. մի՛ բարձրագոյնս ինչ ճառեսցես եւ մի՛ բազումս, այլ ատկաւս, հեշտընկալս, դիւրահասս,

լուսաւորս, բազում անգամ եւ պէտպէս օրինակօք յեղյեղեալ։

Մի ճոխագոյնս եւ տիրաբար, այլ քաղցրութեամբ եւ սիրով, բայց յայնժամ՝ յորժամ խատապարանոցք իցեն եւ ողնդժնեայք. մի կարի ընտանեբար՝ այլ իբրեւ զհայր. մի ծաղու եւ կատակաւ, այլ համեստութեամբ եւ երկիւղածութեամբ։

Մի զուտումն վարդապետութեան եւ զպատուիրանս եւեթ առաջի դնիցես, այլ եւ օրինակս եւս եւ պատճառս ընծայեցուսջիր։

Մեծարեսցեն զքեզ, երկիցեն ի քէն, սիրեսցեն զքեզ, ուրախ լիցին ի լսել զքեզ, եւ այնպէս բանք քո կակուղք քան զձէթ՝ եղիցին որպէս սլաք, որ մխեալ միանգամ ի սիրտ՝ կացցեն մնասցեն։

Զ. Այլ մի զուսանանէ նոցա միայն փոյթ յանձին ունիցիս. եւ զի՞ իսկ իցէ գիտութիւն առանց վարուց լաւութեան։ Ապա բազում հաւատեաւ սկեսջիր վարուց նոցա։

Բազում անգամ ի տարւոջ ժողովեսջիր ի մի վայր զհօտ քո փոքրիկ, եւ ծանիր գտակաւ զկերպարանս նոցա։

Լուր զմանկանց խոստովանութիւնս, հարց զնոսա, տեսցես բազում անգամ դժարութիւն կանխեալ քան զախս հա-

սակի, եւ թէ երբեմն եւ այն ինչ ծնեալոյ՝ պիտոյ է սանձ։

Դիցես յայնժամ սանձս եւ կարճեսցի յարձակումն չարին. ապանցի օձն մինչ դեռ կորիւն իսկ իցէ։ Զաստուածպաշտութիւն ի տեղւոջ ախտից սնիցես, սուղանեսցես աղօթիւք եւ աճեսցէ։

Ապա թէ ոչ ցանկ ուշ կալցիս, եւ զնստատվանութիւնս մանկանց ոչ լսիցես, բուսցին փուշք, եղջեւ եւ հեղձուսցեն զամենայն սերմն բարի, եւ այնպէս ի ժամանակի հնձոց ոչ գտցի՝ բայց որոմն ի կապել խրձունս առ ի յայրել։

Գ Լ Ո Ի Խ ԽԴ.

Վասն զղջութեան ի զանազանութեան հրահանգելոյ։

Ա. Զիք ակնառութիւն առաջի իմ, որդեակ, ամենեքին ոգիք իմ են, ամենեքին իմով արեամբ գնեալ։

Ոչ գոյ մեծատուն եւ աղքատ առաջի իմ. երկոցուն եւս կայ եւ պահի նոյն եւ մի յաւիտենականութիւն, նոյն փառք՝ եթէ փրկեսցին, եւ դատապարտութիւն նոյն՝ եթէ ի կորուստ գնայցեն։

Զնոյն Հայր ունին յերկինս, զնոյն Եկեղեցի մայր յերկրի, զնոյն հոգեւոր կերակուր ի խորհուրդս։

Մանաւանդ թէ աւետարանել աղքատաց առաքեաց զիս Հայր իմ. եւ

դու, որդեակ, ի նոյն գործ առաքեցար, ապա տես զի զպաշտօն քո կատարեալ կայցիս։

Բ. Զարոդես, ուսուցանես զՀաւատս. բայց ո՞չ ապաքէն բազումք այնոքիկ են՝ որք թափաբչենն ի տապոյ քումէ։

Ո՞չ բազումք ի քոց ոչխարաց յաղտեղութիւնս աղքատութեան եւ ի յուսութիւնս հաւանչնկերս թաւալեալ թաթաւեալ կան առանց հրահանգաց կրթութեան։

Ո՞չ ապաքէն յոլովագոյնք վասն իւրեանց չքաւորութեանն եւ առ ի չգոյէ վայելուչն հանդերձից՝ ընդ ամօթ հարեալ պատկառեալ չիշխեն երեւել յեկեղեցւոջ եւ ոչ յուսմունս հրահանգաց մօտ հասանել։

Ո՞չ բազումք վասն յանտառս եւ յաբարակս բացաձիգս գտանելոյ եւ հեռի ի տաճարէն լինելոյ, կամ թէ վասն հոգոյ խաշանոցն չկարեն գալ ժողովել ի պաշտամունս աստուածեղէնս, յայն սակս իսկ կան մնան ամենեւին տխմարք եւ շինականք ի խաւարի իւրեանց եւ ի կոյրն գիշերի տգիտութեան։

Իսկ արդ՝ զի՞ ասես դու, Հովհէ՛ր, վասն այսց ոչխարաց։ Քարոզեմ, ասես, եւ ուսուցանեմ զՀաւատս, մատիցեն եւ լուիցեն։ Ո՛ր դեակ, ոչ գտանեմ զգործս քո կատարեալ։

Ոչ եթէ զայն ինչ միայն ասացի ցա-
ռաքեալսն իմ՝ թէ աշակերտեցէք, այլ
թէ գնացէք եւ աշակերտեցէք։ Եւ զքեզ
իսկ ասեմ, որդեակ, եկ ի ճանապարհս
եւ ի ցանգս, զնեղս, զկոյրս եւ զկաղս
խնդրեա, կոչեա եւ արա մտանել, զի
լցցի տունս իմ երկնաւոր։

Գ. Այլ ազգ առնեմ, ասես, եւ
խրատ տամ զի եկեսցեն եւ լուիցեն։
Միթէ իցէ՞ բաւական, որդեակ, աղա-
ղակել հովուի առ ոչխարսն մոլորեալս։
Եւ ոչ բնաւ. այլ ընթանայ մինչեւ
գտցէ զնոսա։

Եւ հովիւս քաջ՝ մինչ յաշխարհի ատ
էի, ոչ ապասեալ կացի միայն ոչխարացն
այնպիսեաց, այլ եւ սիրա ի բերան խնդ-
դրեցի ընդ անապատս։

Ոչ ապասեցի քեզ, որդեակ, այլ ի
խնդիր ելի, եւ եթէ ոչ կանխեալ խնդ-
դրէի զքեզ եւ ածէի, ուր գտանէիր։

Եւ ի ջրհոր Սամարացւոյն չոքայ. անդ
ուսուցի զնա, անդ աւետարանեցի։

Տես որպէս առաքեալքն իմ ընդ
շէնս եւ ընդ գեօղս եւ ընդ հիւղս դաշ-
տաց եւ ընդ անապատս տեղիս անցեալ
գնացին՝ զճշմարտութիւն վարդապե-
տութեանն, զլոյս շնորհաց եւ զխաղա-
ղութեանն օրհնութիւն ամենեցուն
հաղորդելով։

Տես թէ զինարդ Բռուսմէոս եւ Սաղե-

սեանն Փրանկիսկոս ընդ վախուտ եւ ընդ անկոխ ոտիսփայս իբրեւ սողալով իմն հատեալ անցին, զի հասցեն առ Ժողովուրդս անմատոյցս եւ քարոզեսցեն աղքատաց։

Դ. Ընթա, եւ դու, որդեակ, ընթա ճեպեա առ ոչխարս հեռատանեայս, եւ լուիցեն ձայնի քումմ։

Յայց ել նոցա, որպէս ես արեգակնա այց արարի ի բարձանց, երեւեալ որոց ի խաւարի եւ ի ստուերս մահու նստէին. Ժողովեա զնոսա եւ տացես նոցա կերակուր առանձինն ի ժամու։

Ապա եթէ մեծ իցէ հօտ քո, մինչեւ չլինել քեզ բաւական միում միում իւրաքանչիւր յոչխարացն տգիտաց առանձինն զօգնականութիւնս սրբոյ վարդապետութեանն հասուցանել, փոյթ արա զի ի ձեռն իմաստնագոյն, զգօնագոյն եւ գիտնագոյն ոչխարաց՝ տգէտքն ուսցին։

Եւ դու եւս ինքնին հովուեսջիր եւ սկեսջիր ամենայնի, ստէպ համարս պահանջեա, եւ մի հանդիպեսս մինչեւ գիտասցես թէ ի լոյս եւ ի սրբութեան շրջիցին եւ թէ ուսեալ եւ կրթեալ իցեն եւ աստուածապաշտ։

Բայց թերեւս ասիցես՝ թէ մեծ իմն աշխատութիւն է այդ. զի՞ է զի խօսիդ, որդեակ։ Դադարեա ի սրանջելոյ զսատ

ածեալ զեմ եւ զորբոց իմոց զվաստակս վասն հոգւոց փրկութեան։

Յամօթ լեր, Սիդոն, ասէ ծով, եւ եթէ զպատճառն հարցանիցես թէ վասն էր՝ լուր. վասն դոյզն ինչ իրս հպիթա-թելոյ՝ երկայնաձիգ ճանապարհ հատա-նի, իսկ վասն պատուականն ոչ՝ թէ քայլ մի ոտին յառաջ փոխի հազիւ հազիւ։

Գ Լ Ո Ւ Խ ԽԷ.

Վասն փարոշոնեան բռնին Անդոնոյ։

Ա. Վ Ա՛Ց քեզ, սրդեակ, եթէ ոչ առեսարանեսցես։ Գաչեա զօրութեամբ եւ մի խնայեար. բարձրացո իբրեւ զփա-զոյ զբարբառ քո. պատմեա ժողովրդեան իմում՝ զանօրէնութիւնս նոցա եւ զմեղս։

Յապաշխարութիւն կոչեա զնոսա, ուստ նոցա պահել զամենայն որ ինչ պա-տուիրեցի նոցա։

Եթէ ոչ զգուշացուցանիցես եւ կո-րիցեն, զարիւն նոցա ի ձեռաց քոց խնդ-րեցից. ապա եթէ դու զգուշացուցա-նիցես եւ նոքա ոչ արասցեն՝ դու զանձն քո ապրեցուցեր։

Խօսեաց, խօսեաց զվկայութիւնս իմ առաջի նոցին իսկ թագաւորաց, եւ մի ամաչիցես, զի ոչ եթէ դու իցես որ խօ-սիցիսն՝ այլ Հոգին Հօր իմոյ՝ որ խօսիցի ի քեզ։

Բ. Լուար զԷրամանն, որդեակ, վայ քեզ եթէ ոչ հնազանդեսցիս. տայցես վրէժս ի սատակումն յաւիտենից՝ յորժամ եկիցս ի դատել։

Լուար թէ որպիսի պաշտօն քեզ յանձն լիեալ իցէ. տես թէ որչափ բարձր իցէ։ Աստուծոյ օգնական կարգեալ ես, վասն նորա պատգամաւորիս, որպէս եւ Աստուծոյ բարեխօսութեամբ քեւ։

Ի ձեռն քո իբրեւ ընդ Ջրմուղ զան իւր առաքէ եւ զշնորհս իւր եւ զարժանիսն բաշխէ։

Եւ դու ծոյլ իցես կատարել զպատուիրանն զայն սաստիկ եւ մեծարոյ։ Փակեաց կալցիս զբերանս քո ի շաբաթս եւ յամամուտս, ի կիւրակէս եւ յաւուրս սօնականս։ Քաւ լիցի, որդեակ, քաւ լիցի. քարոզեա զբանն, քարոզեա առանց դադարելոյ։

Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Իմմէ, տուր զհացս զայս ինձեալ յերկնից ոչխարացն՝ որ քեզ յանձն լեալ իցեն, զի մի մեռանիցին, տուր յաճախաղոյնս՝ զի աճեսցեն եւ զօրասցին։

Գ. Նախ արարի եւ ապա ուսուցի, այսպէս քարոզեցի ես, որդեակ։ Արդ արա դու նախ այսուհետեւ, զի առակ օրինակի լիեալ հօտին իմոյ՝ արածեսցես զայն ի սրտէ։

Աղնուագոյն քարոզութիւնն լինիցի, յորում առաւել օրինակօք քան բանիւք ասիցես ցոչխարսն իմ՝ թէ նմանողք ինձ եղերուք՝ որպէս եւ ես Քրիստոսի. գնացէք՝ որպէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ։

Զիարդ առաքինութիւնս կարիցես յանձն առնել նոցա, յորժամ դու յայնցանէ թափուր իցես։ Որպէս հատցես ի բաց զյոռութիւնսն՝ եթէ ի նոսին կեցցես։ Սուրբ, ցածուն, զգաստ, արդար, ողորմած եւ ատուածապաշտ լինիջիր, եթէ նոյնպիսիս եւ զայլսն կամիցիս յարդարել։

Մի զբանս քո յամօթ արասցեն գործք քո, մի գուցէ մինչ խօսիցիսն յեկեղեցւոջ ասցէ քեզ ո՞ք եւ իցէ պատասխանի լուելեայն, թէ հիմ ապա զայդ ամենայն զոր ասեաց՝ ինքնին ոչ առնիցես։

Դ. Մի պատիր բանիւք իմաստութեան մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ քարոզեա, սրդեակ։ Ոչ վասն այնորիկ ինչ առաքեցի զքեզ զի զարմացեալ զքանչացին ընդ քեզ, այլ զի քեւ առ իս դարձցին։

Ոչ եթէ բանս ըստ մարմնջելոյ ասելեաց, այլ որ թափ ընդ սիրտս մտանիցեն՝ խօսեցայ ես, մինչ դեռ ընդ մարդկան շրջէի. ուրացիր զանձն քո, սրդեակ, եւ եկ զինի իմ։

Խնդրեա զփառս իմ, խնդրեա զընկերին փրկութիւն, մի ինչ ասիցես՝ որ ոչ յայն վախճանս հայիցի. մի ինչ բարբառեսցիս՝ որ ի վեր քան զբաւականութիւն ժողովրդեանն իցեն։

Քարոզես զի լուիցեն եւ իմասցին, ոչ եթէ զի ընդունայն ինչ բարբառ արձակիցես. ապա խոտորեա ի պղծոց եւ ի նորաձայն բանից եւ ի հակառակութենէ եւ ի մոլարանուն գիտութենէ։

Ե. Այս եմ որ ուսուցանեմ զձեզս ի պատերազմ եւ զմատունս ի ճակատամարտ, ապա մի խիղախեր սուսերաւ քարոզութեան ի կռիւ մատչել՝ եթէ ոչ ուսցիս յինէն։

Ուսիր աղօթիւք, կարդա զիս եւ եկեսցէ ի քեզ Հոգի իմաստութեան։ Ուսիր ընթեռնլով, քննեա զԳիրս սուրբս, անդ գտցես նեռս։

Ցիմմէ վարդապետութենէ առջիր՝ զոր ինչ մեկնեան յԵկեղեցւոջ, զի մի իբրեւ ի քէն զգուշացուսցես զնոսա, այլ իբրեւ յինէն։

Լիս այսուհետեւ զսիրտ քո պատգամք իմով, զի ի յաւելուածոյ որսի բերան քո խօսեսցի։

Ուսիր մինչ չեւ ուսուցեալ, ապ՝ եթէ ոչ՝ եղիցես ամպ անջրդի, եւ ոտինս ցամաքեալս մատուսցես։

Զ. Յորժամ ի բեմ անդր ելանել

քեզ հասանիցէ, ած զմտաւ թէ անդ եմ ես, եւ թէ ես Բանն յաւիտենական ձայնիւ բարբառոյ քո վարիմ առ ի գՀոգիսն փրկելոյ։

Եւ այսպէս՝ որպէս թէ մի իսկ իցես ընդ իս, ընդ Հոգւոյ իմում, ընդ սիրոյ եւ ընդ իշխանութեան իմում, խօսեաց որ ինչ անկ եւ վայել իցէ ողջամիտն վարդապետութեան։

Մի ձեռն յանձին հարեալ պարծեսցիս ընդունայն հաճութեամբ՝ եթէ ընդունելի ինչ բան քո լինիցի, եւ մի կարի իմն ամաչեսցես եւ կորուսցիս՝ յորժամ չլինիցի ընդունելի։

Առանց իմոյ շնորհաց՝ չես իմիք ձեռնհաս. ապա զամենայն յաջողութիւն ինձ մատո, եւ զամենայն թերութիւն անձին քում դրեա խոնարհութեամբ։

Որչափ եւ ճարտար քարոզեալ իցես, զի՞ իսկ բնաւ արարեր։ Ցնկեցեր, ջուր եղուր. ես միայն ածեցուցանեմ։ Ապա աղաչեա զիս՝ զի հանիցս պտուղ ի քոց վաստակոց։

Է. Մի վհատիր, որդեակ, եթէ սակաւ ինչ պտուղ ի քոց քարոզութեանց յառաջ եկեսցէ. դարման ի քէն պահանջեմ եւ ոչ բուժումն։

Եթէ ոչ ընկալցին մարդիկ զողջոյն քո, առ քեզ դարձցի եւ ոչ կորուսցէ զվարձս իւր։

Արդ մի այնու՝ զի պատուղ ինչ ոչ տեսանես՝ կասեցես ինչ ի քարոզելոյ. յաճախագոյն այն է՝ զի ծածկեալ են պատուղքն եւ ոչ երեւին։

Նա թէ եւ հարեւր քարոզութեամբք զմի անձն միայն շահեցիս ինձ, ո՞չ ապաքէն բազում իսկ է։ Վասն զի հոգի մի ինձ այնչափ արժէ, որչափ արիւն իմ՝ զոր վասն այնր հեղի։

Վաստակեա առանց լքանելոյ, հանապազ ակն կալեալ առաւելագոյն տոհմականաց յիմմէ բարութենէ։

Թէպէտ եւ զամենայն գիշեր աշխատ լիեալ ոչ ինչ կալցիս, սակայն թերեւս ի միում նուագի ձգեսցես բազմութիւն ձկանց յոյժ. ապա յիմ անուն եւեթ արկ զգործիսդ, քարոզեա ամենայն համբերութեամբ։

Ը. Յետոյ ուրեմն՝ յորժամ զամենայն կատարեսցես, ասասջիր թէ ծառայ անպիտան եմ, զոր պարտն էի առնել՝ արարի։

Երկիր զի գուցէ որ այլոցն քարոզեցեր՝ դու ինքն անպիտան գտանիցիս։

Քանզի բազումք եկեսցեն եւ ասիցեն՝ Տէր Տէր, ո՞չ յանուն քո քարոզեցաք, զօրութիւնս բազումս արարաք։ Եւ ասացից ցնոսա՝ եթէ ոչ երբեք գիտէի զձեզ։

Ո՛րդեակ, որչափ բազումք ի քարոզ-

չաց տանջին այժմ ի դժոխս, որ առա-
ւել ճարտարախօսք եւ քաղցրաբանք
քան զքեզ էին, եւ զյոլովագոյնս յան-
առակ վարուց՝ յառաքինի եւ ի պար-
կեշտական վարս ձգեալ ածին աւելի
քան զքեզ։

Այլ ինքեանք կորեան թշուառու-
թեամբ. վասն էր արդեւք։ Վասն այ-
նորիկ իսկ մանաւանդ՝ զի ամպարհաւա-
ճութեամբ եւ ժպրհութեամբ յանդգ-
նեալք, զաստուածեղէն բարիս զոր
ընկալանն՝ ոչ Աստուծոյ մատուցին, այլ
յանձինս իւրեանց դրաւեցին։

Նմին իրի իսկ եւ Տէրն զնոսա որ մար-
գկեղէն դրուատեաց ցանկանային, եւ
ընդունայնապարծ կարծեաք եւ տենչա-
նօք անապարծիկն փառաց փքացեալ
եւ սնքացեալ էին, ի տեղի՝ յոր փա-
փաքէին հան վերացոյց, զի անտի ապա
կործանեսցին ի կորուստն յաւիտենից։

Գ Լ Ո Ւ Խ ԽԶ.

Վասն զխոսքսն ուրիշոց ըստ։

Ա. Ընդ զՀոգի սուրբ, որդեակ, եւ
դատաւոր ժողովրդեան իմոյ կացուցար.
կապեսցես եւ արձակեսցես, թողցես
զմեղս եւ կալցիս։

Ահաւասիկ քեզ զերաւունս իմ շնոր-
հեցի. որպիսի՞ իշխանութիւն, որդեակ,
քանիցն պատիւ։ Այլ որպիսի՞ ինչ պաշ-

ուն իրէ պաշտօնդ. արդարեւ եւ հրեշ-
տակայ եւս ահաւոր։ Որպիսի ինչ ա-
բուեստ. ապաքէն արուեստիչ արուեստ։

Ոչ եթէ զանառ՝ որ զմարմին ապա-
նանեն. այլ որ զհոգի եւ զմարմին կո-
բուսանեն ի դեհենի՝ պարտ է քեզ դար-
մանել։ Ապա որպիսի ինչ դիտութեան
պարտ եւ պատշաճ իրէ զգուշանալ այն-
պիսւոյ բժշկի շրթունք։

Ոչ զմարմին ի մահուանէ՝ այլ զհո-
գիս պարտիս գուս ի յաւիտենականն դա-
տապարտութենէ ազատել եւ ապրե-
ցուցանել։ Ապա որպիսի ինչ զթու-
թիւն պիտոյ իրէ ունել սրտի այնպիսւոյ
ազատչի։

Ոչ եթէ ի վերայ կուսոյ եւ իրաւանց
ի մէջ մարդկան, այլ ի վերայ իմոց իսկ
իրաւանց ընդ իս եւ ընդ մարդիկ պարտ
է քեզ դատ առնել։ Արդ որպիսի ինչ
ուղղութիւն եւ արդարութիւն պարտի-
ցին ունել միաք այնպիսւոյ դատաւորի։

Խնդրեա զդիտութիւն ի դիրս ի ձեռն
ուսման, իսկ զնմաստութիւն հանճա-
ւոյ, ազնիւութեան եւ արդարու-
թեան՝ ձգեա յերկնից ի ձեռն աղօթից։

Եւ եմ Հայր լուսոյ, որ տամ ամե-
նայնի առատապէս. խնդրեա, ՝ուրեակ,
եւ ընկալցիս։

Բ. Մի ծրարիցես ի վարշամակի
զտաղանդն զոր քեզն եատ, դիտացեալ

թէ ես այր մի ատամբակ եմ. եւ յայն ասկս իսկ մի զանց զահաւոր պաշտամամբդ առնիցես։

Չէ արժան չէ օրէն քեզ ի բաց կալ ի փրկութեանն գործոյ, այնու՝ զի է քո իշխանութիւն փրկելոյ։

Արա որ ինչ ի ձեռին քում իցէ. ուսիր, կաց յաղօթս, գործեա, արձակեա, կապեա, որպէս զիարդ եւ լաւ թուեսցի քեզ առաջի իմ, եւ յետ այնորիկ զամենայն ինձ արա ապաստան։

Ես գիտեմ զորս ընտրեցիդ. մարդիկ են, ոչ հրեշտակք՝ զորս կարդեցի քահանայս։

Գ. Լ. իսկ ծանրատաղտուկ եւ աշխատեցուցիչ պաշտօնդ այդ, ՝որդեակ, նմին իրի զգոյշ լեր զի մի յուլացեալ անփոյթ առնիցես։

Վատակաւոր եղէ ես ի մանկութենէ իմմէ. ապա դոյզն ինչ է, եթէ զաւուրս, զամիսս եւ զամս ի գործ ոգւոցն փրկութեան ծախիցես. մինչ ես զարիւն հեղի, զկեանս եռու։

Զեն ինչ զառաջինն ուրախութեան այն հրահանգք՝ այլ տրտմութեան, բայց ապա յետոյ որոց ընդելնուցումն ընդ այն՝ պտուղս խաղաղութեան եւ անդորրութեան բերիցէ։

Անդ իսկ է արդարեւ վատակ պտղոյ արդիւնաշատ. անդ ոչխարքն գտա-

նին եւ ածին յուրախութիւն երկնից եւ ի ցնծութիւն հրեշտակաց։

Անդ աղուք ի բաց պարզին. անդ վերք գարմանս գտանեն, անդ մեղք ջնջին. անդ անկելոցն՝ շնորհի այսրէն անմեղութիւն, եւ գեղեցկութիւն ապականեալ՝ գառնայ վերստին։

Անդ հորդի երկնից սուրբ ճանապարհ. անդ դժոխք փակին. անդ կապեալ կաշկանդի սատանայ. անդ խաղաղութիւն իմ տուեալ լինի. անդ կաթն տկարադունիցն ջամբի. անդ ողջոյն բաշխի կերակուր։

Անդ վաստակիրքդ զօրանան. անդ հոգւոքդ խրախուսին. անդ պիղծքդ սուրբ լինին. անդ անիրաւքդ յարդարին առաքինիք. անդ թշնամիքդ հաշտին. անդ չարախօսքդ ածին յուղղութիւն։

Անդ հայհոյիչքդ խրատին. անդ սեղանաղերծքդ ի խորոյն անդընդոց ելանեն ի ծանծաղ. անդ տգէտքդ զգիտութիւն եւ անիմաստքդ զիմաստութիւն ընդունին։

Անդ աղբեւր բուրաստանաց եւ ակն ջրոյ կենդանւոյ՝ բխեալ ի Լիբանանէ։

Ահաւասիկ, ո՛րդեակ, ո՛րչափ ինչ կարեւ վճարել ի խոստովանութեան իմոց ոչխարաց. արդ զի՞արդ չիցեն քեզ մեղք՝ որ գիտեսդ զբարի եւ ոչ առնես։

Դ. Ա՛ոչեա այսուհետեւ զմեղաւորս յապաշխարութիւն, եթէ զանց արաս-

ցես կոչել եւ լսել, եկեսցէ գայլն եւ ցրուեսցէ զոչխարսն, ցամաքեսցի սէր եւ բաղմասցի անօրէնութիւն։

Ոչ գոցի յայնժամ զդասութիւն յերիտասարդսն, ոչ պարկեշտութիւն ի մէջ ամուսնաց, ոչ ի վաճառականս արդարութիւն, ոչ հաւատարմութիւն ի ծառայս, ոչ իրաւունք ի տեարս, ոչ հոգաբարձութիւն ի ծնողս եւ ոչ յորդիս հնազանդութիւն։

Միանգամայն իսկ ասել՝ ի սակաւ ժամանակի ոչ գոցի ի բոլանդակ իսկ հօտին՝ ոչ ինչ աստուածպաշտութիւն, ոչ ինչ հաւատք, ոչ ինչ կրօնք։

Ե. Ո՛ քահանայ, դու մնասանդ որ զՀոգ Հոգւոյ յանձին ունիս, տես եւ կշռեա թէ որպիսի ինչ բեռն ծանրաբեռն յանցանաց ի գլուխ քո կուտիցես, եթէ անփոյթ արասցես կոչել զոչխարս քո ստէպ եւ յաճախագոյնս յատեան անդր, եւ զորս մատչինն՝ հեղգայցես լսել, եւ կամ թէ լուեալ՝ առանց փութոյ, առանց նախանձու եւ առանց արդարութեան զիրսն վճարիցես։

Զինչ ինչ յայնժամ տացես պատասխանի, յորժամ յատեան իմ կոչեսցիս եւ յինէն դատեսցիս, եւ ամբաստան լիցին զքէն ոչխարքն քո եւ ասիցեն՝ թէ կորեաք, վասն զի ոչ զոք ունէաք որ արկանէր զմեզ յաւազանն։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Վասն գլուխ մի զոր արքան է առնել ի սուրբ ապէնի ապաշխարութեան։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, լեր գթած որպէս եւ Հայրն քո երկնաւոր գթած է, ուստիր յինէն զի հեղ եմ սրտիւ։

Զեղէգն ջաղջախեալ ոչ բեկի, եւ զպատրոյկն առկայծեալ ոչ շիջուցի, այլ զոչխարն որ մոլորեալն էր՝ ուրախութեամբ եւ հեզութեամբ ըստանձնեալ ի վերայ ուսոց իմոց բարձի։

Կնոջ մեղաւորի որ ողբայր զյանցանս իւր՝ գովութեամբ եառու թողութիւն։ Ի Պետրոս գթութեամբ նայեցայ, եւ աւազակին որ դարձեալն էր՝ բացի զդրախտն մարդասիրութեամբ։

Տես թէ որպէս գործ իմ եղեւ հանապազ գթալ եւ խնայել։

Բ. Ապա տես, որդեակ, թէ քանի քաղցրութեամբ պարտ եւ արժան իցէ քեզ՝ որ հաղարապատիկ ես խորհրդոց իմոց, գնալ ընդ մեղաւորսն՝ յորժամ յատեան անդր ապաշխարութեան մատիցեն։

Ոմն ի հեռաւոր աշխարհէ ելեալ դայ, այս ինքն ամիսս բազումս եւ թերեւս եւ ամս բազումս զԱստուած զարարիչ իւր մոռացաւ, եւ չմիշտեաց ինչ զանձին զփրկութիւն, այլ յետոյ ուրեմն ասաց

ի միտս իւր, յարուցեալ գնացից առ Հայր իմ։ Եւ յարուցեալ եկն։

Ո՛ղորմեակ, ընկալ գնա ուրախութեամբ, ընկալ հեզութեամբ. պարտ իսկ էր քեզ բազում հոգաբարձութեամբ զմնալորեալն խնդրել, ապա ո՞րչափ եւս առաւել գնա որ այսրէն դառնայցէ՝ արժան է չմերժել։

Ա՛յլ ոմն անօրէնութեամբ ծանրացեալ եւ իբրեւ ի խոր ինչ յատակս վատթարութեանց սուղեալ ընկղմեալ՝ լի վերօք եւ բազում աղտեղութեամբք մերձենայ։

Ո՛ղորմեակ, մի՛ սուտ նախանձու խորշեսցիս եւ դարշեսցիս, մի՛ յանդիմանեսցես եւ մի՛ անդէն ի սկզբանն սատեսցես։ Ա՛յլ ընդ հակառակն ասա սիրով իբրեւ զիս՝ թէ եկ առ իս աշխատեալդ եւ բեռնաւոր, եկ վստահութեամբ եւ հանգուցից զքեզ ի Տէր։

Արա բան օրինակի նմանութեան հօրն անառակ որդւոյ՝ զոր քեզն ցուցի։

Տես, ո՛ղորմեակ, միտ դիր, եկն որդին զոր սատիկ յոյժ սիրէր Հայրն, եւ որ վատթարագոյնս փախստեայ գնացեալ էր ի տար աշխարհ։

Որ յառաջն ի Հայրենի տանն յօրացեալ եւ յղփացեալ էր բարութեամբք, եւ ապա կեցեալ անառակութեամբ՝ զինչս իւր վատնեալ։

Որ երբեմն պատմուճանս ազնիւս ա-
գանէր. եւ այժմ կապերտիկ մի ցնցոտի
զանձամբ արկեալ, ապաշնորհ լիեալ էր
եւ ամպարիշտ եւ ժանտ։

Ա՛պա ուրեմն եկն. ետես զնա Հայրն,
ընթացաւ անկաւ զպարանոցաւ նորա,
դիրկս տարածեաց, ողողեաց արտա-
սուօքն, ամբարձ զնա ձեռամբ իւրով ի
վեր, ած զնա մարդասիրութեամբ, ա-
դոյց զպատմուճանն զառաջին, մատա-
նեաւ զարդարեաց զնա, հանդոյց զնա
եղամբ պարարակաւ եւ երգովք մեծա-
բեայ զնա՝ որ դարձեալն էր ողջանդամ։

Տես, ո՛րդեակ, չատատեաց նմա Հայրն
թշնամանեալ, եւ ոչ ցատման ինչ կամ
թախծութեան նշանակ ընծայեցոյց։

Զի՞նչ ինչ յայտ սովին առակաւս
կամեցայ առնել։ Լուր, ո՛րդեակ. սովիմբ
ասացի ցմեղաւորսն՝ զի դարձցին առ
քեզ իբրեւ առ Հայր առանց ինչ ահի
եւ երկիւղի, եւ ցքեզ՝ զի ընկալցիս զնո-
սա առանց խստութեան։

Գ. Ծանիր, ո՛րդեակ, ծանիր թէ
որո՞յ հոգւոյ իցես։ Իբր ոչ եթէ վասն
այնորիկ ինչ ասաքեցի զքեզ՝ զի զոգիսն
կորուսցես, այլ զի շահեցիս եւ ապրե-
ցուսցես։

Եւ յայն ասկս իսկ կացուցի զքեզ
զմեղաւորդ ի վերայ նորա, զի գիտացեալ
քո թէ ո՛րպէս ես քեզ ողորմեցայ, դի-

տասցես եւ զայն թէ զնարդ պարտ եւ պատշաճ իցէ քեզ՝ ողորմել նոցա։

Արդարեւ իսկ դուք եւ պատուէր եառաք քեզ հղօրագոյնս եւ իբրեւ զփողոց բարձրացուցանել զբարբառ քո, եւ պատմել նոցա զանօրէնութիւնս նոցա. այլ ո՞ւր, այլ ե՞րբ, ո՛րդեակ։

Ո՞ւր. ի բեմն՝ ուր ուսուցես, ուր կոչեսցես, ուր զաներկեւղն Ջանասցիս խուճապել։

Ե՞րբ. յորժամ խիստք իցեն, յորժամ ոչ դարձցին ի սիրոս իւրեանց, յորժամ չածիցեն ինչ զդարձէ զմտաւ։

Յայնժամ ասա ցնոսա ընդ իս. Ծնո՛ւնդք իժից. վա՛յ ձեզ կեղծաւորաց. վա՛յ ձեզ որ ծիծաղիքդ այժմ. վա՛յ ձեզ որ ընդ լայն եւ ընդ ընդարձակ ճանապարհ գնայք։

Այլ յատենի անդ խոստովանութեան՝ յորժամ ի բժշկութիւն եկեսցեն, ասա, ո՛րդեակ, քաղցրութեամբ՝ ահաւասիկ կամ զի բժշկեցից զձեզ, զի թափեցից զձեզ ի բեռանց, զի ընդ թեւօք ժողովեցից զձեզ։

Ո՛ որդեակք, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչեւ նկարեսցի Քրիստոս ի ձեզ. եկայք զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած մեր ոչ երբեք արհամարհէ։

Եկայք, զղջացարուք, եւ եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զձանձախարիթ՝ իբրեւ

զձիւն ապիտակ արարիցս, եւ եթէ իցեն իբրեւ զորդան կարմիր՝ իբրեւ զասր սուրբ արարիցս։ Ո՛րդեակ, եթէ լուիջիք ինձ՝ զբարութիւնս երկրի կերիջիք։

Այսպէս կակուղ լիցին բանք քո քան զձէթ, եւ լիցին որպէս պլաք։

Դ. Ապա եթէ, ո՛րդեակ, սատանայեա խստիւ անդէն իսկզբանն եւ կամ յընթացս իսկ առանց ինչ հարկի, զի՞նչ լինիցի։

Ոչխարն որ դարձեալ իսկ էր ի դուռն փարախի, կամ զարհուրեալ փախիցէ՝ համարեալ այսպէս՝ թէ գայլ եգիտ եւ ոչ հովիւ,

Կամ առանց ինչ վստահութեան ղիրան վճարիցէ, եղեալ ի մտի թէ տիրող ես եւ ոչ հայր,

Եւ կամ բնաւ եւ թաքուցէ իսկ զվէրս ծածկագոյնս եւ զվնասակարագոյնս, գահիճ մանաւանդ զպաշտօնեայն համարեալ եւ ոչ բժիշկ։

Եւ այնպէս կորիցէ քոյովք յանցանօք եղբայրն քո, վասն որոյ եան մեռայ, զոր առ քեզ առաքեալ էի, եւ քեզ վստահութեամբ յանձն արարեալ։

Ե. Լիցին այսուհետեւ բանք քո քաղցունք եւ մխիթարականք, բայց ըստ բանիցդ՝ եւ ուղղութեանն օրինակ դրթած իցէ։

Յուշ լիցի քեզ, ո՛րդեակ, զի եղբայրն

քս որ ապաշխարեացն՝ մարդ է եւ ոչ հրեշտակ, յիշեա զի ոչ արդարութեան որ վրէժ խնդրիցէ, այլ դթածն արդարութեան պաշտօնեայ ես դու։

Զգոյշ լինիջիր զի մի զգինի նոր ի տիկս հինս արկանիցես, մի կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ, եւ մի բեռինս ծանունս եւ դժուարակիրս ի վերայ ուսոցն դիցես, զոր թերեւս եւ մատամբ անգամ շարժել չկամիցիս։

Զ. Սակայն, ո՛րդեակ, բռնադատեա զնոսա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ես քեզ. պատուիրեալջիր զի կասեսցին գործել թիւրս, տուր հրաման զի ուսցին ըստ պատուիրանաց բարիս առնել։

Մի համարեսցիս թէ ողորմածութեան իցէ զմարդարիտս առաջի խողոց արկանել, կամ զհաց հրեշտակաց տալ այնպիսեացն՝ որ եղջերաւն խոզից զուարճանայցեն։

Եւ մի կարծիցես թէ գթութիւն իցէ թողուլ զյանցանս նոցա՝ յորս բնաւ չիցէ ինչ ուղղութիւն, եւ արձակել զմեղս այնպիսեացն՝ որոց ապաշխարութիւն եւ զղջումն՝ համարեսցի զգօնութեամբ թէ պատիր եւ ընդունայն է։

Ի մի՛ առ, ո՛րդեակ, զոր ինչ ասեմն։ Մի թէ ողորմածութիւն հաշուիցիս զայն՝ եթէ ուրուք մատուցեալ զթեթեւադոյն

ինչ յանցանս քեզ յայտ առնիցէ եւ յայլմէ ամենայնէ անպարտ զանձն ցուցանիցէ, ուր պլէք որ ի նմին վիճակի դտանիցին՝ ի ծանր ծանր մեղս անկեալ իցեն. եւ դու չառնիցես ինչ հարց եւ խնդիր, այլ զանց արասցես եւ արձակեսցես։

Զի՞նչ այդ, ո՛ղեակ. չէ այս զոդիս ապրեցուցանել՝ այլ կորուսանել։

Ո՞չ բազում հիւանդք իցեն՝ որ ի յեսին ճգնութեան անդ ասիցեն ցբժիշկն՝ թէ Բարուք կամ։ Եւ եթէ եւ բժիշկն՝ նորա բանիցն հաւատասցէ եւ ասասցէ՝ թէ քաջ է, բարեկամ, արի, կեր, ա՛ռբ. արդարեւ իսկ անկանէր հիւանդն այն ի կենաց։ Եւ յորժամ մեռանիցի հիւանդն՝ գովեսցե՞ս դու արդեւք յայնժամ զբժիշկն։

Ապաքէն դատովեսցես իսկ եւ ասասցես՝ պարտ էր նմա այլ եւս քննել, պարտ էր հարցանել։

Հա՛րց այսուհետեւ, ո՛ղեակ, բրեա զորմդ, ասա քանի՞ ինչ պարտիս Տեառն իմում, զի մարթասցիս ապա ածել զնովիմբ՝ թէ հատո զոր պարտիսդ, խոտորեա ի չարէ ատի յայսմանէ, արա զայն բարի՝ որ քեզն հրամայեալ է. ապա թէ այլազգ ինչ առնիցես՝ ոչ կեցցես, եղբայր, այլ մեռցիս։

Է. Ողորմութիւն անուանեսցես զայն, եթէ եկեսցէ եւ մեւս ոմն եւ խոտովան լիցի առ քեզ՝ թէ լի իցէ կեղովք

քաջ քաջ հնացելովք եւ ընդ ոճիրս ընդելեալ. իսկ դու ասասցես՝ ցաւէ քեզ, Եղբայր, եւ իբրեւ ասցէ պատասխանի թէ ցաւէ ինձ, անդէն նոյնհետայն զանց արասցես եւ արձակեսցես։

Զի՞ այդ, սրդեակ. չէ ինչ այն զոգիսն փրկել, այլ կորուսանել։

Ցուցեր դու վիրաբուժի զփտեալ եւ գնեխեալ վէրս անդամոյ քո։ Պարտ եւ արժան էր ի բաց զայն անդամ հատանել՝ զի մարմինն պահեսցի։

Այլ նա չիշխեաց չհամարձակեաց դնել քեզ զայն առաջի, եւ ոչ ասել թէ կարեւոր է, այլ դարմանեաց եւ եթ զվէրն եւ կապեաց։

Յետ սակաւ ինչ ժամանակի ի վերայ անցանելոյ՝ եռաց ճարակեցաւ փուտն, անբժշկական եղեւ ախտն, կայ մնայ քեզ մեռանել։ Զի՞նչ միտս ունիցիս զվիրաբուժէն։

Յայտ է թէ ասիցես՝ վատահ լիեալ նմա զվէրս իմ ցուցի՝ զի բժշկեսցէ։ Եթէ ասացեալ էր նորա թէ հարկ ի վերայ կայ զվէրն կտրել՝ հաւանէի իսկ։ Զատաց, չհրամայեաց, պարտապան է մահուան իմոյ։

Զանուն փոխեսջիր, սրդեակ։ Այս այն քահանայ է որ չպատուիրէ մեղաւորի որ սովորեալ իցէ, եւ չասէ թէ Եղբայր, ձեռն քո դայթակղեցուցանէ

զքեզ, հատ գնա եւ ընկեա ի քէն։ Ոան քո, ակն քո գայթակղեցուցանէ զքեզ՝ հատ, խլեա, ընկեա ի քէն, ապա թէ ոչ՝ նոքօք հանդերձ անկցիս ի գեհեն հրոյն։

Այս ինքն է՝ եթէ ոչ զյանցմունս եւ զպատուիրանազանցութիւնս յորս սովորեալ իցես՝ ի բաց ընկեացես, մի թողցի քեզ մի յայսմ աշխարհի եւ մի ի հանդերձելումն։

Ը. Արդարեւ, ո՛րդեակ, եթէ զօգուտ ապաշխարողին խնդրիցես, եթէ զհոգի նորա ողորմածութեամբ որպէս եւ պարտիսդ, կամիցիս ապրեցուցանել, պարտ եւ պատշաճ է քեզ փոյթ յանձին ունել՝ զի մի առ աչօք ինչ եւ վեր ի վերոյ մեղքն ծածկեսցին, այլ եւ արդեամբք իսկ ի ներքուստ ի բաց ջնջեսցին, բարձցին եւ անհետ լիցին։

Որսմ չէ իսկ մարթ թէ լինիցի, բայց՝ յորժամ ճշմարտիւ իսկ ստրջասցի ապաշխարողն, եւ միամտութեամբ հրաժարեսցի ի յանցանացն, զսովորութիւն եւ զմոտաւոր պատճառս մեղացն ի բաց արասցէ, զանիրաւ ինչսն այսրէն յետս դարձուսցէ, ընդ թշնամեացն հաշտեսցի եւ զվնասն զոր այլոցն հասուցեալ իցէ՝ տուժեսցի

Եւ դարձեալ՝ որպիսի՞ ինչ ողորմածութիւն իցէ այն, ո՛րդեակ, որ ամենեւին

իսկ կուրաբար, առանց ինչ կանոնի եւ առանց խորհրդականն զգօնութեան իւրաքանչիւր ում եւ պէտ ումեք եւ իցէ թէպէտ եւ չիցէ իսկ պատրաստեալ՝ զերախտիս արձակմանն բաշխեսցէ։

Ո՛ սուտ խաղաղութիւն, որ պատերազմ ի սրտի թողու։ Ո՛ խաբեպատիր դեղ, որ թմբրութիւն ածէ եւ ոչ բժշկութիւն, սատակումն եւ ոչ կենդանութիւն։

Ո՛ անիրաւ դատաստան, յորում՝ վասն զչարակամ առն զմիտս հաճելոյ, իրաւունք իմ առնին վատարանդի։

Քանզի, ո՛րդեակ, որ զմեղաւոր որ չիցէ զղջացեալ եւ ոչ յանօրէնութենէ իւրմէ դարձեալ՝ կամ զիտութեամբ եւ կամ վասն յանցաւորն ոգիտութեան անդիտացեալ արձակեսցէ, զխաղաղութիւն իմ տայ թշնամւոյ իմում՝ որ ատեայ զիս, եւ զանձն իմ ի ձեռս նոցա մատնէ՝ զի ի խաչ հանցէ։

Թ. Տես, ո՛րդեակ, զի՞արդ երբեմն առն իմ լինի այր աւազակաց, տես ո՛ր-պէս յանցանեն անդ քահանայք անզգաստք։

Ո՛ նոր Պիղատոսք, որ հեղգութեամբ եւ յանցաւորն ներողամտութեամբ մատանեն զիս ամենեցուն որ խնդրիցեն։

Ո՛ մարդարէք անօրէնութեան, որ կարեն կարկատեն զբարձկնեարդ ի նեղքոյ

ամենայն արմկան ձեռին, եւ առնեն գլխադիրս գլխոյ ամենայն հասակաց, եւ այսու իմն զօրացուցանեն զձեռս անօրինաց՝ չդառնալ ամենեւին յանօրէնութեանց իւրեանց եւ ի ճանապարհաց իւրեանց չարաց, եւ այնպէս զապաշխարողն իւրեանց առնեն ի խոստովանութեան անդ որդիս գեհենի կրկին եւս քան զյարուաջն:

Այո՛ իսկ ընկալցին զանիրաւութիւն իւրեանց ըստ անիրաւութեան նոցա. նոյնպէս եւ անիրաւութիւն ատոց մարգարէիցն այնոցիկ եղիցի:

Արդարեւ հասցէ ի վերայ նոցա սրբութիւն իմ. վասն զի ոչ զմարդկան իրս դատիք դուք, այլ զՏեառն. եւ դատաստան զոր դատիցին՝ անդրէն ի նոսա դարձցի:

Ժ. Ո՛րդեակ, ո՛րդեակ, ի բաց լիցի ի քէն այդչափ անիրաւ, այդչափ անողորմ, այդչափ ժանտ ողորմածութիւն:

Յուշ լիցի քեզ՝ զի ոչ եթէ արձակելոյ եւեթ, այլ եւ կապելոյ եւս իշխանութիւն եւ պատուիրան տուաւ քեզ:

Գուն դիր այսուհետեւ բաղում հաւատեաւ, զի ի պաշտաման քում ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին: Յայնժամ լիցիս հաւատարիմ եւ իմաստուն հաղարապետ:

ԳԼՈՒԽ ԽԸ.

Վասն փոխոյ զմեղաւորն դարձոյանելոյ։

Ա. Զ՚ՄԵՂՍ քո բարձի ի վերայ խաչին, ուրդեակ, զի մեղայ մեռեալ՝ կեցցես արդարութեան։

Զի մարմին մեղացն խափանեսցի՝ եկի, վաստակեցի, քարոզեցի, չարչարեցայ, մեռայ։

Իսկ արդ կամիցի՞ս, ուրդեակ՝ կամիցի՞ս լինել Հովիւ ըստ սրտի իմում, աշխատ լեր հաւատարմութեամբ, զի ջնջեսցի անօրէնութիւն։

Զդեա, ըստ քում կարի, զմեղաւորս ի մկրտութիւն ապաշխարութեան, ի թողութիւն մեղաց։

Եղիր առ նոսա, եւ զոր օրինակ հրեշտակք զՂովտ հանին արտաքս ի Սոդոմայ, հար բուռն զձեռանէ նոցա՝ որ զկորըստեան ճանապարհն գնայցեն. եւ ջանա ածել այսորէն ի շաւիղս փրկութեան։

Բ. Ո՛ւրդեակ, սիրե՞ս զիս։ Ահաւասիկ սաքս վերատին ի խաչ հանեն զիս հանապազօր յանձինս իւրեանց, ընուն թշնամանօք, ապտակակոծ առնեն, ճաղկեն, փշովք պսակեն, եւ դու ցուրտ եւ անշարժ անտատան կացեալ հայիցիս յայդ ամենայն։

Լային սուրբ կանայքն, իբրեւ տեսին զիս՝ զի ընդ խաչափայտիւ եւ ընդ վի-

բոլք պարտասեալ՝ երթայի ի տեղին Գողգոթայ, յուզեցան յանձինս իւրեանց առ զպրուցս բարկութեանն, զի չէին իշխան ազատել զիս. եւ դու, որդեակ, որ բաւականդ ես ի նորոյ չարչարանաց զերծուցանել զիս՝ ոչ առնիցես։

Եւ դու, բարեկամդ իմ, ոչ կացցես վասն իմ հակառակ մեղաւորաց, որ ամպարիշտ ձեռօքն հարկանեն զիս եւ կեղէբեն հանապազ։

Բարձ, բարձ, որչափ եւ ձեռնհաս իցես, զպղծութիւնս ամպարշտութեան, զարձս զմեղաւորս, զի թողեալ լքեալ զմեղս իւրեանց՝ խնայեսցին յիս։

Գ. Բարեկամք իմ եւ ծանօթք իմ մեկնեցան յինէն, թողեալ զիս՝ փախեան։

Ամպարշտութիւնք, դողութիւնք, անամօթութիւնք, շնութիւնք, հայհոյութիւնք, արբեցութիւնք, նենգութիւնք, խաբեութիւնք, յափշտակութիւնք յաճախեն օր ըստ օրէ. անչափ է թիւ համարոյ չարեացն, եւ քահանայք իմ լուռ եւ եւեթ կան։

Ո՛ բարեկամք իմ. զեարդ պատահեցայք ինձ անողորմք։ Քահանայքդ, ընկալարուք զկարաս, զի մի բարկացայց եւ կորուսցիք ի ճանապարհացն արդարութեան։

Դ. Ոչխարք իմ մոլորեցան ի ճանապարհս դժոխոյ, յանդունդս տանջանաց

ճեպեցին, եւ զոր պահապանս կարգեցի հօտին իմոյ՝ նոքա ոչ աղաղակեն, ոչ ընթանան եւ ոչ դարձուցանեն զոչխարսն։

Ցրուեցան առաջի աչաց հովուացն, եւ եղեն կերակուր գազանաց։

Ո՛վ տարապարտարօտք՝ որ ընդ վայր հարէք զխաշինս իմ. սրտմտութեամբ իմով յանդիմանեցիս զձեզ, բարկութեամբ իմով խրատեցիս զձեզ, տաց հուր եւ զորդունս ի մարմինս ձեր, եւ լացջեք դուք ի սգման մինչեւ յաւիտեան։

Ե. Ո՛րդեակ, ո՛րդեակ, եթէ մեղրի՝ զի ոք ի ճշմարտութենէ, դարձո զնա, ապրեցո զանձն նորա ի մահուանէ։

Արտասուեա ի վերայ նորա, բուռն հար զնմանէ, խրատեա, խորհուրդ տուր նմա, յորդորեա, ցոյց սէր, կալ զտիցն, մի ամաչեր համբուրել։

Որոտա ի նա զդատաստանս իմ, ցոյց նմա զհուրն բորբոքեալ եւ զտեղին յաւիտենից։

Ստիպեա զնա յապաշխարութիւն, զօրէն բարւոյ բժշկի՝ որ ի դեղ դարմանոյ զհիւանդն ստիպիցէ։

Զ. Ասացեալ դու ի Յովհաննէս յաշակերտն՝ զոր սիրէի, տես թէ ո՛րպէս զպատանին որ յառաջ յանձն լիեալ էր Եպիսկոպոսի, եւ ապա առաջնորդ աւազակացն կացեալ՝ ի մէջ զինուց սրիկայիցն ընդ լերինս եւ ընդ խոխոմս ինդբեաց,

ած, դարձոյց, թէպէտ եւ ծերացեալ իսկ էր ինքն եւ պէտքեալ։ Երթ առ մեղաւորս եւ արա եւ դու ըստ նմին օրինակի։

Գ Լ Ո Ի Խ ԽԹ.

Ցաղագս ինչ պարտ է աղօթս արանել վասն ծերոց։

Ա. Խնդրեցի ի Հօրէ իմմէ, եւ ետ ինձ զՀեթանոսս ի ժառանգութիւն. խնդրեա, սրդեակ, եւ տացէ քեզ զմեղաւորս ի դարձ։

Եւ Ստեփանոսի որ խնդրեացն՝ զՊաւղոս, եւ եւ Մոնիկայ որ աղաչեացն՝ զԱւգոստինոս. խնդրեա եւ դու եւ ընկալցիս։

Ամէն ասեմ՝ քեզ, զի զոր ինչ խնդրիցես ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ քեզ. հաւատա թէ առնուս՝ եւ եղիցի քեզ։

Բ. Լուար, սրդեակ, զզղջութիւն եւ զդղջացութիւն աղօթից։ Երդուայ ես Տէր եւ ոչ եւս զղջացայց։

Իսկ արդ եթէ իցեն ի հօտին որ քեզ յանձն է՝ ոչխարք մոլորեալք եւ կամ բնաւ կորուսեալք իսկ, զորս չկարացեր ձայնիւ խրատու, պաղատանաց եւ կրշտամբութեան դարձուցանել՝ աղօթս արա։

Զօրինակն ետուր, զրանն քարոզեցեր,

կայ մեայ աղօթք. երեքին սաքա, եւ մեծ քան զերկոսին՝ աղօթք։

Աղօթս արա այսուհետեւ զի առաքեսցէ Հայր իմ զմխիթարիչ Հոգին իւր, որ խօսեսցի ի սիրտս նոցա, դարձուսցէ զնոսա եւ խղեսցէ զկապանս նոցա։

Զոր այլոց որ աղօթս արարին՝ շնորհեաց բաղում անդամ, զնարդ քեզ որ ուխտիւք խնդրես՝ զլանայցէ։ Աղօթս արա վասն ամենեցուն, աղօթս արա մանաւանդ քան զամենայն վասն մեղաւորաց։

Գ. Բարեխօս եմ առ Հօր ես Օծեալ նորա. մատուցեր Հայի յերեսս իմ։

Արիւն իմ քաջ ի բաց ազնուագոյն խօսի առաջի երեսաց նորա քան զարիւն Հաբելի։

Ահա, որդեակ, ի քո ձեռս եմ, մատոս զարիւն իմ, մատոս զմարմին իմ, մատոս զիս բովանդակ Հօր ի պատարագի ամենայն զթով վշտակցութեան վասն մեղաւորաց՝ զի դարձցին։

Մատոս մանաւանդ վասն այնոցիկ՝ զորս զիսիցես զի ծանր ծանր յանցանօք բեռնաւորեալ իցեն, եւ դժոխակազոյն կապանօք վարակեալ եւ կաշկանդեալ։

Մատոս, ես եմ քաւութիւն մեղաց եւ մեղաւորաց։ Մատոս, զայս սուրբն իմ Հանապազ զորձեցին, եւ յայն սակս իսկ այնչափ մեղաւորս գարձուցին։

Դ. Լ. եւ առ իս յերկինս խօսելի հղօր՝ Մարիամ մայր իմ. ի յաւիտենից ոչ լուաւ՝ եթէ կարդայ զ առ նա՝ եւ լքեալ մերժեցաւ։

Արդ եթէ տագնապեցիս ի վերայ անօրէնութեանց ժողովրդեան քո, դո-չեա առ Մարիամ, միսիթարիչ է վըշ-տացելոց։

Եթէ ցանկացիս շնորհս առանձինս ի դարձուցանել զամպարիշտս, կարդա առ Մարիամ, օգնական Քրիստոնէից է եւ մայր ապաւաճեղէն շնորհաց։

Եթէ յուսահատք իմն թուիցին քեզ մեղաւորքն, կարդա առ Մարիամ, ա-պաստան է մեղաւորաց, եւ մայր ողոր-մութեան, ընդ Հովանեաւ պաշտպա-նութեան նորա կացո զնոսա։

Զինք ինչ ազգ շնորհաց եւ օրհնու-թեանց, զոր չկարիցէ նա նոցա ընդու-նել, եւ զոր չպարտիցիս դու վասն նոցա ակն ունել վստահութեամբ ի նմանէ։

ԳԼՈՒԽ Ծ.

Վասն զհիւանդս խնամելոյ։

Ա. ՀԻՒԱՆԴ էի եւ ոչ տեսէք զիս. զայս, որդեակ, հարից կշտամբութեամբ յերեսս մարդկան յաւուր դատաստանի, ապա որչափ եւս առաւել քահանայից։

Յանցանք են ոչ մատուցանել հիւան-դաց զմարմնական նպաստս կարեւորս,

քանի եւս աւելի զՀոգեւորականն չմատակարարել։

Վտանգի ի հիւանդութեան մարմինն, այլ յառաւելագոյն եւս վտանգի կայ հոգի։

Մարմին ի հող դառնայ, այլ հոգի անցցէ ի դատաստան, երթիցէ ի տուն իւր յաւիտենից։

Սակայն ահ մեծ է, որդեակ, անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ, ապա որպիսի ինչ փութով պարտ եւ պատշաճ իցէ քեզ յելս զՀոգիսն պատրաստել։

Բաբէ. եթէ անձն մի եւեթ քոյով քանցանօք ի յետին տագնապի անդ վրիպեալ ի սրբարարն շնորհաց գտանիցի, եթէ առ քոյոյ չփութոյդ զարձակումն, զսուրբ թոշակն եւ զօծումն վերջին ոչ ընկալցի, եւ վասն այնորիկ լցեալ եւ ծածկեալ յանցանօք առաջի իմ կացցէ եւ դատեալ պարտաւորեսցի, որպիսի յանցանս գործէիր, որպիսի վրէժխնդրութիւն մնայր քեզ յայնժամ։

Յաւիտեանս յաւիտենից անիծանէր զքեզ անձն այն կորուսեալ, եւ յաւիտեան լկէր զքեզ եւ տանջէր։

Բ. Այսուհետեւ յորժամ լսիցես եթէ մի ոմն յոչխարացն կարի հիւանդացեալ է, ընթա առ նա։

Եւ յետ ցաւակիր ցաւոց նորա զանձն ցուցանելոյ, եւ մարդասիրութեամբ եւ

քաղցրութեամբ ի սիրտ նորա մտանել, զպաշտօն քո մատոյ նմա առաջի։

Եթէ ընկալցի զայն՝ կատարեա, ապա թէ ոչ ընկալցի եւ հիւանդութիւնն ի վտանգ անդր մերձենայցէ, դեղերեաց կաց հատատուն, պաղատեաց, կրշտամբեա, ստիպեաջիր։ Զիք եւ չիք իսկ բնաւ յապահովութիւն մեծ բաւական՝ ուր յաւիտենականութիւնն ի վտանգի կայցէ։

Ապա մի մեկնեսցիս, մինչ չեւ զոչխարն ի վերայ ուսոց քոց ընկալեալ իցես։

Գ. Օ՜հոգի շնորհաց կարդացեալ ի վերայ՝ լուիջիր զնոսատուութիւնն։

Օգնեա հիւանդին. զդոյշ լեր զի մի երկայնաձիգ բանիւք աշխատ արասցես զանձն նորա՝ որ վաղ իսկ ախտիւն տկարացեալ է, բայց սակայն զամենայն զկարեւորս հարց եւ քննեա։

Հարց մանաւանդ եւ տես եթէ իցէն ինչ մեղք ծածկեալ եւ թաքուցեալ յառաջին խոստովանութիւնն, որ ցայսօր իսկ զեսիղճ մտաց նորա ծանրացուցանիցէն։

Ի բաց պարուրեա զամօթն սուտ. բրեա զորմն, եւ հան արտաքս զոսկերս մեռելոց։

Ո՜րչափ վերս գտցես բազում անդամ։ Որպիսի գործս անօրէնութեան,

զոր եթէ ոչ խմաստութեամբ ի բաց կորզեսցես, մինչեւ ցմահ պահեսցեն ախտաժէտքն առ իւրեանս, եւ ընդ անձինս նոցա եւ անօրէնութիւնք իւրեանց ենչքեսցեն ի հող։

Որպիսի ծառայութիւն մատուցանիցես, եթէ զպիղծն զայն եւ զդարշելի գաղանութիւն քակեալ խորտակեսցես։ Որպիսի միսիթարութիւն հիւանդին չամբեսցես։ Քանի խոշտ խափանիչս փրկութեան ի բաց բարձցես։ Երանելի լեցիս, ո՛րդեակ, եթէ զայդ արասցես։

Նա եւ զառանձինն ինչ մեղս կենաց՝ որչափ վիճակ անձինն եւ իրացն հանգամանք ներեսցեն, չանա իմանալ։

Պատուէր տայջիր եւ փոյթ արա զի մերժեսցին պատճառք մերձաւորք, գայթակղութիւնք բարձցին ի միջոյ, հաշտութիւնք միւսանգամ անկեսցին եւ հաստատեսցին պարտիք։

Դիր ի վերայ թեթեւ ինչ ապաշխարութիւն հանդոյն հանգամանաց հիւանդին, խրատեալ եւ պատուիրեալ իսկ՝ զի յորժամ յառողջութիւն դառնայցէ, միւսանգամ նորոգ մատիցէ ի խոստովանութիւն, եւ զդիպող պատիժ պատուհասի հատուցմանն ընկալցի։

Դ. Յետ զխոստովանութիւնն լսելոյ՝ խօսեաց ի բոլոր սրտէ ի սիրտ նոցա.

արձակեա սլաքս, զարթո յաւս, թե-
լադրեա ասդՒանս, գրգռեա բան կարի
յարատասուս, վառեա զսէրն, անկեա ի
միտս նորա զվստահութիւն։

Բազում մեղաւորք խոստման լինին
ի մահուան, սակաւք ի փրկութիւն հա-
սանեն առ ի շղոյժ զղջման՝ որ թէ լիեալ
էր որչափ պարտ եւ պատշաճ է, յայն-
ժամ զՀիւանդն զայն՝ թէպէտ եւ ամ-
պարշտագոյն եւս իցէ՝ ապաշխարող եւ
սուրբ յարդարէր։

Ապա զամենայն փոյթ ի մէջ առեալ
թեւակոխեսջիք, զի զՀիւանդն որչափ
եւ ձեռնհաս իցեն՝ ի բարձրագոյն աս-
տիճան կատարեալն զղջման ածիցես։

Ե։ Եւ իբրեւ զապաս սրբոյ պաշտա-
ման քո կատարեսցես, մի թողցես վաղ-
թացեալն զոր սրբով թողչակաւ հան-
դուցեր եւ օծմամբ ափոփեցեր։

Որդի ծնաւ Աստուծոյ, ջանա սնու-
ցանել զայն սրդի իբրեւ մայր խնամա-
առաւել քան զառաւել արդարացու զնա
եւ սրբեա որ պատրաստեալ իսկ է յա-
ռաջագոյն։

Ի Հիւանդութեան առաւելագոյն
ճշնի սատանայ, քանզի գիտէ թէ խուն
ինչ ժամանակ ունի։

Երթ այսուհետեւ սակաւ ի տես Հի-
ւանդին, զի զօրացուցես զնա ընդդէմ
դարանաց թշնամւոյն, ի շնորհան Ա-

տուծոյ հաստատեսցես, ի ցաւս նորա օգնեսցես, ի վարանն մխիթար լինի-ցիս, եւ երբեք երբեք արձակեսցես եւս զնա։

Թելադիր լեր նմա զի զսրբոյ հաւատոյ, զյուսոյ, զսիրոյ եւ զկատարեալն զղջման գործս ցուցցէ. շնչեա ի սիրտ նորա զտենչանս յաւիտենիցն երանութեան։

Ցանձն արա նմա ասատուածեղէն կամացն հպատակ լինել, ի համբերութիւն յորդորեա, եւ զՔրիստոսի Ցեառն զխաչելութիւն մատոյ ստէպ։

Հայցեա վասն նորա զՏիրամօրն եւ զսրբոց զբարեխօսութիւն. տուր նմա, եթէ իցէ քեզ համարձակ, զսուրբ Ներսէսութիւնս։

Զ. Ապա եթէ վասն գործոց քոց յաճախութեան չկարիցես ստէպ ի հիւանդ անդր մերձենալ, ջանա, ուրգեակ, զի այլ ոմն սուրբ եւ իմաստուն ոք՝ զօգնութիւնն զոր վերագոյն ասացի՝ մատուցէ նմա, եւ յաճախագոյն զբոյց տացէ քեզ զհանգամանաց հիւանդին, զի գոնեայ ի մեծի վտանգի՝ գայցիս առընթեր հիւանդին։

Եւ եթէ ի կարօտութեան զհիւանդն տեսանիցես՝ ընդ հոգեւորականն եւ ժամանակաւորս եւս խառնեսջիր լրջմտութեամբ ըստ քում կարի։

Ո՛ղեակ, թէ զայդ արասցես, լեցիս այր ողորմութեանց, բարձրացուցիս զքեզ յեկեղեցիս ժողովրդեան իմոյ. զի հիւանդ էի եւ տեսեր զիս։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Վասն մարդասէր խնամոց տէր ընթերն։

Ա. ՈՂՈՐՄԱԾ եւ գթած եմ, ո՛ր-դեակ, երկայնամիտ եւ բազումողորմ, քաղցր առ ամենեսեան, եւ գթութիւն իմ ի վերայ ամենայն արարածոց իմոց։

Ո՛ղեակ, ոչ եկի զոգիս մարդկան կո-րուսանել, այլ կեցուցանել. եւ առ ի փրկել՝ ոչ եթէ սուսեր ինչ՝ այլ քաղ-ցրութիւն արկի ի կիր։

Կապանք իմ եղեն կապանք եւ զօդ սի-րոյ, բեռն իմ փոքրագի, լուծ իմ քաղցր։

Կամիցիս, ո՛ղեակ, կամիցիս զհոգիս որսալ։ Կամիս զնոսա ինձ ի հնազան-դութեան կացուցանել. ցոյց քաղցրու-թիւն, արա սէր։

Բո՛ւռն է իբրեւ զմահ սէր. ամենայնի յաղթէ, զթանձրամիտս եւ զխստա-սիրտս նուաճէ։

Տեսցեն զքեզ ոչխարքն թէ զամե-նայն ինչ ի սուրբ եւ ի սեռն ցանկու-թենէ փրկութեան անձանց նոցա եւ ի մայրենի սրտէ գործիցես, եւ կամօք կա-մակարութեան տացեն քեզ զանձինս իւրեանց։

Բ. Իսկ թէ ասէիր առ նոսա Հոգւոյն Պաւղոսի՝ եթէ վկայ է ինձ Աստուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին գթովքն Քրիստոսի Յիսուսի։

Ո՛ղբեակք, բերանք մեր բացեալ են առ ձեզ, եւ սիրտք մեր ընդարձակեալք։ Ոչ ինչ նեղիք ի մէնջ, բայց եթէ ի գութս ձեր նեղիցիք. իբրեւ ընդորդեակս ունիմ, ընդարձակեցարուք եւ դուք։

Ո՛ղբեակք, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչեւ նկարեսցի Քրիստոս ի ձեզ։ Ո՞ հիւանդանայ եւ ոչ ես հիւանդանամ։ Ո՞ դայթագղի, եւ ոչ ես տապանամ։

Եթէ այսպիսի ինչ բանս ի սրտէ բարբառէիր առ ոչխարան, կիարդ խանարհեցուցանէին զլսելիս իւրեանց։ Ո՛րպէս բանային զսիրտս. կիարդ զկարատան ընդունէին։ Զկարդ զպատուիրանս պահէին։ Ո՛րպէս զհետ քո ընթանային ի շաւիղս ճանապարհաց իմոց։

Նոքին իսկ են ճշմարտիւ վարդապետք՝ որ յորժամ խստութեամբ խրատու եւ հրահանգաց հայր իցեն, գիտիցեն եւ մայր լինել աղեօք գթութեան։

Գ. Ապա լեր, ո՛ղբեակ, մայր գթած իմոց ոչխարաց, ոչ կեղծաւորութեամբ բերանոյ՝ այլ միամտութեամբ սրտի եւ արդեանցն գործովք։

Եւ շրջեցայ բարի առնել եւ բժշկել զամենեսին, եկ, որդեակ, զկնի իմ։

Եթէ տեսանիցես զոչխարն զի ընդ բեռամբ աղքատութեան ճնշեալ հեծիցէ, թեթեւացս ըստ կարի հեզութեամբ զբեռն նորա ուսովք քովք եւ ողորմութեամբք։

Եթէ գայցես զհիւանդն ընդ տառապանօք ախտին տրտմեալ եւ տխրեալ, ձեռն տուեալ կանգնեա զնա, օգնեա նմա խորհրդով եւ բանիւք մխիթարութեան սփոփեա։

Եթէ պատահեսցէ քեզ եւ այլ ոմն ընդ լծով մեղայ կքեալ եւ կորացեալ, իբրեւ զհայր անառակ որդւոյն անկիր զնորա պարանոցսն, ընկալ քաղցրութեամբ զոչխարն կորուսեալ, եւ լուա արտասուօք մարդասիրութեան։

Եթէ կարծասիտ ոք եկեսցէ՝ սրբատապնդեա զնա խիստանօք քաղցրականն խրատու. եթէ զսատակ ոք եւ զխրատապարանոց դատանիցես՝ ժուժկալ լեր համբերութեամբ, եւ դու հաստատուն՝ տարջեր տկարութեանց այնր անհաստատանոյ։

Հակառակութեանց քոյոյն ոչխարայ ժուժկալեա հաստատութեամբ։

Մի յուսահատ լենիցես, յսրժամ ցորեան սերմանեալ իցես եւ փուշս հրձեսցես։ Եւ, որդեակ, անդստին ի մարդ

մինչեւ ցխաչ ոչ դադարեցի վասոակել վասն զՀոգիս փրկելոյ, եւ սակայն սա-կաւք փրկին։

Դ. Մի իսկ եւ իսկ վաղվաղակի զամենայն համօրէն յոռութիւնս խլել արմատաքի կամիցիս. բուռն եւ սաստիկ նախանձ ի կոճոպել զմոլորութիւնս՝ աւաւելագոյն եւս դառնացուցանէ զՀոգիսն եւ ի չարիս հաստատէ։

Զոմանս պարտ է քակել մանաւանդ տակաւ տակաւ, եւ ոչ ուժգին ի բաց պատառել, զկէս հարկ է թողացուցանել առ ժամանակ մի եւ անտես առնել։

Զոմանս ի հոգւոց պարտ եւ պատշաճ է նախ հնարիւք գթութեան փորձել, քան զամօթ դառն կշտամբանաց վայրապար կուտել ի վերայ։

Յիրաւի ուրեմն եւ կարի իսկ նմանագոյնս ասաց մի ոմն ի յաջորդացն Պետրոսի թէ Սուրբ Եկեղեցի ինչ ինչ սաստկութեամբ ուղղէ, ինչ ինչ թողացուցանէ հեզութեամբ, ինչ ինչ ընդ չտես առնէ խորհրդով եւ հանդուրժէ, որպէս զի բազում անգամ զչարն յորմէ խորշի եւ գարշի՝ հանդուրժելով եւ անտես առնելով կարճեսցէ։

Ապա զամենայն հնարս հնարեսջիր պյտուհետեւ, զի նախ զսիրտն զքեւ ածիցես քաղցրութեամբ, եւ ապա յետոյ ուղղեսցես զնոսին խրատուք։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Վասն արուեստին մտաց։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, առեր զՀոգի սուրբ ի զօրութիւն, մի լինիր այսուհետեւ կարճողի։

Զօրացիր եւ մի երկնչիր, լեր քաջ ի պատերազմի, եւ մարտիր արութեամբ։

Որչափ եւ տկար եւ անզօր իցես, յիշեա զի ես ընտրեցի զքեզ՝ զի քեւ զՀրզօրս յամօթ արարիցս։

Որչափ եւ խստապարանոցք իցեն՝ զորս նուաճելն պարտիս, սակայն յիշեա զի արարի զդէմս քո հաստատուն առաջի երեսաց նոցա։

Թէպէտ եւ համօրէն աշխարհ հակառակ քո զէնս առեալ ճակատեսցի, մի զանգիտեսցես եւ մի խուճապեսցիս ի յանկարծական երկիւղէ, ես որ յաղթեցի աշխարհի՝ ընդ քեզ եմ իբրեւ հզօր պատերազմող, վասն այնորիկ հալածեսցին եւ իմանալ զՀնարս ոչ կարասցեն։

Բ. Ա՛ՐԴ, ո՛րդեակ, քանզի կոչեցար դու միանգամ յինէն հովուել զՀոգիս, եւ ստիկան եւ յանձանձիչ օրինաւոր կարգեցար ոչխարաց իմոց, ապա մի՛ ի մոռացօնս արկանիցես զպատուիրանս իմ եւ մի՛ երկմտեսցես ի խոստմանէ իմմէ։

Տես թէ ո՞ր յոռութիւնք ապրդեալ մնեալ իցեն, զո՞ր չարիս պարտ իցէ քեզ

հալածական առնել, զմի բարիս տուծել եւ խնամել. եւ յետ խմաստութեամբ զհնարս հայթայթանաց՝ որովք զայդ ամենայն յարդիւնս կարասցես ածել՝ իմանալոյ, արի եւ գործեա։

Ասա համարձակ ցթագաւորս՝ թէ Ոչ է օրէն։ Ասա անիրաւ առաջնորդի՝ Դու ես այրն այն։ Ասա ցամպարիշան վերացեալ բարձրացեալ՝ Վայ քեզ, ի չարիս մեռցիս, անցիր եւ ահա ոչ իցես։

Ասա ցնոսա որ անարժանս ի քէն պահանջիցեն՝ Ինձ հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել՝ քան մարդկան։

Ասա ցայնոսիկ որ ոչն ընդունիցին զբանս քո՝ Վայ քեզ Քորազին, վայ քեզ Բեթսայիդա, ահաւասիկ զփոշի ոտից իմոց թօթափեմ ընդդէմ ձեր ի վկայութիւն։

Ասա ցկեղծաւորսն՝ Վայ ձեզ, որք բռեալք. հարկանելոյ է զձեզ Տէր։

Ասա ցնոսա որ ոչ երկնչին անարժանութեամբ ի սեղան իմ մատչել, Ելցեն արտաքս շունք, չէ օրէն ինձ տալ զՍրբութիւն՝ շանց։

Արձակեա նեռս եւ փոյլատակունս՝ զի զամենայն անօրէնութիւնս ցրուեսցես։

Խորտակեա զհպարտութիւն հարբատաց, կարձեա զմեծատանց զսգահութիւն, նուաճեա զապականութիւն պղծոց։

Ի բաց փշրեա զառելութիւնս թշնամեաց, ցածս զմոլեգնութիւնս բարկացողաց, որոտա ընդդէմ հեշտութեանցն մարմնաւորաց։

Քակեա զերիտասարդացն զպարանցիկս եւ զխառնակեցիկ կեանս. բարձ ի միջոյ զգիրս ամպարշտութեան եւ զլրկութեան, կարկեցո զցուցս խեղկատակութեան, հատ ի բաց զհայհոյութիւնս։

Գ. Ա՛յժ իսկ յորժամ զճշմարիտն խօսիցիս՝ լեցիս թշնամի, եւ յարուցէ առատանայ հալածանս հակառակ քո, բայց չես ի վեր ոք քան զիս, ո՛րդեակ, եթէ զիս հալածեցին, ապա եւ զքեզ հալածեսցեն։

Կարող ես արդարեւ լռելով եւ շնորհելով՝ թափել զքեզ ի հալածանաց. եւ այնու իսկ հաճոյ լեցիս մարդկան, այլ Քրիստոսի ծառայ ոչ իցես։

Ցուշ լեցի քեզ զի նա՝ որ ե

Այրս այս ոչ խնդրէ զեսաղաղութիւն ժողովրդեան՝ այլ զչարիս, եկայք կալցուք զնա, ջնջեսցուք յերկրէ զանուն նորա. պաշտօն մատուցանիցեմք Աստուծոյ՝ եթէ արկցուք զնա յարեւէ։

Յայնժամ դու, ո՛րդեակ, լեր աներկեւղ, կա՛ց առաջի թագաւորաց եւ դատաւորաց, եւ ընծայեցո զանձն քո առաջի նոցա հաստատուն եւ անխախուտ եւ ի բանտս եւ ի տանջանս եւ ի մահուան, որպէս զի ցուցցես այնու՝ թէ մեռանել մեռանի ճշմարիտն քահանայ՝ այլ ի պարտութիւն ոչ մատնի։

Ե. Ո՛րդեակ, ամենայնի կարող ես ինեւ որ զօրացուցանեմն զքեզ։

Պետրոս թողեալ անձին իւրում՝ ի ձայն բարբառոյ աղախնոյն զիս ուրացաւ. Պետրոս յինէն օգնեալ՝ արութեամբ եւ քաջութեամբ զչարչարանս խաչի կրեաց։

Ապա մի երկնչիր եւ մի ասիցես՝ թէ մարդ եմ, եւ զի՞արդ այդպիսեաց ժուժայցեմ։

Գիտասջիր, ո՛րդեակ, զի յայնմ ժամու ոչ դու իցես որ քեզոյն տոկայցես, այլ Հոգի իմ՝ որ տոկայն ի քեզ։

Ասա այսուհետեւ, արդարեւ իսկ, Տէր, թէ հարկ իցէ՝ տաց զանձն իմ վասն իմոց ոչխարաց։

Գիտեմ, Աստուած իմ, զի ոչ անհնարին հրամայես դու, այլ ձեռնկալու լի-

նիս ի հրամայելն քում, զի զոր ինչ հրամայեսդ՝ հանել ի գլուխ մարթասցուք։

Խոստացար, Տէր, եւ կատարեսցես, յօգնել ինձ նպատցիս եւ յընկերել ինձ փութասցիս։

Գիտեմ յո հաւատացեալն եմ եւ հաստատեալ եմ։ Այլ կալայց զպաշտօն իմ կատարեալ, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու ընդ իս իցես։

Զ. Այսպիսի իսկ արութիւն մնաց վայել է իմում զինուորի, ՛որդեակ։ Քաջ լեր, քաջ լեր. հեռի արա ի քէն զծուլամտութիւն վեհերոտն Հեղեայ։

Մի լոկ ի չարիսն եւեթ հայեցցիս եւ վհատեալ յոգւոց հանցես, մի մեղմագոյնս յանդիմանեսցես եւ ասասցես՝ թէ ՛որդեակք, ոչ բարւոք է գործդ զոր դուքդ առնէք։

Մի կարի իմն հեզութեամբ խրատեսցես, երկուցեալ թէ գուցէ զայրասցին եւ հեստեսցեն։ Կշտամբեա, ՛որդեակ, կշտամբեա զնիսատն խստիւ։

Քաջ լեր, քաջ լեր. մի կասկածեր եթէ գուցէ համբաւ եռանդան նախանձու քո՝ զնծբիծ եւ զթշնամանս քահանայիցն թուլամտաց յանձն քո ձգեսցէ։ Ոչ եթէ նոցա՝ այլ ինձ համարս տալոց ես։

Քաջ լեր, քաջ լեր. մի հայեցցիս մի յաջ եւ մի յահեակ։

Մի ասիցես թէ զինչ խորհեցին, զինչ ասացին թէ զայս չար արդելու-ցում եւ զայն բարի պահանջեցեմ։ Այնմ միայն ուշ դիր՝ թէ զինչ ինչ պարտ իցէ քեզ առնել։ Հարց նախ խորհուրդ յի-մաստնոյ՝ եւ ապա գործեսջիր։

Սակայն եւ այն իսկ յուշ լիցի քեզ՝ զի հայր արժան է քեզ լինել եւ ոչ ե-թէ բռնաւոր, հովիւ եւ ոչ գայլ, բժիշկ եւ ոչ ապանիչ։

Արդ յիշեա դու զհեզութիւն եւ զքաղցրութիւն նա եւ յորժամ հասա-նիցէ քեզ վառեալ բորբոքել նախան-ձու. մի արմատաքի տակակոտոր խլեա-ցես, այլ մանաւանդ ուռդանեսցես. մի ցրուեսցես, այլ առաւել տածիչ լինի-ցիս. մի ապանանիցես, այլ մանաւանդ թէ առողջացուսցես։

Այսուհետեւ իմաստութեամբ եւ խորհրդով գործեսջիր, ուրդեակ, այլ ի խորհրդոյ մարմնոյ՝ որ թշնամութիւն է Աստուած, ամենեւին իսկ զդոյշ լի-նիջիր։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Վասն խորաքիթութեան եւ դիմակաւորութեան։

Ա. ԼԵՐ խորագէտ իբրեւ զօձ, եւ միամիտ՝ իբրեւ զաղաւնի. ահա քեզ, ուրդեակ, զէնք. սոքիմբք յաղթեսցես։

Սրբութեամբ՝ զանձն քո փրկեսցես.

խորագիտութեամբ եւ միամտութեամբ՝ զայլս սուրբ յարդարեսցես։

Խորագիտութեամբ՝ նախանձն առնի հուր համակ վառեալ. իսկ առանց խորագիտութեան լինի մրրիկ կործանիչ։

Խորագիտութեամբ՝ հեղութիւնն առնի օծութիւն առողջացուցիչ. առանց խորագիտութեան՝ թոյն լինի ապականիչ։

Խորագիտութեամբ՝ խօսք քարոզչի որպէս սլաք թափ անցանեն. առանց խորագիտութեան՝ լիցին բանք ընդ օդս թռուցեալք։

Խորագիտութեամբ՝ զամենայն ինչ օգտիւ վճարեսցես. առանց խորագիտութեան՝ զընաւ ի զուր եւ ընդ վայր գործեսցես։

Խորագիտութեամբ՝ իմաստնագոյնս զճոխս պատուեսցես, եւ պատուեալ՝ շինեսցես. առանց խորագիտութեան՝ կամ նոցա ծառայեսցես, կամ գառնացուսցես զնոսա, եւ այնու իսկ վնասակարագոյն յոյժ սրբոյ պաշտաման զքո թշնամիս գործեսցես։

Խորագիտութեամբ՝ ամենեցուն, որչափ եւ մարթ եւ հնար իցէ, հաճոյ լիցիս. առանց խորագիտութեան՝ կամ զխղճամիտն վասն կարի իմն ընտանութեանդ գայթագղեցուսցես, եւ կամ զմեղաւորս ի ձեռն տմարդի եւ շինակա-

նադոյն խստութեան ի քէն ի բաց հեռացուցես։

Խորագիտութեամբ՝ զպաշտօն քո փառաւոր արասցես. առանց խորագիտութեան՝ կամ առաւել քան զչափն երկայնելով՝ ձանձրոյթ արկանիցես, կամ թէ բնաւ վաղվաղելով՝ զջերմութիւն եռանդանն նուազեցուցանիցես։

Խորագիտութեամբ՝ զժանգաբեր թոյնս ի սրտից խոստովանողացն ի բաց թօթափեսցես յաջողութեամբ, եւ զառաքինութեան զսերմն քաղցրութեամբ ի միտսն տնկեսցես. իսկ առանց խորագիտութեան՝ զսիրտս ապաշխարողացն փակեսցես եւ տաղտուկ ի միտսն ծնանիցիս։

Խորագիտութեամբ՝ զքանչելագոյնս հովուեսցին եւ յերիւրեսցին ոչխարքն քո. առանց խորագիտութեան՝ օգտեալ վարատեսցին, կամ յաղմկի եւ ի շփոթի կացցեն։

Բ. Մ՛րդեակ, խնդրեա յինէն խորագիտութիւն. պատուականագոյն է նա քան զակնս պատուականս, եւ ամենայն ինչ որ պատուական է՝ չարժէ զնա։

Հայցեա զիմոյ աթոռոյ զդարանակալ իմաստութիւն, զի յամենայնի վարեսցէ զքեզ։

Որոնեա զայն առ իմաստունս, եւ գնեա քեզ զայն. երթ առ Անանիա,

խորհուրդ ատէպ խնդրեա յիմաստնոյ, նա պատմեսցէ քեզ՝ զինչ քեզ պարտ իցէ առնել։

Զէ արժան քեզ, ո՛րդեակ, իսկ եւ իսկ վստահ լինել յանձն քո, զոյզն ինչ լոյս ի քեզ է. յուզեալ շարժիս երբեմն կարեօք՝ եւ համարիս թէ նախանձ իցէ։

Խնդրեա յառնէ երկիւղածէ ուսանել առաւել քան զքոց հնարագիտութեանց զհետ երթալ։

Գ. Լեր միամիտ. յամենայնի յատակ եւ անկեղծաւոր ցոյց զանձն քո. զործեսջիր առանց սնգուրի եւ պաճուճանաց, եւ խօսեաց առանց նենգութեան։

Հաւատա ինձ, զի միամտութիւն հզօրագոյն է քան զամենայն խորամանգութիւն եւ զհնարագիտութիւն։

Կոչեա զոչխարան ի սրտէ, եւ ոչ բերանով եւեթ, եւ եկեսցեն ժողովեսցին ի ձայն բարբառոյ քո։

Կշռամբեա զմեզաւորս մի՛ սատակագոյն եւ պատուհասագոյն բանիւք, այլ ցաւովք եւ վշտակից լինելով, յայնժամ լայցեն եւ զոփայցեն, յայնժամ դարձցին։

Դրդեա զկարճամիտսն մի՛ իբրեւ ուէր, այլ որպէս զարծուի որ գրգռիցէ զձագս իւր ի թռչել, եւ յայնժամ ճեպեսցեն եւ ընթացցին։

Դ. Ո՛ երանեալ միամտութիւն, որ յաղնուագոյն սրտէ բխեալ ելանես, եւ

զանեինդրայն եւ զանեսողայ զսիրտս ո-
ղորքես, եկ եւ տիրեա յամենայն ի
գործս իմ։

Սովիմբ հաճոյ եղէց քեզ, Աստուած
իմ, որ սիրես զուղիղս սրտիւք, եւ հա-
ճիս ընդ բարութիւն անկեղծիկն ոգւոյ։

Այսուիկ հաճոյ եղէց մարդկան, որոց
սիրտ հայրենի եւ տունս մօր ընծայե-
ցուցից։

ԳԼՈՒԽ ԾԴ.

Վասն հեղութեան։

Ա. ՄՐԴԵԱԿ, հեղութեամբ զպաշ-
տօնդ քո կատարեալ կալ, եւ յարանց
ընտրելոց սիրեցիս։ Նս եմ Գառն Ա-
ստուծոյ, շատ իսկ աշակերտին՝ եթէ ե-
ղիցի իբրեւ զվարդապետ իւր։

Զառաքեալս իմ առաքեցի իբրեւ
զոչխարս ի մէջ գայլոց։ Եւ զոր օրինակ
հեզութեամբ Գառին ի սպանդ վարե-
լոյ՝ մահու եւ դժոխոց յաղթեցի, նոյն
օրինակ եւ ոչխարացն հեզութեամբ՝
յաղթեցին աշխարհի առաքեալքն իմ։

Ես Տէր առաջնորդեցից հովուի հե-
զոյ։ Հովուի հեզոյ ուսուցից զճանա-
պարհս իմ։ Որպէս եղէ ընդ Մովսիսի,
զոր ի հեզութեան իւրում սուրբ արարի,
նոյնպէս եղէց ընդ նմա։ Նովաւ ոչխարքն
իմ ձայնի իմում լուիցեն, ապրեսցին եւ
ոչխարքն եւ հովիւն ի միասին։

Բ. Ապա լեր, սրդեակ, հովիւ քաղցր եւ հեզ։ Զի մի արատեցի պաշտօն քո՝ լեր հեզ առ ամենեսին։

Ընկալ սիրով զոյդ հասարակ ճաշատն եւ զանազատ, զմեծատուն եւ զաղքատ, տուր նոցա խորհուրդ եւ լիջիր օգնական. ընդ այնպիսեաց՝ որ նեղիցեն եւ ծանրանայցեն՝ մի խստիւ գնայցես, այլ քաղցրութեամբ։

Ոչ մերժեցի ես զեկեղեալն առ իս, այլ գթութեամբ ընկալայ եւ լցի երախտեաւք։ Զմանկտին ընկալայ, ժողովրդեանն որ անճահս իմն խոնէր՝ ուսուցի, զտառապեալս եւ զտնանկս մխիթարեցի, հիւանդաց այց արարի եւ բժշկեցի, զհամբոյր մատնչին ոչ մերժեցի։

Ուսիր յինէն ունել գութ, ողորմութիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզութիւն, երկայնմտութիւն։

Մի տրտմագոյնս քան որչափ պիտոյ իցէ՝ հայեսցիս յոք, մի բան ինչ խիստ ասիցես, մի դառն պատասխանեւով զտառապեալն տրտմեցուցանիցես, մի ընդ անիրաւիչն զայրացիս, մի հրաժարեսցիս թողուլ հակառակորդին, յաղթեա բարեաւն չարին։

Ամենայնի համբեր, ամենայնի ժուժկալեա, մի ումեք մեղանչեր, զգոյշ լեր ի կռուոց, զգոյշ լեր ի հակառակութեանց։

Առաջնորդաց քոց յամենայնի յօժարութեամբ եւ հաւատարմութեամբ հնազանդ լինիջիր, մի՛ ինչ բնաւ նշմարանս ապստամբութեան կամ անհնազանդութեան ի սրտի պահիցես: Զի որ հեղ ծառայ է Քրիստոսի՝ չգիտէ ընդդէմ ոգորել, իբրեւ կաւ ի ձեռն բրտի՝ որ ոչ երբեք ասէ՝ թէ զի՞ առնես զիս այդպէս:

Գ. Զարմացիր, ո՛րդեակ, եւ նախանձաւոր լեր հեզութեան Մարտինոսի: Ոչ ոք եռեռս երբեք զնա բարկացեալ, ոչ թախծեալ եւ ոչ ի ծաղր հատեալ. միշտ մի եւ նոյն էր, հանապազ երկնաւոր իմն զուարթութիւն ի դէմսն բերէր:

Այնպիսի համբերութիւն էր նորա ընդդէմ համօրէն անիրաւութեանց, որպէս զի եւ ի գձուձ կղերաց զրկանս կրէր անպատիժ անպատուհաս, եւ ոչ վասն այնորիկ հան ընկէց զնոսա ի տեղւոջէն իւրեանց եւ կամ բնաւ ի սիրոյ իւրմէ ուծացաւ:

Ոչ ինչ այլ ինչ էր երբեք ի բերանի նորա՝ բայց Քրիստոս, ոչ ինչ ի սրտի նորա՝ այլ դթութիւն, խաղաղութիւն եւ ողորմածութիւն: Բազում անգամ եւ վասն մեղաց այնոցիկ՝ որ չարախօսք եւ զրպարտիչք նորա երեւէին, սովոր էր լալ եւ արտասուել:

Տես, ո՛րդեակ, եւ զՍաղէս, ընդ ամենայնի ամենայն եղեւ քաղցրութեամբ,

զի զամենեսեան շահեսցի։ Տես եւ լեր նմանող։

Դ. Սակայն մի մոռացիս զայն, որ-դեակ, թէ առաջնորդ եւ յանձանձիչ ես դու հօտին իմոյ։ Ոչ եթէ ճարակել եւ եթ եւ բուծանել պարտ իցէ քեզ զոչխարսն, այլ եւ յանձանձել եւս եւ դարմանել, եւ յայն սակս իսկ եւ երբեք երբեք խրատել եւ յանդիմանել։

Ապա տես զի մի այդչափ հեզ իցես՝ մինչեւ զիրաւունս ճիշդն վարչութեան կորուսանիցես, եւ մի ճիշդ այնչափ՝ որպէս զի զբնաւ հեզութիւն քաղցրութեան ի բաց մերկանալ։

Բեր յանձին եւ զհեզութիւն եւ զխրատ այնպէս՝ զի մի ի դթոյ արդահատութեան կասեսցես ինչ՝ յորժամ զխեռ ոք կշտամբեսցես, եւ մի զխրատուն խստութիւն ամոքիցես՝ յորժամ զխօթամիտսն մխիթարեսցես։

Ե. Ո՛վ Տէր, որ ինքնին իսկ քաղցրութիւն ես եւ հեզութիւն. զի արդ գեղեցիկ ես, սիրելի իմ, եւ բարենշան։

Ցոյց ինձ զերեսս քո, տեսից զդթութիւն դիմաց քոց, զաչաց քոց զվայելչութիւն, զքաղցրութիւն շրթանց քոց, զբարութիւն քոց ձեռաց, զդեղեցկութիւն քոյոցն գնացից, եւ ի վեր քան զայս ամենայն զաղնուագոյն սէր սրտի քո։

Տեսից զքեզ զԱստուածդ աստուածոց,

հանապազ առաջի աչաց իմոց կալայց զքեզ, զի յափշտակեալ ի քումէ յանբաւ սիրելութենէ՝ թեւակոխեցիս զքո հեզութիւն զանձամբ առնուլ եւ նմին նմանող լինել։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Յաղագս համբերութեան։

Ա. ԷԱՐԿ եղեւ ինձ չարչարել, որդեակ, եւ այնպէս մնանել ի փառս իմ։

Վասն որոյ իսկ այսորիկ յամենայն ժամ ի տանջանս պատրաստ եղէ, վասն այսր վաստակաւոր եղէ ես ի մանկութենէ իմմէ, զմին իրի եղէ այր ի հարուածս եւ զիսացի համբերել ցաւոց։

Եւ քեզ, որդեակ, պարտ եւ պատշաճ է բազում նեղութեամբք մնանել յարքայութիւն իմ։

Յայն սակս ասացի քեզ, որդեակ, կամիս զկնի իմ գալ. Ա՛ռ զխաչ քո։

Արդարեւ իսկ, որդեակ, ամենայն ինչ հաստատեալ կայ ի խաչի, եւ եթէ գոյր ինչ լաւագոյն առաւել քան զչարչարել՝ ցուցեալ իսկ էր իմ զայն քեզ գործովք եւ բանիւք։

Ապա պիտոյ է քեզ համբերութիւն, զի զկամս Հօր իմոյ արարեալ՝ հասցես աւետեացն։ Ապա համբերութեամբ պարտիս ընթանալ ի պատերազմ որ առաջի կայ քեզ։

Բ. Իսկ արդ՝ եթէ քրիստոնեայ միայն լիներալ էր քո, ասէի ցքեզ՝ ո՛ւռ, ո՛ւրդեակ, զլսհան համբերութեան եւ միշտ կա՛լ ընդ քեզ։

Զի կեանք եւ վարք քրիստոնէի՝ եթէ բատ Աւետարանի կեցցէ, խաչ եւ մարտիրոսութիւն է։

Այլ քահանայ ես, առաջնորդ այնոցիկ՝ որ յայսմ խաչի եւ ի մարտիրոսութեան յայսմիկ կեանս պարտին վարել։ Ապա ո՞րչափ եւս առաւել պիտոյ է քեզ համբերութիւն։

Առանց համբերութեան՝ զի՞արդ ի համբերութիւն զոչխարս իմ յորդորեսցես. առանց համբերութեան՝ ո՞րպէս աշխատութեանց, անձկութեանց, քրքջանց եւ տառապանաց արբոյ պաշտամանդ տոկալ հանդուրժել մարթայցես։

Առանց այնր՝ ո՞րպէս ընդդէմ աշխարհի եւ սատանայի մարտնչեսցիս։ Առանց այնր՝ զի՞արդ կարիցես դիմակալ լինել զօրութեանցն ամպարշտաց ի քո վերայ յարձակելոց։

Առանց այնր՝ արդարեւ իսկ ոչ լիցիս յառաջադէմ, այլ պակասեալ դատանիցիս. ոչ յաղթեսցես՝ այլ յաղթեսցիս։

Առանց այնր՝ մեղկացի ի սակաւ ժամանակի ատուածպաշտութիւն քո, ցրտացի եռանդն քո. ոչ կացցես ի բարութեան, այլ իբրեւ զմրրիկ որ առ

սակաւ մի երեւեալ՝ եւ իսկ եւ իսկ յո-
եւպէտ խափանչայ ապականի։

Առանց այնր՝ արկցես այր ձեռն զմա-
ճով, այլ հայիցիս յեռս եւ վասն այնր
ոչ իցես յաջողեալ արքայութեան Ա-
ստուծոյ։

Գ. Իսկ համբերութեամբ ինձ որ ի
խաչ ելի՝ լիցիս կերպարանակից. այնու
ցանկ իմոց կամոց հպատակ կացցես,
զհաճոյս իմ արասցես հանապազ։

Այնու աքանչելապէս իմն զմեղս քո
քաւեսցես, այնու ընդդէմ փորձու-
թեանց լիցիս ամրացեալ։

Այնու եղիցես ճշմարիտ պաշտօնեայ
իմ, լաւ քան զհզօր եւ քան զայր որ
առնուցու զքաղաք հզօր, յատենի խոս-
տովանութեան եւ ի բեմբի՝ անխոնջ եւ
անվաստակ, ի վտանգս՝ աներկեւղ, ի
հալածանս՝ անշարժ եւ անխախուտ։

Ծիծաղեսցին զքեզ անօրէնք, եւ ոչ
ամաչեսցես, մարտիցեն ընդ քեզ եւ
դու գեր ի վերոյ լինիցիս։

Դ. Յուշ լիցի քեզ, որդեակ, չինք
իսկ բնաւ նեղութիւն՝ զոր իմ չիցէ ա-
ռաքեալ։

Ապա որպիսի ինչ եւ նեղութիւն հաս-
ցէ ի վերայ քո՝ ժուժկալեա համբերու-
թեամբ, որպէս այն թէ տեսանէիր
զՀայր քո զերկնաւոր որ իւրով ձեռամբ
պատուհասակոծ առնէր զքեզ։

Հեծէ թերեւս երբեմն բնութիւն քո տկար, այն մարդկօրէն իմն է. այլ տրրտունջել եւ քրթմնջել չէ օրէն:

Ո՛ղեակ, ժուժկալեա արութեամբ ամենեւին իսկ յանձն լինելով եւ լիով անխտրութեամբ, որպէս զի մի ի յաջողութիւն առաւել քան ի չաջողութիւն, յառատութիւն քան ի չքաւորութիւն, յառողջութիւն քան ի հիւանդութիւն, ի խաղաղութիւն քան ի հալածանս ի սրտի քում յօժարեսցիս եւ փափաքեսցես, ասելով յամենայնի՝ Տէր, պատրաստ է սիրտ իմ. Տէր, զի՞նչ կամիս զի արարիցս:

Ագնիւ, ծառայ բարի, ժուժկալեա տակաւին կատարելապէս, համբեր խնդութեամբ ամենայն ուրախութեան արժանի համարեալ՝ յորժամ ի պէտպէս փորձութեանց ի մէջ անկանիցիս:

Գիտասջիր զի հանդէս՝ յօրինեալ դորձէ զհամբերութիւն. իսկ համբերութիւն՝ գործ կատարեալ ունի:

Գիտասջիր զի որչափ եւս առաւել չարչարեսցիս, նոյնչափ անկասկածագոյնս եւ յապահովագոյնս յարքայութիւն իմ հասցես:

Ե. Ասասիկ քեզ, ո՛ղեակ, ճանապարհ ճշմարիտ որ տանի ի կեանս, դուռն՝ ընդ որ լինի մտանել ի քաղաքն վերին:

Ասիցես՝ անձուկ է ճանապարհն, նեղ դուռն, խիստ է բանն. այլ եւս իմն խստագոյն լիցի լսել երբեմն զբանն զայն յետին՝ Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական։

Խիստ է, որդեակ, բանն։ Եթէ վաստակն ահաբեկ առնէ՝ հրաւիրեալ կոչէ վարձուցն հատուցումն։ Առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս՝ զմեծութիւն յաւիտենականն փառաց գործէ ի մեզ։

Խիստ է բանն։ Այլ, որդեակ, եւ նախ զայն պահեցի։ Տես թէ որպէս կախեալ զնաչէ՝ զբերան իմ՝ ոչ բացի։

Խիստ է բանն։ Այլ սուրբք իմ զայն պահեցին։

Հայեաց ընդ առաքեալս, ընդ մարտիրոսս, ընդ այնչափ սուրբ քահանայապետս եւ ընդ այնչափ քահանայս, տես որչափ ինչ չարչարեցան, զի արդ հղօրագոյնս փորձեցան, որպէս ծանուցս նեղեցան, զի արդ ընդ բազմապատիկ հանդէսս եւ ընդ հրահանգս անցին։

Երթ, որդեակ, զհետ այնչափ բազմակոյտ վկայից, գիտացեալ՝ զի եթէ ընդ նոսա չառնուս յանձն չարչարել, ի բաց հրաժարիս եւ ի պսակելոյ ընդ նոսա։

Խիստ է բանն։ Այլ որչափ ճգունս չառնուն յանձն այնչափ արքունականք եւ վաճառականք վասն աշխարհի եւ

վասն ժամանակեան շահուց, այնչափ պատերազմողք՝ վասն ոնոսի փառաց, այնչափ ամպարիշտք՝ վասն բուն իսկ շարեաց։

Դախանձաւոր լեր, ՝որդեակ, նախանձաւոր լեր եւ զամբիթի հարջեր զի ոչ շարշարիս դու վասն երկնից, ուր նոքա՝ այնպէս շարշարին վասն ոչընչի։

Զ. Տէր, եղեցին կամք քո։ Ասա կիզեա, ասա կորեա. պատրաստ եմ եւ ոչ եմ խռովեալ։

Այլ դու գիտես, Աստուած իմ, հոգիս յօժար է, բայց մարմինս տկար։

Եթէ ի վեր քան զչափ եւ զպայման ածիցէ նեղութիւնն, եթէ ընդերկար տեւեսցէ, զիարդ կարիցեմ հանդուրժել։

Է. Ո՛ՐԴԵԱԿ, միթէ ո՞չ հայր իցեմ ես. ո՞չ իցեմ ես հաւատարիմ։

Արդարեւ ոչ արկից զքեզ ի փորձութիւն առաւել քան զկար քո, այլ ապարից ընդ փորձութեանն եւ զելն, զի համբերել կարասցես։

Աղօթս արա, ՝որդեակ, եւ համբեր. եւ տեսցես առանց երկմտութեան յիւրում ժամանակի զիմ օգնականութիւն եկեալ առ քեզ։

Գիտեմ ես զժամանակ եւ զպայման օգնելոյ եւ ազատելոյ զքեզ։ Ապա մի վհերեր այսուհետեւ ինձ յանձն առնել զքեզ ողջ բովանդակ։

Եթէ ընդերկար, ասես, տեւեսցէ բաւեսցէ նեղութիւնն։ Ո՛րդեակ, թէ միայն ոչ պակասեսցեն քեզ շնորհք իմ՝ զի՞ տաղտապիս, զի՞ զանգիտես։

Ո՞չ դոյզն ինչ է եւ սակաւօրեայ՝ որ անցանէ ընդ ժամանակի։ Զի՞նչ այն ամենայն առ յաւիտենականութեամբ։ Անսա սակաւիկ մի եւ տեսցես զարա-գահան կատարած։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Վասն գոյութեանն։

Ա. Վ Ա՛Ց մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն դայցէ դայթակղութիւն։ Լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա եւ ընկղմիցի ի խորս ծովու։

Արդ որպիսի՛ վրէժխնդրութիւն, ո՛ր-դեակ, կայ մեայ քահանայի՝ որ տայցէն դայթակղութիւն։

Որպիսի՛ ինչ պատիժ պատուհասի կրեսցէ նա՝ որում պարտ եւ պատշաճ էր ըստ իւրում պաշտամանն պատմել զարդարութիւնս իմ, եւ առնուլ զուխտ իմ ի բերան իւր, յորժամ դիցէ դայ-թակղութիւն յանդիման որդւոց Մօր Եկեղեցւոյ եւ յանդիման ոչխարաց իմոց։

Եկեսցէ, ո՛րդեակ, օր բարկութեան, օր մեծ եւ դառն յոյժ։

Յայնժամ ժողովեսցեն հրեշտակք իմ զամենայն դայթակղութիւնս, եւ արկ-

ցեն զնոսա ի հնոց հրոյ, եւ զքահանայից զդայթակղութիւնս ընկեսցեն ի խորս հնոցի։

Ո՛ քահանայքդ. վա՛յ աշխարհի ի դայթակղութեանց ձերոց. բայց առաւելագոյն վա՛յ ձերոց դայթակղութեանց ի բարկութենէ իմմէ։

Բ. Արդարեւ, ո՛րդեակ, մեծ եւս է անօրէնութիւն քահանայի որ դայթակղեցուցանիցէ՝ քան զմեղս Սոդոմայ, որ ի միում ի սակաւ ինչ վայրկենի կործանեալ յատակեցաւ ի հիմանց։

Լուր զի՛արդ դարան գործէ ինձ, ո՛ր-պէս մարտնչի ընդ իս անօրէնն այն։

Ի վերայ ժողովրդեան իմոյ կացուցի զնա, եւ ասացի բամ՝ փոյթ արա զի ինձ երկիր պագանիցեն եւ զիս միայն պաշտեսցեն։

Իսկ նա իւրովք օրինակօքն զծառայսն իմ ի պարտուպատշաճ արբանեկութենէ կորզեալ անջատէ եւ առնէ զի կողոպտակ լիցին յինէն չզինուորել ինձ, եւ տայ մատանել ի զինուորութիւն բանսարկուին սատանայի։

Անտի աճէ իմն թիւ համարոյ զօրացն սատանայի թշնամւոյ իմոյ, եւ նա ի բազմութիւն իւր խրախուսեալ՝ յանդգնագոյնս եւս ի հակառակ իմ յարուցեալ մարտնչի։

Նա աւանիկ նենդաւորն այն քահա-

նայ դաշինս միաբանութեան կռէ ընդ նմա հակառակ Քրիստոսի Որդւոյ իմոյ, զնշանս յաղթութեան նորա յափշտակէ եւ զձաղսումն առաքուր հարկանէ։

Զիշխան աշխարհիս արտաքս ընկէց Յիսուս. իսկ քահանայ շար զիշխան աշխարհիս թագաւոր կացուցանէ ի վերայ այնոցիկ՝ զորս իւրովքն գայթագղանօք ձգեալ ի մեղս ածէ։

Անարատ յարդարեայ զԵկեղեցի իւր Յիսուս իւրով արեամբն լուացեալ զնա. զանդամն Եկեղեցւոյ իւրովք գայթակղութեամբքն արատէ եւ զեղծուցանէ քահանայ անօրէն։

Ոչ այսչափ միայն, այլ եւ զՀոգին շնորհաց թշնամանէ եւ մարտ եւս տայ ընդ նմա գայթակղութիւն քահանայի։

Հեղէ զՄխիթարիչս զայս յորդեգիրս, զի կացցէ եւ մնասցէ ընդ նոսա, իսկ նոքա անօրէնութեանցն քահանայի նմանեալ՝ յորմէ եւ անիրաւութեանց ի վերայ հասեալ՝ զՀոգին զայն սուրբ մերժեն եւ ի բաց ընկենուն, զի ոչ բնակէ ի մարմնի վարեցելոյ մեղաւք։

Տես որպէս նա սրամ պարտ էր զհուր Հոգւոյ իմոյ ի սիրտս մտուցանել եւ արծարծանել, ինքնին իսկ իւրովք գայթակղութեամբք զայն հուր շիջուցանէ։

Ո՛ ժանտաժուտ քահանայ. վայ քեզ՝

ղր գոյթակղութեամբք չարիք պոպի-
սիք հասանեն։

Գ. Վայ քեզ որ կազդ առանց մե-
ծարանաց եւ ասուածպաշտութեան
առաջի ուղղանոյ իմոյ։ Յանպատկառու-
թիւն, յանհաւատութիւն եւ յամպա-
րշտութիւն ածեա զոչխարս իմ։

Վայ քեզ որ անասրբդ ես։ Վայ քեզ
որ ընտանի կանանց իցես եւ իբրեւ այն-
պիսի իսկ ծանուցեալ իցես։ Յանամօ-
թութիւն եւ յանօրէն կենաց կցորդու-
թիւն յօժարեցուցանես զոչխարսն իմ,
եւ ի խոհերս պղծալից ցանկութեանց
քոյոմն օրինակաւ թաթաւեալ պա-
տարես։

Վայ քեզ որ ագահդ ես եւ փոյթ
յանձին ունիս զանձս մթերելոյ։ Յար-
համարհութիւն որբոյ պաշտաման յոր-
դորես զոչխարս իմ, եւ զընչաքաղցն
զօրացուցեալ հաստատես ի կուոյն ծա-
ռայութեան։

Վայ քեզ որ կռիւս ունիցիս առանց
ինչ հարկի։ Ի կազս եւ յերկպառա-
կութիւն դրդռես զոչխարս իմ։

Վայ քեզ որ ատելութիւնս եւ թշնա-
մութիւնս ի սրտի քում եւ ի գործս
արտաքինս անուցանես։ Զպատուիրան
սուրբ սիրոյ ի բաց քակես քոյով օրի-
նակաւ եւ զթշնամիս հակառակորդս
պահես յատելութեան։

Վայ քեզ որ հպարտդ ես եւ անձնատուր ընդունայն պարծանաց։ Զխոնարհութիւն սուրբ եւ զհամեստութիւն ի բաց խլես քոյովքն գնացիւք եւ զոչխարան դրդեալ արկանես ի ինափառութիւնս վնասակարս։

Վայ քեզ որ սիրողդ համարեալ ես շուայտութեանց։ Զօրէնս ապաշխարութեան՝ որչափ եւ ձեռնհաս իցես, վերի ի վայր հարեալ եղծանես գործովք քովք. եւ զարբեցողս եւ զամենեսին որ ըստ մարմնոյ կեանս կեցցեն՝ արդարացուցանես ի չարիս իւրեանց։

Վայ քեզ որ չերկնչիս երգել ի խրախճանս զցուցս սիրոյ. եւ կամ յորժամ այլք երգիցեն՝ դու ծափս հարցես եւ կայթեսցես։ Այնու զբերանս ոչխարայն բանաս համօրէն խեղկատակութեանց, այնու իսկ ամենայն բանից լկտեաց օգնական լինիս։

Վայ քեզ որ զայրանաս ընդ նոսա՝ որ դառնացուցանենն զքեզ, եւ չզանգիտես հայհոյութեամբք եւ նզովիւք կոշկոճել զնոսա։ Զհամբերութիւն եւ զհեզութիւն ի բաց առնես յոչխարաց իմոց. զծնողս եւ զտեարս ածես ի կատաղութիւն ընդդէմ որդւոց եւ ծառայից, եւ զամպարիշտ մարդիկ ի բարկութեան իւրեանց ի սովորութիւնս հայհոյութեանց հասուցանես։

Վայ քեզ որ ոչ ամաչես կախել զորմոց տան քո պատկերս յայրատս, Հոլանեալս, ամօթալիցս, եւ այնպէս դնես առաջի աչաց ամենեցուն զայն՝ զոր եւ անուանել անդամ չէր արժան ի մէջ սրբոց, եւ ինքնին դլխովին լինիս վարդապետ պղծութեանց։

Վայ քեզ որ յառաւօտէ մինչեւ յերեկոյ յորսորդութիւնս անարժանս եւ ի խաղս անոտիս ուտս զանձն վատարանդի, որով ուսուցանես իմն թէ մարթ իցէ վայրապար ժամավաճառ լինել եւ թէ օրէն իցէ մարդոյ յայսմ աշխարհի ի զբօսանս եւ ի փափկութիւնս հատանել։

Վայ քեզ որ խիստ իցես առ Հայր եւ մայր քո, առ այնոսիկ՝ որ ծնանն զքեզ։ Զգութ որդւոց եւ զմեծարանս բառնաս ի միջոց եւ յանդգնութեան նոցա եւ ատահակութեանց տածիչ լինիս։

Վայ քեզ որ չունիս ինչ փոյթ յանձին զքոց ընդօծնաց, ոչ յանդիմանես զյոռութիւնս նոցա եւ ոչ արդելուս, որով անհոգութեան տեարցն եւ լրբենի բարուց ծառայից ուսուցիչ լինիս։

Դ. Ո՛րդեակ, քաւ ի քէն դայթակղեցուցանել զոք յիմոցն զայս օրինակ. մանաւանդ թէ զդոյշ լեր զի եւ ոչ զմի ոք ի փոքրկանց իմոց դայթակղեցուցես, չասեմ՝ մեղաք ինչ, այլ անդամ եւ ոչ ատուերաւ իսկ մեղաց։

Ո՛րդեակ, եթէ այս նիշ կամ այն նիշ կերակուր օրինաւոր՝ զեղբայրն քո գայթակղեցուցանիցէ, ոչ կերիցես զայն յաւիտեան։

Է իսկ քո իշխանութիւն ուտելոյ եւ ըմպելոյ. այլ եթէ յայսպիսի ինչ հանդամանս եւ ընդ այնպիսեաց ուտելով եւ ըմպելով՝ զեսիղձ տկարացն հարկանիցես, մի արասցես յայնժամ, ի Քրիստոս մեղանչես։

Ունիս իշխանութիւն զքոյր կամ զկին զոք ազգական առ քեզ պահելոյ, զայս աղախին ունելոյ, ընդ այնմ կնոջ խօսելոյ. այլ եթէ այնու զեսիղձ տկարացն հարկանես՝ մի արասցես, ի Քրիստոս մեղանչես։

Ունիս իշխանութիւն զայն ամենայն որ քեզն պարտիցին՝ պահանջելոյ եւ զիրաւունս սովորութեան խնդրելոյ. այլ եթէ ի դէպս ինչ զայսն առնելով զեսիղձ տկարացն հարկանիցես՝ մի արասցես, ի Քրիստոս մեղանչես։

Ունիս իշխանութիւն զկանանաց՝ զոր ի սրբում առենի ապաշխարութեան պահել արժան իցէ՝ խօսել ընդ բարեկամաց իմասանոց. սակայն եթէ գայցի զոր ի միջի՝ զորոյ զտկար մտացն խիղճ հարկանէ այն խօսակցութիւն, մի արասցես, ի Քրիստոս մեղանչես։

Ունիս իշխանութիւն ընդ բարեկամն

քո ուրախ լինելոյ · այլ եթէ այս կամ այն ինչ զբօսանք զնիզծ տկարի հարկանիցէ՝ մի արասցես, ի Քրիստոս մեղանչես։

Ունիս իշխանութիւն զայս ինչ կամ զայն պատմելոյ, այսպէս եւ այնպէս բարբառելոյ · այլ եթէ յայնպիսի հանգամանս կարող իցէ պատմութիւնն այն կամ բանն՝ ատելութեան ինչ ստուերաւ կամ բամբասանաց կամ լկտութեան եւ կամ թէ սրոյ եւ պէտ չարութեան եւ իցէ՝ զնիզծ տկարի ուրուք հարկանել, մի արասցես, ի Քրիստոս մեղանչես։

Ունիս իշխանութիւն զբաւոր ծայլ եւ զնատնաղնաց՝ առանց սրոյ եւ ողբմութեան ի բաց մերժելոյ · այլ եթէ զայդ արարեալ՝ անողորմածութեան ինչ ստուերաւ զտկարի ուրուք զնիզծ հարկանիցես, մի արասցես, ի Քրիստոս մեղանչես։

Ունիս իշխանութիւն զայն ոք խիստ եւ անխրատ մեղաւոր սատակագոյնս կրշատմելոյ · ապայն եթէ առաջի տկարի ուրումն զայդ արարեալ՝ ցասման ինչ ստուերաւ զնիզծ մնաց նորա հարկանիցես, մի արասցես, այրեմ խիզ պաաեհ ժամու սպասեսջիր։

Ընդնին երբեք երբեք հրամանագրք բարեպաշտութեան յՌեկեղեցւոջ, յորս թերեւս չկայցէ ինչ քեզ հարկ պատանելոյ · այլ եթէ ի գալ գտմարել ժո-

զովզդեանն՝ քո հեռաւորութիւն զնիրգ տկարացն հարկանիցէ, երթ լեր առաջի-կայ. զի թէ ոչ դացիս անդէն, զեղբայրն գայթակղեցուցեալ՝ մեղիցես ի Քրիստոս։

Ե. Այս լեջիր յամենայնի խորագէտ իրրեւ զօձ, զի մի՛ եւ զմի զոք ի փոքրըկանց գայթակղեցուցցես։

Զանա հնարեսջիր զնորին հակառակն՝ զի լեցիս յամենայնի օրինակ հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, արբութեամբ։

Ի սոսին յամենայնի. զայդ եթէ առնիցես՝ եւ զանձն ապրեցուցցես, եւ զայնոսիկ որ զքեզն տեսանիցեն։

ԳԼՈՒԽ ԾԷ.

Վասն զքահանայութեան եւ յաջողութեան։

Ա. Որդեակ, որդեակ, ահա սատանայ խնդրեաց զքեզ խարբալել իրրեւ զցորեան։

Զամենայն զոր խնդրէ կլանել, այլ զքահանայս իմ առաւել քան զայլսն ամենեսին. նոքա են կերակուրք նորա սիրելիք։

Զամենեսեան փորձէ նա, այլ զքահանայս իմ առաւել քան զայլս. զի յորժամ նոքա մեղիցեն՝ մեծ իմն անիրաւութիւն գործի ինձ, մեծ մնաս Եկեղեցւոյ իմում հասանէ եւ լինի գայթակղութիւն մեծ յայժ ժողովրդեան իմում։

Յամենայն իսկ եւ ի բնաւ յոռութիւնս չանայ հրապուրել արկանել զքահանայս սատանայ, այլ մնաւանդ ի յոռութիւնս ընդդիմակս զդաստութեան, քանզի դժնդակագոյնք եւս են եւ պղծագոյնք եւ ծանակագոյնք եւ ամպարշտագոյնք։

Արդ արթուն լեր, ո՛րդեակ, զի մի դողոյ եկեալ զդանձն զոր բարձեալ բերես յանօթ դիւրաբեկ՝ ի քէն ի բաց կորզեսցէ։

Յածուն եւ զդաստ պահեսջիր զանձն քո, ամենայն անարբութիւն կամ պղծութիւն կամ խեղկատակութիւն եւ անուանեսցի իսկ ոչ ի քէն, որպէս եւ վայել է սրբոյ։

Բ. Ա՛ռատաբս ելցեն շունք եւ լիրբք ի սրբութենէ իմմէ. քահանայ նուիրեալ է ինձ, սուրբ իմ է. մի տեսցէ զապականութիւն։

Զմարմին իմ գործէ, ի ձեռս առնու եւ ճաշակէ. ապա լիցի առանց արատոյ, զմաքրութիւն սրտի եւ մարմնոյ կալցի յանձին։

Եթէ անսուրբ եւ անպարկեշտ իցէ՝ զսրբութիւն իմ պղծէ, զմարմին իմ աղտեղէ, առաւել քան զայլս պարտական առնէ զանձն մարմնոյ եւ արեան իմոյ, առաւել քան զայլսն ամենեսին դատաստանս անձին իւրում ուտէ եւ ըմպէ։

Արհամարհեալ ուրուք երբեմն զօրէնսն

Մոմխիսի, առանց ողորմութեան պարտ էր մեռանել. իսկ ոչչափ սատիկ պա-տժոց արժանի համարիցիս զայն՝ որ զիս այսպէս առ ոտն հարկանիցէ:

Գ. Լոյն էին ի մէջ առաքելոց իմոց հպարտք, փառասէրք, ագահք, բար-կացողք, ուրացող նա եւ մատնիչ իսկ, եւ տարայ համբերութեամբ. այլ նշմա-րանս լկտութեան ոչ հանդարտեցի ի նոսա տեսանել: Քան զամենայն ատելի է ինձ այդ ապիրատութիւն:

Ո՛ղեակ, ո՛ղեակ, մի մնասցէ ի քեզ հոգի իմ՝ թէ մարմին իցես. ջնջեցիս զքեզ յերեսաց իմոց, եթէ ապակա-նեսցես զճանապարհս քո:

Սոդոմ եւ Գոմոր եղեն օրինակ հրոյ որ պատրաստեալն է քեզ ի յաւիտեան, եթէ թոյլ տացես հրոյն պղծոյ զսիրտ քո բորբոքել:

Գ. Ա՛յլ ո՞վ ես դու, ո՛ղեակ: Սուրբ անուանեալ կոչիս, հզօր քարոզիս յա-ռաքինութեան, իմաստուն յորջորջիս. սակայն զի՞նչ կայ ի սրտի եւ ի ծածուկս մտաց: Զի՞նչ գործեցեր ի ծածուկ:

Դիւրաւ կորնչի սրբութիւն, թէ ոչ բազում խնամով եւ հաստատեաւ ի նորին պահպանութիւն սկեսցես:

Իսկ արդ դու զի՞արդ դնաս ընդ փոր-ձութիւնան: Մերժե՞ս արդեւք զխոր-հուրդս, կարձե՞ս զցանկութիւնս:

Եղիր ուխտ ընդ աչս քո, զի մի հայեսցիս ի կոյս։ Ո՞չ զնորին հակառակն անխտիր համարձակ զնեսես զկոյսս, եւ զայթակղիս ի գեղ նոցա։

Խորշիս արդեւք եւ դարշիս ի կցորդութենէ եւ ի խօսից արանց լկտեաց։ Ո՞չ ընդ հակառակն ի ծաղր հատանիս ընդ նոսա առանց զգուշութեան։

Փախչիս ի վտանգէ դիպաց դիպաց։ Ո՞չ մանաւանդ սիրես շաղփաղփել ընդ կանայս, նա աւանիկ եւ քծնել եւ փաղաքշել։

Ե. Ո՞չ եւ զառանին կենաց քոց ասացից։ Ո՞չ վտանգաւ հարկանէ քեզ ծառայութիւն, յորոյ յաճախագոյնս հայիս յերեսն։ —

Ո՞չ աղջիկ մանկամարդ է, եւ ի վայր քան զահմանն սրբոյ եւ իմաստնագոյն կանոնի։ Ո՛ անհնարին վտանգիս. թէ ոչ երկնչիցիս յայնմանէ՝ ի նմին կորիցես։

Զի արդ կարիցես սուրբ եւ ցածուն մնալ, թէ ոչ կացցէ հանապազ ընդ մէջ քո եւ ընդ մէջ աղախնոյ քո սրմն մօտաւորութեանն Աստուծոյ, սրբոյ երկիւղի, եւ զգուշագոյն արթնութեան, եթէ ոչ սրբականն պարկեշտութիւն զամենայն զհայեցուածս քո եւ զբանս եւ զշարժմունս ուղղեսցէ, եթէ ոչ քո քահանայական ճոխութիւն՝ ցանկ յիւրում ի վայելուչ ծանրութեան զաղա-

խինն զայն պահեսցէ եւ զանօգուտ խօսակցութիւնս կարճեսցէ։

Ո՛րդեակ, զդշղ լեր անձին. անկան կործանեցան Դաւիթք, Սամփսոնք եւ Սողոմոնք։

Ո՜հ վասնզիս։ Հաւատա ինձ զի փորձիւ ասաց Աւգոստինոս, թէ առաջի Աստուծոյ ոչ ասեմ՝ գոի զմայրան Լիբանանու, զհովիւս հօտից զի ընդ ժանտագործ ախտիւս այսուիկ անկեալ ընկճեցան, զորոց զանկմանէն ոչ առաւելագոյն ինչ կասկածէի՝ քան զՅերոնիմեայ կամ զԱմբրոսիոսի։

Իսկ զի՞նչ եւս ասացից, ո՛րդեակ, զկուսանաց եւ զայրեացն մանկամարդաց՝ որ ընդ քո վարչութեամբն իցեն։ Ո՞չ ընդ կերպարանօք գթութեան եւ կրթութեան՝ զօղեալ բուսեալ կայ թոյն ընտանութեան եւ սիրոյ։

Երկիր, երկիր. ոչ եթէ սրբագոյն եւ հոլովագոյն եւ իմաստնագոյն ոք քան զնոսա իցես, որ վաղ իսկ անկան. զարհուրեսջիր ի խայթոցէ մեղաց. երկիր ի ցանկութեանն հրապուրանաց, երկիր ի խանձէ ժանտ ախտին։

Զ. Եթէ ոչ ինչ գիտիցես զանձին քո, ո՛րդեակ, տուր ինձ գոհութիւն ի սրտէ. վասն զի ոչ ոք զօրէ լինել ժուժկալ՝ բայց եթէ ես տայ։

Ապա եթէ ըստդատանիցէ զքեզ սիրտ

քո, լալով լացջիր եւ արտասուք յորդք ցծնօտս քո ոռոգանեսցեն։

Սրջացիր, յամօթ լեր. որչափ եւ ծանուցս յանցեար, նոյնչափ ծանուցս եւ ապաշաւեա։ Դարձ առ Հայր, ընկալցի զքեզ զզղջացեալդ զթութեամբ։

Արի, արի առանց յապաղութեան, ի բաց ընկեա ի քէն զկուռսդ, մերժեա զկինդ զայդ։

Ա՛ստ ասիցես թերեւս, ո՛րդեակ, ա՛ստ դործ է, ա՛ստ դժուարութիւն. այլ սակայն արքայութիւն երկնից բռնադատի եւ բռունք յափշտակեն զնա։ Ամէն ասեմ քեզ, ոչ զբոյն կարիցես շինջուցանել, եթէ ոչ զհուր ի բոյց աբուացես։

Նեղեա զմարմինն. մի փափկութեամբ կամ յղփութեամբ սնուցանիցես զնա, զի տակաւ հեստեալ ըմբոստանայ, եւ դու չլինիցիս յայնժամ բաւական ընդդէմ նորա խայթոցացն պահել զզգաստութիւն սրբութեան։

Կալ ի չափու զամենայն զգայունս քո. ի դատարկութենէ՝ իբրեւ ի ժանտէ փախիջիր. հայցեա շնորհս. զԱրիամ կարդա։

Մի եւս այլ յեռս հայեացիս. մի եւս ընկալցիս ի սիրտ զկամսն հին, զի լիցիս՝ որպէս պարտիսդ լինել՝ անխմար եւ զգաստ։

Գ. ԼՈՒԽ ԾԸ.

Վասն փարասէրութեան։

Ա. Որդեակ, առիմ ի քէզ յերկնից։ Այն յայտ իսկ է՝ թէ ոչ առ ընդունել յերկրի զհաղորդութիւն, զի իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ։ Ապա վասն ջրի արդեւք։ Ի կեցուցանել զկորուսեալն։

Իսկ դու առ ինչ եկիրդ։ Զի յետ իմ որոնդդ մարդկան լինիցին, ոչ եթէ զի նստցիս ընդ ամմէ կամ ընդ ձախմէ իմմէ յարքայութեան Երկնեցւոյ իմոյ։

Զի ամենեցուն պարտօնեայ եղիցես եւ ամենեցուն ծառայութեսցես, ոչ եթէ զի դրաւեսցես զնախաթոռս ի ժողովուրդս։

Զի՞նչ ասացեր ի մտանելն քում ի Սրբութիւնն։ Ո՞չ զայն, որդեակ, թէ Տէր է բաժին ժառանգութեան իմոյ եւ բաժակի իմոյ։

Եթէ Տէր՝ ապա ոչ փառք, ոչ բարձրութիւն եւ ոչ աէրութիւն իցեն բաժինք ժառանգութեան քո։

Բ. Բայց, որդեակ, չեւ եւս է մեռեալ սատանայ, օձն հին։ Գայ տակաւին ի մէջ որդւոց իմոց, եւ քանզի դիտէ թէ արմատ ամենայն չարեաց փառասիրութիւն է եւ հպարտութիւն, նմին իրի իսկ զամենայն հնարս հնարի եւ հայ-

թայթէ՝ զի զանենչանս փառաց եւ պատուոյ ի քահանայս բորբոքեսցէ։

Առեալ ածէ զնոսա ի վերայ աշտարակի տաճարին եւ անտի ցուցեալ նոցա զամենայն թագաւորութիւնս Եկեղեցւոյ եւ զփառս նոցա, Տեսէք, ասէ, յորպիսի բարձրութիւն մարթ է ձեզ վերանալ։ Արդ՝ ցանկացարուք եւ լինիցիք իբրեւ զաստուածս։

Զոր այս անուն կամ այն անուն ընկալաւ, եւ դուք մարթիք ընդունել։

Այս ինչ տեղի կամ այն նիշ աթոռոչ ինչ ընդհատ ձեզ վայել է, քան այսմ եւ այնմ մարդոյ. ոչ տեսլի ինչ անբաւական իցէք դուք այսմ կամ այնմ պաշտաման՝ քան զնոսա։

Աղէ ցանկացարուք եպիսկոպոսութեան, արդարեւ իսկ գործ բարի է։ Չէ պարտ չէ արժան ճրագի կալ մնալ ընդ գրուանաւ, եւ էք բարձրացարուք ի վերայ աշտանակի։

Այսու փորձութեամբ բազումք ձգեալ հրապուրին, եւ անդէն իսկ զկոնարհագոյն եւ զդուշնաքեայ պաշտամունս խոտեալ արհամարհեն քահանայքն այնոքիկ անզգամք։

Ցեռ սակաւ ինչ միոյ՝ վառեալ բորբոքին եւ ըղձանան առ բարձրագոյնսն։ Ապա եւ պաշտպանս խնդրեն, ճեպեն, ընթանան, զամենայն քար շարժեն,

զի յայն վայր յոր ցանկանն՝ հասանել մարթասցեն։

Մոռացեալ ամենեւին զայն թէ աշակերտ ճշմարիտ չընտրէ զտեղին, այլ ի Տեառնէ ընտրի նմա տեղի, եւ ոչ եթէ անձամբ առնու պատիւ, այլ կոչեցեալ յԱստուծոյ, որպէս եւ Ահարոն։

Որպէս եւ ես ոչ եթէ անձին ինչ շուք եղի լինել քահանայապետ, այլ նա՝ որ խօսեցաւն առ իս թէ Որդի իմ ես դու։

Գ. Ո՜ վնասակար ցանկութեանցն. ո՜ անզգայութեան եւ խստասրտութեան նոցա։ Կամին իմն մեծ քան զամենեսեան լինել, եւ ոչ փոքր քան զոք, ամենեցուն հրամանատար լինել, եւ ոչ ումեք հպատակ, ամենեցուն իշխել եւ ոչ ումեք ապատաւորել։ Զիւրեանցն խընդրեն եւ ոչ եթէ զՅիսուսին Քրիստոսի։

Որպիսի՜ ընդունայնութիւն, այսպէս պատուոյ ցանկանալ եւ ի կարդ բարձրագոյն զանձն ամբառնալ։ Զի որչափ եւ բարձրասցին՝ ոչ յագեսցին։

Որպիսի՜ անհանճարութիւն, ցանկանալ փառաց՝ որ այնպէս վաղ անցանէ։

Զի ո՞ւր են, ո՛րդեակ, ո՞ւր են տեարքն այնոքիկ եւ վարդապետք՝ զոր քաջ իսկ ճանաչէիր, մինչ թագիւ եւ խուրիւ զարդարեալ մեծապայծառ փայլէին։ Բա՜ւէ. այլք աւասիկ զշուք փառաց նոցա ստացեալ ունին։

Որպիսի հիքութիւն, նախանձ բերել ընդ նոսա որ ճոխքն են եւ մեծարգոյք, ցանկալ լինել նոցին զուգական, եւ զյաւիտենականն բարձրութիւն ի մոռացօնս արկանել։

Քանի՜ սակաւ ժամանակեայ են փառքն՝ զոր տան եւ առնուն մարդիկ։

Ո՜րչափ սուտ եւ պատիր փառքն են, որ սատիկ իմն տոգնապեցուցանէ զմարդն՝ յորժամ նովին ցանկանայցէ, եւ եթէ միանգամ ի բուռն արկանիցի՝ չերեւի ինչ այնուհետեւ հաճոյ յաչս, այլ յեւս իմն մեծ գրգեալ յորդորէ։

Ո՜ ահագին եւ սոսկալի փառացս, որ զքահանայ յառաւելագոյն պատիւ ամբարձեալ՝ դնէ ի վտանգի մեծի կործանման եւ անաչառական դատաստանին Աստուծոյ։

Եկեսցէ, եկեսցէ ժամն այն դողացուցիչ դատաստանի։ Եւ քանիք յայնժամ երեւեսցին կորանոք զյետին տեղին ունել, որք այժմ զառաջին բարձս ընտրիցեն եւ յառաջնում տեղւոջ բաղմիցին։

Որչափո՞յք երեւեսցին յայնժամ խոնարհեալ, որք այժմ զանձինս բարձրացուցանիցեն։

Դ. Ո՜րդեակ, զպատիւ իմ խնդրեսջիր եւ զփառս իմ եւ զշահաւէտն աշխատութիւն։

Մի ինչ երկրաւորաս Հայեսցիս, քանզի անցանեն եւ չեն տեղի հանդստեան քո։

Թէպէտ եւ ի պատուի կեանս կէիր մինչեւ ցայսօր ժամանակի, զինչ շահ կամ ո՞ր օգուտ լինէր բնաւ քեզ անտի, թէ հատանէր քեզ ատէն ի սմին իսկ վայրկենի մեռանել։

Խնդրեա զկամս իմ եւ զհաճոյս կարգաց տեսչութեան իմոյ։

Լիջիր դու մտադեւր փոքր, որպէս ոք սր ցանկանայցէ լինել մեծ։

Լեր հաճ եւ հաւան եւ շատացեալ ի յետին տեղւոջ որպէս եւ յառաջին բարձին։

Կաց մտադեւր արհամարհ եւ ընկեցիկ, անփառ եւ անանուն յաշխարհի՝ որչափ եւ պատուաւոր եւ մեծարգի քան զայլսն իցես։

Այնպէս իմն տիրեսցեն ի քեզ կամք իմ եւ սէր պատուոյ իմոյ, որպէս զի առաւել եւս մխիթարեսցեն զքեզ եւ աւելագոյն հաճոյ լեցին քեզ՝ քան զամենայն երախտիս բարերարութեան որ տուեալ իցեն կամ որ տացին քեզ։

Ամէն ասեմ քեզ, սրդեակ, թող զանձն քո եւ դադարես զիս. կամ առանց ինչ ընտրութեան՝ եւ շահեսցիս հանապազ. լեր ինձ յանձն ողջ բոմանդակ, մի ինչ զանձնէ հոգացեալ, այլ ինձ ապաստան լիեալ։

Լեր ինձ յանձն եւ ի նմին հանապազորդեսջիր, ոչ զհետ երթեալ զայնոցիկ՝ որ զառաջինն զբնաւ մատուցանեն, այլ յետոյ ապա բախեալ ի փորձութենէ՝ դառնան եւ սեպհականել իմն անձանցն կամին, եւ լինին վերստին ցանկացողք պատուոյ եւ փառախնդիրք։

Ո՛րդեակ, թող ինձ առնել ընդ քեզ զոր ինչ եւ կամիցիմ։ Ես գիտեմ որ ինչ քեզ լաւ եւ օգուտ իցէ. ես՝ որ գարմանեմ զամենայն քաղցրութեամբ, զմի մի իւրաքանչիւր յանդամոց եղեալ ի մարմնի Եկեղեցւոյ որպէս զիարդ եւ կամիցիմ։

Արդարեւ մեծ եւ կարի իսկ մեծ է իմ վասն քո հոգաբարձութիւն, քան զամենայն հոգս եւ զինամս զոր կարիցես դու ունել յանձին։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Վասն ափահուրեան։

Ա. Ինձ Որդւոյ մարդոյ ոչ գոյր՝ ուր դնէի զգլուխ իմ. ես, ո՛րդեակ, վասն քո աղքատացայ՝ որ մեծատունն էի, զի դու իմով աղքատութեամբ մեծասցիս։

Եթէ ասացեալ էր իմ ց.քեզ, ո՛ր-դեակ, թէ երթ վաճառեա զամենայն զինչս քո եւ տուր աղքատաց, պարտ իսկ էր քեզ առնել։

Սակայն խնայեմ քեզ. զդժնդակա-

գոյնան վասն իմ պահեցի եւ քեզ զդիւ-
բազոյնն պատուիրեցի։

Մարդկօրէն ասեմ վասն տկարու-
թեան քո, զի մի թերեւս ի բաց գնաս-
ցես տրտմեալ որպէս պատանին այն՝
զոր յաղքատութիւն յորդորէի։

Իսկ արդ լուր, ո՛րդեակ, մի գանձեր
քեզ գանձս յերկրի, զի ոչ կարես ինձ
ծառայել եւ մամոնայի։

Փախիր յագահութենէ իբրեւ յանօ-
բինազոյն եղեռանէ, զի է իսկ այն կռա-
պաշտութիւն եւ արմատ ամենայն չա-
րեաց։

Մեծութիւն թէ առուիս գայցէ՝ մի
յօժարեսցի սիրտ քո, այլ ընդ հակա-
ռակն հրաժարեսջիր ի սրտէ յամենայն
ընչից քոց. այնպէս զի թէ ստացիս
զառժամայնս՝ մի նոքա ստացին զքեզ,
այլ լեցին ստացեալ ի քէն, իբր ոչ ե-
թէ զի մթերեալ կուտեսցես՝ այլ զի
բաշխեսցես զայնս ի դէպ ժամանակի։

Ապա եթէ ոչ առուիս գայցէ մեծու-
թիւնն, մի տրտմեսցիս, այլ ուրախ լեր.
երանի՛ աղքատաց։ Ունիս կերակուր եւ
հանդերձս, եւ այնու շատասջիր. ոչ բե-
րեր ինչ յաշխարհս, եւ ոչ տանել ինչ
կարասցես։

Որչափ եւ ակաւս եւ նուազունս ու-
նիցիս, դոյնչափ եւ ազատագոյն իցես եւ
անարդել անխափան յընթանալ զհետ իմ,

ի մահուան դիւրագոյնս թողցես զաշ-
խարհ եւ ի դատաստանի սակաւս երկի-
ցես։ Զի ոչ ասացիս ցքեզ, վայ քեզ
մեծատանդ, եւ ոչ սոյնգունակ բարբա-
ռեցայց թէ, ո՛րդեակ, յիշեա զի ընկա-
լար անդէն զբարիս քո ի կեանսն քում։

Բ. Պոչեմ զքեզ, ո՛րդեակ, տո՛ւր
ինձ պատասխանի։ Հրաժարեցեր յաշ-
խարհէ. առեր զիս ի բաժին ժառան-
գութեան քո. սակայն ո՞չ ապաքէն կա-
միս մեծատուն լինել, եւ այնու իսկ
անկար յորոգայթ եւ ի բազում ցան-
կութիւնս վնասակարս՝ որ ընկղմեն զմար-
դիկ ի կորուստ։ Ո՞չ շահավաճառ զաս-
տուածպաշտութիւնն համարեցար։

Զի՞նչ ինչ խնդրես ի պաշտամանդ։
Ո՞չ ապաքէն զկաթն եւ զսոր եւ ոչ
զփրկութիւն ոչխարացն կամիս։

Արա ինձ պատասխանի, տուր զհամար։
Ո՞չ աղքատ էիր յաշխարհի եւ եղեր
մեծատուն ի ժառանգաւորութեան։

Ոչխարքն մոլորէին, արծաթք ի պա-
տրաստի կային. ո՞չ զոչխարսն լքեալ
թողեր եւ զարծաթ կուտեցեր։

Թուեա զոչխարս քո, թուեա եւ զդա-
հեկանս քո, զի՞նչ ինչ վասն նոցա արա-
ր եր, եւ զի՞նչ ոչ վասն նոցա վճարեցեր։

Ո՞չ մանկունք հաց խնդրէին՝ եւ դու
ոչ բրդեցեր. մինչ անհնարին ճգամբք
յաւելուիր ինչս ի բազմագանձ մթերս

քոյոցն ստացուածոց եւ ամենայն հոգա-
բարձութեամբ զմուտս քո բազմացու-
ցանէիր։

Ո՞չ ոգիքն հիւանդանային եւ դու ոչ
հայէիր. յորժամ զանդեայս քո բազում
խնամով բուծանէիր։

Ո՞չ դայլ գէշագէշ պատառէր զոչ-
խարս իմ եւ դու ոչ հաջէիր. ուր զցայգ
եւ զցերեկ սկէիր զի մի՛ տացես թոյլ գո-
ղոյ ակն հատանել ի տան քումմ։

Ո՞չ ապաքէն աղտեղեալ անշքեցաւ
աղքատութեամբ տաճար իմ, մինչ
տուն քո լի էր ոսկւով։

Ո՞չ ապաքէն թոող լիք կայր սեղան
իմ, յորժամ զսեղանով քով պատեալ
կային վաճառականք։

Ո՞չ աղքատք իմ ծիւրեալ ծնդէին
առ կարօտութեան, մինչ արկեղք քո
լցեալ էին արծաթովք։

Գ. Ո՞չ խորհիս. զի՞նչ ածես
զմտաւ։ Ո՞չ հայթայթանս վաճառելոյ
եւ շահելոյ. եւ ոչ եթէ հնարս փրկելոյ
եւ սրբելոյ։

Ո՞ւր է սիրտ քո. ո՞չ ապաքէն ուր
գանձն իցէ քո։

Ո՞չ քսակք են քո. եւ զիս՝ ոչ եթէ
վասն փառաց ինչ Հօր, այլ՛ վասն ան-
արդ գնոց մատնես ում եւ կամիցի։

Ո՞չ ճոխութեամբ իմն կորդես զպար-
տիսն ի ժողովրդենէ քումմէ, եւ ոչ եթէ

զաստուածպաշտութիւն պահանջես եւ առաքինութիւնս արբականս։

Ո՞չ ինչպես մեծատան յատենի խոստովանութեան եւ ի քարոզութեան, զի մի զաղբեւր նորա յորդաբուխ՝ քեզ փակեսցես։

Ո՞չ ապաքէն անձամբ անձին քում կծծի գտանիս զլացեալ քեզ զկերակուր եւ զհանդերձ վայելուչ. իբր ոչ եթէ խոնարհութեան եւ մեռուցմանն սիրով, այլ ամօթալից տենչանօք արծաթասիրութեան։

Ո՞չ ի քումէ ժողովրդենէ յորջորջիս ջրգողեալ, որ միշտ ոսկի ըմպես եւ ոչ երբեք յագիս։ Ծոց քո լցեալ է հանապազ եւ ոչ երբեք դիեցուցանես։

Մեռցիս, սրդեակ, եւ ոչ կեցցես. թողցես զոսկի ժանկահար ագահութեան քո, եւ բողբեսցէ ընդդէմ քո յաւուր յետնում։

Գինք տաճարակապուտ գողութեանց, արիւն այրեաց եւ որբոց եւ կեանք աղքատաց՝ ամբաստան լիցին զքէն առաջի իմ. լուիցես դու եւ բարկացիս, զատամունս քո կրճտեսցես եւ հալեսցիս եւ ցանկութիւն անմտութեան քո կորիցէ։

Բողբք հարցէ զքէն եւ յայսմ իսկ աշխարհի ոսկի քո. ելցէ արտաքս յարկեղէ քումէ դայթակղութիւն ժողովրդ-

դեան իմոյ, եւ նզովս կարդասցէ քեզ ժողովուրդն ազատեալ ի լկանաց քոց եւ ասասցէ՝ ո՛ հովիւ անպատ, արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ։

Դ. Պ՝ ապարէ չորեքօրեայ, վաղ իսկ հոտեալ՝ ի գերեզմանի մեծութեան եւ ընչից քոց։ Ահաւասիկ արտասուեմ ի վերայ քո. տես զարտասուս իմ, լուր ձայնի իմում։

Ահա պատուիրեմ քեզ, արի՛ եկ արտաքս, ի բաց արա զվէմդ, խորտակեա զտապանդ, լոյծ զկապանս, ոչ կամիմ զի մեռցիս, այլ զի դարձցիս եւ կեցցես։

Ցրուեա զսակի քո եւ տուր աղքատաց, արա քեզ բարեկամն ի մամոնայէ անիրաւութեան, թող լիք ի բաց զզոշապաղութիւն։

Որ նմանողդ եղեր Յուդայի յարծաթասիրութեան, մի՛ մինչ ի խեղդ անդր զնորա զհետ երթիցես։

Ո՜ արծաթասէր. ո՜ անթլփատ սրտիւ եւ ակրնջօք։ Մինչեւ յե՞րբ Հոգւոյն սրբոյ հակառակ կայցես։ Մինչեւ յե՞րբ ասիցես՝ բե՛ր, բե՛ր։

Թերեւս ցածուն իցես եւ զդատս եւ զիտուն եւ խոնարհ եւ պաշտօնասէր, եւ պատրեալ ի միտս՝ տուրբ ոմն զանձն հատարիս, այլ ոսկայն ագահ ես եւ ի կորուստ դնասցես, մեռցիս ընդ մեծատան եւ ընդ նմա ի դժոխս թաղեսցիս։

ԳԼՈՒԽ Կ.

Վասն մարմնաւորաբարոյական եկեղեցական ընկերց։

Ա. ՈՐՈՒՄ շատ եւ տաս՝ շատ խնդրեցիր ի նմանէ, եւ որում բազում աւանդեցի՝ առաւել եւս պահանջեցից ի նմանէ։

Եկեսցէ ժամ մի՝ որ ինձ յայտնի է, յորում երեւեսցիս առաջի իմ, որդեակ, եւ հարցից զքեզ վասն տաղանդացն զոր ընկալար։

Քեզ աւասիկ հաւատացի զհատս եւ զլինչս զոր մատուցին ինձ հաւատացեալքն, զի սեղանոյ սպասաւորեալ՝ ի սեղանոյ ամտի կեցցես։

Սակայն զգոյշ լեր, որդեակ, մի զեղծանիցիս նոքիմիք. մի զեղխեսցիս եւ փարիկասցիս ի սեղանոյ. ախտք են հաւատացելոց, զինք մեղաւորաց, ժառանգութիւնք աղքատաց, արժան է քեզ յիրս եկեղեցականս եւ յօգուտ եղբարց ծախել եւ ելեթ գնոսին։

Ապա ընկալ որ ինչ կարեւոր իցէ ի պատշաճաւոր դարման կենաց քոց. իսկ որ կարդի քում եւ պարկեշան եւ վայելուչ սերնդեան աւելորդ ինչ իցէ՝ մի ընդ վայր ծախեսցես, մի ի մեծացուցանել զաղգատոհմն եւ զիմայրաթոռս քո արկանիցես ի կիր, ապա թէ ոչ՝ դատապարտեսցիս ընդ Անանիայ եւ ընդ Սափիրայ։

Բ. Աբդ յո՞ երթայցէք եւ յո՞ փախչիցիք յերեսաց իմոց, որ ի զեղխութիւնս եւ ի նանրութիւնս վանեալք՝ զինչ եկեղեցուդ։

Յո՞ երթայցէք՝ որ յիմոց բարեաց պատուեալ պանծայք, եւ ինձ չդնէք ինչ շուք եւ պատիւ։

Որք ի հանդերձս արքունականս շրջիք անառակութեան կերպարանօք, որք ի մատանիս եւ ի սպասս ոսկեղէնս փողփողեալս առաւել քան զսեղան իմ՝ պարծիք։

Որք ի շուայտութիւնս եւ յաղնիւ ազնիւ ըմպելիս վայելէք, որ քնարաւ եւ տաւղօք եւ փողովք ուրախ լինիք, որ ի գահոյս երիզապատս պատատաւալիրս գրգեալ փափկանայք։

Որ յեւղս անուշունս եւ ի խունկս իւղեփեցաց զուարճանայք, որ յաղգի ազգի զբօսանս յդփացեալ էք, որ այնպէս զբարիս իմ ի զեղխութիւնս ձեր պաշտէք։

Յո՞ երթայցէք յերեսաց իմոց, յորժամ մերկք եւ քաղցեալք ընդդէմ ձեր բողոքեսցեն, թէ մեր էին՝ զոր վանեցէքդ, ի մէնջ կորզեցէք յանխնայ՝ զոր ծախեցէքն ի մնոտիս. ոչ կերակրեցէք զմեզ, սպանէք զմեզ։

Գ. Որդիք Հեղեայ, որդիք Բելիարայ, ցո՞ւլք գէրք՝ որ պաշարեալն էք զիս՝ լուարուք ինձ։

Ասացին Հրեայքն. ոչ է արժան ընդունել զարծաթդ ի կորբանն, քանզի գինք արեան են, եւ գնեցին այնու զագարակն ի գերեզման օտարաց։

Իսկ դուք վատթարագոյնք եւս քան զթշնամիսն իմ, գնովք արեան իմոյ գնէք գնանրութիւն եւ զհեշտութիւն, եւ այնպէս ի գայթակղութիւն քրիստոնէից եւ ի մահ ոգւոցն ծախէք զայն՝ որ ի նպատս կարօտելոց տուաւ ձեզ։

Վասն այնորիկ պահանջեցից զնաշխնս իմ ի ձեռաց ձերոց, վասն այնորիկ դադրեցուցից զձեզ յարածելոյ զնաշխնս իմ, եւ ոչ եւս բուծջիք զանձինս ձեր. փրկեցից զնաշխնս իմ ի բերանոյ ձերմէ, եւ ոչ եւս եղիցին ձեզ ի կերակուր։

Դ. Ո՛ղեսակ, եթէ քաղաքն ունիցիս ի սեղանոյ եւ աւելի քան որչափ կարեւոր իցէ վասն պարենի եւ հանդերձից, տուր Եկեղեցւոյ եւ աղքատաց զորս նոցայն պարտիս։

Ցիշեա զի կացուցար դու ի վերայ դերդաստանի իմոյ տալ ի ժամու զկերակուրս։

Ցուշ լիցին քեզ այնչափ անչափ տուրքք՝ որ ոչ եթէ լցին եւ եթէ զհրամանն պատուիրանին, այլ եւ օրբութեամբ իմն եւ առատաձիռ կամաւք անդր եւս անցեալ՝ ոչ միայն դաւելորդս, այլ եւ զկարեւորսն իսկ բաշխեցին աղքատաց։

Սոքա ունին այժմ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն, եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան։

Սոքա բնակեալ են ոչ յերկրաւոր եւ յաղքունական շքեղութիւնս, այլ ի յաւիտենական մեծապայծառ փառաւորութիւնս Սրբոց։

Սոքա զգեցեալ են ոչ ծիրանիս եւ բեհեզս, այլ փառս եւ պայծառութիւնս մշանջենաւորականս։

Սոքա արբեալ են ոչ յարբենէ խաղողոյ, այլ ի պարարտութենէ տան իմոյ եւ զուխս փափկութեան իմոյ ըմպեն։

Եմանող լեր հաւատոց նոցա՝ զորոց տեսանես զելս գնացիցն։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Վասն ժողովրդեան Յերուսաղեմայ։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, առ ինչ եկիրդ։ Յայտ է՝ զի խնդրեսցես զաղքայութիւն իմ, եւ զայլս եւս անդր ձգեսցես, եւ ապա ուրեմն երբեմն ժառանգեսցես զայն ընդ նոսա։

Սակայն, ո՛րդեակ, ոչ է աղքայութիւն իմ կերակուր եւ ըմպելի, եւ ոչ մոցէ ոք անդր՝ որ ըստ մարմնոյ կեցցէ։

Ապա լեր ժուժկալ եւ մարմնոյ խնամ մի տանիր ի ցանկութիւնս քո։

Որդի՛դ աղքայութեան, եթէ գիտէիր թէ զինչ են երկինք՝ յոր կոչեցեալ եւ

դիմեալ երթաս, չկայր ինչ հարկ այնուհետեւ յարհամարհութիւն երկրաւոր հեշտականութեանց յորդորել զքեզ։

Գարշելի յոյժ լինէր քեզ յայնժամ երկիր եւ ամենայն համօրէն ցանկալիք նորա. եւ ընդ կարիս անգամ պիտոյից քոց դժկամակ լիներ՝ գոչէիր ի սրտէ.

Երանի թէ չէր իսկ պիտոյ ինձ ուտել եւ ըմպել։ Երանի թէ չէին իմ կարիքս այսոքիկ, այլ հոգեւորականք եւեթ։ Այլ մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուցէ զիս ի մարմնոյ աստի մահու։

Բ. Բայց հաւատովք գնաս, որդեակ, եւ ոչ կարծեօք. տակաւին ոչ կարես իմանալ զբարիս՝ որ ի սիրտ մարդոյ ոչ անկանիին։

Եւ բա՜րէ, զի կրես ի մահկանացու մարմնի քում եւ կրեսցես իսկ մինչեւ ցյետին շունչ կենաց քոց օրէնս զգայութեանց, զինեալ հակառակ օրինաց մտաց քոց։

Զգոյշ լեր, որդեակ, մի տիրեսցէ քեզ, այլ առ քեզ լեցի դարձ քո եւ դու տիրեա նմա. նմին իրի պատերազմ եւ ասէպ պատերազմ կայ քեզ մղել հակառակ օրինացն մեղաց։

Սա կորոյս զԱդամ եւ զամենայն ազգ մարդկան ի դրախտի անդ. սա ինչոյց ի դժոխս զմեծատունն՝ որ ուրախ լինէր առատապէս։

Զբնութիւն հարկ է կաղդուրեցուցանել. առ զկարեւորն. այլ խնդրել զառաւելագոյն հեշտականն կամ թէ բան չափ անդր անցանել՝ զայն արդելուն օրէնք սուրբք. ապա թէ ոչ՝ ըմբոստացեալ նշկահեցէ մարմին զհոգի։

Արթուն լեր եւ սկեսջիր, զի զմէն մի իւրաքանչիւր ի քարշ արկեալ տանի ուժգին իւրոյոյն ցանկութիւն, եւ եթէ ընդարձակերասանակ թողուցուս օցտել՝ վաղվաղակի իսկ բան սահման զգաստութեան եւ ժուժկալութեան արտաքս վաղեալ ելանիցես եւ յայնժամ տեսցես զծառայ քո փափկասուն՝ զի հեստիցէ քեզ։

Ո՛րդեակ, մի ինչ միայն կարեւոր է։ Կամի՞ս իշխել անձին քում. կամի՞ս տիրել ի մէջ ցանկութեանց քոց թշնամեաց, սանձահարեա զկոկորդ քո, եւ զամենայն միտութիւնս մարմնոյ դիւրաւ եւ առանց աշխատութեան սանձեսցես։

Գ. Այո՛ իսկ՝ բռնութիւն պիտոյ է ասա, եւ սաստիկ պատերազմ ի վերայ կայ մղել այնպիսւոյն՝ որ անձինն յաղթել թեւակոխիցէ։

Ապա պնդեա իբրեւ այր զմէջ քո եւ պատրաստեա զանձն քո ի փորձութիւն, յիշեա զվախճան քո եւ ոչ մեղիցես։

Դիր ի մտի քում առնել ապաշխարու-

թեամբ զայն՝ զոր թերեւս ոչ վճարէիր լոկով զգօնութեամբ։

Զմտաւ ած զամսն զառաջինս, տես որչափ ինչ յանցուցեալ իցէ քո, զոր անօրէնութիւնս գործեալ, եւ ասա թէ վայ եթէ ի սոսին ըմբռնեալ էի, վայ թէ մեռեալ էի յայնժամ եւ ի դատաստան ելեալ։

Ամ՛ խնայեաց ինձ ողորմութիւն քո, Տէր, եւ կայ մնայ ինձ այժմ ապաշխարել եւ կամ խստագոյնս եւս եւ դժնդակագոյնս կրել յետ մահու։

Որչափ եւս առաւելագոյն խնայեմ ինձ այժմիկ, եւ զմարմին իմ հաճեմ խորտկօք, նոյնչափ եւս սաստկագոյնս տուժեցայց առյապայ, եւ մեծ եւս պատրաստեցից նիւթս այրելոյ։

Խորհեաց զհուրն հանդերձեալ եւ ասա, թէ գտանէր անձն իմ ի մէջ խարուկածին բորբոքեալ բոցոյ քաւարանի եւ լինէր ձեռնհաս՝ որպէս այժմ կարող է, սանձահարեալ զանկարգ յօժարութիւնս ի տանջանաց անտի ապրել, արդարեւ իսկ չդանդաղէր եւ ամենեւին ամենայն եռանդմամբ զայն վճարէր։

Ա՛նձն իմ, այժմէն իսկ արա՝ զոր յայնժամն կամիս գործել, եւ լիցիս քաջ յապահովի եւ ի զգուշութեան։

Դ. Ա՛յեաց, ո՛րդեակ, եւ ընդ իս ընդ կատարիչն առաքինութեանց, խոնար-

հեցս զունկն քս եւ լուր բանից իմոց, ահաւասիկ աւուրս քառասուն պահեցի յանապատի, ոչ կերայ եւ ոչ արբի. ծարաւեցայ ի խաչի եւ արբի քացախ եւ լեղի։

Եւ դու իցես ընդ այնպիսի խստամբեր եւ վշտալից դլխով անդամ քնքուշ եւ փափուկ. եւ կամիցիս աղնուագոյնս մնանել, ի սեղանս բազմախորտիկս վայելել եւ անոյշս ըմպել, դու չարեացապարտդ եւ մեղաւոր։

Քաղցեայ ես վարդապետս. եւ դու աշակերտդ յղփանա՞լ կամիցիս. ծարաւեցայ ես փրկիչս, եւ դու որ փրկեցարդ՝ քաղցրագոյնս կամիցիս արբենալ։

Ազքայութիւն իմ չէր յայսմ աշխարհէ. եւ դու զարքունական փափկութիւնս աշխարհի կամիցիս ըմբոշխնել. դու այրդ Աստուծոյ՝ որովայնի կամիս ծառայել։

Ո՛ղեակ, ո՛ղեակ, եթէ կամիս զկնի իմ դալ, ուրացիր զանձն եւ զմտքն իմ ի մարմնի քսամ կրեսջիր։

Ե. Փախիր ի խնճոյից. եթէ զայնս սիրիցես՝ սիրես զվտանգ եւ ի նմին կորիցես, զի իբրեւ զհուր բորբոքի անդէն ցանկութիւն։

Եթէ կացցես մնասցես ի տան եւ ըստ կանոնաց ժուժկալութեան եւ զգաստութեան տացես զսեղան քս յարդա-

րել, փոքրիկ լինելոյ յայնժամ մարմնասիրութեանն օձ եւ դիւրաւ եւս ապանցի։

Այլ ի մէջ խորտակաց եւ բաժակաց խրախութեան զարդասցի եւ լիցի ի խուն ինչ ժամանակի գազան ամենաչար եւ կերիցէ զքեզ։

Զի անդ յօժարութիւնն մարմնական՝ բազում ինչ տեսեալ զարթնու, առ համոյն քաղցրութեան՝ գրգռի, առ զբօսնուլ մտացն՝ չգնի պահ եւ զգուշութիւն, առ հեշտականութեանն՝ չկապի սանձիւք, նա մանաւանդ եւ բազմականայն թելադրութեամբք ստիպեալ տագնապի՝ որպէս թէ ոչ սատակագոյնս գրգէր զնա տակաւին յօժարութիւնն մարմնական։

Եւ այնպէս չկարիցես մնալ անդ ժուժկալ, եթէ ոչ զմահուան եւ զդատաստանի եւ զդժոխոց յիշատակ ունիցիս ի մտի։

Զ. Այս այն իսկ ճշմարիտ է՝ թէ չէ մարթ քեզ յամենայն եւ ի բնաւ կոչնոց հրաժարել, վասն զի զոմանս ուերն պատուիրէ, զոմանս հրամայէ կարեւորն համեստութիւն, եւ զկէսս նախանձն իսկ ոգւոց ինքնին յանձն առնէ։

Եւ ես ընդ մտքաւորս եւ ընդ մեղաւորս կերայ, զի բժիշկ պիտոյ էր ախտաժետացն։

Սակայն որդեակ, եթէ յայն կոչումն եւ ի երթայցես՝ յորս առ սէր կամ առ կարեւորն համեստութեան կամ առ փութոյ նախանձու պարտ եւ արժան էր գնալ, որպէս դուն ուրեք երթայցես եւ ի բազում կոչնոց խորշեսցիս։

Ապա թէ յաճախագոյն ի ճաշ հրաւիրեալ՝ չհրաժարեսցիս երթալ, զեարդ գիւրաւ այնուհետեւ արհամարհեսցիս. եւ որ առաւելն է՝ եթէ եւ դաշինս եւս կոչնոց կոխեցես եւ փոխանակաւ իմն երթիցես ի կոչումն եւ հրաւիրեսցես, վաղվաղակի իսկ լինիցի զքէն քրիստինջիւն ի ժողովրդեանն՝ որում տացես դայթակղութիւն։

Բողոք բարձցեն աղքատք եւ ասասցեն՝ ահա որպէս շուայտեալ զեղեսի երեցն ի մերոց ողորմութեանց, մինչ մեք առ չքաւորութեան հիւծեալ մաշիմք։

Զայնս արկցեն հերկահարքն, այդ զործք եւ ձեռագործք եւ ասասցեն, տես զնարդ յառաւութեան եւ ի լիութեան վայելէ քահանայ, մինչ մեք քրքատամբք երեսաց մերոց ուտիցեմք զհայն նեղութեան։

Գոչեսցեն ոչխարքն իմ, եւ ընդդէմ հակառակ հովուին յարուցեալ ասասցեն՝ բժիշկ բժշկեա զանձն քո, ուստ անձին քում զապաշխարութիւն, զժուժկալութիւն եւ զվաստակ։

Է. Եւ յիրաւի իսկ, որդեակ, որպիսի՞ ինչ են կեանք քահանայի՝ որ զկնճոյից զհետ պնդեալ իցէ։ Անագան յառնէ ի քնոյ. չառնէ աղօթս, շտապաւ եւ արագ արագ կատարէ զժամուցն պաշտօն, առանց ինչ պատրաստութեան եւ առանց ներքին հոգւոյ մատուցանէ պատարագ, փութայ ճեպի ի սեղան, թողացուցանէ ցանկութեանցն մարմնոյ, ընդ կոչնականաց նստեալ ի խաղս եւ ի զրոյցս զժամանակն ծախէ, անագան ուրեմն դառնայ յետս խոնջ եւ վատակ եւ առանց զմիտսն ամփոփելոյ ընկողմանեալ ննջէ։

Զայսօրինակ զիւրոյ զմարմնասիրութեան զհետ երթեալ՝ տակաւ ի կարեւոր առաքելական պաշտութենէն ուծանայ. կորուսանէ զշնորհսն Աստուծոյ, եւ ապա յետոյ դառնայ լինի մարդ շնչաւոր ամենեւին անտատակ եւ անբաւական յուսումն, ի սուրբ ապաստարութիւն եւ յինչ որ ինչ Աստուծոյ իցեն։

Տես, որդեակ, զի բարի է երթալ ի տուն սգոյ քան երթալ ի տուն արբեցութեան։

Ը. Տէր, փակեա զդրունս մարմնասիրութեան իմոյ. դարձո ինձ ի դառնութիւն զամենայն հեշտութիւնս մարմնաւորս՝ որ ի սրբոյ քումէ ծառայութենէ զիս ի բաց անջատիցեն։

Փրկեա զիս ի ցանկութեանցն հրապուրանաց՝ որ զինին հակառակ հոգւոյ. անձին լրբենոյ մի մատներ զիս։

Քանզի գիտեմ իսկ թէ չէ մարթ եւ չիք հնար ունել ինձ երկուս ուրախութիւնս, ի փափկութեան լինել յայսմ աշխարհի, եւ ապա յերկինս ընդ քեզ թագաւորել։

Լաւ է ինձ յաստեացս ժուժկալել, նա եւ քաղցնուլ եւս սակաւիկ մի եւ ապա յաւիտեան ի քէն յագենալ, քան սատ զբօսանօք զմայլել, եւ յետոյ քաղցու եւ ծարաւով եւ նախատանօք լալ եւ սգալ։

ԳԼՈՒԽ ԿԲ.

Վասն պարկեշտութեան ի հանդերձս։

Ա. ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ քո, ովդեակ, յայտնի լեցի ամենայն մարդկան։ Գնա ըստ օրինակի սահմանելոյ քեզ յԵկեղեցւոյ։

Եթէ եկեղեցւոյն որ պատուիրէ՝ ոչ լսիցես, եղիցիս իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր, եւ ես խնդրեցից ի քէն զվրէժ՝ եթէ զգեցցիս հանդերձս օտարս։

Արդ տես մի անգոսնեսցես զօրէնս մօր քո. սահմանեաց եդ զգոյնն եւ զձեւ օրինակին, պահեա զայնս. գնաներութիւն եւ զզեխութիւն արդել նա, խորշեսջիր եւ գարշեսջիր յայնցանէ։

Զպարզութիւն եւ զվայելչութիւն կարդեաց նա, կալ զայնս եւ ի նոսին լինիցիր. զաղտեղի եւ զպատառատուն հանդերձս խոտեաց նա, ի բաց ընկեա եւ դու զայնոսիկ:

Բ. Մ՛րդեակ, զնարդ շլացաւ ոսկին. ուրպէս այլադունեաց արծաթին ապիտակ:

Ոչափոյք են ի քահանայից իմոց, որ ի նշանաց իմոց ամաչեն: Նոցա է արքունական քահանայութիւն, եւ զարքունի պսակն արհամարհեն՝ չկրելով զայն յանձին:

Յաշխարհէ հրաժարեցին, եւ ախորժեն կրել յանձին հանդերձս աղտեղեալս փոշւով աշխարհի. զենուոլքն իմ են, եւ այն ինչ ատուարացեալք եւ լայնացեալք՝ յանկուշեն եւ զամենայն հանդերձս իմ ի բաց ընկենուն:

Ծառայք իմ են, եւ մարդկան ջանան հաճոյ լինել. կղերականք են եւ երեւին փեսայք. յաշխարհէ են եւ վասն այնորիկ զաշխարհ սիրեն եւ աշխարհ սիրէ զնոսա:

Ո՜ անմիտք. բարձր են առաջի ընդունայն մարդկան, այլ պիղծ առաջի իմ: Ամենի համարին զիս առաջի մարդկան, յամենի արարից եւ ես զնոսա առաջի Հօր իմոյ որ յերկինս է:

Ո՛ր դեակ, խոտորեաց ի չարաց ատաի, զնանրութիւն եւ զզբօսանս աչաց սոցա հեռի արա ի քէն:

Մի լինիր նմանող այնպիսեացն՝ որ արդարեւ ոչ իցեն զաշխարհական վայելչութեանց զհետ երթեալ, այլ սակայն անխրատք իցեն, կանոնաց ոչ անսայցեն եւ ասիցեն թէ չէ ինչ մեզ փոյթ զփոքունցդ։

Մի նմանեացիս եւ այնոցիկ՝ որ առ իւրեանց կարի անփութութեանն՝ ի ծաղր մանաւանդ ածիցեն եւ ոչ ի մեծարանս յորդորիցեն։

Այլ ընդ նոսա հայեաց եւ նոցին լեր նմանող՝ որ արտաքին հանդերձիցն վայելչութեամբ՝ զներքին պարկեշտութիւն վարուցն ցուցանիցեն։ Զնոցուն զհետս կոխեսցեն, ուրդեակ, ուր քո։

Գ. Ակատեցիս զնոսա, Տէր, երթայց զհետ նոցա, այո՛ լաւ է ինձ առնել քան օրինակի նոցա։

Բարի է ինձ իբրեւ զնոսա ոչ զանց առնել զեկեղեցական կանոնաք մինչեւ ցյոտ մի եւ մինչեւ ցնշանախեց մի։

Բարի է ինձ իբրեւ զնոսա լինել ի փոքուն հաւատարիմ, զի եւ ի բազմին եղեց հաւատարիմ ընդ նոսա։

Որպէս զի գեղեցիկ են գնացք նոցա, Տէր։ Զիարդ բուռն ձգեալ ածեն յառաքինութիւն զէմք նոցա։ Քանի՞ մեծարանս յուղէ ի սրտի նոցայն ծանրութիւն եւ խոնարհութիւն եւ պարզութիւն եւ պարկեշտութիւն։

Երթայց, Տէր, երթայց զկնի նոցա, թէ միայն հասից սրբոց շաւղաց նոցա։

Դու, Տէր, մատն ժառանգութեան իմոյ, բաժին իմ յերկրին կենդանեաց. միթէ բացցէ՞ն միւսանգամ աչք իմ յընդունայնութիւնս աշխարհի։

Զի՞ կայ իմ բնաւ ընդ երկրի եւ ընդ գեղոյ մարդկանն հողեղինաց։ Զի՞ կայ իմ ընդ աշխարհի եւ ընդ վայելչութիւնս աշխարհականաց։ Զի՞ կայ իմ ընդ դեղեցկութիւնս եւ ընդ զարդարանս թուլամարթաց։

Զմի խնդրեցի ի քէն, Տէր Յիսուս, եւ զոյն ազաչեմ, կրել ինձ հանապազ ի մարմնի իմում զպարկեշտութիւն քո, մինչեւ կեանք քո յայտնի լիցին ի մահկանացու մարմնի իմում։

ԳԼՈՒԽ ԿԳ.

Վասն պան խոհանոցի։

Ա. Լեր, որդեակ, տան քում բարուք վերակացու։ Թէ քում տանն վերակացու չդիտիցես լինել, զնարդ Եկեղեցւոյ իմում խնամակալ լիցիս։

Պարտ եւ պատշաճ է վարուց քոյ լինել յամենայնի օրինակ իմոց ուսնարաց. որպէս զի ոչ յայտնցուսէ միայն զոր ի դահէ խօսիցիս կամ յատենի ապաշնարութեան ուսուցանիցես՝ ուղղեսցին, այլ եւ յամենայն իսկ օրինակէ գործելոյ քո։

Ապա փոյթ յանձին կալջիր զի ամենայն ինչ զոր մարթ իցէ տեսանել կամ նկատել ի քում տանն՝ իցեն հաւան եւ միաբան ընդ բանս քո։

Բ. Ուսուցանես թէ չիք մարդոյ յերկրի ասա քաղաք հաստատուն. եւ թէ օտար եւ պանդուխտ է նա ասէն։

Զոր բանիւքն հաստատես, վկայեա եւ գործովք։ Զտուն քո իբրեւ զօթեւան անցաւոր յարդարեալ պատրաստեա։

Լիցի տուն քո անպաճոյճ, կարեւորք մի պակասեսցեն, աւելորդք մի գտցին։ Գոչեսցեն ցայնոսիկ որ մտանիցեն ի ներքս՝ թէ շատ է վասն մահկանացուի։

Ուսուցանես թէ արքայութիւն քրիստոնէի չէ յայսմ աշխարհէ, թէ ամենայն փառք նորա իցէ ի ներքոյ, եւ թէ զամենայն աշխարհի փառաւորութիւնս իբրեւ զկղկղանս արժան իցէ համարել։

Զայս ամենայն եւ գործովք եւս ընծայեցուսջիր։ Ի բաց լիցի ի տանէ քումէ ընդունայն վայելչութիւն, որով տունք որդւոցն աշխարհիս այսորիկ պայծառացեալ շողան. այնու իմն պարկեշտութիւն քո յայտնի լիցի ամենեցուն որ ի ներքս մտանիցեն։

Ուսուցանես թէ նոքա որ ըստ մարմնոյ կեանս կեցցեն՝ ի կորուստ իցեն երթալոց. եւ թէ զվերինն պարտ իցէ խորհել, մի զայս որ յերկրի ասա է։

Ցոյց զայն արդեամբք։ Այնպիսի ինչ իցեն կահ եւ կապմած եւ սեղան քո, որպիսի վայել է առն սրբոյ, ճշմարիտ հոգեւորի եւ զգաստի եւ այնմ որ ճըշմարտիւն մեռեալ անձին իցէ։

Ուսուցանեա թէ ամենայն պղծութիւն եւ գարշութիւն կամ խեղկատակութիւն չէ պատշաճ եւ արժան բնաւ եւ անուանել իսկ ի մէջ քրիստոնէից, որպէս եւ վայել է սրբոց։

Ապա մի՛ իսկ դացի ի քում տան պատկեր ինչ կամ մատեան կամ նշանակ ինչ՝ որ եւ զտուեր անդամ զայնպիսեացս կամ զնշմարանս յանձին բերիցէ։

Ուսուցանեա թէ չիցէ պատշաճ պարծել, բայց միայն ի խաչն իմ, եւ թէ ի նմա իցէ փրկութիւն եւ կեանք եւ պատրաստարութիւն ի թշնամեաց։

Ապա խաչն իմ լիցի գլխաւոր վայելչութիւն եւ փառք տան քո։ Դիր զայն ի նշան՝ լենել քեզ հանապազ միշտակ յուշարար սիրոյ իմոյ եւ խթան առաքինութեան, եւ որ հարեալք ի մեզ զայս առ քեզ եկեսցեն՝ հայեսցին ի նա եւ դարձցին եւ կեցցեն։

Ուսուցանեա թէ պատշաճ է ամենայնի որ իցեն ի տան քրիստոնէի՝ պարկեշտս լենել եւ յարդարեալս ըստ կարգի։

Ապա ջանա եւ պատուիրեա զի ամենայն ինչ իցէ ի տան քում մաքրեալ եւ

բարուք կարգեալ, որպէս զի ժամք ա-
ղօթից, հոգեւոր ընթերցուածոց, ննջե-
լոյ, յառնելոյ եւ վաստակելոյ՝ իցեն հաս-
տատեալ եւ պահեսցին զգուշութեամբ։

Ուսուցանես թէ որ իւրոց եւ մանա-
ւանդ եւ ընտանեաց խնամ ոչ տանիցի,
ի հաւատոցն ուրացեալ է, եւ չար եւս
քան զանհաւատն է։

Ապա ուրեմն թէ հայր ոք եւ մայր եւ
եղբայր եւ քոյր առ քեզ մնասցեն,
փոյթ արա զի վարս պարկեշտս եւ սրբ-
բականս ընծայեցուսցեն եւ լիցին օրինակ
հաւատացելոց։

Իսկ եթէ իւիք ինչ իրօք պատճառս
տացեն գայթակղութեան, թէպէտ մայր
իցէ թէպէտ հայր, պատուէր տաջիր ա-
ծել զանձինս յուղղութիւն։

Քահանայ ես, մեծ եւս քան զնոսա
ունիս իշխանութիւն։ Զսոյն զայս պար-
տիս դու ինձ եւ ժողովրդեան։

Թէ ոչ գայցեն յուղղութիւն, այլուր
տես զպիտոյս նոցա։

Տես զի եւ ծառայք քո եւ աղախնայք
յամենայնի հնազանդ իցեն քեզ, մի
հակառակօղք, այլ զամենայն հաւատս
ցուցանել բարութեամբ, զի զվարդա-
պետութիւն Աստուծոյ քո զարդարեսցեն
յամենայնի։

Բազում խնամով եւ հոգատարձու-
թեամբ սկեսջիր նոցա, եւ եթէ պա-

տահեցէ ինչ ի կողմանէ նոցա՝ որ զմի ի փոքրկանցն իմոց կարիցէ գայթակղեցուցանել, բարձ զանուրէնութիւնն զայն զօրութեամբ, ի բաց արա զչարն ի տանէ քումէ։

Սրբոյ քահանայի՝ եւ ծառայք եւ աղախնայք սուրբք վայելեն։

Ուսուցանեա թէ պարտ է քրիստոնէից ողորմածս լինել եւ զհիւրասիրութեան զհետ երթալ։

Ցոյց գործովք զհաւատս քո։ Լիցի տուն քո, ըստ քում կարի, ողորմութեանց եւ օգնութեանց աղքեւր առատ, որպէս զի եւ զքէն մարթ իցէ ասել՝ զոր երբեմն զսրբոյ ումեմնէ քահանայէ ասէին թէ դա է համօրէն կարօտելոց հոգաբարձու։

Գ. Ամենառատ իսկ ասել, լիցի տուն քո տուն սուրբ, զի եւ մի ազգ ապականութեան ոչ մոցէ ի նա, տուն բարեպաշտութեան, որ զայլս յաստուածպաշտութիւն ածիցէ։

Տուն հայրենի, յոր մոցեն ոչխարքն իմ մեծարանօք եւ վստահութեամբ, գիտացեալ թէ անդ է ճշմարիտ այրն Աստուծոյ։

Գ. ԼՈՒԽ ԿԴ.

Վասն մեղի փահանայապետին Հռոմայ, որ է պետանելի Գլուխ Եկեղեցւոյ Է. փոխանորդ Քրիստոսի յերկրի։

Ա. Լոս փրկիչ աշխարհի, խնդրեցի ի Հօրէ իմմէ եւ եառ ինձ զհեթանոսս ի ժառանգութիւն։

Ա. Հաւասիկ տիրեմ ի ծովէ մինչեւ ի ծով, ի գետոց մինչեւ ի ծագս աշխարհի, եւ օրհնեմ զամենայն ազգս երկրի։

Բազմացուցի զզաւակ իմ առաւել քան զաստեղս երկնից, լցաւ երկիր ոչխարօք իմովք, եւ ես Հովիւս քաջ պատրաստեցի նոցա փարախ զեկեղեցի իմ զսիրելի։

Մի տապալեսցի երբեք փարախն այն, որդեակ։ Կացցէ եւ մնասցէ Եկեղեցի իմ անխախտաւտ մինչեւ ի կատարած աշխարհի։

Բ. Հիմն այսր փարախի Պետրոս է։ Զի ի վերայ այնր վիմի շինեցի զեկեղեցի իմ։

Եւ զոր օրինակ որ զհիմն շինուածոյն խարխարիցէ, զբովանդակ իսկ զտունն կործանէ, նոյնպէս եւ որ զՊետրոս կամ զնորին դիւաջորդսն լուծանէ, զհամօրէն Եկեղեցի տապալեսցէ։

Ապա կալ, որդեակ, կալ զՊետրոսի եւ դիւաջորդաց նորա զհաւատսն եւ զանխախտաւտ միութիւն։

Որ ոչ է բնդ նոսա, հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ բնդ նոսա՝ ցրուէ։

Ունկնարդ իմ ձայնի նոցա լսեն, եւ որ ոչն լսեն՝ չեն յոչխարաց անտի իմոց։

Գ. Տես, սրդեակ, տես զտառապեալ ջոկս ոչխարացն, որոց թողեալ զՊետրոս՝ յայլոց հիման վերայ կամեցան կառուցանել իւրեանց փարախ։

Տես զնարդ նմանեցին նոքա առն՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ։

Եկին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն եւ անկան եւ եղեւ կործանումն նոցա մեծ յոյժ։

Տես զաշխարհն Յունաց եւ զԱնգղիացւոց եւ զայլ եւս ազգի ազգի դաւառս՝ որ զատեալ մեկնեցան ի Պետրոսէ։

Հայեաց տես, ոչ զմիութիւն եւեթ, այլ եւ զհաւատս իսկ ինքնին դլխովին կորուսին, եւ առանց հաւատոյ չէ իսկ մարթ հաճոյ ինձ լինել։

Տես զնորին հակառակն զժողովուրդսն հաւատացեալս՝ որ կացին եւ մնացին ի դաւթին՝ որ հաստատեալ է ի վերայ Պետրոսի։

Ո՞ՐՊէս անեղկիւղք եւ անարատք տեւեալ բաւեցին ի մէջ կործանման աշխարհիս։

Եկին անձրեւք մորրութեանց, յարեան գետք հալածանաց, շնչեցին հողմք հրապուրանաց, եւ ոչ անկան Եկեղե-

ցիք նոցա, քանզի ի վերայ վիմի հաստատեալ են։

Դ. Ի հռոմէական Դահն Պետրոսի ոչ ոք հերետիկոս նստաւ երբէք. ոչ երբէք պակասեցին ի նմա հաւատք։

Յայն սակս իսկ, որդեակ, օձն հին թշնամին այն վատթար՝ որ այնչափ ինչ չարութիւնս նիւթէ ի սուրբն, ոչ ինչ այնպէս միջնորդ հզօրագոյն եդիտ զոչխարսն իմ յապշտակելոյ եւ սպանանելոյ, բայց ի Պետրոսէ եւ ի նորին յաջորդացն բաժանել զնոսա։

Միտ եդեալ նպատաց բազում հաւատեաւ ընդ բնաւ հերետիկութիւնս որ սպրդեցին մտին ի ներքս եւ մտանեն իսկ ցայսօր, եւ տեսցես զի ոչ պլով ինչ իւիք օրինակաւ հաստատեցաւ, այլ հերձեալ ճեղքելով ի Քահանայապետէն Հռոմայ։

Դեռ եւս առաջի աչաց քոց կան, որդեակ, դեռ եւս պատմին քեզ ի գիրս տարեւորս ճշիւնքն այնոքիկ եւ մռնչիւնք ահագինք՝ զոր անդուստ ի ներքուստ ի խորոցն դժոխոց ընդդէմ յաջորդացն Պետրոսի արձակեն հերետիկոսապետք։

Եւ չեն իսկ զարմանք, որդեակ։ Որ զառնն կործանել կամիցի զք, զհիմանէ հարկ է թէ բուռն հարկանիցէ։

Կամիցիս, որդեակ, պահել անբծիթ զոչխարսն ի ճշմարտութեան եւ ի փրը-

կութեան ճանապարհի։ Զանա զի որ-
չափ առաւելագոյն ընդդէմ Հռոմէա-
կան Գահուն կռուեցի սատանայ ի-
բովքն արբանեկոք, նոյնչափ եւս ա-
ռաւել հաստատութեամբ յարեցիս
դու ի նա քոյովքն, գիտացեալ՝ զի մի է
հօտ իմ եւ մի Հովիւ։

Ո՛րդեակ, արթունլեր զգուշութեամբ,
եւ կաց անշարժ ի հաւատս Աթոռոյն
Պետրոսի։

Ե։ Ոչ հիմն եւեթ Եկեղեցւոյ իմոյ սի-
րելւոյ են Պետրոս եւ յաջորդք նորին,
այլ եւ Հովիւք գառանց եւ ոչխարաց,
եւ համօրէն քահանայապետաց իշխանք
եւ բովանդակ մարմնոյ Եկեղեցւոյ իմոյ
գլուխ տեսանելի։

Կշռեա մի ըստ միոջէ զբանս զայսոսիկ,
ո՛րդեակ, ունկն դիր հաւատեաւ յոր-
ջորջմանց քահանայապետացն Հռոմայ։

Եթէ Հովիւք ամենեցուն իցեն եւ
իշխանք նոցին իսկ քահանայապետաց,
ապա եւ դու որչափ եւ մեծ յԵկեղեցւոջ
իմում իցես, ոչխար նոցին ես եւ քան
զնոսա կրսերագոյն։

Եթէ գլուխ տեսանելի Եկեղեցւոյ ի-
մոյ իցեն, ապա պարտ եւ պատշաճ է
քեզ մեծարել զնոսա իբրեւ զիս՝ որ
փոխանորդք իսկ են։

Զ։ Խոտորեա, ո՛րդեակ, բազում
խնամով յայնցանէ՝ որ մերձենան յՕ-

ծեալդ իմ եւ ի մարգարէսդ իմ ոչ զանդիտեն մեղանչել։

Ի մատենիս՝ որ հակառակ նոցա մոլեգնեալ իցեն՝ իբրեւ ի դիւաշունչ գրոց խորշեսջիք մեծաւ ատելութեամբ, եւ ջանս որչափ եւ ձեռնհաս իցես՝ կորզել զայնս ի ձեռաց խառնաղանձ ամբոխին։

Գիտացեալ զի գրդիչք ապստամբութեան են այնոքիկ ոչ ընդդէմ երկրաւոր իշխանի, այլ հակառակ իմ որ գրեալ խաւոր հրամանատարս եմ Եկեղեցւոյ եւ համբրէն տիեզերաց։

Է. Ապա կաց մնա դու այսուհետեւ լցեալ խորին երկիւղածութեամբ առ Գահն հռոմէական։

Ցոյց նմա զսէր առանց կեղծաւորութեան, զանբակ հաւատարմութիւն եւ զպատշաճ հնազանդութիւն։

ԳԼՈՒԽ ԿԵ.

Վասն եպիսկոպոսաց հնազանդ լինելոյ։

Ա. ՈՒՆԿՆԴԻՐ լեր, սրդեակ, առաջնորդաց քոց, եւ հպատակ կաց նոցա. ահա պատուիրեցի քեզ եւ դու խոստացար կատարել։

Խոստացար եպիսկոպոսի քում եւ նորին յաջորդացն գՀնազանդութիւն. զուխտս քո կատարեա՝ եւ պատուական եղիցիս առաջի իմ. զի լաւ է ունկնդրութիւն քան զզոհ ընտիր։

Տես, որդեակ, ոչ զոհս եւ պատարագս մատուցի ես Հօր իմում, բայց ի բրեւ մարմին հաստատեաց ինձ՝ եկի առնել զկամս նորա։

Զհաճոյս նորա արարի հանապազ եղէ հնազանդ մահու չափ, եւ մահու խաչի։

Բ. Աւաջնորդ քո Հովիւ քո է, եպիսկոպոս քո զոր եդ Հոգին իմ հովուել ընդ այլոց զնկեղեցի իմ՝ այր եղ անդամ, տքնի վասն քո՝ որպէս թէ համարս տալոց իցէ ընդ քո, ապա փոյթ յանձին կալ զի խնդութեամբ արասցէ զայն եւ մի յոգւոց հանելով։

Հպատակ կաց նմա ի բոլոր սրտէ վասն Աստուծոյ, ի սիրոյ առաւել քան ի հարկէ։

Եւ սիմն անկասկածադոյն եւ զգուշադոյն է, որդեակ, կալ ի հպատակութեան քան ունել առաջնորդութիւն։

Բազում հանդիսա գոցես ի խնարհ հպատակութեան ընդ վարչութեամբ ուրուք առաջնորդի. ապա թէ ի բաց հանցես զքեզ ի հնազանդութենէ, եւ ի շնորհաց վրիպեցուցանես զանձն քո։

Որդեակ, եթէ ոչ մտադրեալ զանձն հնազանդ կացուցանիցես, յայտ իսկ է թէ կարի մարմնասէր ես, եւ թէ ոչ յիս, այլ ի քեզ ես կենդանի եւ անկարգս իմն սիրես զանձն քո։

Գ. Եւ զինչ մեծ իցէ, որդեակ, եթէ դու որ հողդ ես եւ ոչինչ՝ հնազանդ կայցես մարդոյ. մինչ ես ամենակալս եւ Բարձրեալ՝ որ զամենայն ածի ի չգոյէ ի գոյ, խոնարհութեամբ հնազանդ եղէ մարդոյ վասն քո։

Եղէ խոնարհ քան զամենեսին, զի ի-մովն խոնարհութեամբ՝ քում հպարտութեան յաղթեսցես։

Ուսիր, մխիթար, հնազանդ լինել, ուսիր զանձն խոնարհեցուցանել հողդ եւ կաւ, ուսիր լինել կազմ եւ պատրաստառ ամենայն հպատակութիւն։

Դ. Արքմինջիցես թերեւս յանձին քում. հիմ այդպէս, ասես, հիմ այդպէս կշտամբիցէ։ Ընդէր այդպէս արդելու։ Վասն էր զայս օրինակ պատուիրէ։ Առիմ՞ այդպէս կարդիցէ։

Զի՞ է զի խօսիդ, որդեակ։ Որ մերձենայ ի նա, որպէս որ ընդհարկանիցի ընդ բիբ ական իմոյ։

Դառն թուի քեզ կշտամբութիւնն, խիստ՝ պատուէրն։ Ո՞ մարդ ունուի. զի է քո քրմինջելոյ։ Զիարդ կարիցես ընդդէմ դառնալ, մեղաւորդ պիղծ, որ այնչափ անչափ զԱստուած զայրացուցեր, եւ բեւր անգամ դատարարժանի դժոխոց։

Զայրացիր առաւել ի վերայ քո, եւ մի տացես թոյլ ամբարտաւանութեան կենդանի լինել ի քեզ։

Ե. Եմ առ ինչ այս կամ առ ինչ այն. ի կարեւորսն եղէց հնազանդ, ի մնոտիս չէ ինչ պիտոյ։

Զի՞ ասես, որդեակ։ Դատել կամիցիս զդատաւորդ քո, եւ վարել զառաջնորդդ քո։

Մնոտիս կոչես զպատուէրս առաջնորդին, ապա անարգես իսկ զնա։ Ո՞չ գիտիցես զի որ զնա անարգէ՝ զիս անարգէ։

Մնոտիս անուանես զոչս նայն պատուիրէ. մի առաւել ինչ խորհիցիս, որդեակ, քան զարժանն խորհելոյ. եթէ քեզ որ յախուռն դատիս՝ մնոտի պատուէրքն հրամանատուին թուիցին, սակայն չէ ինչ ընդունայն եւ ունկնդրութիւն հնազանդին։

Բժշկեա զանձն քո. ոչ եթէ վասն պատուիրանին համարս տալոց իցես, այլ վասն պահպանութեան հրամանին։

Անսա այսու հեռեւ առաջնորդին քում առանց ընդդէմ ասացելոյ. լեր հնազանդ որպէս ձեռն գլխոյ. քանզի ձեռն առանց ընդ բանս ինչ ածելոյ եւ տրբտրնջելոյ՝ կատարէ որ ինչ նմա հրամայիցի ի գլխոյ։ Ակաւասիկ քեզ կանոն. արա ըստ նմին նմանութեան։

Զ. Աղաչեմ զքեզ, որդեակ, ծանիր զնա որ վերակացու է քեզ ի Տէր եւ խրատէ զքեզ. յաճախագոյն սիրոյ արժանի համարեսջիր զնա եւ մեծաւ պա-

տուով պատուէա զնա։ Քանզի Օծեալ իմ է։

Զգոյշ լեր յայմմ հետ մի անհնազանդել, մի ապստամբել, մի բամբասել, մի քրթմնջել եւ մի անիծանել։

Զմարիամ որ տրանջեաց զՄովսիսն պատուհասեաց բորոտութիւն. զկորխ, զԴաթան եւ զԱբիրոն՝ որ քամահեցին զԱհարոն, բացաւ երկիր եւ եկուլ. զպատգամաւորն Ալքողեայ՝ որ ծաղը առնէր զեղեալս՝ եկեր հուր. զկպարտասցեալն զայն որ չկամէր հնազանդել հրամանի քահանային՝ մահու հարկ եղեւ դատել։

Ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիս զայն՝ որդ զառաջնորդս նորոյ օրինաց արհամարհեալ՝ զանձն իմ արհամարհիցէ, եւ այնու եւ զՀոգին Հնարհայ Թշնամանիցէ։

ԳԼՈՒԽ ԿԶ.

Վասն զԲաբելամ ընդ Բելէլոյ։

Ա. ՀԱՒԱՏԱՐԻՄ բարեկամի ոչ զոյ փոխանակ։ Այր բարի եւ քաղցր թէ գայցես ի քո ընկերութիւն, բարեկամ առաւել լեցի քեզ քան զքո եղբայր։

Խօսեաց ընդ նմա զդրդծոց քոց եւ բարւոք խորհրդովք նորա քաղցրասցի անձն քո. եւ եթէ չարիք պատահեսցին քեզ՝ ժուժկալեսցես նոսա։

Լեցի քեզ ծածկոյթ հզօր, դեղ կեա-

նաց եւ անմահութեան, եւ տեսցես զի չէք կշիռ ոսկւոյ եւ արծաթոյ արժանի լաւութեան հաւատարմութեան նորա։

Բ. Ո՞վ գտցէ, ո՛րդեակ, բարեկամ այսպիսի։ Երկիւղած Տեառն՝ գտցէ զնա։

Գտանել գտանեն բարեկամն որդիք աշխարհիս այսորիկ, այլ զո՞ր բարեկամն. զուտղս սեղանոյ՝ որ ոչ կացցեն առ քեզ յաւուր նեղութեան։

Բարեկամն յողդողդս, որ այսօր սիրեն եւ վաղիւ շրջին ի թշնամութիւն։

Բարեկամն ողբիչս սուտակասպասս, որ տանին ի ճանապարհս անբարիս։

Բարեկամն պակասամիտս, որ ոչ իմանան զբանս հանճարոյ, եւ ոչ իւիք զբօսնուն՝ բայց անմտութեամբք, որ յածին ի սիրտս նոցա։

Բարեկամն որ զմեծատանց զհետ երթան եւ յաղքատաց ի բաց փախչին, որ ողբեն զերեսս հզօրի, որ ոչ զտուիչն այլ զպարգեւս տուչին սիրեն։

Բարեկամն թերակատարս, որ ձգեն յիւրեանց ճանապարհս՝ տուեալ գայթակղութիւն ոգւոյն։

Այնպիսիքն, ո՛րդեակ, անուամբ լոկով են բարեկամք, այլ արդեամբք եւ ճշմարտիւ՝ ոխերիմ թշնամիք։

Ո՞րչափ եւ քանի՞ չարեաց պատճառք են այնպիսեաց բարեկամաց ընկերութիւն եւ մտերիմ ընտանութիւն։

Ո՛րչափ քահանայս ի մեծէ ասատուած-պաշտութենէ ի խորս ցրտութեան եւ անտի ի յատակս իսկ անդնդոց անօրէնութեանց կործանեաց եւ կործանէ զօրհանապազ։

Երբեմն ողբքեն զոր կամին կորուսանել, մերթ դարան գործեն թաքուցեալ զթակարդսն, եւ մերթ կլանեն զնա կենդանւոյն իբրեւ դժոխք, եւ զստացուածս նորա զպէսպէս ի բաց բառնան։

Ի միտ առ զոր ասեմն, ո՛ղեակ։ Եթէ զք քահանայ բարեպաշտ եւ առաքինի յախուռն բարեկամութիւն ընդ անզգամաց խառնիցէ, զառաջինն՝ ստկեն իմն նմա եւ քծնին, ծածկեն զչարութիւնն, բերկրութիւնս առաջի ընծայեցուցանեն եւ ցուցանեն զսէր։

Ոչովք ժպրհեալ յանդգնեալ յապահովի կարծէ նա զանձն ի կցորդութեան նոցա, եւ զբօսանս իսկ համարի լինել ընդ նոսա։

Տակաւ ինչ ինչ ի սովորական աղօթիցն եւ ուսմանց ի բաց թողու, զի ժամանակս ճիգս ընդ նոսա ուրախ լիցի. եւ սկիզբն առնէ անօար մատչել ի սուրբ պաշտամունս։

Այլ անկանի ի միտս իւր՝ կանոնացն բարեղք սովորութիւն։ Խթէ զնա խիղճ մտացն եւ ասէ բայ՝ սահեալ անցանէ

ժամանակն անգիւտ։ Կորուսանեաս զժամանակն եւ համարս տացես։

Կամի իմն ի բաց հեռանալ անզգամն այն, այլ ըմբռնեալ կապի. կամի ընդդէմ մաքառել՝ եւ ծաղր եւ ծանակ լինի։

Մարդ, ասեն, յընկերութիւն ծնաւ։ Ոչ գոյ բաւ եւ վախճան գիրս բազումս ընթեռնլոյ. եւ խորհուրդ բազում՝ աշխատութիւն է մարմնոյ։

Վայ միոյն։ Մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ, այլ խորհել ի զգաստանալ։

Այսպէս ի հրեշտակ լուսոյ կերպարանին անօրէնքն։ Հաւատայ թշուառականն, խաբի եւ ամաչէ անջատել ի նոցանէ, նա աւանիկ զանձկութիւնս մտացն խղճի՝ աւելորդ կասկածանս համարի։

Նոտի յայդուէ մինչեւ ցերեկոյ եւ առաստպելս կարկատէ, եւ զօրն ցերեկ կայ դատարկ։

Դ. Որչափ փոփոխեալ իսկ է այժմ յառաջնմէ անտի։ Այլ այս ակիզբն է, սրդեակ։ Բազում եւս չարիս ուսոյց յետոյ դատարկութիւն։

Անդէն համարձակագոյնս իմն գործեն բարեկամքն այնոքիկ պակասամիտք եւ չարք։ Ոչ եւս երկնչին բամբասել, չարախօսել եւ ծիծաղել զկանոնաւք, զնախանձու եւ զաստուածպաշտութեամբ։

Զառաջինն չթուի իսկ այն հաճոյ բարեկամին նորոյ, այլ գերեալ իմն է եւ կապեալ, չիշխէ ընդդէմ դառնալ, նա եւ ոչ չհաւանել կամ չդովել։

Մանաւանդ թէ՝ զի բարեկամայն ընդ միտ մտանիցէ, բամբասէ ընդ բամբասողս, չարախօսէ ընդ չարախօսս, այպանէ ընդ այպանողս։

Գայ հասանէ եւ ժամ պատարագ մատուցանելոյ, եւ չզարհուրի չսոսկայ զբերանն՝ որ չարութեամբ եւ դարշաբանութեամբ պղծեալ է, բանալ ամենասուրբ խորհրդոց։

Գումարեալ կայ ժողովուրդն ի Պաշտօն աստուածեղէն. ականջս ունի լսելոյ, իսկ հովուին չիք ձայն բարբառելոյ, զի զուր եւ ընդ վայր ծախեաց զժամանակն, ոչ ուսաւ ինչ, ոչ արար աղօթս եւ չէ պատրաստեալ։

Մաւչին ապաշխարողք խնդրելով զդարման խոստովանութեան, եւ քահանայն կամ բնաւ չառնու իսկ յանձն, վասն զի առ բարեկամն խոստացաւ երթալ, եւ կամ դժկամակ իմն մտաք եւ շտապաւ ունկն դնէ, զի եւս ընդ եւս փութանակի ի կաճառս բարեկամայն թռանել մարթայցէ։

Այսօր սա առ նոցա է, վաղիւ նոքա առ սմա, եւ ամենայն ուրեք խաղ, դինարբուք եւ ընդունայն հեշտականութիւն։

Ժառանգութիւն իմ Հայրենական վանքի տարապարտուց. մինչ աղքատքն հեծեն եւ հաւատացեալք դայթակղին։

Կամի՞ ոք ուրեք խրատել եւ յանդիմանել զքահանայն զայն տառապեալ՝ ցանու, սպառնայ։

Ապա թէ վերագոյնն քան զնա զայդ արասցէ, ըմբոստանայ, ընդդէմ դառնայ սատելով եւ կամ գոնեայ անգոսնելով։

Դրուատիս տան բարեկամքն եւ աւելագոյն յուզեն զարմանութիւն բարկութեանն պաշտպանս զանձինս ընծայեցուցեալ յապստամբութեան։

Ոչ զոք մեծարէ նա այնուհետեւ, չդնէ ունկն վերադունի, եւ իւրովի անձամբ զանձն եւ զիւրն մատնէ յաղգի ազգի ապիրատութիւնս։

Ընդ աշխարհականս՝ աշխարհական է, ընդ հայհոյիչս՝ հայհոյիչ, ընդ զեղծս՝ զեղծ, ընդ արբեցողս՝ արբեցող.

Ընդ սեղանակապուտն՝ սեղանակապուտ, ընդ ամպարիշտս՝ ամպարիշտ, ընդ որդիսն Բելիարայ՝ որդի Բելիարայ է, որ յառաջն էր այր Աստուծոյ։

Ե. Որդեակ, կալ սէր առ ամենասեան. այլ զդոյշ ելր ըստ քում կարի՝ մի մտերիմ ընդ այնպիսեացն լինել, մի խառնիխուռն ընդ ում եւ պէտ ումեք խառնել բարեկամութիւն։

Մի ամենայն մարդոյ յայտնեսցես զսիրտ քո, այլ այնմ միայն՝ զոր ծանեար առաջի իմ իմաստուն, երկիւղած Աստուծոյ, հլու, բարեպաշտ, խորհրդական, զգաստ, ցածուն, ջանասէր, գթած, խոնարհ, յստակամիտ, համեստ եւ հանճարեղ։

Ընդ այնպիսւոյն ցանկորդեսջիր. կալ ընդ նմա սերտիւ բարեկամութիւն։

Նա իւրոյն օրինակօք ի կատարելութիւն յորդորեսցէ զքեզ, խրատուք հեզութեան դարձուսցէ զքեզ զխոտորեալդ յուղիղ ճանապարհէ։

Նա քաջալերեսցէ զքեզ ի վիշտս եւ ափոփեսցէ, ի տարակուսանս լուսաւորեսցէ զքեզ եւ առաջնորդեսցէ քեզ իմաստութեամբ։

Ընդ նմա ցնծասցես եւ ուրախ լիցիս ի խաղաղութեան Աստուծոյ՝ որ ի վերէ քան զամենայն միտս։

Գնա, որդեակ, ընդ այնպիսւոյ իմաստնոյ եւ իմաստուն եղիցիս։ Իսկ ընդ պատանիս եւ ընդ օտարս դուն ուրեք լիջիր. զմեծատունս մի ողջեսցես. առաջի մեծամեծաց մի մտադիր երեւեսցիս։

Զի քանիցս անգամ թէ առանց ինչ հարկի կամ ճշմարիտն օգտի յայնպիսեաց միջի գտանիցիս՝ նուազեալ յետս դարձցիս։

ԳԼՈՒԽ ԿԷ·

Վասն զգիտութիւն սիրոյ ասա Գիգանոս պահելոյ։

Ա·Սիրեսջիր զընկեր քո իբրեւ զանձն քո։ Այս է, որդեակ, երկրորդ պատուիրան նման առաջնոյն եւ մեծի պատուիրանին օրինաց։

Սիրեսցես զընկեր քո որպէս եւ ես սիրեցի զքեզ։ Այս է պատուիրան նոր՝ զոր ետուս քեզ։

Եթէ զայդ ոչ պահեսցես, որդեակ, անդէն ի մահուն կացցես։ Քանզի զիարդ զԱստուած քո զոր ոչն տեսանես սիրեսցես, եթէ զեղբայր քո՝ զոր տեսանես ոչ սիրիցես։

Ո՛րդեակ, այս է պատուիրան իմ աւադ եւ բարձրագոյն։ Եւ շատ է թէ միայն եւս կատարեսցի։

Գիտես իսկ թէ քանիցս աղաչեցի զՀայր իմ, զի իմքն իցեն մի, որպէս ես եւ Հայր իմ մի եմք։

Գիտես թէ որչափ բազում խնդրեցի զայս՝ մինչ հանդերձեալ էր ինձ գնալ յաշխարհէ։

Դու գիտես թէ որպէս ստէպ հրամանաւք յանձն արարի նոցա, զի եղիցին կատարեալք ի մի։

Զիարդ փութամ, որդեակ, մինչեւ այդ կատարեսցի։

Բ· Ո՛ քահանայքդ· դուք բարե-

կամք իմ եղիջիք, եթէ առնիցէք զոր են պատուիրեմ ձեզ։

Առաջնորդք հօտին իմոյ. սիրեցէք զմիմեանս, զի եւ ոչխարքն իմ զմիմեանս սիրեսցեն. որպէս եւ ես սուրբ արարի զանձն իմ, զի եղիցին եւ ոչխարք իմ սրբեալք։

Մի մարմին էք բազումքդ, զի ամենեքին ի միոջէ հացէ անտի վայելէք։ Եղերուք սիրտ մի եւ անձն մի։

Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ ճշմարիտ պաշտօնեայք իմ էք, եթէ սիրիցէք զմիմեանս։

Գ. Սիրեսջիք զմիմեանս, եւ փառաւորեցայց ի ձեզ, եւ աշխարհ հաւատասցէ եթէ Հայր առաքեաց զիս եւ ես առաքեցի զձեզ։

Սիրեսջիք զմիմեանս, եւ բնակեցայց ընդ ձեզ եւ եղէց հանապազ ի միջի ձերում. զի սիրովն այնուիկ իցէք միշտ յանուն իմ ժողովեալք եւ գումարեալք։

Սիրեսջիք զմիմեանս, եւ զարմասցի ընդ ձեզ աշխարհ. եւ լուիցէ եւ անասցէ եւ մեծարեսցէ եւ նմանօղ լինիցի։

Սիրեսջիք զմիմեանս՝ եւ ձեւք բարգաւաճեալ պայծառասցի Եկեղեցի, եւ սփռեսցի տարածեսցի ի ծովէ մինչեւ ի ծով, մինչ ի ծագս աշխարհի։

Սիրեսջիք զմիմեանս. եւ զԺողովք իսկ ինքնին զարհուրեսցին յերեսաց ձերոց,

քանզի գիտէ Թէ որդւոց իմոց որ սիրովն յօդեալ ընդ միմեանս իցեն՝ չկարէ ինչ ասանելլ եւ դատաղիւտ լինելլ։

Քանզի սովին սիրով լինին նոքա ամրացեալք ի սրտի իմում, ծածկին ընդ Թեւովք իմովք, կենդանի լինին ի մարմնի իմում, պաշտպանին յայլոց անդամոց, եւ զրեմԹէ իբրեւ զմարմին իմ զլիսովին յարդարին անառիկք եւ անվկանդք։

Դ. Սիրեսջիք զմիմեանս, որդեակք, զոր օրինակ եւ անդամք ի մի մարմին պատշաճեալք՝ սիրեն զմիմեանս։

Եթէ վշտանայ ինչ որ ի ձէնջ, լերուք եւ դուք վշտակից։ Եթէ որ փառաւորի՝ խնդացէք եւ դուք։

Ի պատիւ զմիմեանսիք ելէք. կրտսերայն մի ճոխաբար, այլ հայրաբար ատջիք հրաման. վերադունիկ խոնարհութեամբ եւ ի սրտէ անսայցէք։

Գործովք ձեռնտու լերուք միմեանց, աղօթիւք իրերայ օգնեցէք, օրինակաւ զմիմեանս յորդորեցէք, խրատուք ուղղեցէք զմիմեանս։

Սիրեցէք մի բանիւ եւ մի լեզուաւ, այլ արդեամբք եւ ճշմարտութեամբ։

Սիրեցէք զմիմեանս, եւ մի բամբասանօք խածատիցէք զոր յեղբարցն, եւ մի զոր արհամարհելով յամօթ առնիցէք, եւ մի զոր ամբարտաւանութեամբ զզուիցէք։

Սիրեցէք զմիմեանս, եւ մի՛ ի ծածուկս անդ սրտի ոխս ինչ ընդդէմ ուրուք յեղբարցն պահիցէք, մի՛ հեռ, մի՛ հակառակութիւն եւ մի՛ կարծիս ինչ։

Տէր, զի՛ բարի եւ զի՛ վայելուչ՝ տեսանել զքահանայս յօդեալս սիրով ի մի։

Ո՛ զարմանալի պատուիրան սիրոյ սրբոյ։ Քանիցս սերմն բարի սերմանեցեր յագարակի քում, Տէր, յորժամ զայդ պատուէր եառուր մեզ։

Բայց ուստի՞, Տէր, որոմն ի քում ագարակի։ Ուստի՞ այնչափ կռիւք, այնչափ հերձուածք, այնչափ ատելութիւնք, այնչափ թշնամութիւնք ի քահանայս քո, որ բազում անգամ, բա՛ւէ, մինչեւ ի մահ իսկ տեւեն։

Զ. Ուստի՞, ուստի՞, ո՛րդեակ։ Ի ցանկութեանց նոցա։

Զի բազումք այնոքիկ են որ բատ բնութեան իմն եւ բատ մարմնոյ սիրեն, եւ ասկաւք սրբութեամբ եւ հոգեպէս։

Զի ի բազումս կենդանի է մարդն հին, մարդն այն ամբարտաւան, արծաթասէր, չարակն, կարճամիտ։ Պատմեցից քեզ ըզծածուկս զայսոսիկ, ո՛րդեակ, եւ տեսցես։

Ատեայ նա զաս, զի սա եհաս այնմ պաշտաման կամ պատուոյ՝ որում իւր իսկ ակն եղեալ էր. զի սա ի բարձունս եալ վերացաւ, ուր ինքն ի չնչինս եւ ի խոնարհագոյնս կարգեցաւ։

Որպէս այն թէ ամենեքին իսկ պարտ էին լինել առաքեալ եւ մարգարէք, իբրեւ թէ չիցէ իմ իշխանութիւն առնել անօթի զումն ի պատիւ եւ զումն յանարգանս։

Սորա ելեալ ի բարձ աւագութեան եւ ընդ իւր պատիւ ուռուցեալ եւ փքացեալ՝ զկրսերագոյնսն արհամարհէ եւ գոգ առ ոսն կոխէ։

Որպէս թէ չէին իսկ եղբարք, եւ կամ թէ չիցէ եւ ինքն իբրեւ զնոսա հող եւ մոխիր, եւ որպէս թէ անարգանք իմն իցեն կենակից ընդ նոսա լինել։

Մեւս ոմն ատեայ զսա, զի համբաւաւ ուսման եւ վարդապետութեան գեր ի վերոյ գոսանի։

Որպէս թէ ամենեցուն իսկ պարտ էր վարդապետս եւ ուսուցիչս լինել եւ չէր ինձ համարձակ զգիտութեանն հնարհ եւ զհամբաւ տալ ում եւ կամիցիմ։

Սա նախանձի ընդ նմա, վասն զի քաջագոյնս գործէ զոգւոցն դարձ։

Իբրեւ այն թէ ամենեցուն իսկ արժան էր ունել հնարհս բժշկութեանց, եւ թէ չկարիցեմ ես աճեցուցանել յոյր ձեռն եւ կամիցիմ։

Նա խանդագոյ ընդ սա, զի հզօրագոյն է խօսողութեամբ։

Որպէս թէ ամենեցուն պարտ էր ի լեզուս խօսել, եւ ինձ չէր մարթի այսմ

կամ այնմ մարդոյ տալ ըստ հաճոյից զիմաստութիւն։

Ոմն զսա ատեայ, զի նորա սրբական կենաւքն՝ վարք իւր ապերասան կշտամբեալ յանդիմանին։

Ոմն ընդ իւր գիտութիւն կամ ընդ բարեպաշտութիւն հպարտացեալ, զայնոսիկ՝ զորս կարծէ թէ նուազագոյն իցեն առաքինի կամ դոյզն ուսեալ՝ առ խոտանս ունի։

Մեւս ոմն, քանզի արծաթասէր է, չէ ումեք բարեկամ, այլ զամենայն զք յանձնէ ի բաց մերժէ, մի գուցէ թէ ընկերութիւնն պատճառս ծախուց առաջի ընծայեցուցանիցէ։

Սա, քանզի կարճամիտ է, չկարէ հանդարտել ժոյժ ունել որոց ատեանն զնա, եւ չարախօսեն եւ զրպարտեն եւ վնասեն եւ նենգեն, նա եւ ոչ որոց ծիծաղենն զնովաւ ընդ խաղ. մանաւանդ թէ ատեայ իսկ եւ զչարի ընդ նոսա եւ անգամ որոց ներումն խնդրեն՝ չտայ թողութիւն։

Է. Տես, որդեակ, որպէս բնութիւնն վատթար եւ սէր անձին՝ եւ զքահանայս անգամ յեռս կասեցուցանէ ի սուրբ սիրոյ։ Ըստ սմին օրինակի եւ ընդ քեզ արասցէ՝ եթէ չկայցես արթուն։

Եթէ անձնասիրութեան ունկն դիցես, ոչ զայլս՝ այլ զանձն եւեթ սիրես։

ցես։ Կամիցիս զի այլքն ամենեքին ընդ քեզ իցեն, ողոքեսցեն զքեզ եւ քեզ ծառայեսցեն։ Ոչ կամեսցիս տանել այնմ որ սուրբ զք քան զքեզ իցէ, եւ իմաստուն եւ արժանաւոր եւ ընչաւէտ։

Նա աւանիկ խորամանգն այն անձնասիրութիւն՝ զի իբրեւ օրինօք իմն յատելութիւն այլոց ձգեսցէ զքեզ, բաղում ինչ թերութիւնս յայլս երեւեցուցանէ, եւ սաուարացուցանէ եւ ընդարձակէ, բանայ եւ հաւանեցուցանէ։

Զշիղս ի գերան անդր շրջեսցէ. յոլովագոյնս տացէ քեզ չարաչար խորհել զնոցանէ եւ կամ գոնէ կասկածել։

Եւ իբրեւ ի հակառակութիւն նոցին ածիցէ զքեզ, ջանայ եւ հնարի այնուհետեւ յատելութիւն անդր զայն դարձուցանել, եւ ի քսութիւնս, յարհամարհանս եւ ի չարախօսութիւնս յորդորէ։

Ասի կռիւք, ասի հակառակութիւնք, ասի թշնամութիւնք, որք բաղում անգամ ընդ քահանային վախճանելոյ ի միասին իջանեն ի դերեզման։

Տես, ՝որդեակ, տես ՝որպէս որոմունք յագարակի իմում սերմանին յառնէ թշնամւոյ։

Տես զի ոչ գոն ի մէջ քահանայից թշնամութիւնք՝ որ ոչ ի ցանկութենէ իմեքէ կամ յախտից իցեն սկիզբն առեալ։

Ը. Ո՛րդեակ, եթէ զսէր կարեւոր ընդ եղբարսն պահել կամիցիս, կալ զամենայն զկարիս քո ընդ հրահանգօք. ի բաց կաց ամենեւին յամենայն անձնասիրութենէ։

Զի ցորչափ զանձին խորհիցիս, չկարիցես եւ զեղբարցն օգուտ խնդրել։

Թ. Տէր, սիրեցից զեղբարս իմ, յայս ի սոյն ծախեցից զիս եւ ծախեցայց, զիտելով չափ զի եթէ զայս սէր ոչ ունիցիմ՝ ոչ ինչ օգտիմ՝ զոր ինչ եւ այլուստ ստանայցեմ։

Սիրեցից զեղբարս, եւ եղէց առ ամենեսին երկայնամիտ եւ քաղցր, ոչ նախանձեցայց, ոչ ամպարհաւաճեցից եւ ոչ հպարտացայց։

Ոչ յանդգնեցայց, ոչ խնդրեցից զանձին, ոչ գրգռեցայց, ոչ խորհեցայց զչար։

Ոչ խնդացից ընդ անիրաւութիւն, այլ խնդացից ընդ ստուգութիւն, ամենայնի տեւեցից, ամենայնի հաւատացից, ամենայնի համբերեցից։

Սիրեցից եւ սիրեցից հանապազ, սէր իմ մի երբեք անկցի։

Իսկ զանօրէնս ատեցից, զի եւ դու ատեաս, Տէր. այլ յատել անդ իմում՝ սիրով ողորմեցայց նոցա, ցանկացեալ յոյժ զի զգաստացին։

Խնդրեցից, Տէր, քոյով օգնականութեամբ՝ զտառապեալ զեղբարսն զայնո-

սիկ, խօսեցայց առ նոսա, յորդորեցիս, աղաչեցիս, խրատեցիս քաղցրութեամբ, եւ յայնժամ միայն համարեցայց զնոսա իբրեւ զհեթանոսս եւ զմաքսաւորս՝ յորժամ եկեղեցւոյ քում ոչ լուիցեն։

Սակայն մի անձամբ դատեցայց, զի մի դատիցիմ, մի պատժեցիս զի մի պատժեցայց։

Եւ ոչ այսչափ միայն, Տէր։ Քանզի գիտեմ, զի եթէ սիրիցեմ զսիրելիս իմ եւեթ՝ ոչ ինչ շնորհ է ինձ, քանզի եւ մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց։

Այլ սիրեցիս եւ զթշնամիս իմ, բարի արարիս առ ատելեաց իմոց, օրհնեցիս զանիծիչս իմ, աղօթս արարիս ի վերայ նեղչաց իմոց։

Որ հարկանէն՝ մատուցիս նմա զծնօտ իմ. շնորհեցիս այնմ որ բուռն լինիցի, թողիս որում նեղէն զիս, զի եղէց գրթած որպէս եւ դու, Տէր, գթած ես, որ զարեգակն քո ծագես ի վերայ բարեաց եւ չարաց։

ԳԼՈՒԽ ԿԸ.

Վասն գթութեան վարելոյ ընդ կնոջս։

Ա. Ասացի քեզ, որդեակ, եւ ճշմարիտ իսկ է, ի գեղեցկութենէ կնոջ բազումք մոլորեցան։

Վասն Եւայի՝ մարդն առաջին, վասն Դալիլեայ՝ հզօրագոյնն, վասն կնոջն Ու-

րիայ՝ երկիւղածագոյնն, վասն կանանց օտարոտուց՝ ամենիմաստն անկաւ թըշուառութեամբ։

Իսկ ոմ՝ ես դու, որ առանց խորհրդական զգուշութեան գործել ընդ նոսա իշխիցես։

Բ. Որդեակ իմ, աշակերտ իմ. մինթէ առաւել քան զվարդապետ քո՞ իցես։ Եթէ ես սրբութիւն անայլայլական՝ զգուշագոյն առ կանայս եղէ, քեզ որ եղէգն ես շարժուն ի հողմոյ՝ արժա՞ն իցէ, օրէ՞ն իցէ լինել անգգոյշ։

Զգոյր ինչ ինձ վասնզ ի խօսիցս նոցա, այլ օրինակ կամեցայ տալ քեզ, զի նոյնպէս եւ դու արասցես։

Ապա ուսիր յինէն՝ դուն ուրեք, կարճառօտս եւ ծանր բանիւք ընդ նոսա խօսել։

Ուսիր չխօսել առ ընդունայնասէր Սամարացի կանայս, բայց՝ առ ի դարձ եւ յապաշխարութիւն ածել զնոսա։

Ուսիր մի ճառ արկեալ խօսել ընդ կանայս մեղաւորս ամենկորեալս եւ խոնարհեալս, բայց՝ առ ի տալ նոցա զնաւ զաղաղութիւն եւ ուսուցանել զնոր ճանապարհ։

Ուսիր մի զբանիւք անկանել ընդ բարեպաշտ կանայս քանանացիս, բայց՝ ծանր եւ խիստ մարգասիրութեամբ։

Ուսիր զայնոսիկ՝ որ ի հոտոյ սրբու-

թեան քո դրդեալ գայլեն առ քեզ՝ ճոխագոյնս եւ տիրաբար յանձնել ի բաց մերժել, եթէ կարի իմն սէր մարդկօրէն ցուցանիցեն։

Ուսիր մի յայլ ելանել սրբոց կանանցն Մարթայի եւ Մարիամայ, բայց՝ վասն բարեկամ եղբօր Ղազարու եւ կամ թէ այլոց իրիք բարեպաշտութեան, հարկի եւ ստուածասիրութեան աղաղաւ։

Ուսիր մի նստել եւ զժամանակաւոր բաւաղել ընդ նոսա, այլ զկարեւոր ինչ իրաց եւ զաղնուագոյն մասնէ նոցա որ յերկինս է՝ բարբառեսջիր։

Ուսիր մի այլ առնել կանանց որ հրպարտքն իցեն, եւ դատարկապորոք, եւ շաղփաղփք, զարդարկոտք եւ ընդունայնասէրք. այլ երթ առ հիւանդացեալս, առ տրտմեալս վասն մահուն Ղազարու, եւ առ այնոսիկ՝ որ զմահն Միածնի սգայցեն եւ մխիթարեսջիր։

Ուսիր այնպէս անօսր ընդ նոսա գտանել, որպէս զի եւ հաւատացեալքն իսկ զարմացցին թէ յայնժամ եւեթ խօսիս ընդ նոսա՝ յորժամ հարկ եւ օգուտ իցէ։

Ուսիր եւ զաստիկ դութ ազգակցաց ի բաց մերկանալ, եւ սրբական իմն խստութեամբ զհեզութիւնդ իսկ քո ի չափս ունել։

Եթէ յաճախեսցեն՝ առ քեզ եւ

զայլս եւս համարձակ ընդ իւրեանս ա-
ծիցեն, որով եւ յաղօթից եւ յուսմանէ
յեռս կասեցուսցեն զքեզ, զատեալ որո-
շեսջիր ի նոցանէ, եւ ասա իսկ թէ զի՞
խնդրէք զիս, զի՞ խառնէք զիս. ո՞չ գի-
տէք եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ
լինել։

Ուսիր զընկերացն եւ զքոյ ոպասաւո-
րաց զգուշ՝ թէ անչափ իցէ՝ կարճել
սակաւիկ մի, որպէս եւ ես ասացի դրա-
տերացն Երուսաղեմի թէ մի լացցեն ի
վերայ իմ, այլ լացցեն ի վերայ անձանց
իւրեանց։

Ուսիր չլինել ընտանի կնոջ ուժէք,
այլ առ հասարակ զամենայն առաքինի
կանայս Հօր իմում յանձն առնել։

Ուսիր մի միայն առանձինն ի տունս
այրեաց կամ կուսից մտանել։

Ուսիր չնստել միայն ընդ միայնում
առանց այլոյ ուրուք կամ վկայի։

Ուսիր յամենայն իսկ եւ ի բնաւ կաս-
կածոց զգոյշ լինել եւ կանխեալ խոր-
շել յառաջագոյն յայնցանէ՝ զոր հաւա-
նականագոյնս մարթ իցէ ի բիծ տանել։

Ուսիր զնուէրս, զգրգանս, զնաղանս
եւ զանպայման բարեբարութիւնս կու-
սից արհամարհել, նա եւ ամաչել իսկ։

Գ. Ցես, ո՛րդեակ, զժառանգաւորսն
զայնոսիկ՝ ընդ որոց երբեմն զարմանայիր
ընդ սրբութիւնն, օրինակին նմանող լի-

նէիր եւ զՀոտոյ նոցին զՀետ երթայիր, եւ այժմ խոտեալք են եւ անարդեալք եւ գարշելիք։

Երբ արդեւք, սրդեակ, սկսաւ շլանալ սակին նոցա. Երբ այլագունեաց արծաթն սպիտակ։ Ո՞չ ապաքէն յորժամ սկիզբն արարին անզգոյշս առ կանայս լինել։

Ոչ զանգիտեցին ի վտանգէ կցորդութեան նոցա. ապա սիրեցին, ապա հուր անմաքուր վառեալ բորբոքեցաւ ի նոսա, ապա դադարեցի ես ունել զՀեռանէ նոցա զաջոյ, ապա անկան եւ խորտակեցան։

Ապա քար ի հիմանէ աղաղակեաց, ապա գոչեաց որդն ի փայտէ, ապա զոր ինչ արարին ի ծածուկ՝ յայտնեցաւ յանդիման սրեգական, ապա եղեւ գայթակղութիւն համբրէն ժողովրդեան իմոյ։

Վայ այնոցիկ. լաւ էր նոցա, եթէ կախէր երկան իշոյ ընդ պարանոց նոցա եւ ընկղմէին ի խորս ծովու։

Ո՛ր դեակ, լեցի քեզ ի զգաստութիւն կործանումն այն յանդգնելոցն՝ որ անմտութեամբ յանձինս ապաստանեցան։

Դ. Սակայն հայեաջիր դու եւ ընդ քահանայս ընդ այնոսիկ, որ զառաջին սատուածեղէն սէրն ոչ թողին, այլ սրբութեամբ եւ արդարութեամբ զամենայն աւուրս կենաց իւրեանց ինձ ծառայեցին։

Սոքա, որդեակ, խոյս եառուն ի կցորդութենէ կանանց, զի մի չարութիւն ինչ շըջեսցէ զիմաստութիւն նոցա, կամ նենդութիւն պատրիցէ զանձն նոցա։

Սոքա ուխտ եդին ընդ աչս իւրեանց չհայել ի կոյս։

Սոքա մեծարեն զպառաւունս, այլ իբրեւ զմարս. պատուեն զմանկամարդս, այլ իբրեւ զքոյր ամենայն սրբութեամբ։

Մխիթարեն զայրիս, բայց որ ստոյգ այրիքն իցեն. իսկ զգիրդ այրիսն՝ իբրեւ առ մեռեալս ունին։

Եւ ի մանկամարդաց այրեացն որ դատարկանձունք են եւ շըջօղք, փապքուպք եւ հեռաքրքիրք եւ խօսին որ ինչ ոչ է պիտոյ՝ հրաժարեն մեծաւ զգուշութեամբ։

Ո՛րդեակ, լեր նմանող եւ նախանձաւոր սրբոցն այնոցիկ եւ ընդ նոսա իսկ զսրբութիւն եւ զանէր պահեսցես։

Գ Լ Ո Ւ Խ ԿԹ.

Թէ ոչըցն ասվորական պոյման՝ չէ պարտ կանանց փոհանայլն լինել։

Ա. Ո՛ՐԴԵԱԿ, մի կերպարանիր կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ քրնեսջիր զլուն, եւ եթէ զինչ են կամքն իմ, բարին եւ հաճոյն եւ կատարեալ, զի զայն արարեալ յամենայնի՝ հասցես աւետեացն։

Հզօր է իբրեւ զՀեղեղ՝ զեան սովորութեանց եւ մարդկեղէն կարգաց, եւ եթէ ոչ Հաւատեաւ միտ դիցես եւ ընդդէմ կացցես Հաստատութեամբ, ձգեալ տարցի զքեզ, որդեակ, ընդ ճանապարհ լայն ի կորուստ։

Անկեսս բնական է ամենեցուն զբազմութեան զՀետ երթալ, այնպէս դառն է ի բազմութենէ մեկնեալ բաժանել, որպէս զի չէ իակ մարթ այդմ լինել, բայց ի ձեռն յաղթութեանն որ յաղթէ աշխարհի՝ որ են Հաւատքն մեր։

Եթէ գործ սրբութեան եւ արդարութեան՝ լինէր օրէնք եւ սովորութիւն մարդկեղէն, որչափ՞ք փրկէին յայնժամ, որդեակ։ Զգուանէր եւ ոչ մի ոք՝ որ ոչ խոտորէր ի չարէ եւ ոչ առնէր զբարի։

Այլ քանզի գոգ իմն ամենայն մարմին ապականեաց զճանապարհս իւր, նմին իրի զՀետ գայ եւ ջրՀեղեղ մեծ կամակոր բարուց եւ վատթար սովորութեանց, որ գրեթէ զամենեսին իակ կորուսանէ։

Բ. Յուշ լեսցի քեզ, որդեակ։ Ոչ ասացի թէ տես զինչ այլք գործեն եւ արա եւ դու նոյնպէս, այլ պատուիրեցի քեզ թէ պահեա զպատուիրանս։

Արդ՝ դիտեսջիր տեսջիր զամենայն զկարգս եւ զսովորութիւնս քոյոյ դաւա-

ռի եւ ժամանակի, բեր զայնս ընդ օրի-
նաց իմոց ի կշեռ համեմատութեան, եւ
եթէ հակառակս եւ ընդդիմակացս իմոցն
օրինաց գնոսին գտանիցես՝ հրաժարեա-
ջիր յայնցանէ բազում զգուշութեամբ,
եւ կարգեալ սահմանեսջիր քեզ կանոն
առանձին ըստ իմոց պատուիրանաց։

Գիտասջիր զի կարգք եւ սովորու-
թիւնք՝ յումէ ումեքէ եւ պահեսցին,
թէպէտ եւ ի քոց իսկ առաջնորդաց,
չեն կարող զքեզ յիմում դատաստանի
արդարացուցանել։

Քանզի կանխաւ իսկ ասացի քեզ, ե-
թէ զամենայն ինչ որ ասիցեն քեզ՝ արա,
բայց ըստ գործոցն նոցա՝ թէ չար իցեն,
մի առներ։

Մի անցաներ զպատուիրանաւն իմով,
վասն աւանդութեանն վարուց նոցա թէ
թեւր իցեն։

Գ. Ապրդ եթէ ի ծագ բարձու քա-
հանայութեան վերացեալ՝ ըստ քում
կոչման կամիցիս գնալ, մի ասիցես թէ
Զի՞նչ ինչ յայլոց գործի. զի՞նչ պլաք
առնեն։

Այլ ասա. Զի՞նչ հրամայեաց ինձ
Տէր. Զի՞նչ խնդրէ յինէն. Զի՞նչ սահ-
մանէ ինձ Եկեղեցի։

Մի ասիցես թէ Զի՞նչ օրինակ մա-
տուցանեն պլաք պատարագ. Զի՞արդ
սաղմոս ասեն. ո՞րպէս սպասաւորեն։

Այլ ասա. Որպէս վայել է քահանայի զսուրբ խորհուրդն պաշտել, զորհնութիւնս Ամենակալին երգել եւ զայնպիսի ահեղ պաշտօն կատարել:

Մի ասիցես թէ զնարդ վարին առհասարակ ընդ ապաշխարողս յատենի խոստովանութեան. որպէս քարոզի ըստ սովորութեան բանն Աստուծոյ:

Այլ ասա թէ զնարդ պարտ իցէ գնալ ընդ ապաշխարողս՝ զի բժշկեսցին եւ արձակեսցին. որպէս արժան իցէ քարոզել՝ զի օգուտ ինչ անտի ծնանիցի:

Մի ասիցես թէ որպիսի զեղծութեանց թոյլ տան այլք: Այլ ասա թէ որոց զեղծութեանց մարթ իցէ թոյլ տալ կամ հանդուրժել առ ժամ մի. եւ զոր պարտ իցէ քշտել առանց յապաղութեան:

Մի ասիցես թէ զնարդ այլք գնայցեն: Ցի՞նչ ինչ պաշտիցեն զժամանակն. որպէս զհասս եկեղեցականս ծախիցեն:

Զի՞նչ ձեւ զգենուցուն. զոր սեղան ունիցին. յորպիսի ժողովս յաճախիցեն. զորոց խաղուց եւ զորպիսի զբօսանաց զհետ իցեն:

Այլ ասա թէ զնարդ եւ որդունակ գնալ ինձ արժան իցէ, զի սուրբ եղէց եւ զայլս սուրբ արարից: Որպէս պարտ իցէ վաստակել: Զի՞արդ վայել իցէ ինձ ագանել, ուտել եւ զբօսնուլ:

Ո՞րպէս պիտոյ իցէ զենչս Եկեղեցւոյ ծախել, զի յապահովս եղէց՝ յորժամ համարս հասանիցէ ինձ տալ յաւուրն յետնում։

Դ. Եւ յիրաւի իսկ, որդեակ, բազումք են զորոց զօրինակս զգուշութեամբ եւ մտադիւրադոյնս պարտ է քեզ նկատել եւ նախանձաւոր լինել։

Նմանողք իմ եղեն նոքա յաչս քո, զի եւ դու ի նոցին առաքինութեանցն դրդեալ՝ լիցիս ինձ երկրպագու եւ նմանող։

Հայեաց, որդեակ, ընդ նոսա, բաղում յոյժ օգնեսցեն քում տկարութեան։

Սակայն օրինակք նոցա չեն կարդ եւ սովորութիւն հասարակաց, որովհետեւ սակաւք են ընտրեալքն այնոքիկ՝ առ յաճախադոյն թուով անարգելոց։

Իսկ զկարդ եւ զսովորութիւն՝ ուստի խորշեն արժան է քեզ, յարդարէ անզգամացն անթիւ բազմութիւն։

ԳԼՈՒԽ Հ.

Վասն կանոնի ուղղութիւնոյ եւ սրբութիւնոյ կենաց։

Ա. ԿԱՐԻՈՒՍ, որդեակ, յառաջադէմ նկրտել։ Մի կարի իմն աղատ ցանկանայցես լինել, այլ ընդ խրատուք եւ ընդ հրահանգաւք կալջիր զամենայն զգայութիւնս քո։

Եթէ հաստատեալ դիցես քեզ կանոն առաջի իմ եւ ըստ այնմ կեցցես՝ յիս կեցցես։

Ապա թէ առանց ինչ կանոնի կացցես, այսօր կեանս խիստս վարիցես, եւ վաղիւ գիրգս եւ փափուկս։

Այսուհետեւ կարգս իմն քեզ սահմանեսջիր, եւ զամենայն զգործս քո ըստ նմին կարգաց վճարեսջիր։ Զայս թէ արասցես՝ դիւրագոյնս հասցես ի վարուցն որբութիւն։

Բ. Լիցի քո ժամ սահմանեալ՝ ննջելոյ եւ յառնելոյ։

Տուր զկարեւորն հանդիսատ բնութեան. այլ զլացիր զդայնոցն որ ինչ անդր քան զչափն իցէ։

Շատ եւ բաւական իցեն քեզ եւթն կամ թէ քաջ՝ ութ ժամք. աւելին քան զայն՝ վնասէ մանաւանդ առողջութեան եւ ոչ օգտէ, տկար զմիտսն գործէ եւ ոչ սակաւ անբաւական օրականն վաստակոց։

Յիշեա, որդեակ, զայն բան՝ Մինչեւ յերբ յորսայսեալ կաս սով վատ։ Փոքր մի նիրհիցես. ապա հասանիցէ ի վերայ քո իբրեւ գող կարօտութիւն. եւ որպիսի՞ ինչ կարօտութիւն. երկիր, որդեակ, թերեւս ոչ կարօտութիւն հացի՝ այլ որ առաւել սոսկալին է՝ կարօտութիւն աստուածպաշտութեան։

Գ. Ընդէն իսկ իբրեւ զարթնուս ի քնոյ՝ ամբարձ զաչս մտաց քոց առ իս. տուր ինձ զսիրտ քո. ամրացո զքեզ նշանաւն խաչի. արի յոտն կաց փուլթով՝ որպէս ծառայ Հաւատարիմ ի ձայն տեառն իւրոյ։

Երանի ծառային այնմիկ՝ որ այսպէս առանց ամենեւին յապաղութեան կազմ եւ պատրաստ կայցէ եւ ասիցէ՝ Ահասիկ եմ ես, Տէր, զի՞ կոչեցեր զիս։

Ի ժամանակի զի զգենուցուսդ՝ զերաց իրաց սրբոց խորհեսջիր. կալ զիս առաջի աչաց քոց. յուշ ած թէ առ ինչ եկիր յաշխարհս յայս։

Դ. Ոչ զեցեալ վայելուչս՝ աղօթս արա ձայնիւ, աղօթս արա եւ հոգւով. թէ սակաւ՝ զկէս ժամ յայս ի սուրբ կրթութիւն ծախեսջիր։

Քանզի չէ մարթ եւ անհնարին իսկ է քեզ առանց աղօթից ինչ օգնականութեան՝ վարս առաքինականս ընծայեցուցանել եւ զմահկանացու կենաց զընթացս սրբութեամբ կատարել եւ հանել ի գլուխ։

Վաղվաղակի իսկ ցամաքեացի սիրտ քո, եթէ անփոյթ արասցես ուտել զհացս զայս։

Ե. Յետ զաղօթսն կատարելոյ՝ պատրաստեա զանձն քո ի Պատարագ՝ թէ յայնժամ իսկ մատուցանելոց լիցես. ա-

պա եթէ ոչ՝ յուսումն եւ յընթերցուած պարապեսջիր։

Ցիշեա զի ժամանակ կորուսեալ՝ ոչ դառնայ այլրէն միւսանգամ. յուշ լիցի քեզ՝ զի համարս տացես յաւուրն յետնում։

Եւ իբրեւ ժամ պատարագելոյ հասանիցէ, ամենեւին ամենայն բարեպաշտութեամբ պատրաստեա զանձն քո յայն ողջակէզ. զխիղճ մաաց քոց քընեա ճշդիւ գտակաւ. եւ թէ սակաւ՝ իբր չորրորդ մի ժամու ամփոփեա զանձն ջերմեռանդն մտօք։

Ի մատուցանել անդ զպատարագն՝ զամենայն զկարգս եւ զօրէնս բազում խնամով եւ հաւատեաւ պահեսջիր, ի բնաւ վրիպանաց զգոյշ լինիջիր, զբոլոր եռանդումն ծախեսջիր։

Եւ յետ զսուրբ զայն նուէր մատուցանելոյ, դեղերեաց կաց ըստ պատշաճի՝ որպէս յառաջն՝ առ ի գոհութիւն։

Զ. Ի ժամս կարգացն պաշտամանց յիւրում ժամանակի յառաջ քան զճաշ կատարեա։

Եթէ սիրիցես զիս, սրդեակ, ուրախ լիցիս՝ քանիցս անգամ թէ նոր ինչ դէպ տայցէ խօսակից ընդ իս լինելոյ։

Սակաւիկ մի ժամանակ եւ յառանձինն քննութիւն սահմանեսջիր, զի տեսցես թէ սրչափ ինչ յայսմ առաքինու-

թեան յառաջադէմ լիեալ իցես կամ զայն ինչ ախտ ի բաց կտրեալ։

Մինչ չեւ սկիզբն այսմ շահաւորն կրբ-թութեան արարեալ՝ ընթերցիր գլուխս մի ի Նորոց Կտակարանաց։

Ո՛րդեակ, լեցի քո ընկեր անբաժին՝ երկնաւորն այն բովանդակութիւն իմոց բանից, եւ մի իշխեսցէ յայնժամ սատանայ գալ առ քեզ։

Է. Մատիր ի չորաբեկ սեղան անդր օրհնութեամբ կանխելով։

Ցուշ լեցի քեզ յրմպելդ եւ յուտելդ քում՝ թէ ծառայ Աստուծոյ ես դու, եւ կեր, արբ՝ որպէս զիարդ եւ ծառայից Նորա վայել իցէ։

Պատուեա զիս երբեք երբեք յընչից քոյոյ անընդեան պատարագս ինչ մեռուցման ինձ զոհելով. ամէն ատեմ քեզ՝ ոչ կորուսցես զվարձս քո։

Առեալ կերակուր ժուժկալութեամբ՝ գոհացեալ մեկնեսջիր ի սեղանոյ։

Ապա յետ այնորիկ ի խօսս պարկեշտականս եւ ի զբօսանս օրինաւորս եւ վայելուչս սփոփեսջիր զմիտս քո եւ զհոգի։

Զգոյշ լենիջիր ի կարի իմն փափկութենէ, ի խաղուց արդելելոց եւ ի բարբանջանաց խեղկատակութեան։

Ի ժամանակեալ ժամուն ամփոփեա սակաւիկ մի զմիտս քո եւ արա զսուրբ

աղօթս երեկոյին պաշտամանց, եւ ապա յետոյ յուսումն եւ ի գործ կարգի քո պարապեա։

Մի զանց արասցես հանապազօր ընթեռնուլ խնամով ինչ ինչ յաստուածատուր գրոց։

Ը. Ոյցելութիւնն՝ զոր վայելչութիւնն կամ պատշաճութիւն եւ կամ պէտք հիւանդաց, վշտացելոց եւ տնանկաց ի քէն պահանջիցեն՝ արասցես ըստ պատշաճի թէպէտ եւ իցէ եւ յետ միջօրէի։

Զ. Մարիամ զԿոյսն սուրբ՝ զոր առանձին իմն սիրով պարտիս սիրել, մեծարեա զօրհանապազ ասելով զՊսակնորին։

Ընդ երեկոյս՝ ինձ որ սրբութիւն եւ փրկութիւն քո եմ, ուղեւորաց մխիթարութիւն եւ սրբոցն վայելչութիւն յաւիտենական՝ այց արա ի նուիրական Խորհրդեան։

Մի, ո՛րդեակ, մի՛ աշխարհականք յայսմ բարեպաշտութեան յառաջեսցեն քան զքեզ՝ որ այր իմ ես եւ բարեկամ իմ։

Թ. Յառաջ քան զընթրիս, թէ հնար իցէ, զդիշերականն եւ զառաւօտին պաշտօն կատարեա վասն աւուրն վաղուի, զի մի՛ ձգեալ մինչեւ ցվաղորդայն՝ ի մտաւորական աղօթից յետս կասեցուսցէ զքեզ եւ կամ վասն յան-

կարծաղէպ գործոյ իրիք ապասու՝ եւս իմն անագանելոյ հարկ հասանիցէ։

Յերեկոյի մի զանց զՀոգեւորական ընթերցուածով արասցես երբեք։ Այլ առ այս՝ մատեանս * զայնպիսիս ընտրեա՝ որ առաւել շնորհագիրքն իցեն եւ առ առաւելագոյն կատարելութիւն ոգւոյ քո դիպողագոյնք։

Զերեկորին աղօթս կատարեա մտաք ամփոփելով ի ներքուստ եւ առ հասարակ իսկ՝ թէ մարթ իցէ, քննութեամբ համօրէն մտայն խղճի։

Ի մահիճս իբրեւ երթայցես՝ խորհուրդս սրբականս ի միտս յեղյեղեսջիր, կամ պաղատանս կարճառօտս մատուսջիր, ցօղեա զքեզ եւ զանկողին քո ջրով օրհնելով եւ նշանաւ խաչի ամրացո զքեզ։

Յանձն արա զՀոգի քո Երանելոյ Կուսին եւ սրբոց հրեշտակաց, եւ այնպէս հանգիր ի սուրբ խորհուրդս եւ ի խաղաղութեան։

Գիշերի թէ զարթնուլ քեզ հասանիցէ, յիշեա զիս, երկիր պաղ եւ աղօթս արա։

* Հոյակապք եւ նշանաւորք ի մատենից ասոյ են՝ Նմանութիւն Քրիստոսի, Սուրբ Փռանկիսկոս Սալեսեան, Հռոդերիկեայ Հրահանգք կատարելութեան, Ղուգովիկոս Գրանատացի եւ Վարք Սրբոց, մանաւանդ Քահանայապետաց եւ Քահանայից։

Ժ. Եւ քանզի, որդեակ, առ մարդկեղէն տկարութեան հարկ է զի եւ սիրաք երկիւղածք աշխարհական ինչ փոշւով աղտեղեսցին, եւ այլուստ պարտիսկ է զի սրբեսցին, որ զսպասս Տեառն բարձեալ բերեն, եւ առաւել եւս՝ որ պատարագս մատուցանեն, նմին իրի յաճախագոյն իսկ մատիր ի խոստովանութիւն։ Իցիւ մի անգամ յեւթնեկի կամ թէ գոնեայ ի հնգեւտասան աւուրս։

ԺԱ. Ասացի քեզ, որդեակ, լեր հանապազ պատրաստ, զի յորում ժամու ոչ կարծիցես՝ գայ որդի մարդոյ։

Արդ զի մի ննջեսցես ի մահ, այլ ընդ հակառակն՝ զի արթուն կացցես եւ սկեսցես, սահմանեա քեզ ամսոյ ամսոյ օր մի՝ յորում առանձին իմն օրինակաւ ի մահ զանձն պատրաստեսցես։

Բայց յաւուր յայնմիկ մենացեալ նստցիս ի շտեմարանս սենեկի քո։

Զմահուանէ խորհեսջիր, զեսիղձ մտաց քոց քննեսջիր հաւատեաւ. տես զինչ այն ինչ իցէ որ զքեզ ի տագնապի կացուցանիցէ, եթէ արդէն իսկ մեռանել քեզ հասանիցէ։

Արա զոր յայնմ ժամու կամիցիր գործել. լեր խոստովան մեծաւ ճշդրտութեամբ, ցաւեսցէ քեզ դառնապէս, եւ դիջիր հաստատութեամբ ի մտի։

Մարմնով իմով՝ իբրեւ յեսին թո-

շակաւ՝ զօրացս զանձն քո. եւ սրպէս թէ արդ իսկ մեռանելոց իցես՝ ընդելա-կան աղօթիւք եւ գործովք գլխաւոր առաքինութեանց՝ ի ձեռս Հօրն յաւիտենից յանձն արա զհոգի քո։

Այսուիկ եղիցի գօտի քո պնդեալ ընդ մէջս. այսուիկ բերցես ճրագ լուցեալ ի ձեռին քում. այսուիկ եղիցես մարդ՝ ակն կալեալ Տեառն քում՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեաց, զի վաղվա-զակի բանայցես նմա։

ԺԲ. Թերեւս, որդեակ, ոչ ուրա-խութեան ինչ այլ արտմութեան խրատք թուիցին քեզ այսոքիկ, բայց յետոյ պտուղս խաղաղութեան նոքաք կրթե-ցելոյդ հատուցին յարդարութիւն։

Հաստատուն լեր այսուհետեւ եւ կաց անշարժ ի կանոնսն եւ առաւել լեցիս ի գործ իմ յամենայն ժամ։

Եւ ապա ուրեմն յորժամ ի դատա-սան ելեալ կացցես առաջի իմ, տես-ցես զի ոչ ընդունայն եղեւ ջան քո։

Քանզի հարիւրապատիկ առցես յայն-ժամ, եւ զկեանսն յաւիտենականս ժա-ռանգեսցես։

Ց Ա Ն Կ

ԳԼՈՒԽ Ա. Վասն փահանայական վիճակի. 1
ԳԼՈՒԽ Բ. Վասն ինչ ո՛րչափ իրաւունք իցէ փահանայից խորհրդարանին . . . 7
ԳԼՈՒԽ Գ. Թէ մարմն է՞ հնար է հասանել խորհրդարանն յայսմ աշխարհի. 11
ԳԼՈՒԽ Դ. Վասն միջնորդացն ի խորհրդարանին հասանելոյ 15
ԳԼՈՒԽ Ե. Վասն ասխասանին ընդդրեալց 20
ԳԼՈՒԽ Զ. Վասն ծանրանին մեղացն փահանայից 26
ԳԼՈՒԽ Է. Վասն լարեացն՝ որ ծագին ի վարդապետ վարուց փահանայից . . . 31
ԳԼՈՒԽ Ը. Վասն բարեացն որ ծագին ի որբանոն վարուց փահանայից . . . 36
ԳԼՈՒԽ Թ. Վասն մահուան 40
ԳԼՈՒԽ Ժ. Վասն վերջնոյ դատաստանի. 48
ԳԼՈՒԽ ԺԱ. Վասն դժոխոց 56
ԳԼՈՒԽ ԺԲ. Վասն հեծանին փահանային ի դժոխս 62
ԳԼՈՒԽ ԺԳ. Վասն փառաց երկնաւորաց 67
ԳԼՈՒԽ ԺԴ. Վասն ջերմեռանդն աստուածպաշտանին առ Տէր Յիսուս Քրիստոս 74
ԳԼՈՒԽ ԺԵ. Վասն ինչ պարտ է հանապազ ղաղրեալսն Տիսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի յիշել. 81
ԳԼՈՒԽ ԺԶ. Վասն սիրեն Խառնդման բարեպաշտանին առ Երանելի Կոյսն Մարիամ 90

ԳԼՈՒԽ ԺԷ. Վասն խառնդրմանն հոգւոյն ա՛ստ աստուածեղանան. 95
ԳԼՈՒԽ ԺԸ. Վասն ցրդութեան և նուաստութեան 98
ԳԼՈՒԽ ԺԹ. Վասն սէրն և սուրբ դիպուածութեան 102
ԳԼՈՒԽ Ի. Վասն հրահանգաց հիմնականն աստուածնութեանց. 107
ԳԼՈՒԽ ԻԱ. Վասն խոնարհութեան . . 111
ԳԼՈՒԽ ԻԲ. Վասն զանձն խոնարհեցուցանելոյ 116
ԳԼՈՒԽ ԻԳ. Վասն մաքրութեան մտացն խղճի 122
ԳԼՈՒԽ ԻԴ. Վասն յանձնառութեան խոստովանութեան 125
ԳԼՈՒԽ ԻԵ. Վասն ներելի մեղացս. . . 132
ԳԼՈՒԽ ԻԶ. Վասն ընդարձակ մեղս ապաշխարելոյ 136
ԳԼՈՒԽ ԻԷ. Վասն ոտիպ պատարագ մատուցանելոյ 139
ԳԼՈՒԽ ԻԸ. Վասն անարժանութեամբ պատարագ մատուցանելոյ 145
ԳԼՈՒԽ ԻԹ. Վասն պատրաստութեան պատարագի 147
ԳԼՈՒԽ Լ. Վասն գոհութեան յետ պատարագի 150
ԳԼՈՒԽ ԼԱ. Վասն մատուցման աղօթից. 154
ԳԼՈՒԽ ԼԲ. Վասն այլ և այլ ապիտաց մատուցեալն աղօթից 158
ԳԼՈՒԽ ԼԳ. Վասն ժամանակի մատուցման աղօթից 162
ԳԼՈՒԽ ԼԴ. Վասն այցելութեան ամենասուրբ Հաղորդութեան 166
ԳԼՈՒԽ ԼԵ. Վասն երկիւղածութեան փնտռութեան 170
ԳԼՈՒԽ ԼԶ. Վասն ուսման և ընթերցուածոյ 174

ԳԼՈՒԽ ԼԷ. Վասն ղատաբՔ Գիրս ընՔՒՆՒՆՒ 179
ԳԼՈՒԽ ԼԸ. Վասն ասպատանՔՒՆ պՒՏՒՊՒՄՆ 185
ԳԼՈՒԽ ԼԹ. Վասն հատարՔՒՆ պՒՏՒՊՒՄՆՒ 189
ԳԼՈՒԽ Խ. Վասն հանՔՒՄՔՒՆՒՆ ԵՒԷՎՒՆՒՆ Եւ ՕՒՆՒՆՒ 192
ԳԼՈՒԽ ԽԱ. Վասն ՓՈՒՆՒ Եւ ՆՈՒՄՆՅԱՆ ՕՒՆՒՆՒ 195
ԳԼՈՒԽ ԽԲ. Վասն հանՔՒՄՆՒՆ ՊՒՆՈՒՆՒՆ 190
ԳԼՈՒԽ ԽԳ. Վասն ՊՒՆՒՆՒՆՆԱՆ Ի հատարՔՒՆՒՆՒ 205
ԳԼՈՒԽ ԽԴ. Վասն ՊԱՏՎՈՒ Եւ ՊՒՆՈՒՄՆԱՆ հրահանՔՒՆՒ 210
ԳԼՈՒԽ ԽԵ. Վասն ՓՈՐՈՂՈՒՆՒՆ ԲՈՒՆԻՆ ԱսպատՔՒՆ 214
ԳԼՈՒԽ ԽԶ. Վասն պՒՏՈՒՊՒՄՆՈՒՆՒՆ ՊՒՆՒՆ 220
ԳԼՈՒԽ ԽԷ. Վասն ՔՒՆՈՒՆՒՆ պՒՐ ՊՐՔՒՆ Ի ՊՈՒՆԻԼ Ի ՊՈՒՐԲ ՊՊՒՆԻ ՊՈՂՊՒՆՈՒՆՒՆ 225
ԳԼՈՒԽ ԽԸ. Վասն ՓՈՒՆՈՒ պՒՆՒՂՊՈՒՐՈՒՆ ՊՐՊՒՆՈՒՆՒՆՒՆ 236
ԳԼՈՒԽ ԽԹ. Յաղագս ՆՒՆ պՈՐՊ Ի ՊՊՂՈՒՆ ՊՐՈՒՆԻԼ վասն ՊԵՂՊՈՒՐՈՒ 239
ԳԼՈՒԽ Ծ. Վասն պՂԻՊՈՒՆՊՈՒ ԽՈՒՄՆՒՆՒ . 241
ԳԼՈՒԽ ԾԱ. Վասն մարՔՊՈՒԷՐ ԽՈՒՄՆՈՒ ՊՈՒ ՆՒՆԻՐՆ 247
ԳԼՈՒԽ ԾԲ. Վասն ՊՐՈՒՆՒՆ մՊՈՒ . 251
ԳԼՈՒԽ ԾԳ. Վասն ԽՈՐՔՒՊՈՒՆՒՆ Ի ՊՒՄՊՈՒՆՒՆ 256
ԳԼՈՒԽ ԾԴ. Վասն հեղՈՒՆՒՆ . . . 260
ԳԼՈՒԽ ԾԵ. Յաղագս համԲՒՐՈՒՆՒՆ . 264
ԳԼՈՒԽ ԾԶ. Վասն ՓՈՅԼՒՆՒՂՈՒՆՒՆ . 270
ԳԼՈՒԽ ԾԷ. Վասն պՔՈՊՈՒՆՒՆ Ի ՅՈՅԺՈՒՆՒՆ 278